Հավելված N **2**

ՀՀ կառավարության 2024 թվականի
հոկտեմբերի 3-ի N 1583 - Ա որոշման

«Հավելված N 2.2
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 28-ի N 2346 - Ա որոշման

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ

Անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և տրամադրման Անձը հաստատող փաստաթղթեր տրամադրելու համար օգտագործվող միջոցների շահագործման ու սպասարկման վերաբերյալ

կնքված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

և

[…]-ի միջև

Ամսաթիվ՝ […]

քաղաք Երևան [Կնքման օր]

ՍՈՒՅՆ ՊՄԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔՎԵԼ Է ["]-ԻՆ

ՀԵՏԵՎՅԱԼ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ.

(1) **Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության**՝ ի դեմս [լիազորված անձի պաշտոնը և լրիվ անունը], գործելով [պաշտոնական փաստաթղթի անվանում, համար և հրապարակման ամսաթիվ՝ որոշում և այլն] («**Հանրային գործընկեր**»),

ԵՎ

(2) **[…]-ի**՝ ["] օրենքի համաձայն հիմնադրված իրավաբանական անձի՝ ի դեմս [լիազորված անձի պաշտոնը և լրիվ անունը], գործելով [լիազորող փաստաթուղթ, օրինակ՝ կանոնադրություն կամ ["]-ի լիազորագիր] հիման վրա, գրանցված ["]-ում ["] գրանցման համարի ներքո, որի իրավաբանական հասցեն գտնվում է ["], որը ստեղծվել է որպես Ծրագրի ընկերություն՝ Ընտրության գործընթացի Հաղթողի կողմից (հետագա ներածական դրույթներում սահմանված կարգով) («**Մասնավոր գործընկեր**»),

Հանրային գործընկերը և Մասնավոր գործընկերն այսուհետ առանձին կոչվում են «**Կողմ**», իսկ միասին՝ «**Կողմեր**»:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ՝

a) Հանրային Գործընկերն իրավասու մարմին է, որն ըստ Կիրառելի իրավունքի լիազորված է պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերում իրականացնել Հանրային Գործընկերոջ գործառույթներ և իրավասու է կնքելու սույն Պայմանագիրը,

b) Հանրային Գործընկերն ավարտել է Կիրառելի իրավունքի համապատասխան սույն Պայմանագրի ներքո կիրարկվող Ծրագրի հետ կապված ողջ նախապատրաստական (գնահատման) ընթացակարգերը, ներառյալ՝ տնտեսական հիմնավորման և ՊՄԳ ծրագրի նախագծի մշակումը և հաստատումը,

c) Ծրագրի հետ կապված ողջ նախապատրաստական (գնահատման) ընթացակարգերն ավարտելուց հետո Կառավարությունն ընդունել է Ծրագրի իրականացման վերաբերյալ որոշում [Որոշման մանրամասները նշվում են վերջինիս ընդունումից հետո],

d) Կառավարությունը Ծրագրի իրականացման վերաբերյալ որոշմամբ Ընտրության Ընթացակարգի իրականացման համար ձևավորել է գնահատող հանձնաժողով («**Գնահատող Հանձնաժողով**») [Որոշման մանրամասները նշվում են վերջինիս ընդունումից հետո],

e) Գնահատող Հանձնաժողովն իր որոշմամբ [Որոշման մանրամասները նշվում են վերջինիս ընդունումից հետո] մշակել և հաստատել է Ընտրության Ընթացակարգի իրականացման համար մրցութային փաստաթղթերը («**Մրցութային Փաստաթղթեր**»), ներառյալ՝ Որակավորման Հարցումը, Առաջարկի Հարցումը և սույն Պայմանագիրը,

f) Ընտրության Ընթացակարգը Կիրառելի իրավունքին համապատասխան հայտարարվել է համապատասխան լրատվամիջոցներով (ընդհանուր՝ «**Հայտարարություն**») ,

g) Հայտարարության հրապարակումից հետո թեկնածուները ներկայացրել են իրենց որակավորման հայտերը և Գնահատող Հանձնաժողովն այդ որակավորման հայտերի ուսումնասիրության հիման վրա որոշում է կայացրել Որակավորման Հարցման դրույթներին և պայմաններին համապատասխան Ընտրության Ընթացակարգի Առաջարկի Հարցման փուլին մասնակցելու համար համապատասխան թեկնածուների հաստատման մասին,

h) Ընտրության Ընթացակարգի Առաջարկի Հարցման փուլին մասնակցելու համար որակավորված թեկնածուները ներկայացրել են իրենց հայտերը, և Գնահատող Հանձնաժողովն այդ հայտերի գնահատման հիման վրա ճանաչել է ["]-ին, ["] իրավունքի ներքո ստեղծված իրավաբանական անձը՝ գրանցված ["]-ում ["] գրանցման համարով և ["] իրավաբանական հասցեում / հետևյալ իրավաբանական անձանց ["] Կոնսորցիումը՝ որպես Ընտրության Ընթացակարգի հաղթող (**«Հաղթող»**) Առաջարկի Հարցման դրույթների և պայմանների համաձայն,

i) Գնահատող Հանձնաժողովը հրապարակել է Ընտրության Ընթացակարգի արդյունքներն իր վեբ կայքում ["]-ին ճանաչելով որպես Հաղթող և նշելով Կիրառելի իրավունքին համապատասխան պահանջվող այլ տեղեկությունները՝ հասանելի [հղումը պետք է լրացվի] հղումով,

j) Հաղթողը ստացել է շնորհման ծանուցումը Առաջարկի Հարցմանը համապատասխան սույն Պայմանագրի բանակցություններին մասնակցելու և այն ստորագրելու հրավերի հետ միասին,

k) Հաղթողը պատշաճ կերպով համապատասխանում է Ընտրության Ընթացակարգի թեկնածուների և հաղթողի վերաբերյալ Մրցութային Փաստաթղթերի պահանջներին, ներառյալ՝ Ծրագրի Ընկերություն հիմնադրելու վերաբերյալ պահանջին, որը գործում է որպես սույն Պայմանագրի Կողմ և իրականացնելու է Ծրագիրը սույն Պայնագրի ներքո որպես Մասնավոր Գործընկեր,

l) Կողմերը պատշաճ կերպով համաձայնության են եկել Պայմանագրի այս՝ վերջնական տարբերակի շուրջ՝ համաձայն Մրցութային Փաստաթղթերի:

ՍՈՒՅՆՈՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Սույն Պայմանագրում, եթե համատեքստն այլ բան չի պահանջում, մեծատառ եզրույթները, արտահայտությունները և հապավումներն ունեն Հավելված 9-ում (*Սահմանումներ և Մեկնաբանություններ*) ներկայացված նշանակությունը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Սույն Պայմանագրի համաձայն՝ Հանրային գործընկերը Ծրագրի ժամկետի ընթացքում Մասնավոր գործընկերոջը շնորհում է իրավունք՝

2.1.1. թողարկելու, տրամադրելու Անձը հաստատող փաստաթղթեր, մատուցելու սույն Պայմանագրով նախատեսված՝ Անձը հաստատող փաստաթղթերին առնչվող այլ Ծառայություններ և գործառնություններ, և

2.1.2. շահագործելու և սպասարկելու (այդ թվում՝ արդիականացնելու, վերանորոգելու և կատարելու այլ բարեկարգումներ) Ծրագրի ակտիվները՝

Ծառայությունների սահմանված որակը, գործառնական և այլ տեխնիկական պահանջներ պահպանելու, Պահանջարկի երաշխիք տրամադրելու և Կողմերի կողմից սույն Պայմանագրի այլ դրույթներին ու պայմաններին համապատասխանելու պայմանով:

2.2. Պայմանագրի կատարման ընթացքում Հանրային գործընկերը պահպանելու և իրականացնելու է հետազոտական և որոշումների կայացման բոլոր լիազորությունները՝ ըստ Կիրառելի իրավունքի, և մասնավորապես ստանձնելու է պատասխանատվություն հետևյալի համար.

2.2.1. կենսաչափական ստուգում, հաստատում և (կամ) գնահատում այն դեպքերում, երբ Անձը հաստատող փաստաթղթի համար դիմումատուի ինքնությունը չի կարող արժանահավատորեն ստուգվել սպասարկման բաժնի աշխատողին հասանելի տվյալների միջոցով,

2.2.2. Անձը հաստատող փաստաթղթեր շնորհելու թույլտվության տրամադրում՝ Մասնավոր գործընկերոջ սպասարկման բաժնի աշխատողների կողմից Անձը հաստատող փաստաթղթերի համար ստուգված և պահանջներին բավարարող դիմումները սույն Պայմանագրի համաձայն ներկայացնելուց հետո, և

2.2.3. կենսաչափական տվյալների և փաստաթղթերի տեղեկատվական շտեմարանի հետ կապված գործառնությունների իրականացում և դրանց պահպանում, ներառյալ՝ ծրագրային և սարքավորումների ենթակառուցվածքի հետ կապված գործառնությունների իրականացում և դրանց պահպանում, ինչպես ներկայացված է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի նիստի Թիվ 05/2022 արձանագրությամբ:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. **Մասնավոր գործընկերոջ պարտականությունները**

Սույն Պայմանագրի և Կիրառելի իրավունքի պահանջներին համապատասխան՝ Մասնավոր գործընկերն ունի հետևյալ պարտականությունները.

3.1.1.1. պահպանել սույն Պայմանագրի ժամկետները և պայմանները.

3.1.1.2. շահագործել և սպասարկել Ծրագրի ակտիվները, մատուցել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները և այլ Գործառնություններ՝ սույն Պայմանագրով սահմանված Տեխնիկական պահանջներին համապատասխան.

3.1.1.3. անհրաժեշտության դեպքում իրավաբանորեն արմագրել Ծրագրի ակտիվների նկատմամբ իր սեփականության իրավունքը՝ Կիրառելի իրավունքին համապատասխան.

3.1.1.4. Հանրային գործընկերոջ և նրա ներկայացուցիչների համար հասանելիություն ապահովել Պայմանագրի շրջանակներում շահագործվող և սպասարկվող Ծրագրի ակտիվներին՝ սույն Պայմանագրով և Կիրառելի իրավունքով սահմանված մշտադիտարկման, ստուգումների և աուդիտորական գործունեության համար.

3.1.1.5. կատարել սույն Պայմանագրով սահմանված՝ հաշվետվությունների ներկայացման հետ կապված իր պարտականությունը.

3.1.1.6. կատարել տվյալների պաշտպանության մասով սույն Պայմանագրով և Կիրառելի իրավունքով սահմանված պահանջները.

3.1.1.7. Ծրագրով թույլատրված գործողությունները կատարելու նպատակով երրորդ անձանց ներգրավելու հանգամանքը համաձայնեցնել Հանրային գործընկերոջ հետ՝ սույն Պայմանագրով սահմանված ժամկետներին և պայմաններին համապատասխան.

3.1.1.8. պատասխանատվություն կրել Ծրագրի շրջանակներում թույլատրված գործողությունները կատարելու նպատակով ներգրավված երրորդ անձանց կողմից սույն Պայմանագրի և Կիրառելի իրավունքի ժամկետները և պայմանները պահպանելու համար.

3.1.1.9. ինքնուրույն և իր հաշվին վերապատրաստել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր աշխատողներին՝ Ծառայությունների որակին ներկայացվող և Ծառայություններին առնչվող այլ Տեխնիկական պահանջների համապատասխան.

3.1.1.10. մշտապես ապահովել, որ աշխատանքի ընդունեն բավարար, համապատասխան և պատշաճ որակավորում ունեցող և փորձառու անձնակազմի (լինի Մասնավոր գործընկերոջ կողմից, թե այլ կերպ)՝ Ծառայությունների մատուցումը Պայմանագրին և Կիրառելի իրավունքի պահանջներին համապատասխան ստանձնելու համար.

3.1.1.11. խթանել և խրախուսել սույն Պայմանագրին համապատասխան Ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված իր անձնակազմի վերապատրաստումը և մասնագիտական զարգացումը.

3.1.1.12. խթանել և խրախուսել Ծրագրի կառավարման հետ կապված գործունեության բարելավումը, այդ թվում՝ կորպորատիվ կառավարման և ղեկավարման լավագույն փորձի կիրարկումը.

3.1.1.13. ձեռք բերել և գրանցել (եթե պահանջվում է Կիրառելի իրավունքով) Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ Մտավոր սեփականության իրավունքները՝ Կիրառելի իրավունքով սահմանված կարգով.

3.1.1.14. առանց Հանրային գործընկերոջ նախնական գրավոր հաստատման երրորդ անձանց չզիջել, չօտարել, չպատվիրակել, չփոխանցել կամ այլ կերպ չտնօրինել Պայմանագրով նախատեսված Մտավոր սեփականության իրավունքները՝ բացառությամբ Պայմանագրով ուղղակիորեն թույլատրված դեպքերի.

3.1.1.15. ապահովել Ծրագրի ակտիվների անվտանգությունը և ապահովությունը, ինչպես նաև Ծառայությունների մատուցման անվտանգությունը և ապահովությունը, ինչպես նաև համապատասխանել սույն Պայմանագրով սահմանված և Կիրառելի իրավունքով պահանջվող անվտանգության և ապահովության կանոնակարգերին և ընթացակարգերին, ներառյալ՝ ապահովության համապատասխան համակարգերի ստեղծումը և սպասարկումը.

3.1.1.16. ձեռք բերել, ուժի մեջ պահել և վերաձևակերպել (ըստ անհրաժեշտության) Ծրագրի իրականացման համար Պայմանագրի համաձայն անհրաժեշտ թույլտվության բոլոր փաստաթղթերը.

3.1.1.17. Պայմանագրի համաձայն ստանձնել, իրականացնել և ապահովել իր Ներդրումային Պարտավորությունները.

3.1.1.18. ապահովել Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գործառնական և կապիտալ ծախսերի լիարժեք ֆինանսավորումը.

3.1.1.19. տրամադրել, ուժի մեջ թողնել և վերաձևակերպել (անհրաժեշտության դեպքում) սույն Պայմանագրով նախատեսված բոլոր ապահովումները՝ Պայմանագրի համաձայն իր պարտավորությունների կատարումն ապահովելու համար.

3.1.1.20. ձեռք բերել, ուժի մեջ թողնել և վերաձևակերպել (անհրաժեշտության դեպքում) Պայմանագրում նշված և Կիրառելի իրավունքով պահանջվող ապահովագրությունները.

3.1.1.21. կատարել սույն Պայմանագրով սահմանված հետփոխանցման պահանջները (այդ թվում՝ Ծրագրի համապատասխան ակտիվների

հետփոխանցման և անձնակազմի տեղափոխմանն առնչվող պահանջները, եթե կիրառելի են):

3.2. **Մասնավոր գործընկերոջ իրավունքները**

Սույն Պայմանագրի և Կիրառելի իրավունքի պահանջներին համապատասխան՝ Մասնավոր գործընկերն ունի հետևյալ իրավունքները.

3.2.1. շահագործել և սպասարկել Ծրագրի ակտիվները (այդ թվում՝ արդիականացնել, վերանորոգել և կատարել այլ բարեկարգումներ).

3.2.2. մատուցել Ծառայություններ և իրականացնել աշխատանքներ՝ կապված սույն Պայմանագրում սահմանված Անձը հաստատող փաստաթղթերի հետ.

3.2.3. իր հայեցողությամբ սահմանել իր կազմակերպական կառուցվածքը, անձնակազմի թիվը և հաստիքացուցակը՝ սույն Պայմանագրի պահանջներին համապատասխան.

3.2.4. ազատ լինել աշխատողների աշխատանքի ընդունելու, ստորաբաժանումները վերակազմակերպելու կամ այլ կերպ իր աշխատողների կազմակերպական կառուցվածքը փոխելու հարցում (եթե պահանջվում է այդ վերակազմավորումներից որևէ մեկը)՝ Ծառայությունների մատուցման և Պայմանագրով սահմանված այլ պարտավորությունների կատարման նպատակով.

3.2.5. Հանրային գործընկերոջից ստանալ իր իրավունքների և պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ.

3.2.6. Ծրագրի վերաբերյալ պայմանագրերի հիման վրա ներգրավել երրորդ անձանց՝ Ծրագրի շրջանակներում թույլատրված գործողություններն իրականացնելու նպատակով.

3.2.7. Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները կատարելու նպատակով ներգրավել վարկային ֆինանսավորում.

3.2.8. պահանջել դադարեցնել սույն Պայմանագիրը, եթե Հանրային գործընկերը խախտել է դրա դրույթները սույն փաստաթղթով սահմանված դեպքերում և պայմաններում.

3.2.9. դադարեցնել Պայմանագիրը սույն փաստաթղթով սահմանված ժամկետներում և պայմաններում.

3.2.10. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Հանրային գործընկերոջից ստանալ փոխհատուցում սույն փաստաթղթով սահմանված ժամկետներում և պայմաններում.

3.2.11. Հանրային գործընկերոջ հաստատմամբ ծանրաբեռնել Մասնավոր գործընկերոջ կորպորատիվ իրավունքները.

3.3. **Հանրային գործընկերոջ պարտականությունները**

Սույն Պայմանագրի և Կիրառելի իրավունքի պահանջներին համապատասխան՝ Հանրային գործընկերն ունի հետևյալ պարտականությունները.

3.3.1. Պայմանագրին համապատասխան Մասնավոր գործընկերոջը հանձնել Փոխանցվող ակտիվները.

3.3.2. Ծրագրի շրջանակներում իրականացնել Անձը հաստատող փաստաթղթերին առնչվող համապատասխան հետազոտական և որոշումների կայացման լիազորությունները՝ Կիրառելի իրավունքի համաձայն.

3.3.3. Մասնավոր գործընկերոջը տրամադրել Պահանջարկի երաշխիք և Ծառայությունների դիմաց կատարել Ծավալի վճարումներ՝ սույն Պայմանագրով սահմանված ժամկետներին և պայմաններին համապատասխան.

3.3.4. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Մասնավոր գործընկերոջը վճարել փոխհատուցում սույն փաստաթղթով սահմանված ժամկետներում և պայմաններում.

3.3.5. համապատասխանել Պայմանագրով և Կիրառելի իրավունքով նախատեսված տվյալների պաշտպանության պահանջներին:

3.4. **Հանրային գործընկերոջ իրավունքները**

Սույն Պայմանագրի և Կիրառելի իրավունքի պահանջներին համապատասխան՝ Հանրային գործընկերն ունի հետևյալ իրավունքները.

3.4.1. վերահսկել Մասնավոր գործընկերոջ կողմից սույն Պայմանագրի պահանջների կատարումը.

3.4.2. պահանջել սույն Պայմանագրի դադարեցում, եթե Մասնավոր գործընկերը խախտել է դրա դրույթները՝ սույն փաստաթղթով սահմանված դեպքերում և պայմաններում.

3.4.3. դադարեցնել Պայմանագիրը սույն փաստաթղթով սահմանված ժամկետներում և պայմաններում.

3.4.4. Մասնավոր գործընկերոջից ստանալ իր իրավունքների և պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ.

3.4.5. իրականացնել Պայմանագրով և Կիրառելի իրավունքով նախատեսված մշտադիտարկում, ստուգում և աուդիտորական գործունեություն.

3.5. **Կողմերի իրավունքների և պարտավորությունների նկատմամբ սահմանափակումների բացառումը**

Կողմերն ունեն սույն Պայմանագրով և Կիրառելի իրավունքով ամրագրված այլ

իրավունքներ և պարտավորություններ:

4. ԾՐԱԳՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ

4.1. **Ընդհանուր պայմաններ**

4.1.1. Ծրագրի ակտիվներ նշանակում է անշարժ, շարժական, ոչ նյութական ակտիվներ և սեփականության այլ օբյեկտներ, որոնք փոխանցվելու են Մասնավոր գործընկերոջը, շահագործվելու են և սպասարկվելու, նախագծվելու են, կիրարկվելու, արդիականացվելու, գնվելու, օգտագործվելու Ծառայությունների մատուցման և Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված այլ պարտավորությունների կատարման գործընթացում (համապատասխան կիրառելիության դեպքում):

4.1.2. Կողմերից պահանջվում է հանձնել Հավելված 1-ում (*Փոխանցվող ակտիվներ*) նշված Փոխանցվող ակտիվները Հանրային գործընկերոջից Մասնավոր գործընկերոջը՝ յուրաքանչյուր Փոխանցվող ակտիվների տեսակի համար սույն Պայմանագրում նշված ձևով: Հավելված 1-ում (*Փոխանցվող ակտիվներ*) ընդգրկված Փոխանցվող ակտիվների ցանկում մանրամասն ներկայացվում է այդ ակտիվների բացվածքն ըստ համապատասխան տեսակների, և նշվում են այդ ակտիվների՝ Տեխնիկական պահանջներով սահմանված բնութագրերը: Կողմերն այդ ակտիվները փոխանցում են սույն Պայմանագրի 7-րդ բաժնում սահմանված դրույթներին ու պայմաններին համապատասխան:

Փոխանցվող ակտիվները կազմված եբ Սկզբնական անշարժ գույքից, Սկզբնական շարժական գույքից և Սկզբնական ոչ նյութական ակտիվներից (ինչպես մանրամասն ներկայացված է 4-րդ բաժնում):

4.1.3. Գործառութային առումով Ծրագրի ակտիվների հիմնական տեսակներն են՝

4.1.3.1. Գրանցման կենտրոնները՝ Ծրագրի այն ակտիվները (Վարձակալված անշարժ գույքը՝ համապատասխան բոլոր Շարժական գույքերով և Ոչ նյութական ակտիվներով, համապատասխան կիրառելիության դեպքում), որտեղ Մասնավոր գործընկերը մատուցելու է Ծառայություններ և իրականացնելու է Ծրագրին առնչվող այլ գործառնական գործողություններ՝ սույն Պայմանագրի համաձայն.

4.1.3.2. Անհատականացման կենտրոնը՝ Փոխանցվող ակտիվ, որտեղ Մասնավոր գործընկերն իրականացնելու է Անձը հաստատող փաստաթղթերի անհատականացում և իրականացնելու է դրա հետ կապված այլ գործողություններ՝ սույն Պայմանագրի համաձայն.

4.1.3.3. Տվյալների կենտրոնը՝ Փոխանցվող ակտիվ, որտեղ Մասնավոր գործընկերն ապահովելու է Ծրագրին առնչվող տվյալների հեռահար պահպանումը, մշակումը, բաշխումը և Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ այլ SS գործառնությունների իրականացումը.

4.1.3.4. Վթարային վերականգնման հանգույցը՝ Փոխանցվող ակտիվ, որը

Մասնավոր գործընկերն օգտագործելու է վթարային միջադեպի դեպքում Պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայությունների և կատարվող այլ գործառնական գործողությունների ու պարտականությունների պահուստավորման համար:

Վերոնշյալ տեսակները չպետք է դիտարկվեն որպես Ծրագրի ակտիվների սպառիչ ցանկ:

4.1.4. Տարընկալումներից խուսափելու համար՝ Հանրային Գործընկերը գործարկելու և պահպանելու է կենսաչափական տվյալների և փաստաթղթերի տեղեկատվական շտեմարանը, ներառյալ՝ ծրագրային և նյութական ակտիվների ենթակառուցվածքի գործարկումը և պահպանումն ըստ Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի նիստի Թիվ 05/2022 արձանագրության: Հետևաբար, կենսաչափական տվյալների և փաստաթղթերի տեղեկատվական շտեմարանի ծրագրային և նյութական ակտիվների ենթակառուցվածքը պետք է տեղակայված լինի Հանրային գործընկերոջ կողմից գործարկվող տվյալների կենտրոնում և (կամ) վթարային վերականգնման հանգույցում (չեն փոխանցվում):

4.2. **Անշարժ գույքը**

4.2.1. Սույն Պայմանագրի համաձայն՝ Անշարժ գույքը ներառում է Սկզբնական անշարժ գույքը և Վարձակալված անշարժ գույքը:

4.2.2. Սկզբնական անշարժ գույք է համարվում Հավելված 1-ում (*Փոխանցվող ակտիվներ*) ներկայացված Փոխանցվող ակտիվների ցանկից պետության սեփականություն հանդիսացող անշարժ գույքը: Սկզբնական անշարժ գույքը օգտագործման իրավունքով փոխանցվում է Մասնավոր գործընկերոջը Փակման ընթացքում՝ սույն Պայմանագրի 7-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

4.2.3. Վարձակալված անշարժ գույք է համարվում երրորդ անձանց սեփականություն հանդիսացող անշարժ գույքը, որը Մասնավոր գործընկերը սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները կատարելու համար օգտագործելու է որպես Գրանցման կենտրոններ՝ այդ երրորդ անձանց հետ կնքված Վարձակալության պայմանագրերի հիման վրա: Մասնավոր գործընկերն այդ ակտիվների մասով կնքում է Վարձակալության պայմանագրեր Փակման ընթացքում՝ սույն Պայմանագրի 7-րդ բաժնում սահմանված պայմաններին համապատասխան:

4.2.4. Մասնավոր գործընկերը Պայմանագրով նախատեսված իր Ներդրումային պարտավորությունների շրջանակներում նորոգում, վերանորոգում, վերականգնում և ցանկացած այլ ձևով բարեկարգում է Անշարժ գույքի ակտիվները: Անշարժ գույքի այդ բարեկարգումներին ներկայացվող

պահանջների շրջանակը (այդ թվում՝ Գրանցման կենտրոններում, Անհատականացման կենտրոնում, Տվյալների կենտրոնում և Վթարային վերականգնման հանգույցում անհրաժեշտ բարեկարգումների բացվածքը) ներկայացված է Հավելված 3-ում (*Տեխնիկական Պահանջներ*):

4.2.5. Մասնավոր գործընկերն ունի Սկզբնական անշարժ գույքի և Վարձակալված անշարժ գույքի օգտագործման իրավունք:

Մասնավոր գործընկերը պետք է տիրապետի, օգտագործի, շահագործի, սպասարկի և արդիականացնի Անշարժ գույքի ակտիվները՝ սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան, այդ թվում՝ Վարձակալության պայմանագրերի պահանջներին համապատասխան:

Սկզբնական անշարժ գույքի նկատմամբ Մասնավոր գործընկերոջ կողմից կատարվող բոլոր համալիր բարեկարգումները համարվում են պետական սեփականություն:

Վարձակալության պայմանագրերով նախատեսվում է Մասնավոր գործընկերոջ՝ Վարձակալված անշարժ գույքի օգտագործման իրավունքի փոխանցում, և դրանցում ներառվում են սույն Պայմանագրով պահանջվող՝ փոխանցելիության այլ պայմաններ Մասնավոր գործընկերոջ՝ Վարձակալության պայմանագրերով սահմանված իրավունքներն ու պարտականությունները Հանրային գործընկերոջը զիջելու առնչությամբ:

Մասնավոր գործընկերը կարող է փոփոխել կամ դադարեցնել Վարձակալության պայմանագրերը՝ պայմանով, որ այդ փոփոխությունները բացասաբար չազդեն Ծրագրի իրականացման վրա և առկա լինի Հանրային գործընկերոջ համաձայնությունը:

4.2.6. Սկզբնական անշարժ գույքի՝ Մասնավոր գործընկերոջը փոխանցումը և Սկզբնական անշարժ գույքի նկատմամբ կատարված համալիր բարեկարգումները շահագործման հանձնելը հիմք են Մասնավոր գործընկերոջ՝ Անշարժ գույքի այդ ակտիվների օգտագործման իրավունքը Կիրառելի իրավունքի պահանջների համաձայն գրանցելու համար: Անշարժ գույքի նկատմամբ կատարված համալիր բարեկարգումները շահագործման հանձնելու գործընթացը ներառում է Անշարժ գույքի այդ արդիականացված ակտիվների նկատմամբ պետության սեփականության իրավունքի գրանցումը Կիրառելի իրավունքին համապատասխան:

Մասնավոր Գործընկերը գրանցում է Վարձակալված անշարժ գույքի օգտագործման իրավունքը և Վարձակալված անշարժ գույքի՝ կատարված բարեկարգումների նկատմամբ իրավունքը Կիրառելի իրավունքին համապատասխան՝ Վարձակալության պայմանագրերով և սույն Պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան:

4.2.7. Մասնավոր գործընկերն իրավասու է Անշարժ գույքի ակտիվների մի մասը հանձնել երրորդ անձանց օգտագործմանը՝ պահպանելով Պայմանագրի 10.6

կետով սահմանված պահանջները:

4.3. **Շարժական գույքը**

4.3.1. Սույն Պայմանագրով սահմանված Շարժական գույքը ներառում է Սկզբնական շարժական գույքը և Նոր շարժական գույքը:

4.3.2. Սկզբնական շարժական գույք է համարվում Սկզբնական անշարժ գույքում գտնվող՝ պետության սեփականություն հանդիսացող շարժական գույքը: Սկզբնական շարժական գույքը սեփականության իրավունքով Մասնավոր գործընկերոջն է փոխանցվում համապատասխան Սկզբնական անշարժ գույքի հետ միասին Փակման ընթացքում՝ սույն Պայմանագրի 7-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

4.3.3. Նոր շարժական գույք է համարվում այն Շարժական գույքը, որը ձեռք է բերելու Մասնավոր գործընկերը՝ Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելու համար: Մասնավոր գործընկերը Ներդրումային պարտավորությունների շրջանակներում ձեռք կբերի կոնկրետ Նոր շարժական գույք՝ Հավելված 3-ում (*Տեխնիկական Պահանջներ*) նշված կարգով: Նոր շարժական գույքը կարող է ըստ անհրաժեշտության տեղակայվել (տեղադրվել) Սկզբնական անշարժ գույքում և Վարձակալված անշարժ գույքում:

4.3.4. Մասնավոր գործընկերն ունենալու է Սկզբնական շարժական գույքի և Նոր շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունք: Մասնավոր գործընկերը տիրապետելու, օգտագործելու, շահագործելու, սպասարկելու և արդիականացնելու է Շարժական գույքը՝ սույն Պայմանագրի ժամկետներին և պայմաններին համապատասխան իր պարտավորությունները կատարելու համար:

Մասնավոր Գործընկերոջ՝ սույն Պայմանագրով Ծրագրի իրականացման համար պահանջվող Շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետք է փոխանցվի Դադարեցման պահին պետության սեփականությանը (Հանրային Գործընկերոջը), այդ թվում՝ կիրառելիության դեպքում Վարձակալության պայմանագրերի համաձայն:

4.4. **Ոչ նյութական ակտիվները**

4.4.1. Սույն Պայմանագրով սահմանված Ոչ նյութական ակտիվները ներառում են Սկզբնական ոչ նյութական ակտիվները և Նոր ոչ նյութական ակտիվները:

4.4.2. Սկզբնական ոչ նյութական ակտիվներ են համարվում պետության սեփականություն հանդիսացող Ոչ նյութական ակտիվները, որոնք տեղադրված են Սկզբնական անշարժ գույքում և Սկզբնական շարժական գույքում (ըստ կոնկրետ դեպքի) : Ոչ նյութական ակտիվների նկատմամբ իրավունքները Մասնավոր գործընկերոջն են փոխանցվում համապատասխան

Սկզբնական անշարժ գույքի և Սկզբնական շարժական գույքի փոխանցմանը զուգահեռ, Փակման ընթացքում՝ սույն Պայմանագրի 7-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

4.4.3. Նոր ոչ նյութական ակտիվները վերաբերում են այն ոչ նյութական ակտիվներին, որոնց նկատմամբ իրավունքները ձեռք կբերվեն (կամ որոնք կստեղծվեն/ մշակվեն) Մասնավոր գործընկերոջ կողմից՝ Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները կատարելու համար: Մասնավոր գործընկերը ձեռք կբերի իրավունքներ Նոր ոչ նյութական կոնկրետ ակտիվների նկատմամբ՝ որպես Ներդրումային պարտավորությունների մաս, ինչպես նշված է Հավելված 3-ում (*Տեխնիկական պահանջներ*): Նոր ոչ նյութական ակտիվները կարող են տեղադրվել (տեղակայվել) Սկզբնական անշարժ գույքում, Սկզբնական շարժական գույքում, Նոր շարժական գույքում և Վարձակալված անշարժ գույքում , ըստ պահանջի: Մասնավոր գործընկերը պետք է նախաձեռնի քայլեր, որպեսզի պաշտպանի նման Նոր ոչ նյութական ակտիվները՝ համաձայն Կիրառելի իրավունքի:

4.4.4. Մասնավոր գործընկերն ունենալու է Ոչ նյութական ակտիվների նկատմամբ սեփականության իրավունք, որը ապահովվելու է Կիրառելի իրավունքով այդ Ոչ նյութական ակտիվների նկատմամբ իրավունքների փոխանցման շրջանակներում, և տիրապետելու, օգտագործելու, շահագործելու, սպասարկելու և արդիականացնելու է Ոչ նյութական ակտիվները՝ սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան:

Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրի համաձայն Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ Ոչ նյութական ակտիվների նկատմամբ իրավունքները փոխանցվելու են պետությանը (Հանրային գործընկերոջը) Դադարման ժամանակ, այդ թվում՝ կիրառելիության դեպքում Վարձակալության պայմանագրերի համաձայն:

Մասնավոր գործընկերը կամ նրա լիցենզատուները իրավունք ունեն տրամադրելու ոչ բացառիկ լիցենզիաներ երրորդ անձանց այն մտավոր սեփականության իրավունքների օգտագործման համար, որոնք տրամադրվել են Մասնավոր գործընկերոջն և/կամ Հանրային գործընկերոջը ոչ բացառիկ լիցենզիաներով՝ Ծրագրի իրականացման համար:

4.5. **Ծրագրային ապահովման էսքրոու հաշիվ**

4.5.1. Հաշվի առնելով 4.5.2-րդ կետը, Մասնավոր գործընկերը պարտավորվում է մինչև Մեկնարկի օրը ներդնել ակտիվների գործարկման և սպասարկման, ինչպես նաև Անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված Ծառայությունների և այլ Գործառնությունների համար անհրաժեշտ ծրագրային ապահովման սկզբնական (սորս) կոդերի և հարակից նյութերի կրկնօրինակները (**«Նյութեր»**) էսքրոու հաշվում՝ ապահով պահպանման համար: Ներդրված Նյութերը կշարունակել մնալ գաղտնի և հանդիսանալ

Մասնավոր գործընկերոջ կամ իրա լիցենզատուների մտավոր սեփականությունը:

Նյութերը պետք է պարունակեն ամբողջ տեղեկատվությունը մարդու կողմից ընթերցելի եղականով, այնպես, որ հնարավոր լինի ողջամտորեն հմուտ ծրագրավորողի կամ վերլուծաբանի կողմից սպասարկելու համար և, ոչ ստանդարտ (չլիցենզավորված) հատուկ Ծրագրի նպատակներով ստեղծված ծրագրային ապահովման դեպքում՝ զարգացնի և բարելավի ծրագրային ապահովումը, և առանց վերոնշյալի ընդհանրությունը սահմանափակելու, սկզբնական (սորս) կոդերի և հարակից նյութերը պետք է պարունակեն ծրագրավորողների մեկնաբանությունների ցանկերը, տվյալների և գործընթացների մոդելները, տրամաբանության ձեռնարկները և հոսքագրեր: Նրանք պետք է նաև ներառեն կոնֆիգուրացիոն, տեղադրման և գործարկման ուղեցույցներ (ֆայլեր), կախվածություններ և թեստավորման սցենարներ՝ ծրագրային ապահովման տեսակին համահունչ:

4.5.2. Այնուամենայնիվ, Մասնավոր գործընկերը կարող է ներդնել զգայուն Նյութերը, ներառյալ՝ կրիպտոգրաֆիկ և կենսաչափական բաղադրիչներ, ներկառուցված ծրագրային ապահովումը (նույնականացման քարտի օպերացիոն համակարգը և հավելվածը), կենսաչափական հիմնական մեխանիզմը և սեփականություն հանդիսածող ծրագրային բաղադրիչները, էսքրոու հաշվին միայն դրանց կատարման համար հասանելի ձևով (կոմպիլացված հատուկ արտադրական միջավայրում հատուկ հարթակում գործարկելու համար):

4.5.3. Անվտանգության սերտիֆիկատներին ենթակա Նյութերը չեն կարող ներդրվել էսքրոու հաշվում:

4.5.4. Երրորդ անձանց կողմից տրամադրված ծրագրային գործիքները (COTS), ներառյալ, բայց չսահմանափակելով Microsoft և Oracle, թվարկվելու են իրենց համապատասխան ծրագրային տարբերակով, որպեսզի հստակորեն նշվի լիցենզիաները և ծրագրային գործիքները, որոնք պիտի ձեռքբերվեն Հանրային գործընկերոջ կողմից այն դեպքում, երբ էսքրոու հաշիվը կիրառվում է համաձայն 4.5.5-րդ կետի: Այդպիսի երրորդ անձանց ծրագրային գործիքները չեն հանդիսանում Նյութերի մաս, որոնք ներդրվում են էսքրոու հաշվին:

4.5.5. Մասնավոր գործընկերը գիտակցում է, որ Հանրային գործընկերը, բացառապես Ծառայությունների և Գործառնությունների շարունակականությունը ապահովելու նպատակով կարող է պահանջել Նյութերին հասանելիություն, եթե.

4.5.5.1. Մասնավոր գործընկերը դադարեցնում է իր գործունեությունը ավելի քան 22 (քսաներկու) Աշխատանքային օրով առանց փոխանցելու իր իրավունքներն ու պարտականությունները էսքրոու պայմանագրի ներքո երրորդ անձանց (բացառությամբ գործունեության դադարեցում սույն Պայմանագրի կամ Կիրառելի իրավունքի ներքո ցանկացած հարգելի

պատճառով, ներառյալ՝ Ֆորս մաժորը և Քաղաքական ֆորս մաժորը), կամ

4.5.5.2. Սկսվել է Մասնավոր գործընկերոջ առնչությամբ լուծարման գործընթաց, հարուցվել է դատական սնանկության վարույթ կամ Մասնավոր գործընկերոջ անվճարունակության հետ կապված որևէ այլ վարույթ, կամ

4.5.5.3. Մասնավոր գործընկերը Նյութերի նկատմամբ մտավոր սեփականության իրավունքները փոխանցում է (Հանրային գործընկերոջը այդ մասին ծանուցելով) երրորդ անձի, որը բոլոր կողմերին հայտնի դառնալուց հետո 60 օրվա ընթացքում չի ապահովում Հանրային գործընկերոջ օգտին էսքրոու պաշտպանության շարունակությունը կա՛մ էսքրրու պայմանագիրը կամ սույն Պայմանագիրը փոխանցվող կողմին փոխանցումը ապահովելու կա՛մ նոր՝ էապես նման պաշտպանություն նախատեսող էսքրոու պայմանագիր կնքելու միջոցով:

4.5.6. Մասնավոր գործընկերը համաձայնում է, որ երրորդ անձը, ով հանդես է գալիս որպես էսքրոու գործակալ, իրավունք է ունենալու Նյութերը բացահայտել Հանրային գործընկերոջը 4.5.5-րդ կետով սահմանված դեպքերում: Մինչև սկզբնական (սորս) կոդը էսքրոու հաշվում ներդնելը Կողմերը կկնքեն եռակողմ էսքրոու պայմանագիր էսքրոու գործակալ կազմակերպության հետ, որը ընտրվելու է համաձայն 4.5.9-րդ կետի, ներառելով, մասնավորապես, 4.5.5-րդ կետում նշված պայմանագրի կիրառման դեպքերը:

4.5.7. Մասնավոր գործընկերը հավաստիացնում է Հանրային գործընկերոջը, որ Նյութերը, որոնք հասանելի են դառնում 4.5.5-րդ կետով սահմանված դեպքում, բավարար են, որպեսզի ապահովեն համապատասխան որակավորում ունեցող անձին հնարավորություն շարունակելու Ծառայությունների և Գործառնությունների իրականացումը:

4.5.8. Հանրային գործընկերը հավաստիացնում է Մասնավոր գործընկերոջը, որ կօգտագործի իրեն հասանելի դարձած Նյութերը բացառապես Ծառայությունների և Գործառնությունների իրականացման հետ կապված:

4.5.9. Էսքրոու գործակալ հանդիսացող ընկերությունը ընտրվում է Մասնավոր գործընկերոջ կողմից՝ Հանրային կողմի հաստատմամբ:

4.5.10. Էսքրոու հաշվի ծախսերը կրում է Մասնավոր գործընկերը:

4.5.11. Սույն 4.5-րդ կետով սահմանված Մասնավոր գործընկերոջ պարտավորությունները դադարում են Հավելված 3-ի (Տեխնիկական պահանջները) «2.6.3. Հետփոխանցման պահանջները» գլխում նշված երաշխիքի դադարման պահին: Համապատասխանաբար, էսքրոու պայմանագրի ժամկետը պետք է սահմանված լինի այս ժամկետով: Սույն կետի համաձայն Մասնավոր գործընկերոջ էսրքոու պարտավորությունների

դադարումից հետո Նյութերը, որոնք ներդրվել են էսքրոու հաշվում, վերադարձվելու են Մասնավոր գործընկերոջը:

4.6. **Ծանրաբեռնումները**

4.6.1. Մասնավոր գործընկերն իրավունքի չունի որևէ կերպ ծանրաբեռնելու սույն Պայմանագրի համաձայն շահագործվող և սպասարկվող Ծրագրի ակտիվները: Վերոնշյալը չի վերաբերում Անշարժ գույքի ակտիվների՝ երրորդ անձանց օգտագործմանը թույլատրված փոխանցմանը, ինչպես նաև Մասնավոր գործընկերոջ կորպորատիվ իրավունքների՝ երրորդ անձանց թույլատրված փոխանցմանը՝ Պայմանագրի Հոդված 10.6-ին համապատասխան: Տարընկալումներից խուսափելու համար՝ սույն կետը չի սահմանափակում Մասնավոր գործընկերոջ իրավունքը կնքել լիզինգի պայմանագրեր Շարժական գույքի վերաբերյալ կամ հատուկ և բացառապես Շարժական գույքի ձեռքբերման նպատակով այլ ֆինանսավորման պայմանագրեր:

4.6.2. Մասնավոր գործընկերը կապահովի, որ Հետփոխանցման օրվա դրությամբ որևէ Ծրագրի ակտիվի նկատմամբ որևէ ծանրաբեռնում չլինի: Եթե այդպիսի ծանրաբեռնում առկա է, ապա Մասնավոր գործընկերը պարտավոր է փոխհատուցել Հանրային գործընկերոջը իրավիճակը ուղղելու համար կրած բոլոր ծախսերը, ներառյալ, բայց չսահմանափակելով՝ ծանռաբեռնումը վերացնելու և ակտիվը ծանրաբեռնումից ազատելու հետ կապված ծախսերը:

4.6.3. Վարձակալության պայմանագրերը պետք էՀոդված 7.8-ում նշված կարգով պարունակեն Վարձակալված ակտիվների ծանրաբեռնումներին վերաբերող հատուկ պայմաններ, որոնց նպատակն է ապահովել Ծրագրի իրականացումը սույն Պայմանագրի համաձայն:

5. ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ

5.1. **Մասնավոր գործընկերոջ երաշխիքները և հավաստիացումները**

5.1.1. Մասնավոր գործընկերը սույնով հավաստիացնում և երաշխավորում է, որ Կնքման օրվա դրությամբ և մինչև Մեկնարկի օրը՝

5.1.1.1. Մասնավոր գործընկերը պատշաճ լիազորված է և ունի անհրաժեշտ իրավունակությունը՝ կատարելու սույն Պայմանագրով սահմանված կամ սույն Պայմանագրի հետ կապված իր պարտավորությունները, ինչպես նաև Մասնավոր գործընկերոջ ներկայացուցիչները պատշաճ լիազորված են կնքելու սույն Պայմանագիրը.

5.1.1.2. Մասնավոր գործընկերը ձեռնարկել է բոլոր գործողությունները և ստացել է բոլոր հաստատումները, որոնք անհրաժեշտ են Մասնավոր գործընկերոջ հիմնադիր փաստաթղթերին համապատասխան՝ սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների

իրականացման և պատշաճ կատարման համար.

5.1.1.3. Մասնավոր գործընկերն ունի Ծրագիրն իրականացնելու ֆինանսական կարողություն.

5.1.1.4. սույն Պայմանագրի ստորագրումը և կատարումը չեն հակասի հետևյալին.

5.1.1.4.1. Մասնավոր գործընկերոջ կամ նրա որևէ գույքի նկատմամբ պարտականություններ սահմանող ցանկացած պայմանագիր.

5.1.1.4.2. Մասնավոր գործընկերոջ հիմնադիր փաստաթղթեր. կամ

5.1.1.4.3. գործող Կիրառելի իրավունքի որևէ դրույթ.

5.1.1.5. Մասնավոր գործընկերոջ կամ դրա ներկայացուցիչների կողմից սույն Պայմանագրին համապատասխան տրամադրված ցանկացած տեղեկություն ճիշտ է, ճշգրիտ է, արդիական և ամբողջական է, և Մասնավոր գործընկերը հետագա փոփոխությունների դեպքում թարմացնում է այդ տեղեկությունները՝ դրանց հավաստիությունը, ճշգրտությունը և ամբողջականությունն ապահովելու համար.

5.1.1.6. Հայտում և Ընտրության ընթացակարգի ընթացքում Մասնավոր գործընկերոջը և Գնահատող հանձնաժողովին տրամադրված Հաղթողի մյուս փաստաթղթերում ներկայացված բոլոր երաշխիքները, հավաստիացումները, հաստատումներն ու պարտավորությունները ճիշտ են, ամբողջական և ճշգրիտ են և կմնան ուժի մեջ սույն Պայմանագրի կնքման և կատարման նպատակներով, այդ թվում՝ Հաղթողի Հայտում սահմանված պարտականությունների առումով, որոնք Մասնավոր գործընկերոջ համար պարտադիր են դարձել սույն Պայմանագրի համաձայն.

5.1.1.7. Մասնավոր գործընկերը ունի իրավական գործունակություն իրականացնելու իր՝ Պայմանագրով սահմանված պարտականությունները և որ այդ պարտականությունները վավեր, պարտադիր և կատարման ենթակա են, և իրականացվելու են իրավաչափ ձևով .

5.1.1.8. Մասնավոր գործընկերոջը հայտնի չէ որևէ հանգամանք, որը կխոչընդոտեր սույն Պայմանագրի կնքումը և կատարումը.

5.1.1.9. Մասնավոր գործընկերը համաձայնում է կրել բոլոր ծախքերը, վճարները, ծախսերը և ռիսկերը՝ կապված արժույթի փոխարժեքի փոփոխման ռիսկի հետ, եթե այդպիսիք առկա են.

5.1.1.10. Մասնավոր գործընկերն ուսումնասիրել է Ծրագրին վերաբերող բոլոր տվյալներն ու նյութերը, որոնք ձեռք են բերվել Ընտրության ընթացակարգին Հաղթողի մասնակցության հետ կապված, այդ թվում՝

Ծրագրի ռիսկերին վերաբերող տեղեկությունները.

5.1.1.11. որևէ դատարանում, արբիտրաժային տրիբունալում կամ որևէ այլ իրավասու մարմնում չեն քննվում հայցեր, դատավարություն կամ վարույթ, կամ որքանով հայտնի է Մասնավոր գործընկերոջը, առկա չէ այդպիսի սպառնալիք, որոնք կարող են հանգեցնել Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման կամ Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի, կամ ինչը կարող է առանձին կամ համատեղ հանգեցնել սույն Պայմանագրի Դադարեցման.

5.1.1.12. Մասնավոր գործընկերոջ նկատմամբ չի կիրառվել որևէ տուգանք, տույժ, պատիժ կամ քաղաքացիական, քրեական և այլ պատասխանատվության միջոց, որոնք համատեղ հանգեցնում են կամ կարող են հանգեցնել սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների խախտման կամ Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի.

5.1.1.13. Մասնավոր գործընկերը կատարում է սույն Պայմանագրի՝ Մասնավոր գործընկերոջ բաժնեմասնակցության կառուցվածքին վերաբերող պահանջները.

5.1.1.14. Մասնավոր գործընկերը (ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն) չի կատարել, տրամադրել, առաջարկել կամ չի կատարի կամ տրամադրի որևէ անօրինական վճարում՝ Ընտրության ընթացակարգի արդյունքների ամփոփումը կամ Հանրային գործընկերոջ հետ սույն Պայմանագրի ստորագրումն ապահովելու, ինչպես նաև այդ գործողությունները կատարելու նպատակով Հանրային գործընկերոջ ներկայացուցիչների, Գնահատող հանձնաժողովի անդամների կամ Ընտրության ընթացակարգում և Պայմանագրի կնքման գործընթացում պաշտոնապես ներգրավված այլ անձանց վրա ներազդելու կամ դրանց կատարմանը դրդելու համար:

5.2. **Հանրային գործընկերոջ երաշխիքները և հավաստիացումները**

5.2.1. Հանրային գործընկերը սույնով հավաստիացնում և երաշխավորում է, որ սույն Պայմանագրի կնքման օրվա դրությամբ՝

5.2.1.1. Հանրային գործընկերը պատշաճ լիազորված է և ունի անհրաժեշտ իրավունակություն՝ կատարելու սույն Պայմանագրով սահմանված կամ սույն Պայմանագրի հետ կապված իր պարտավորությունները, ինչպես նաև Մասնավոր գործընկերոջ ներկայացուցիչը պատշաճ լիազորված է կնքելու սույն Պայմանագիրը.

5.2.1.2. Հանրային գործընկերը ձեռնարկել է բոլոր գործողությունները և ստացել է բոլոր հաստատումները, որոնք անհրաժեշտ են Կիրառելի իրավունքին համապատասխան՝ սույն Պայմանագրով սահմանված իր

պարտավորությունների իրականացման և պատշաճ կատարման համար.

5.2.1.3. սույն Պայմանագրով Հանրային գործընկերոջ կողմից ստանձնված պարտավորությունները համարվում են իրավաչափ, օրինական, պարտադիր և կատարման ենթակա.

5.2.1.4. սույն Պայմանագրի դրույթները որևէ ձևով չեն սահմանափակում Հանրային գործընկերոջ՝ որպես պետական մարմնի լիազորությունները կամ չեն անդրադառնում դրանց վրա՝ Կիրառելի իրավունքին համապատասխան.

5.2.1.5. Փոխանցվող ակտիվները ծանրաբեռնված չեն երրորդ անձանց որևէ իրավունքով և (կամ) պահանջով և գրավադրված չեն, Փոխանցվող ակտիվների առնչությամբ չեն իրականացվում դատական վարույթներ և (կամ) կատարողական վարույթներ:

6. ԾՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

6.1. **Ծրագրի ժամկետը**

6.1.1. Ծրագրի ժամկետը տասնմեկ (11) տարի է, հաշվի առնելով 7.4.3 և 7.10.4 կետերով սահմանված դրույթները: Ծրագրի ժամկետը սկսվում է Մեկնարկի օրվանից և ավարտվում է Հետփոխանցման օրը, որոնք ևս սահմանվում են սույն Պայմանագրում:

6.1.2. Սույն պայմանագրի գործողության ժամկետը կսկսվի Կնքման օրվանից և կավարտվի Հետփոխանցման օրը (բացառությամբ սույն Պայմանագրի դրույթների, որոնք մնում են ուժի դադարեցումից հետո): Կասկածներից խուսափելու համար Պայմանագրի ժամկետը ներառում է Ծրագրի ժամկետը:

6.2. **Պայմանագրի գործողությունը**

6.2.1. Սույն Պայմանագիրը գործողության մեջ է մտնում Կնքման օրը, այնքանով, որքանով սահմանված է սույն փաստաթղթում, լիարժեք գործողության մեջ է մտնում Մեկնարկի օրը և շարունակում է ուժի մեջ մնալ մինչև Ծրագրի ժամկետի ավարտը՝ բացառությամբ Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման՝ դրա ժամկետներին և պայմաններին համապատասխան: Կողմերի՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունները շարունակում են ուժի մեջ մնալ մինչև դրանց կատարումը, եթե Կիրառելի իրավունքով կամ սույն Պայմանագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ:

6.2.2. Պայմանագրի դրույթները, որոնք ըստ իրենց համատեքստի պետք է կիրառվեն Կնքման օրվանից, ուժի մեջ են մտնում Կնքման օրը: Պայմանագրի մյուս բաժինները և դրույթներն ուժի մեջ են մտնում Մեկնարկի օրը:

7. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

7.1. **Ընդհանուր դրույթներ**

7.1.1. Անցումային ժամանակահատվածը ներառում է՝

7.1.1.1. ՆՊ կատարման ժամկետը, որը սկսվում է Կքնման օրվան հաջորդող օրը և ավարտվում է ՆՊ-ների ն ավարտման օրը, ինչպես մանրամասն ներկայացվում է ստորև՝ սույն 7-րդ բաժնում.

7.1.1.2. Փակման ժամանակահատվածը, որը սկսվում է ՆՊ-ների կատարման օրվան հաջորդող օրը և ավարտվում է Փակման օրը, ինչպես մանրամասն ներկայացվում է ստորև՝ սույն 7-րդ բաժնում:

Անցումային ժամանակահատվածն ավարտվում է Փակման օրը, եթե տեղի չի ունեցել Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցում՝ դրա ժամկետներին և պայմաններին համապատասխան:

7.1.2. Անցումային ժամանակահատվածի նպատակն է ապահովել բոլոր անհրաժեշտ պայմանները և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ Պայմանագրի համաձայն Ծրագիրը Մասնավոր գործընկերոջ կողմից Մեկնարկի օրվանից լիարժեք իրականացվելու համար:

7.2. **Անցումային ժամանակահատվածում կողմերի ընդհանուր պարտականությունները**

7.2.1. Անցումային ժամանակահատվածում Կողմերը՝

7.2.1.1. Ինտենսիվ և արդյունավետորեն համագործակցում են՝ ՆՊ-ները և Փակումն առանց անհարկի ուշացումների ապահովելու նպատակով.

7.2.1.2. ապահովում են կամ լավագույնս ջանքեր են գործադրում պետության սեփականություն հանդիսացող այն ակտիվներում (Մասնավոր գործընկերոջ համար՝ Անցումային ժամանակահատվածում նման ակտիվների գույքագրման կամ գտնվելու վայրի այցի ընթացքում) ծառայությունների անխափան տրամադրումը և գործառնական այլ գործողությունների իրականացումն (եթե կիրառելի է) ապահովելու համար, որոնք կարող են դառնալ Ծրագրի ակտիվներ՝ սույն Պայմանագրին համապատասխան:

7.2.2. Հանրային գործընկերը՝

7.2.2.1. աջակցում է, որ Մասնավոր գործընկերը Հոդված 10.7.2-ում նախատեսված կարգով ունենա այն բոլոր Թույլտվությունները, որոնք անհրաժեշտ են Կիրառելի իրավունքի շրջանակներում Փոխանցվող ակտիվներում Ներդրումային պարտավորությունները կատարելու համար.

7.2.2.2. ապահովում է Փոխանցվող ակտիվների պահումը և պահպանումը, քանի դեռ այդ ակտիվները չեն հանձնվել Մասնավոր գործընկերոջը

Փակման ընթացքում.

7.2.2.3. ապահովում է, որ Մասնավոր գործընկերոջը հասանելի լինեն Փոխանցվող ակտվները, ինչպես նաև այն տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք Մասնավոր գործընկերը կարող է ողջամտորեն պահանջել Հանրային գործընկերոջից՝ ՆՊ-ները կատարելու և Փակումն իրագործելու համար:

7.2.3. Կնքման օրվանից սկսած հնարավորինս սեղմ ժամկետներում Հանրային գործընկերը Մասնավոր գործընկերոջը ներկայացնում է այն աշխատակիցների ամբողջական ցանկը, ովքեր ներգրավված են Անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված ծառայությունների և այլ գործառնությունների իրականացմանը: Ցանկը ներառելու է կապի և աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև այլ տեղեկատվություն, որը կարող է կարևոր լինել Մասնավոր գործընկերոջ կողմից ցանկում նշված աշխատակիցների հետ Ծրագրի իրականացման նպատակով աշխատանքային հարաբերություններ հաստատելու հնարավորության գնահատման համար:

Մասնավոր գործընկերը չունի և չի ունենա պարտավորություն աշխատանքային հարաբերություններ հաստատել այդ Անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված ծառայությունների և գործառնությունների ցուցակում գտնվող աշխատակիցների հետ: Այնուամենայնիվ, որպեսզի իրականացվի սույն Պայմանագրով գծանշված փոխանցվող ծառայությունը իրականացնելու նպատակով, Մասնավոր գործընկերը անձանց աշխատանքի ընդունման ընթացքում, Հանրային գործընկերոջ կողմից տրամադրված ցուցակից անհրաժեշտ աշխատակազմի հավաքագրման ընթացքում, կանցկացնի հարցազրույցներ Հանրային գործընկերոջ կողմից տրամադրված ցուցակից այնքան աշխատակիցների հետ, որքան նա կհամարի անհրաժեշտ՝ հիմնվելով իր իր աշխատանքային կարիքների վրա: Մասնավոր գործընկերը կարող է, իր հայեցողությամբ, ընտրել թեկնածուների ցուցակից համապատասխան թեկնածուներին աշխատանքի ընդունելու համար՝ հիմնվելով նրանց որակավորումների, փորձի և աշխատանքին համապատասխանության վրա: Մասնավոր գործընկերը, աշխատակազմի ներգրավման գործընթացները ավարտելուց հետո տեղեկացնում է Հանրային գործընկերոջը Հանրային գործընկերոջ կողմից տրամադրված ցուցակից հարցազրույց անցկացված աշխատակիցների թվի վերաբերյալ և աշխատանքային հարաբերություններ հաստատած աշխատակիցների վերաբերյալ:

Տարընկալումներից խուսափելու նպատակով՝ սույն 7.2.3-րդ կետը չի ստեղծում որևէ պարտականություն Մասնավոր գործընկերոջ համար՝ առաջարկել աշխատանքային հարաբերություններ Հանրային գործընկերոջ կողմից տրամադրված ցուցակում ներառված որևէ աշխատակցի հետ:

7.2.4. Հանրային գործընկերը կդադարեցնի Անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված Ծառայությունների և Գործառնությունների մատուցումը Փակման

օրվա դրությամբ և գրավոր այդ մասին կծանուցի Մասնավոր գործընկերոջը: Հանրային գործընկերը կտեղեկացնի հանրությանը Անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված Ծառայությունների և Գործառնությունների մատուցման կասեցման վերաբերյալ:

7.3. **Նախապայմանները**

7.3.1. Փակման համար գործում են հետևյալ Նախապայմանները (ՆՊ-ները)՝ սույն Պայմանագրին համապատասխան.

7.3.1.1. Մասնավոր գործընկերն իրականացնում է Ֆինանսավորման փակում 7.5 կետում նախատեսված կարգով.

7.3.1.2. Մասնավոր գործընկերը, Վարկատուն/Վարկատուները և Հանրային գործընկերը 7.6 կետում նախատեսված կարգով կնքում են Ուղիղ պայմանագիր (եթե Վարկատուն/Վարկատուները ներգրավվել են Ներդրումային պարտավորությունների ֆինանսավորման նպատակով).

7.3.1.3. Փոխանցվող ակտիվների գույքագրումն իրականացնելու և Նախագծային փաստաթղթերը հաստատելու համար Կողմերը, 21-րդ բաժնում սահմանված կարգին համապատասխան, ներգրավում են Անկախ փորձագետի.

7.3.1.4. Կողմերը 7.7 կետում նախատեսված կարգով իրականացնում են Փոխանցվող ակտիվների գույքագրում.

7.3.1.5. Կողմերի ստանում են Նախագծային փաստաթղթերի հաստատում Անկախ փորձագետի կողմից՝ 7.8 կետում նախատեսված կարգով.

7.3.1.6. Կողմերը 7.9 կետում նախատեսված կարգով հաստատում են Վարձակալության պայմանագրերի պայմանները.

7.3.1.7. Կողմերը պայմանագիր են կնքում Արագ ծառայությունների մատուցման գործում Հանրային գործընկերոջ ներգրավվածության փոխհատուցման մասին.

7.3.1.8. Մասնավոր գործընկերը 9.2 Հոդվածի պահանջների համաձայն Հանրային գործընկերոջը տրամադրում է Գործառնությունների ապահովում:

7.4. **ՆՊ-ների կատարումը**

7.4.1. Կողմերը ՆՊ-ները կատարում են ՆՊ-ների կատարման ժամկետում, որը չպետք է գերազանցի Կնքման օրվան հաջորդող օրվանից հետո երեք (3) ամիսը:

7.4.2. Եթե ՆՊ-ների կատարման ժամկետը լրանալուց մեկ (1) ամիս առաջ չեն

կատարվել բոլոր ՆՊ-ները, ապա Մասնավոր գործընկերը հնարավորինս սեղմ ժամկետում (սակայն ոչ ավելի, քան տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում) տեղեկացնում է Հանրային գործընկերոջը ՆՊ-ների կատարման կարգավիճակի մասին, այն խնդիրների մասին, որոնց բախվել է Մասնավոր գործընկերը ՆՊ-ները կատարելիս, ինչպես նաև Մասնավոր գործընկերոջ կողմից ՆՊ-ների կատարման համար անհրաժեշտ ժամկետի հաշվարկը: Այնուհետև Կողմերը հնարավորինս սեղմ ժամկետում հանդիպում են անցկացնում և մշակում ՆՊ-ների կատարման գործողությունների ծրագիր:

7.4.3. Եթե ՆՊ-ների կատարման ժամկետը լրանալու օրը Նախապայմանները չեն կատարվել Կողմերի կողմից, ապա Հանրային գործընկերն իրավունք ունի երկարաձգելու ՆՊ-ների կատարման ժամկետը ոչ ավելի, քան մեկ (1) ամսով՝ Մասնավոր գործընկերոջը նախապես ուղարկելով դրա վերաբերյալ ծանուցում: ՆՊ-ների կատարման ժամկետի հետագա երկարաձգումը միայն թույլատրվում է Կողմերի միջև գրավոր ձեռք բերված համաձայնությամբ: Սույն կետով սահմանված ցանկացած երկարաձգում կհանգեցնի Ծրագրի ժամկետի համապատասխան նվազեցում՝ հավասարված ՆՊ-ների կատարման ժամկետի երկարաձգմանը:

7.4.4. Եթե ՆՊ-ների կատարման ժամկետում (7.4.3 կետի համաձայն դրա հնարավոր երկարաձգմանը համապատասխան) ՆՊ-ները չեն կատարվել և ՆՊ-ների կատարման ժամկետը չի երկարաձգվել, ապա ՆՊ-ների կատարման ժամկետը լրանալուց հետո հինգերորդ (5-րդ) Աշխատանքային օրվանից Մասնավոր գործընկերը կամ Հանրային գործընկերը կարող է որոշել դադարեցնել Պայմանագիրը ՝ քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում մյուս համապատասխան Կողմին նախապես ուղարկելով Պայմանագրի դադարեցման մասին ծանուցում: Այս ծանուցման ժամկետը լրանալուն պես Պայմանագիրն ինքնաբերաբար դադարում է առանց հետագա ծանուցման անհրաժեշտության, եթե բոլոր չկատարված ՆՊ-ների կատարումը չի ապահովվել նշյալ քսաներկու (22) Աշխատանքային օրը լրանալու օրը կամ դրանից առաջ (որի դեպքում Պայմանագիրը չի դադարում):

7.4.5. Եթե Պայմանագրի Դադարեցումը տեղի է ունենում 7.4 կետի համաձայն, ապա Հանրային գործընկերը տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում Մասնավոր գործընկերոջն է վերադարձնում Մրցույթի ապահովումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ՆՊ-ները չեն կատարվել Մասնավոր գործընկերոջ մեղքով: Մրցույթի ապահովման վերադարձը համարվում է Պայմանագրի այդ Դադարեցման մասով Մասնավոր գործընկերոջ միակ և բացառիկ պահանջը, և Մասնավոր գործընկերը չունի որևէ այլ պահանջ Պայմանագրի այդ Դադարեցման, այդ թվում՝ փոխհատուցում ստանալու հետ կապված:

7.4.6. Բոլոր ՆՊ-ները կատարվելուց հետո Մասնավոր գործընկերը և Հանրային գործընկերը միմյանց ուղարկում են ՆՊ-ների կատարման վերաբերյալ ծանուցումներ, որոնք ուղեկցվում են ՆՊ-ների կատարումը հաստատող փաստաթղթերով (ըստ անհրաժեշտության): ՆՊ-ների կատարման օր է համարվում այն օրը, երբ Կողմերը գրավոր հաստատել են և միմյանց ուղարկել

են ՆՊ-ների կատարման վերաբերյալ ծանուցումները համապատասխան հաստատող փաստաթղթերի հետ միասին:

7.5. **Ֆինանսավորման փակումը**

7.5.1. Մասնավոր գործընկերն ապահովում է Ֆինանսավորման փակումը Ներդրումային պարտավորությունները ֆինանսավորելու համար անհրաժեշտ ծավալով: Ֆինանսավորման փակումը կարող է ներառել հետևյալը.

7.5.1.1. Մասնավոր գործընկերը ստորագրում է բոլոր անհրաժեշտ Ֆինանսավորման փաստաթղթերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր՝ Վարկատուի/Վարկատուների միջոցով ֆինանսավորում տրամադրելու համար, և Հանրային գործընկերոջը տրամադրում է ստորագրված Ֆինանսավորման փաստաթղթերի օրինակները, ինչպես նաև կատարում է Վարկատուի/Վարկատուների կողմից առաջին մասհանումը տրամադրելու համար բոլոր նախապայմանները.

7.5.1.2. Մասնավոր գործընկերն իր սեփական ֆինանսական միջոցները փոխանցում է իր հաշվին և Հանրային գործընկերոջը տրամադրում է այդ փոխանցումը հաստատող բանկային քաղվածքները.

7.5.1.3. Մասնավոր գործընկերն իր բաժնետիրոջ (բաժնետերերի) հետ կնքում է լրացուցիչ ներդրումներ կատարելու վերաբերյալ համաձայնագիր (համաձայնագրեր), ինչպես նաև կազմում է փաստաթղթեր, որոնք հաստատում են Մասնավոր գործընկերոջ բաժնետիրոջ (կամ այդ բաժնետիրոջ հետ Փոխկապակցված անձի)՝ լրացուցիչ ներդրում կատարելու ֆինանսական հնարավորությունը, մասնավորապես՝ բանկային քաղվածքներ կամ ֆինանսավորման համաձայնագրեր, ինչպես նաև Հանրային գործընկերոջն է տրամադրում այդ փաստաթղթերի օրինակները:

7.5.2. Եթե Մասնավոր գործընկերը կնքում է Ֆինանսավորման փաստաթղթեր՝ Ֆինանսավորման փակումն իրագործելու նպատակով, ապա Մասնավոր գործընկերը՝

7.5.2.1. երաշխավորում է, որ Ֆինանսավորման փաստաթղթերի պայմաններն առևտրային առումով ողջամիտ են և չեն հակասում սույն Պայմանագրի դրույթներին.

7.5.2.2. ստորագրված Ֆինանսավորման փաստաթղթերի օրինակները տրամադրում է Հանրային գործընկերոջը մինչև Ուղիղ պայմանագրի կնքումը (եթե կնքվում է Ուղիղ պայմանագիր):

7.6. **Ուղիղ պայմանագրի կնքումը**

7.6.1. Այն դեպքում, երբ Մասնավոր գործընկերը Ներդրումային պարտավորությունները ֆինանսավորելու նպատակով Վարկատուից (Վարկատուներից) ստանում է Վարկ, Մասնավոր գործընկերը և Հանրային

գործընկերը Վարկատուի (Վարկատուների) հետ բարեխղճորեն վարում են բանակցություններ՝ Ուղիղ պայմանագիր կնքելու համար:

7.6.2. Ուղիղ պայմանագրի ժամկետները և պայմանները սահմանվում են դրա կողմերի կողմից և ներառում են նվազագույնը, բայց չսահմանափակելով, հետևյալը.

7.6.2.1. Միջամտության իրավունքն իրացնելու կարգը և պայմանները.

7.6.2.2. Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցումն անմիջապես Վարկատուի/Վարկատուների բանկային հաշվին (հաշիվներին) փոխանցելու պայմանն այն չափով, որը չի գերազանցում Փոխհատուցվող պարտքի գումարը և սույն Պայմանագրի Հավելված 8-ի (*ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ*) համապատասխան հաշվարկված վաղաժամկետ մարման հետ կապված ծախսերը.

7.6.2.3. Վարկատուին (Վարկատուներին) Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման վճարման կարգը, որով պետք է սահմանվի, որ Փոխհատուցվող պարտքի գումարը պետք է վճարվի առաջինը, Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետ կապված ծախսերը պետք է փոխհատուցվեն միայն Փոխհատուցվող պարտքի գումարի ամբողջական մարումից հետո միայն, իսկ փոխհատուցման կարգում ամենավերջինը Փոխհատուցվող Բաժնեմասնակցության համար տրվող փոխհատուցումն է:

7.7. **Գույքագրումը**

7.7.1. Կողմերը կատարում են Փոխանցվող ակտիվների գույքագրում՝ Փակման պահին այդ ակտիվների փոխանցման հիմնական պայմանները սահմանելու համար: Գույքագրման գործընթացն առնվազն ներառում է (i) Հավելված 3-ում (*Տեխնիկական Պահանջներ*) ներկայացված Տեխնիկական պահանջների պայմաններին Փոխանցվող ակտիվների յուրաքանչյուր կատեգորիայի համապատասխանության ստուգում, և (ii) Սկզբնական շարժական գույքի և Սկզբնական ոչ նյութական ակտիվների այն ցուցակների հստակեցումը, որոնք կփոխանցվեն Մասնավոր Գործընկերոջը, ինչպես նաև Սկզբնական շարժական գույքի և Սկզբնական ոչ նյութական ակտիվների այն ցուցակները, որոնք չեն փոխանցվի Մասնավոր Գործընկերոջը և կմնան Հանրային Գործընկերոջ մոտ:

Գույքագրումն իրականացվում է Անկախ փորձագետի կողմից: Գույքագրման ընթացքում անհրաժեշտության և նպատակահարմարության դեպքում կարող են ներկա գտնվել Կողմերի ներկայացուցիչները:

7.7.2. Գույքագրումն ավարտվում է Անկախ փորձագետի կողմից գույքագրման հաշվետվության տրամադրմամբ: Գույքագրման հաշվետվությունը կազմվում է երկու (2) բնօրինակից՝ մեկական (1) օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

7.8. **Նախագծային փաստաթղթերի հաստատումը**

7.8.1. Մասնավոր գործընկերը կազմում է նախագծային փաստաթղթերը, որոնցում ներկայացվում են այն բարեկարգումների տեխնիկական լուծումները, որոնք Մասնավոր գործընկերը կատարելու է Ծրագրի ակտիվների նկատմամբ իր Ներդրումային պարտավորությունների շրջանակներում՝ Տեխնիկական պահանջներին համապատասխան (**Նախագծային փաստաթղթեր**), այդ թվում՝ առնվազն՝

7.8.1.1. Գրանցման կենտրոնների ցանցի նկարագրությունը.

7.8.1.2. Փոխանցվող ակտիվների նկատմամբ կատարման ենթակա բարեկարգումների նախագծային և այլ համապատասխան տեխնիկական լուծումներ.

7.8.1.3. Գրացման կենտրոններում կատարման ենթակա բարեկարգումների նախագծային և այլ համապատասխան տեխնիկական լուծումներ.

7.8.1.4. Տեխնիկական պահանջների 2.6.1 ենթաբաժնում սահմանված նախագծման և իրականացման պայմաններին նախատեսվող Մասնավոր գործընկերոջ համապատասխանության նկարագրությունը:

7.8.2. Մասնավոր գործընկերը Նախագծային փաստաթղթերը ներկայացնում է Հանրային գործընկերոջ և Անկախ փորձագետի ուսումնասիրությանը: Այս ուսումնասիրության (կամ ուսումնասիրության փուլերի՝ ըստ ողջամիտ անհրաժեշտության և նպատակահարմարության) հիման վրա Մասնավոր գործընկերը կազմում է Նախագծային փաստաթղթերի վերջնական տարբերակը և այն ներկայացնում է Անկախ փորձագետի հաստատմանը:

Նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, երբ Անկախ փորձագետը տրամադրում է Նախագծային փաստաթղթերի հաստատման վերաբերյալ եզրակացությունը: Այս եզրակացությունը և Նախագծային փաստաթղթերի հաստատված տարբերակը կազմվում են երկու (2) բնօրինակից՝ մեկական (1) օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

7.9. **Վարձակալության պայմանագրերի պայմանների հաստատումը**

7.9.1. Կողմերը հաստատում են այն Վարձակալության պայմանագրերի պայմանները, որոնք պետք է Փակման ժամանակ կնքվեն Վարձակալված անշարժ գույքի առնչությամբ:

7.9.2. Վարձակալության պայմանագրերի պայմաններն առնվազն ներառում են՝

7.9.2.1. դրույթներ առ այն, որ Վարձակալության պայմանագրերը ծառայում են Ծրագրի նպատակներին.

7.9.2.2. դրույթներ, որոնցով երաշխավորվում է Վարձակալության պայմանագրերի գործողությունը Ծրագրի ամբողջ ժամկետի

ընթացքում (բացառությամբ սույն Պայմանագրի համաձայն Վարձակալության պայմանագրերի դադարման և փոփոխման թույլատրելի դեպքերի).

7.9.2.3. դրույթներ Մասնավոր գործընկերոջ՝ Վարձակալված անշարժ գույքի օգտագործման իրավունքի մասին.

7.9.2.4. դրույթներ, որոնցով թույլատրվում է Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը Վարձակալված անշարժ գույքի ակտիվների օգտագործմամբ (այդ թվում՝ Մասնավոր գործընկերոջ՝ Վարձակալված անշարժ գույքի ակտիվները տիրապետելու, օգտագործելու, շահագործելու, սպասարկելու և արդիականացնելու, Ներդրումային պարտավորությունները կատարելու և այդ ակտիվներում Ծառայություններ մատուցելու իրավունքը).

7.9.2.5. դրույթներ Մասնավոր գործընկերոջ՝ Վարձակալված անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցման մասին.

7.9.2.6. դրույթներ, որոնցով երաշխավորվում է Վարձակալված անշարժ գույքի ակտիվների փոխանցումը Մասնավոր գործընկերոջը՝ առանց որևէ ծանրաբեռնման, ինչպես նաև դրույթներ, որոնցով սահմանափակվում է այդ ակտիվների նկատմամբ նոր ծանրաբեռնումների սահմանումը՝ առանց Մասնավոր գործընկերոջ և Հանրային գործընկերոջ նախնական հաստատման.

7.9.2.7. դրույթներ, որոնցով թույլատրվում է Հանրային գործընկերոջ կողմից 13-րդ բաժնում նշված հսկողության և մշտադիտարկման իրականացումը Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման նկատմամբ.

7.9.2.8. դրույթներ, որոնցով թույլատրվում է Մասնավոր գործընկերոջ կողմից Վարձակալված անշարժ գույքի գնումը.

7.9.2.9. դրույթներ, որոնցով նախատեսվում է Մասնավոր գործընկերոջ՝ Վարձակալության պայմանագրերով սահմանված բոլոր իրավունքների, սեփականության իրավունքների և պարտավորությունների, այդ թվում, առանց սահմանափակման, Վարձակալված անշարժ գույքի նկատմամբ Մասնավոր գործընկերոջ օգտագործման իրավունքի և Վարձակալված անշարժ գույքի նկատմամբ Մասնավոր գործընկերոջ գնման իրավունքների փոխանցումը Հանրային գործընկերոջը.

7.9.2.10. դրույթներ, որոնցով ապահովվում է, որ Վարձակալության պայմանագրերի վաղաժամկետ դադարեցումը Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման վրա (ինչպես նաև

Ծառայությունների մատուցման և մասնավորապես՝ Ծառայությունների հետ կապված գործառնությունների վրա) չի թողնում զգալի բացասական ազդեցություն.

7.9.2.11. դրույթներ, որոնցով ապահովվում է Վարձակալության պայմանագրերի վաղաժամկետ դադարեցման, Վարձակալության պայմանագրերում փոփոխություններ կատարելու, և սույն Պայմանագրի կատարման վրա հնարավոր զգալի ազդեցություն ունեցող՝ Վարձակալության պայմանագրերի հետ կապված ցանկացած այլ հարցի մասին Հանրային գործընկերոջը պատշաճ ձևով ծանուցումը:

7.10. **Փակումը**

7.10.1. ՆՊ-ների կատարումից հետո Կողմերն իրականացնում են Փակումը, որը ներառում է՝

7.10.1.1. Փոխանցվող ակտիվների փոխանցում Մասնավոր գործընկերոջը: Այս գործողության կատարումը հաստատվում է Կողմերի կողմից ակտիվների փոխանցման ակտի ստորագրմամբ.

7.10.1.2. Վարձակալված անշարժ գույքի առնչությամբ Վարձակալության պայմանագրերի կնքում: Այս գործողության կատարումը հաստատվում է Մասնավոր գործընկերոջ և Վարձակալված անշարժ գույքի ակտիվները Մասնավոր գործընկերոջը փոխանցող համապատասխան երրորդ անձանց միջև բոլոր համապատասխան Վարձակալության պայմանագրերի ստորագրմամբ, ինչպես նաև այդ բոլոր ստորագրված Վարձակալության պայմանագրերի օրինակները Մասնավոր գործընկերոջը ներկայացնելով:

7.10.2. Կողմերը Փակումն իրականացնում են Փակման ժամանակահատվածում, որը չի գերազանցում ՆՊ-ների ավարման օրվան հաջորդող օրվանից մեկ (1) ամիսը:

7.10.3. Եթե Փակման ժամանակահատվածի ավարտից առնվազն հինգ (5) Աշխատանքային օր առաջ Փակումը չի իրականացվել, ապա Կողմերը հնարավորինս սեղմ ժամկետներում անցկացնում են հանդիպում և մշակում են Փակումն իրականացնելու գործողությունների ծրագիր:

7.10.4. Եթե Փակման ժամանակահատվածը լրանալու օրվա դրությամբ Փակումը չի իրականացվել, ապա Հանրային գործընկերն իրավունք ունի երկարաձգելու Փակման ժամանակահատվածը ոչ ավելի, քան մեկ (1) ամիս ժամկետով՝ Մասնավոր գործընկերոջը նախապես ուղարկելով այդ մասին ծանուցում: Փակման ժամանակահատվածի հետագա երկարաձգումը թույլատրվում է միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ: Սույն կետի ներքո ցանկացած երկարաձգում կհանգեցնի Փակման ժամանակահատվածի երկարաձգման ժամկետի համապատասխան նվազեցման Ծրագրի ժամկետից:

7.10.5. Եթե Փակման ժամանակահատվածում (7.10.4 կետի համաձայն դրա հնարավոր երկարաձգումը հաշվի առնելով) Փակումը չի իրականացվել, ապա Փակման ժամանակահատվածը լրանալուց հետո հինգերորդ (5-րդ) Աշխատանքային օրվանից սկսած՝ Մասնավոր գործընկերը կամ Հանրային գործընկերը կարող է որոշել դադարեցնել Պայմանագիրը ՝ քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան մյուս Կողմին նախապես ուղարկելով Պայմանագրի դադարեցման մասին ծանուցում: Այս ծանուցման ժամկետը լրանալուն պես Պայմանագիրն ինքնաբերաբար դադարում է՝ առանց հետագա ծանուցման անհրաժեշտության, եթե Փակման բոլոր չկատարված գործողությունները չեն կատարվել նշյալ քսաներկու (22) Աշխատանքային օրը լրանալու օրվա դրությամբ կամ դրանից առաջ (որի դեպքում սույն Պայմանագիրը չի դադարում):

7.10.6. Պայմանագրի Դադարեցումը 7.10 կետի համաձայն տեղի ունենալու դեպքում՝

7.10.6.1. Հանրային գործընկերը տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում Մրցույթի ապահովումը վերադարձնում է Մասնավոր գործընկերոջը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Փակումը չի իրականացվել Մասնավոր գործընկերոջ մեղքով: Մրցույթի ապահովման վերադարձը համարվում է Պայմանագրի այդ դադարեցման մասով Մասնավոր գործընկերոջ միակ և բացառիկ պահանջը, և Մասնավոր գործընկերը չունի որևէ այլ պահանջ՝ Պայմանագրի այդ դադարեցման, այդ թվում՝ փոխհատուցում ստանալու հետ կապված:

7.10.6.2. Կողմերը ձեռնարկում են բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են իրենց այն պայմանավորվածություններին վերադառնալու համար, որոնք գոյություն են ունեցել Կնքման օրվա դրությամբ, ներառյալ, առանց սահմանափակման, Փոխանցվող ակտիվների վերադարձը Հանրային գործընկերոջը:

7.10.7. Փակումը համարվում է իրականացված 7.10.1 կետում նշված գործողությունների կատարման ամսաթվերից ավելի ուշ ընկած ամսաթվին (**Փակման օր**):

7.10.8. Փակումից հետո Կողմերը հնարավորինս սեղմ ժամկետներում կատարում են հետևյալ գործողությունները.

7.10.8.1. ստորագրում են Փոխանցվող ակտիվների հետ կապված կոմունալ վճարների փոխհատուցման մասին առանձին համաձայնագիր (համաձայնագրեր): Նշյալ համաձայնագրով (համաձայնագրերով) սահմանվում են Մասնավոր գործընկերոջ կողմից Հանրային գործընկերոջ այն կոմունալ վճարների փոխհատուցման ժամկետները և պայմանները, որոնք ուղղակիորեն վերագրելի են Փակման ընթացքում հանձնված Փոխանցվող ակտիվների հետ:

7.10.8.2. բացում են Էսքրոու հաշիվ՝ 10.3 կետով սահմանված Ծառայությունների վճարների հատկացման համար:

8. ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. Հանրային գործընկերը մինչև Կնքման օրը Մասնավոր գործընկերոջը տրամադրել է Ծրագրին առնչվող որոշ նյութեր, փաստաթղթեր, տվյալներ և այլ հանգամանքներ, որոնք վերաբերում են կամ կարող են վերաբերել Ծրագրին և Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորություններին, ինչպես նաև Մասնավոր գործընկերոջը բանավոր կամ գրավոր տրված ցանկացած այլ տեղեկություն (Բացահայտված տեղեկություններ):

8.2. Հանրային գործընկերը կամ նրա որևէ խորհրդական Մասնավոր գործընկերոջ առջև պատասխանատվություն չի կրում Բացահայտված տեղեկություններում առկա որևէ անճշտության, սխալի, բացթողման, թերության կամ անհամապատասխանության համար՝ բացառությամբ Հանրային գործընկերոջ կողմից կատարված խարդախության կամ խաբեության դեպքերի:

8.3. Հանրային գործընկերը չի երաշխավորում կամ հավաստիացնում, որ Բացահայտված տեղեկություններն արտացոլում են իր տիրապետման կամ լիազորության ներքո գտնվող (Ընտրության ընթացակարգի ընթացքում կամ սույն Պայմանագիրը կնքելիս) բոլոր տեղեկությունները, որոնք վերաբերում են Ծրագրին կամ Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորություններին կամ կարևոր նշանակություն ունեն դրանց համար: Հանրային գործընկերը պատասխանատվություն չի կրում Մասնավոր գործընկերոջ առջև Մասնավոր գործընկերոջը որևէ տեղեկություն, փաստաթուղթ կամ տվյալ չբացահայտելու կամ չտրամադրելու (սույն Պայմանագիրը կնքելուց առաջ կամ հետո), Բացահայտված տեղեկությունները չթարմացնելու, Բացահայտված տեղեկություններում առկա որևէ անճշտության, սխալի, բացթողման, թերության կամ անհամապատասխանության մասին Մասնավոր գործընկերոջը չտեղեկացնելու (սույն Պայմանագիրը կնքելուց առաջ կամ հետո) համար՝ բացառությամբ խարդախության, կանխամտածված ոչ իրավաչափ վարքագծի կամ խաբեության դեպքերի:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆԵՐԸ

9.1. **Մրցույթի ապահովումը**

9.1.1. Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջը ներկայացրել է 170,000,000 ՀՀ դրամ համարժեք չափով բանկային երաշխիք՝ ԱՆՀ-ի համաձայն (**Մրցույթի ապահովում**): Մասնավոր գործընկերը պատասխանատվություն է կրում Մրցույթի ապահովումը լիարժեք ուժի և գործողության մեջ պահելու համար, քանի դեռ Գործառնությունների ապահովումը չի ներկայացվել Հանրային գործընկերոջը սույն Պայմանագրի համաձայն:

9.1.2. Եթե նախատեսված է, որ Մրցույթի ապահովման ժամկետը լրանում է մինչև Գործառնությունների ապահովումը Հանրային գործընկերոջը տրամադրելը, ապա Մասնավոր գործընկերը Մրցույթի ապահովման ժամկետը լրանալու համապատասխան օրվանից առնվազն քսաներկու (22) Աշխատանքային օր առաջ երկարաձգում է Մրցույթի ապահովման գործողության ժամկետը կամ

փոխարինում է այն:

9.1.3. Եթե Մասնավոր գործընկերը չի երկարաձգում Մրցույթի ապահովման գործողության ժամկետը կամ չի փոխարինում այն (9.1.2 կետում սահմանված կարգով), ապա Հանրային գործընկերն իրավունք ունի օգտագործելու (իրագործելու) Մրցույթի ապահովման ամբողջ գումարը:

9.1.4. Այդ դեպքում Հանրային գործընկերոջ բոլոր պահանջները, որոնք՝

9.1.4.1. ներկայացվել են մինչև 9.1.1 կետում սահմանված՝ Մրցույթի Մրցույթի ապահովման գործողության ժամկետը լրանալը և

9.1.4.2. կարող են բավարարվել՝ սույն Պայմանագրի համաձայն իրագործելով Մրցույթի ապահովումը. և

9.1.4.3. հանրագումարային չեն գերազանցում Մրցույթի ապահովման չափը,

համարվում են բավարարված՝ իրագործելով Մրցույթի ապահովումը:

9.1.5. Հանրային գործընկերը Մրցույթի ապահովում տրամադրելու վերաբերյալ բանկային երաշխավորագիրը վերադարձնում է Մասնավոր գործընկերոջը և Մրցույթի ապահովումը տրամադրած բանկ է ներկայացնում երաշխիքը դադարեցնելու մասին գրավոր ծանուցում՝

9.1.5.1. 9.2 կետում սահմանված կարգով Մասնավոր գործընկերոջից Գործառնությունների ապահովում ստանալուց անմիջապես հետո. կամ

9.1.5.2. 7.4 կետի կամ 7.10 կետի համաձայն Անցումային ժամանակահատվածում Պայմանագիրը դադարեցնելու դեպքում՝ պայմանով, որ Պայմանագրի այդ դադարեցումը տեղի չի ունեցել Մասնավոր գործընկերոջ մեղքով:

9.1.6. Հանրային գործընկերն իրավունք ունի օգտագործելու (իրագործելու) Մրցույթի ապահովումն այն դեպքերում, երբ՝

9.1.6.1. Մասնավոր գործընկերը խախտել է իր՝ սույն Պայմանագրով սահմանված դրամական պարտավորությունները, որոնք առաջացել են և պետք է կատարվեին Մրցույթի ապահովման գործողության ընթացքում, իսկ այդ խախտումը չի վերացվել այն օրվանից հետո երեսուն (30) օրվա ընթացքում, երբ Հանրային գործընկերը հայտնաբերել է կամ պետք է հայտնաբերած լիներ այդ խախտումը.

9.1.6.2. Անցումային ժամանակահատվածում պայմանագրի դադարեցումը, ինչը պայմանավորված է ՆՊ-ների չկատարմամբ կամ Փակման չիրականացմամբ (7.4 կետում և 7.10 կետում սահմանված կարգով), տեղի է ունեցել Մասնավոր գործընկերոջ մեղքով.

9.1.6.3. Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջը ՆՊ-ների

կատարման օրվա դրությամբ չի տրամադրել Գործառնությունների ապահովում.

9.1.6.4. Մասնավոր գործընկերը Մրցույթի ապահովման գործողության ժամկետում կատարել է Բաժին 25-ում սահմանված գործողությունները:

9.1.7. Մրցույթի ապահովումն իրագործվում է 9.1.3 կետի համաձայն:

9.2. **Գործառնությունների ապահովումը**

9.2.1. Մասնավոր գործընկերը ոչ ուշ, քան ՆՊ-ների կատարման օրը Հանրային գործընկերոջն է ներկայացնում Հուսալի բանկի կողմից տրամադրված անվերապահ և անվերադարձ ցպահանջ բանկային երաշխիք առաջին Գործառնական տարվա համար՝ ՀՀ դրամ-ով սկզբնական գումարի չափով, որը համարժեք է Պահանջարկի երաշխիքի 21%-ին, , որպես կանոն, Հավելված 5-ում (*Ապահովումներին ներկայացվող պահանջները*) սահմանված երաշխավորագրի ձևով՝ ուղեկցվելով Գործառնությունների ապահովման մասին համապատասխան պայմանագրով՝ Ծրագրի ժամկետի ընթացքում Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով (**Գործառնությունների ապահովում**): Եթե Գործառնությունների ապահովում տրամադրող բանկը որևէ պահի չի բավարարում Հավելված 6-ում (*Հուսալի բանկերին ներկայացվող պահանջներ*) սահմանված՝ Հուսալի բանկերին ներկայացվող պահանջները, ապա Մասնավոր գործընկերը Հուսալի բանկերին ներկայացվող պահանջներին համապատասխանող բանկից հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ քան տաս (10) Աշխատանքային օրվա ընթացքում, ձեռք է բերում Գործառնությունների նոր ապահովում այն նույն գումարի չափով, որն առկա է դա տեղի ունենալու պահին:

9.2.2. Եթե Մասնավոր գործընկերը ՆՊ-ների կատարման օրվա դրությամբ Հանրային գործընկերոջը չի տրամադրել Գործառնությունների ապահովում, ապա Հանրային գործընկերն իրավունք ունի օգտագործելու (իրագործելու) Մրցույթի ապահովումը:

9.2.3. Գործառնությունների ապահովման գործողությունը պահպանվում է ոչ ուշ, քան դրա տրամադրման օրվանից մինչև 9.3-րդ կետով սահմանված Հետփոխանցման ապահովման տրամադրումը Հանրային գործընկերոջը: Հանրային գործընկերը Գործառնությունների ապահովում տրամադրելու մասին բանկային երաշխավորագիրը վերադարձնում է Մասնավոր գործընկերոջը Հետփոխանցման ապահովումը ստանալուց անմիջապես հետո և Գործառնությունների ապահովումը տրամադրած բանկ է ներկայացնում երաշխիքը դադարեցնելու մասին գրավոր ծանուցում:

9.2.4. Եթե նախատեսված է, որ Գործառնությունների ապահովման ժամկետը լրանում է մինչև 9.2.3 կետում նշված ժամկետը լրանալը, ապա Մասնավոր գործընկերը ոչ ուշ, քան Գործառնությունների ապահովման ժամկետը լրանալու համապատասխան օրվանից առնվազն քսաներկու (22)

Աշխատանքային օր առաջ երկարաձգում է այդ Գործառնությունների ապահովման գործողության ժամկետը կամ փոխարինում է այն:

9.2.5. Եթե Մասնավոր գործընկերը չի երկարաձգում Գործառնությունների ապահովման գործողության ժամկետը կամ չի փոխարինում այն (9.2.4 կետում սահմանված կարգով), ապա Հանրային գործընկերն իրավունք ունի օգտագործելու (իրագործելու) Գործառնությունների ապահովման ամբողջ գումարը:

9.2.6. Այդ դեպքում Հանրային գործընկերոջ բոլոր պահանջները, որոնք՝

9.2.6.1. ներկայացվել են մինչև 9.2.3 կետում սահմանված՝ Գործառնությունների ապահովման գործողության ժամկետը լրանալը, և

9.2.6.2. կարող են բավարարվել՝ սույն Պայմանագրի համաձայն իրագործելով Գործառնությունների ապահովումը. և

9.2.6.3. հանրագումարային չեն գերազանցում Գործառնությունների ապահովման չափը,

պետք է համարվեն բավարարված՝ իրագործելով Գործառնությունների ապահովումը: Այս դեպքում համարվում է, որ տեղի է ունեցել 15.1.1.5 կետում սահմանված՝ Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպք:

9.2.7. Չխախտելով որևէ այլ իրավունք, որը Հանրային գործընկերը կարող է ունենալ սույն Պայմանագրի համաձայն, Հանրային գործընկերն իրավունք ունի Գործառնությունների ապահովման օգտագործմամբ (իրագործմամբ) (ամբողջությամբ կամ մասամբ) բավարարել պահանջները հետևյալ դեպքերում.

9.2.7.1. Մասնավոր գործընկերը խախտել է սույն Պայմանագրով սահմանված իր դրամական պարտավորությունները, և այդ խախտումը չի վերացվել այն օրվանից հետո երեսուն (30) օրվա ընթացքում, երբ Հանրային գործընկերը հայտնաբերել է կամ պետք է հայտնաբերած լիներ այդ խախտումը. կամ

9.2.7.2. Մասնավոր գործընկերը պետք է վճարի որևէ տույժ՝ սույն Պայմանագրի ժամկետներին և պայմաններին համապատասխան. կամ

9.2.7.3. Հանրային գործընկերը կրել է վնասներ, որոնք պետք է փոխհատուցի Մասնավոր գործընկերը. կամ

9.2.7.4. Մասնավոր գործընկերը Գործառնությունների ապահովման գործողության ընթացքում կատարել է 25-րդ բաժնում սահմանված գործողությունները. կամ

9.2.7.5. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվել է Մասնավոր

գործընկերոջ պարտազանցման դեպքի հետևանքով: Այդ դեպքում Հանրային գործընկերն իրավունք ունի Հանրային գործընկերոջ կրած վնասների փոխհատուցման համար Մասնավոր գործընկերոջից գանձում կատարելու Գործառնությունների ապահովումից՝ Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման չափով, սակայն ոչ ավելի, քան Գործառնությունների ապահովման գումարի չափը, եթե այդ փոխհատուցումը պետք է վճարվի Հանրային գործընկերոջ կողմից՝ 17 բաժնի համաձայն.

9.2.7.6. Գործառնությունների ապահովումն օգտագործելու (իրագործելու) հնարավորությունը հստակ սահմանված է սույն Պայմանագրով:

9.2.8. 9.2.7 կետում նշված որևէ հանգամանք ի հայտ գալու դեպքում Հանրային գործընկերը Մասնավոր գործընկերոջն է ներկայացնում վերջինիս կողմից վճարման ենթակա գումարները Գործառնությունների ապահովումից օգտագործելու (իրագործելու) իր իրավունքն իրացնելու մասին ծանուցում: Ծանուցման մեջ նշվում է առհանում կատարելու իրավունքն իրացնելու ամսաթիվը, որը չպետք է սահմանվի այդ ծանուցումը ներկայացնելուց հետո տասը (10) Աշխատանքային օրը լրանալու օրվանից ավելի շուտ, ինչպես նաև Գործառնությունների ապահովման ամբողջ գումարը/ գումարի որոշ մասն իրագործելու հիմքերը:

9.2.9. Մասնավոր գործընկերոջ պարտավորությունների խախտման փաստը, ինչպես նաև ներկայացվող պահանջների ծավալը պետք է փաստարկվեն կամ Հանրային գործընկերոջ կողմից ներկայացված պահանջները բավարարելու վերաբերյալ Մասնավոր գործընկերոջ գրավոր հաստատմամբ կամ սույն Պայմանագրի 26-րդ բաժնի համաձայն տրամադրված արբիտրաժային վճռով:

9.2.10. Սույն Պայմանագրին համապատասխան Մասնավոր գործընկերոջ կողմից տրամադրված երաշխիքները դադարեցվելու դեպքում 9.2.9 կետում սահմանված պահանջների չափը հաստատել չի պահանջվում:

9.2.11. Մինչև Հետփոխանցման ապահովման տրամադրման օրը Հանրային գործընկերոջ կողմից Գործառնությունների ապահովման ամբողջ գումարի իրագործումը համարվում է Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպք՝ բացառությամբ, երբ Հանրային գործընկերն իր հայեցողությամբ համաձայնում է հրաժարվել Մասնավոր գործընկերոջ պարտազանցմանայդ դեպքի հետևանքով սույն Պայմանագիրը դադարեցնելու իր իրավունքից՝ պայմանով, որ Մասնավոր գործընկերը ներկայացնի Գործառնությունների նոր ապահովում այն ամբողջ գումարի դիմաց, որի համար պետք է տրամադրվի այդ Գործառնությունների ապահովումը ՝ 9.2.1-րդ կետի համաձայն:

Մասնավոր գործընկերոջ կողմից 9.2 կետի պահանջներին համապատասխան Գործառնությունների ապահովում չտրամադրելը և (կամ) դրա գործողությունը չպահպանելն ավելի քան երեսուներեք (33) Աշխատանքային օր ժամկետով համարվում է Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպք:

9.2.12.

9.2.13. Մասնավոր գործընկերն ապահովում է, որ իր Գործառնությունների ապահովման գումարի չափը բավարարի 9.2.1 կետի պահանջները Գործառնությունների ապահովման գործողության ամբողջ ընթացքում :

9.3. **Հետփոխանցման ապահովումը**

9.3.1. Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջն է ներկայացնում Հուսալի բանկի կողմից տրամադրված անվերապահ և անվերադարձ ցպահանջ բանկային երաշխիք՝ որպես կանոն, Հավելված 5-ում (*Ապահովումներին ներկայացվող պահանջները*) սահմանված երաշխավորագրի ձևով՝ ուղեկցվելով Հետփոխանցման ապահովման մասին համապատասխան պայմանագրով՝ Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված հետփոխանցման պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով (**Հետփոխանցման ապահովում**).

9.3.1.1. 20.2 կետին համապատասխան Հետ փոխանցվող գույքի վիճակի առաջին ուսումնասիրության արդյունքների հիման վրա Անկախ փորձագետի կողմից կազմված եզրակացությունն ստանալուց հետո ոչ ուշ, քան տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում՝ այդ եզրակացության մեջ նշված ՀՀ դրամի գումարի չափով, եթե Պայմանագիրը վաղաժամկետ չի Դադարեցվում

9.3.1.2. 20.2 կետին համապատասխան Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումանսիրության արդյունքների հիման վրա Անկախ փորձագետի կողմից կազմված եզրակացությունն ստանալուց հետո ոչ ուշ, քան տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում՝ այդ եզրակացության մեջ նշված ՀՀ դրամով գումարի չափով, եթե Պայմանագիրը վաղաժամկետ Դադարեցվում է, և Հետփոխանցումն իրականացվում է Պայմանագրի այդ վաղաժամկետ Դադարեցման շրջանակներում:

9.3.2. Եթե Հետփոխանցման ապահովում տրամադրող բանկը Հանրային գործընկերոջը Հետփոխանցման ապահովում ներկայացվելու օրվանից հետո որևէ պահի չի բավարարում Հավելված 6-ում (*Հուսալի բանկերին ներկայացվող պահանջներ*) սահմանված՝ Հուսալի բանկերին ներկայացվող պահանջները, ապա Մասնավոր գործընկերը Հուսալի բանկերին ներկայացվող պահանջներին համապատասխանող բանկից հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ քան տաս (10) Աշխատանքային օրվա ընթացքում ձեռք է բերում Հետփոխանցման նոր ապահովում այն նույն չափով, որն առկա է դա տեղի ունենալու պահին:

9.3.3. Եթե Մասնավոր գործընկերը մինչև 9.3.1.1 և 9.3.1.2 կետերում նշված ժամկետները լրանալը Հանրային գործընկերոջը չի տրամադրում Հետփոխանցման ապահովում, ապա Հանրային գործընկերն իրավունք ունի օգտագործելու Գործառնությունների ապահովման ամբողջ գումարը:

Մասնավոր գործընկերոջ կողմից 9.3 կետի պահանջներին համապատասխան Հետփոխանցման ապահովում չտրամադրելը և (կամ) դրա գործողությունը չպահպանելն ավելի քան երեսուներեք (33) Աշխատանքային օր ժամկետով համարվում է Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպք:

9.3.4. Հետփոխանցման ապահովումը գործում է 9.3.1 կետի համաձայն դրա տրամադրման օրվանից մինչև 20.5 կետի համաձայն Հետփոխանցման ակտի ստորագրման օրվան հաջորդող երեսունօրյա (30-օրյա) ժամկետը լրանալու օրը:

9.3.5. Եթե նախատեսված է, որ Հետփոխանցման ապահովման ժամկետը լրանում է մինչև 9.3.4 կետում նշված ժամկետը լրանալը, ապա Մասնավոր գործընկերը ոչ ուշ, քան Հետփոխանցման ապահովման ժամկետը լրանալու համապատասխան օրվանից առնվազն քսաներկու (22) Աշխատանքային օր առաջ երկարաձգում է այդ Հետփոխանցման ապահովման գործողության ժամկետը կամ փոխարինում է այն:

9.3.6. 20.2 կետին համապատասխան իրականացված՝ Հետ փոխանցվող գույքի վիճակի համապատասխան ուսումնասիրության անցկացումից հետո Անկախ փորձագետի յուրաքաչյուր հաշվետվություն Մասնավոր գործընկերոջ կողմից ստացվելուն պես վերջինս այդ հաշվետվությունը ստանալուց հետո տասն (10) Աշխատանքային օրվա ընթացքում Հանրային գործընկերոջը ներկայացնում է Հետփոխանցման ապահովման գումարի չափը փոխելու մասին ծանուցում՝ պայմանով, որ Հետփոխանցման ապահովման գումարի չափը պակաս չէ համապատասխան ուսումնասիրության արդյունքների հիման վրա Անկախ փորձագետի կողմից կազմված եզրակացության մեջ նշված գումարի չափից:

9.3.7. Համապատասխան ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարված Հետփոխանցման ապահովման գումարի հաշվարկը ստանալուց հետո հինգ (5) Աշխատանքային օրվա ընթացքում Հանրային գործընկերը՝

9.3.7.1. հաստատում է Մասնավոր գործընկերոջ կողմից ներկայացված Հետփոխանցման ապահովման գումարի չափը և այդ հատատման հետ միասին Մասնավոր գործընկերոջն է ներկայացնում գրավոր ծանուցում. կամ

9.3.7.2. մերժում է Մասնավոր գործընկերոջ կողմից ներկայացված Հետփոխանցման ապահովման գումարի չափը, եթե այդ գումարը պակաս է համապատասխան ուսումնասիրության արդյունքների հիման վրա Անկախ փորձագետի կողմից կազմված եզրակացության մեջ նշված գումարի չափից, և Մասնավոր գործընկերոջը ներկայացնում է գրավոր ծանուցում՝ կարգադրելով ներկայացնել Հետփոխանցման ապահովում հիշյալ եզրակացության մեջ նշված գումարի չափով:

9.3.8. Հանրային գործընկերը կարող է սահմանել Հետփոխանցման ապահովման գումարի այլ չափ միայն այն դեպքում, երբ համապատասխան

ուսումնասիրության արդյունքում Անկախ փորձագետի կողմից կազմված եզրակացությունը վիճարկվում է 26-րդ կետում սահմանված կարգով և միայն այդ վիճարկման հիման վրա սահմանված գումարի շրջանակներում:

9.3.9. Այն դեպքում, երբ Անկախ փորձագետի եզրակացությունը վիճարկվում է 26-րդ բաժնի համաձայն, Մասնավոր գործընկերը ներկայացնում է Հետփոխանցման ապահովում՝ Անկախ փորձագետի եզրակացության մեջ նշված գումարի չափով, և համապատասխան վիճարկման արդյունքների հիման վրա կայացված արբիտրաժային վճռի համաձայն՝ ավելացնում/նվազեցնում է այդ գումարի չափը՝ հիշյալ արբիտրաժային վճռի մեջ նշված՝ Հետփոխանցման ապահովման գումարի չափին համապատասխան:

9.3.10. Մասնավոր գործընկերը 9.3.7 կետի համաձայն Հանրային գործընկերոջ գրավոր ծանուցումը ստանալուց հետո տասնհինգ (15) Աշխատանքային օրվա ընթացքում Հանրային գործընկերոջն է ներկայացնում Հետփոխանցման նոր ապահովում:

9.3.11. Եթե Հետփոխանցման ակտի ստորագրման օրվա դրությամբ Հետփոխանցման ակտիվները՝

9.3.11.1. չեն համապատասխանում 20-րդ բաժնում սահմանված պահանջներին, ապա, չխախտելով որևևէ այլ իրավունք, որը Հանրային գործընկերը կարող է ունենալ սույն Պայմանագրի համաձայն, Հանրային գործընկերն իրավունք ունի պահանջելու Հետփոխանցման ապահովման իրագործում՝ Հետ փոխանցվող գույքի վիճակի համապատասխան ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմված եզրակացության մեջ Անկախ փորձագետի կողմից նշված չափով.

9.3.11.2. համապատասխանում են 20-րդ բաժնում սահմանված պահանջներին, ապա Հանրային գործընկերը Հետփոխանցման ապահովում տրամադրելու մասին բանկային երաշխավորագիրը վերադարձնում է Մասնավոր գործընկերոջը և Հետփոխանցման ապահովում տրամադրած բանկ է ներկայացնում երաշխիքը դադարեցնելու մասին գրավոր ծանուցում:

9.4. **Ապահովման մասին այլ դրույթներ**

9.4.1. Այն դեպքում, երբ Հանրային գործընկերը սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան ամբողջությամբ կամ մասամբ իրագործում է Մրցույթի ապահովումը, Գործառնությունների ապահովումը կամ Հետփոխանցման ապահովումը, բանկային ապահովում տրամադրած բանկն այդ ապահովման համար գանձվող գումարը փոխանցում է Հանրային գործընկերոջ ընթացիկ հաշվին:

9.4.2. Այն դեպքում, երբ Հանրային գործընկերն իրագործում է Գործառնությունների ապահովումը կամ Հետփոխանցման ապահովումն այն գումարի չափով, որն

անհրաժեշտ է Հանրային գործընկերոջ այն պահանջները բավարարելու համար, որոնք կարող են բավարարվել՝ սույն Պայմանագրին համապատասխան այդ ապահովումն իրագործելով, Մասնավոր գործընկերն ապահովման համապատասխան գումարն իրագործելու պահելուց հետո քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում Հանրային գործընկերոջն է ներկայացնում վերանայված բանկային երաշխիք՝ 9-րդ բաժնի համաձայն սահմանված ապահովման ամբողջ գումարի համար: Եթե Մասնավոր գործընկերը 9.4.2 կետում սահմանված ժամկետում չի տրամադրում վերանայված բանկային երաշխիք, ապա Հանրային գործընկերն իրավունք ունի իրագործելու համապատասխան ապահովման ամբողջ գումարը: Այդ դեպքում կիրառվում են 9.2.6 կետի դրույթները:

9.4.3. Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի հետ կապված՝ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման պարագայում Մասնավոր գործընկերն ապահովում է, որ Գործառնությունների ապահովման գործողությունը պահպանվի այն ժամկետի ընթացքում, որն անհրաժեշտ է Պայմանագրի 18-րդ բաժնում սահմանված կարգով, սակայն որևէ պարագայում 20.5 կետի համաձայն Հետփոխանցման ակտը ստորագրելու օրվանից հետո երկու (2) ամսից ոչ շուտ Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման վերաբերյալ համաձայնության գալու և այն վճարելու համար:

10. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

10.1. **Ներդրումային պարտավորությունները և դրանք կատարելը**

10.1.1. Մասնավոր գործընկերն իրականացնում, ֆինանսավորում և կատարում է սույն Պայմանագրով նախատեսված Ներդրումային պարտավորությունները, որոնք ներառում են հետևյալը.

10.1.1.1. Տեխնիկական պահանջներով պահանջվող ներդրումներ Գրանցման կենտրոններում (ներառյալ՝ Գրանցման կենտրոնների արդիականացման, վերանորոգման աշխատանքները և անշարժ գույքի բարելավման այլ աշխատանքներ, Գրանցման կենտրոններում Նոր շարժական գույքի գնման և տեղադրման աշխատանքները, Նոր ոչ նյութական ակտիվների նկատմամբ իրավունքների ձեռքբերումը և Նոր ոչ նյութական ակտիվների ձևավորումը Գրանցման կենտրոններում ներառյալ՝ Ինքնության և փաստաթղթերի կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծումը),

10.1.1.2. Տեխնիկական պահանջներով պահանջվող ներդրումներ Փոխանցվող ակտիվներում (ներառյալ՝ Փոխանցվող ակտիվներում արդիականացման, վերանորոգման աշխատանքները և անշարժ գույքի բարելավման այլ աշխատանքներ, Փոխանցվող ակտիվներում Նոր շարժական գույքի գնման և տեղադրման աշխատանքները, Նոր ոչ նյութական ակտիվների նկատմամբ իրավունքների ձեռքբերումը և Նոր ոչ նյութական ակտիվների ձևավորումը Փոխանցվող ակտիվներում):

10.1.2. Մասնավոր գործընկերը կատարում է Ներդրումային պարտավորությունները Մեկնարկի օրվանից սկսած՝ ինը (9) ամսվա ընթացքում(**Ներդրումային պարտավորությունների կատարման ժամկետ**):

10.1.3. Ներդրումային պարտավորությունների կատարման ժամկետի լրանալուց ոչ պակաս, քան մեկ (1) ամիս հետո Հանրային գործընկերը նախաձեռնում է ստուգում՝ վերանայելու համար Ներդրումային պարտավորությունների կատարումը՝ այդպիսի ստուգման մասին գրավոր ծանուցում ուղարկելով Մասնավոր գործընկերոջը:

Ներդրումային պարտավորությունների կատարման ստուգումն իրականացնում է Անկախ փորձագետը:

10.1.4. Անկախ փորձագետը ստուգում է Ներդրումային պարտավորությունների կատարումը Հանրային գործընկերոջ կողմից այդպիսի ստուգումը սկսելու օրվանից հետո 22 (քսաներկու) Աշխատանքային օրվա ընթացքում, այդ թվում՝ կիրառելի Տեխնիկական պահանջների, Նախագծային փաստաթղթերի, կատարված ներդրումների վերաբերյալ Մասնավոր գործընկերոջ եռամսյակային հաշվետվությունների, Ֆինանսավորման փաստաթղթերի, ներքին հաշվետվությունների և Ծրագրի այն ակտիվների՝ տեղում իրականացված ստուգումների վերլուծությունների միջոցով, որոնցում ներդրումներ են կատարվել:

10.1.5. Ստուգման ավարտից հետո Անկախ փորձագետը տալիս է եզրակացություն՝ Ներդրումային պարտավորությունների կատարման/ չկատարման վերաբերյալ, և այդ եզրակացությունը տրամադրում է Կողմերին տեղեկացնելու համար:

Ներդրումային պարտավորությունները չկատարելու վերաբերյալ Անկախ փորձագետի եզրակացությունը հիմք է Ներդրումային պարտավորությունների կատարման ժամկետի լրանալուց հետո Պայմանագրի 16.1 կետով նախատեսված Նախապես գնահատված վնասները կիրառելու համար:

10.1.6. Եթե Անկախ փորձագետը հաստատում է Մասնավոր գործընկերոջ կողմից Ներդրումային պարտավորությունների կատարումը, ապա Անկախ փորձագետն ստորագրում է Ներդրումային պարտավորություններն ավարտելու մասին ակտ և այն ներկայացնում Հանրային գործընկերոջը՝ ստորագրելու համար:

Հանրային գործընկերը Ներդրումային պարտավորություններն ավարտելու մասին ակտն ստորագրում է այն Անկախ փորձագետից ստանալու օրվանից 5 (հինգ) Աշխատանքային օրվա ընթացքում և հետագայում այն ուղարկում է Մասնավոր գործընկերոջը:

10.1.7. Համարվում է, որ Հանրային գործընկերոջ կողմից Ներդրումային պարտավորություններն ավարտելու մասին ակտի ստորագրման օրվա դրությամբ Մասնավոր գործընկերը կատարել է Ներդրումային

պարտավորությունները:

10.2. **Ծառայությունները և գործառնությունները**

10.2.1. Գործառնական օրվանից սկսած՝ Մասնավոր գործընկերը մատուցում է սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները և Ծրագրի ակտիվների մասով իրականացնում է Ծառայությունների հետ կապված գործառնություններ (կամ Պայմանագրով թույլատրված դեպքերում ապահովում է համապատասխան Ծառայությունների և Գործառնությունների մատուցումը երրորդ անձանց կողմից): Ծառայությունները ներառում են հետևյալը.

10.2.1.1. Անձը հաստատող փաստաթղթերի թողարկում և տրամադրում հաճախորդներին, ներառյալ՝ Արագ ծառայությունները,

10.2.1.2. հաճախորդների աջակցության և Անձը հաստատող փաստաթղթերի թողարկումից հետո մատուցվող ծառայություններ (այդ թվում՝ խորհրդատվություն, դիմումներին պատասխաններ, PIN ծածկագրի փոփոխություններ, ժամկետանց կամ չեղարկված Անձը հաստատող փաստաթղթերի հավաքում և ոչնչացում)

10.2.1.3. Ծրագրի ակտիվների սպասարկման այլ գործողություններ, որոնք նախատեսված են (և ի վերջո սպառվում են) հաճախորդների համար և համապատասխանում են Տեխնիկական պահանջներին (և մասնավորապես՝ Տեխնիկական պահանջների 2.6.2 ենթաբաժինին):

Գործառնությունները պետք է ներառեն հետևյալը.

10.2.1.4. Անձը հաստատող փաստաթղթերի ձևաթղթերի տրամադրում,

10.2.1.5. Դիմումների հավաքագրում և տվյալների մշակում (այդ թվում՝ կենսաչափական տվյալներ) Անձը հաստատող փաստաթղթերի համար,

10.2.1.6. Հաճախորդների կողմից Կառավարությանը վճարման ենթակա սպասարկման վճարների հավաքագրում և հատկացում,

10.2.1.7. Անձը հաստատող փաստաթղթերի անհատականացում,

10.2.1.8. Որպես գրանցման մարմին գործելը՝ Էլ.ՆՀՏԾ-ի պահանջներին համապատասխան որակավորված ստորագրության համար

10.2.1.9. այլ գործառնական գործողություններ, որոնք նպատակ ունեն ապահովելու Ծառայությունների մատուցումը և համապատասխանում են Տեխնիկական պահանջներին :

10.2.2. Մասնավոր գործընկերն իր գործունեությունը համապատասխանեցնում է Տեխնիկական պահանջների կանոններին, որոնք հատկապես կամ էապես

կիրառվում են Մասնավոր գործընկերոջ կողմից Ծառայությունների մատուցման և Գործառնությունների կատարման նկատմամբ, այդ թվում՝ առանց սահմանափակման, Անձը հաստատող փաստաթղթերին ներկայացվող պահանջներին (Տեխնիկական պահանջների 2.4 բաժնի համաձայն), Ծառայությունների ԿԱՑ-երին (ըստ Տեխնիկական պահանջների 2.5 բաժնի) և Գրանցման և անհատականացման Ծառայությունների/ Գործառնությունների կատարմանը (ըստ Տեխնիկական պահանջների 2.6.2 ենթաբաժնի):

10.2.3. Մասնավոր գործընկերը պետք է ապահովի, որ Ծառայությունների և Գործառնությունների համար վճարների հավաքագրման բոլոր համապատասխան գործիքները, ներառյալ առցանց և տեղում վճարման մեխանիզմները, ինչպես նաև սույն Համաձայնագրով նախատեսված Ծառայությունների և Գործառնությունների համար վճարումներ հավաքագրելու Մասնավոր գործընկերոջ հաշիվը, ստեղծված լինեն մինչև Գործառնական օրը: Մասնավոր գործընկերն այնուհետև պետք է ապահովի, որ վճարների հավաքագրման նման գործիքները և Մասնավոր գործընկերոջ հաշիվը գործարկվեն Ծրագրի ժամանակաշրջանի ընթացքում՝ սկսած Գործառնական օրվանից:

10.2.4. Կողմերը ողջամտության սահմաններում պետք է խրախուսեն Անձը հաստատող էլեկտրոնային փաստաթղթերի պահանջարկը (և հետագայում դրանց թողարկումը) Ծրագրի ժամկետի ընթացքում:

10.3. **Ծառայությունների և Գործառնությունների Վճարները**

10.3.1. Ծառայությունների և Գործառնությունների համար օրենքով սահմանված վճարները (Անձը հաստատող փաստաթղթերի համապատասխան տեսակի գինը) սահմանվում են Հանրային գործընկերոջ կողմից՝ Կիրառելի իրավունքով և վճարվում են հաճախորդների կողմից ՀՀ դրամով:

10.3.2. Ծառայությունների և Գործառնությունների գները (Անձը հաստատող փաստաթղթերի համապատասխան տեսակի գինը), որոնց ենթակա են վճարման Մասնավոր գործընկերոջը (բացառությամբ Արագ ծառայությունների) սահմանված են Հաղթողի Հայտում և սույն Պայմանագրի Հավելված 2-ում (*Անձը հաստատող փաստաթղթերի գները*). ՀՀ դրամով և բաժանվում են (i) Բազային գների (կվճարվեն յուրաքանչյուր Անձը հաստատող փաստաթղթի համար ընթացիկ Գործառնական տարվա ընթացքում մինչև Տեխնիկական պահանջների Հավելված 3-ով սահմանված գնահատված ծավալների հասնելը) և (ii) Ճշգրտված գների (կվճարվեն յուրաքանչյուր Անձը հաստատող փաստաթղթի համար ընթացիկ Գործառնական տարվա ընթացքում Տեխնիկական պահանջների Հավելված 3-ում սահմանված գնահատված ծավալները գերազանցելու դեպքում):

10.3.3. Մասնավոր գործընկերը պետք է սահմանի Արագ Ծառայությունների համար վճարները՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքի համաձայն հաշվի առնելով Անձը հաստատող փաստաթղթերի սակագների կարգավորման

օրենսդրական փոփոխությունները և Բազային գների մինչև 3 անգամի սահմաններում: Այն դեպքում, երբ Հանրային գործընկերը որևէ հիմնավորված մեկնաբանություն չի տրամադրել Մասնավոր գործընկերոջ՝ Արագ ծառայությունների դիմաց վճարների վերաբերյալ այդ վճարների սահմանման օրվանից տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում, ապա համարվում է, որ Հանրային գործընկերը չունիորևէ առարկություն Արագ ծառայությունների համար Մասնավոր գործընկերոջ նման վճարների վերաբերյալ:

10.3.4. Ծառայությունների և գործառնությունների գները կարող են վերանայվել ոչ ավելի, քան մեկ անգամ մեկ Գործառնական տարում և միայն հետևյալ դեպքերում.

10.3.4.1. Եթե ծախսերի բարձրացման գործոնը 5%-ից բարձր է կամ -5%-ից ցածր, Կողմերը հանդիպում են մեղմացնող ծրագիր բանակցելու նպատակով: Ծախսերի բարձրացման գործոնը որոշվում է հետևյալ կերպ.

Ծախսերի բարձրացման գործոն = բոլոր ծախսերից ԵՄ-ծագման ծախսերի բաժին x (XR - 1) +բոլոր ծախսերից ՀՀ-ծագման ծախսերի բաժին x CPIam + 0 x բոլոր ծախսերի գնաճով չփոփոխված ծախսերի բաժին, որտեղ

XR – ՀՀ դրամ – Եվրո ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակած պաշտոնական փոխարժեքը նվազած Մեկնարկի օրվանից կամ Ծառայության գների վերջին վերանայումից սույն կետի համաձայն

CPIam - Հայաստանի վիճակագրական կոմիտեի (կամ այս Հանրային մարմնին Կիրառելի իրավունքով փոխարինող մեկ այլ Հանրային մարմնի) կողմից հրապարակված փաստացի կուտակային գնաճը Մեկնարկի օրվանից կամ Ծառայության գների վերջին վերանայումից սույն կետի համաձայն

բոլոր ծախսերից ԵՄ-ծագման ծախսեր և բոլոր ծախսերից ՀՀ-ծագման ծախսեր – թվերը հիմնված են ֆինանսական առաջարկում տրամադրված ծախսերի բաժինների վրա (Առաջարկի Հարցման Հավելված 5-ի Ձև F)

10.3.4.2. Եթե 10.3.4.1-րդ կետում նշված Ծախսերի բարձրացման գործոնը 10%-ից բարձր է, ապա Մասնավոր գործընկերը կարող է ծանուցել Հանրային գործընկերոջը, տրամադրի հիմնավորված ապացույցներ իր գործառնական ծախսերի վրա գնաճի ազդեցության վերաբերյալ և առաջարկել Ծառայությունների և Գործառույթների համար նոր գին՝ հիմնված ծախսերի բարձրացման գործոնի վրա: Եթե Հանրային գործընկերը չի առաջարկում առաջարկված գնի մերժման որևէ հիմնավոր պատճառ նշված ծանուցումը ստանալուց քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում, ապա կհամարվի, որ Հանրային գործընկերը նոր գներին որևէ առարկություն չունի: Մասնավոր գործընկերը այդ դեպքում կարող է հաշվարկել Ծառայությունների և

Գործառնությունների նոր գները՝ հիմնված ծախսերի բարձրացման գործոնի վրա և այդ նոր գները կիրառվելու են ինքնաբերաբար:

Եթե Հանրային գործընկերը գրավոր տեղեկացնում է Մասնավոր գործընկերոջը առաջարկված գների մերժման հիմնավոր պատճառների մասին, համապատասխան գները ենթակա կլինեն վերանայման Անկախ փորձագետի կողմից: Անկախ փորձագետը վերանայում է և տրամադրում է իր եզրակացությունը Ծառայությունների և Գործառնությունների համար նոր գների հաստատման կամ չհաստատման վերաբերյալ նման պահանջ ստանալուց քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում:

Ծառայությունների և Գործառնությունների նոր գները այս դեպքում համարվելու են հաստատված և կիրառելի Անկախ փորձագետի կողմից հաստատման վերաբերյալ եզրակացության տրամադրման պահից:

10.3.4.3. Եթե 10.3.4.1-րդ կետում նշված Ծախսերի բարձրացման գործոնը -10%-ից ցածր է, Հանրային գործընկերը կարող է ծանուցել Մասնավոր գործընկերոջը և առաջարկել Ծառայությունների և Գործառույթների գների նվազեցում: Եթե Մասնավոր գործընկերը չի առաջարկում առաջարկված գնի մերժման որևէ հիմնավոր պատճառ նշված ծանուցումը ստանալուց քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում, ապա կհամարվի, որ Մասնավոր գործընկերը նոր գներին որևէ առարկություն չունի: Մասնավոր գործընկերը այդ դեպքում կարող է հաշվարկել Ծառայությունների և Գործառնությունների նոր գները՝ հիմնված ծախսերի բարձրացման գործոնի վրա և այդ նոր գները կիրառվելու են ինքնաբերաբար:

Եթե Մասնավոր գործընկերը գրավոր տեղեկացնում է Հանրային գործընկերոջը առաջարկված գների մերժման հիմնավոր պատճառների մասին, համապատասխան գները ենթակա կլինեն վերանայման Անկախ փորձագետի կողմից: Անկախ փորձագետը վերանայում է և տրամադրում է իր եզրակացությունը Ծառայությունների և Գործառնությունների համար նոր գների հաստատման կամ չհաստատման վերաբերյալ նման պահանջ ստանալուց քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում:

Ծառայությունների և Գործառնությունների նոր գները այս դեպքում համարվելու են հաստատված և կիրառելի Անկախ փորձագետի կողմից հաստատման վերաբերյալ եզրակացության տրամադրման պահից:

10.3.4.4. Եթե Ծախսերի բարձրացման գործոնը 15%-ից բարձր կամ -15%-ից ցածր է, ապա Կողմերը հանդիպում են մեղմացնող ծրագիր բանակցելու նպատակով:

10.3.4.5. եթե Կիրառելի իրավունքի փոփոխության արդյունքում (ներառյալ հարկային փոփոխությունները), Մասնավոր գործընկերն ունենում է

ծախսերի աճ կամ այլ ֆինանսական բեռ, կամ հանդիպում է ծախսերի փոփոխության կամ այլ ֆինանսական առավելությունների, և այդ փոփոխությունները կարող են համապատասխանաբար ունենալ անմիջական էական բացասական կամ դրական ազդեցություն Մասնավոր Գործընկերոջ կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում իր պարտավորությունների կատարման վրա:

Սույն կետի իմաստով Կիրառելի իրավունքի փոփոխությունները չեն ներառում 10.3.4.1-րդ կետով նշված Ծախսերի բարձրացման գործոնը:

10.3.5. 10.3.4.5-րդ կետում նշված դեպքում ցանկացած կողմ կարող է նախաձեռնել 10.9-րդ կետում նկարագրված Փոփոխման պահանջ:

10.3.6. Հաճախորդները Ծառայությունների և Գործառնությունների համար վճարումներ կկատարեն հետևյալ հաշիվներով.

10.3.6.1. Էսքրոու հաշվին՝ յուրաքանչյուր համապատասխան Անձը հաստատող փաստաթղթի տրամադրման և առաքման համար ստացված գումարների համար (բազային և ճշգրտված գները Հաղթողի հայտի և Պայմանագրի Հավելված 2-ի (Անձը հաստատող փաստաթղթերի գները) համաձայն), ներառյալ Արագացված ծառայությունների դեպքում Անձը հաստատող փաստաթղթերի թողարկման համար ծավալային վճարումները, և

10.3.6.2. Մասնավոր Գործընկերոջ հաշվին՝ Արագ ծառայությունների դիմաց հավելյալ ստացված (համաձայն Հաղթողի Հայտի և սույն Պայմանագրի Հավելված 2-ի (*Անձը հաստատող փաստաթղթերի գները գերազանցող*) գումարների համար:

10.3.7. Ծառայությունների և Գործառնությունների համար վճարումների բաշխումը Էսքրոու հաշվից որևէ Կողմի պետք է պահանջի երկու Կողմերի հաստատումը:

10.3.8. Հանրային գործընկերոջ՝ Արագ ծառայությունների մատուցման մեջ ներգրավվածության համար փոխհատուցումը կարգավորվում է 7.3.1.7 կետով կնքված պայմանագրով:

10.4. **Շահագործումը և սպասարկումը**

10.4.1. Մասնավոր գործընկերը շահագործում և սպասարկում է Ծրագրի ակտիվները՝ ապահովելու համար, որ՝

10.4.1.1. Համապատասխան Անշարժ գույքի ակտիվները և Ծրագրի ակտիվների մաս հանդիսացող Շարժական գույքը գտնվում են աշխատանքային լավ վիճակում և ենթակա են միայն բնականոն մաշվածության,

10.4.1.2. Ծրագրի ակտիվների մաս հանդիսացող համապատասխան Ոչ նյութական ակտիվները ֆունկցիոնալ են և Ծառայությունների/ Գործառնությունների շարունակական մատուցման հնարավորություն

են տալիս,

10.4.1.3. պահպանվում են Տեխնիկական պահանջների կանոնները, որոնք հատուկ կերպով կամ էապես կիրառվում են Մասնավոր գործընկերոջ կողմից Ծրագրի ակտիվների շահագործման և սպասարկման նկատմամբ, ներառյալ՝ առանց սահմանափակման,պահպանվում են ֆիզիկական ենթակառուցվածքի պահանջները (Տեխնիկական պահանջների 2.2 բաժնի համաձայն):

10.4.2. Ծրագրի ակտիվները դրանց ծառայության ժամկետի նշանակված ժամանակահատվածում և դրա ավարտից հետո պատշաճ աշխատանքային վիճակում պահելու համար Մասնավոր գործընկերն ապահովում է, որ անհրաժեշտ միջոցառումները ձեռնարկվեն կիրառելի Տեխնիկական պահանջներին և այդ ժամանակ գործող Կիրառելի իրավունքի պահանջներին համապատասխան: Այդպիսի միջոցառումները կարող են ներառել հետևյալը.

10.4.2.1. Ծրագրի ակտիվների սպասարկման անհրաժեշտ մակարդակների տեխնիկական զննում, այդ թվում՝ իրականացված վերականգնման, վերանորոգման և ակտիվների սպասարկման ընթացիկ աշխատանքներն ստուգելու համար,

10.4.2.2. Ծրագրի ակտիվների մաս հանդիսացող սարքաշարերի և ծրագրաշարերի ստուգումներ, այդ թվում՝ անվտանգության և ապահովության հնարավոր ռիսկերի առնչությամբ:

10.5. **Երրորդ անձանց ներգրավվումը**

10.5.1. Մասնավոր գործընկերը կարող է պայմանագրային հիմունքներով ներգրավել երրորդ անձանց՝ Ներդրումային պարտավորությունները կատարելու, Ծառայություններ մատուցելու և Գործառնություններ կատարելու, Ծրագրի ակտիվները շահագործելու և սպասարկելու համար, ինչպես նաև Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ կատարելու համար: Մասնավոր գործընկերը կրում է հիմնական պատասխանատվությունն այդպիսի երրորդ անձանց կողմից համապատասխան գործողությունների կատարման համար այնքան ժամանակ, քանի դեռ այդ գործողությունները սույն Պայմանագրով հանդիսանում են Հանրային գործընկերոջ առաջ Մասնավոր գործընկերոջ պարտավորությունները, այդ թվում՝ պատասխանատվություն երրորդ անձանց կողմից պարտավորությունների կատարման ժամանակ թույլ տրված ցանկացած ուշացումների, բացթողումների կամ այլ խախտումների համար:

Մասնավոր գործընկերն ապահովում է, որ 10.5 կետով նախատեսված երրորդ անձանց հետ պայմանագրերը կնքվեն պարզած ձեռքի հեռավորության սկզբունքի համաձայն և չպարունակեն այնպիսի դրույթներ, որոնք կարող են էական բացասական ազդեցություն ունենալ Կողմերի՝ սույն Պայմանագրով սահմանված իրավունքների և պարտականությունների վրա:

10.5.2. Մասնավոր գործընկերը ստանում է Հանրային գործընկերոջ կողմից նախնական գրավոր համաձայնություն, որպեսզի երրորդ կողմերի հետ պայմանագրեր կնքի հետևյալի վերաբերյալ.

10.5.2.1. Անձը հաստատող փաստաթղթերի ձևաթղթերի տրամադրում,

10.5.2.2. Անձը հաստատող փաստաթղթերի անհատականացում,

10.5.2.3. Գլխավոր գրասենյակի/հաճախորդների գրանցման ծառայություններ՝ կապված Անձը հաստատող փաստաթղթերի հետ,

10.5.2.4. SS աջակցություն և տեխնիկական սպասարկում, որն անհրաժեշտ է Ծառայությունների/Գործառնությունների կատարման համար (այդ թվում՝ Ծառայությունների/Գործառնությունների համար SS համակարգերի ներդրում, պահպանում և աջակցություն):

10.5.3. 10.5.2 կետի նպատակներով՝

10.5.3.1. Մասնավոր գործընկերը դիմում է Հանրային գործընկերոջը՝ 10.5.2 կետում նշված երրորդ կողմի հետ պայմանագրի հաստատման համար ներկայացվող հարցմամբ՝ հարցմանը կցելով համապատասխան պայմանագրի նախագիծը:

10.5.3.2. Հանրային գործընկերը հաստատում է երրորդ կողմի հետ համապատասխան պայմանագրի կնքումը կամ տրամադրում է եզրակացություն այդ հաստատումը ողջամտորեն մերժելու մասին՝ հաստատման համար Մասնավոր գործընկերոջ կողմից ներկայացված հարցումն ստանալու օրվանից տասնհինգ (15) Աշխատանքային օրվա ընթացքում: Եթե Հանրային գործընկերն այդ ժամկետում պատասխան չի տրամադրում, ապա համարվում է, որ Հանրային գործընկերը հաստատել է երրորդ կողմի հետ համապատասխան պայմանագրի կնքումը:

10.5.3.3. Արգելվում է 10.5.2 կետում նշված պայմանագրերի կնքումը՝

10.5.3.3.1. ցանկացած երրորդ անձի հետ, եթե այդպիսի երրորդ անձի կամ նրա Փոխկապակցված անձի վրա տարածվում է ՊՄԳ ընթացակարգի 47-րդ պարբերության 1-5-րդ, 7-րդ կետերում նշված որևէ սահմանափակում,

10.5.3.3.2. ցանկացած երրորդ անձի հետ, եթե այդպիսի երրորդ անձը կամ նրա Փոխկապակցված անձը ենթակա են Կիրառելի իրավունքով կամ միջազգային իրավունքով կիրառվող պատժամիջոցների կամ Հայաստանում Կիրառելի իրավունքով ճանաչված միջազգային պատժամիջոցների,

10.5.3.4. Արգելվում է 10.5.2 կետում նշված երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերով նախատեսված իրավունքների ցանկացած

փոխանցում (զիջում) այդպիսի երրորդ անձանցից որևէ այլ անձանց:

10.5.4. Համապատասխան պայմանագրի կնքումից հետո հինգ (5) Աշխատանքային օրվա ընթացքում և առանց Հանրային գործընկերոջ նախնական համաձայնությունը ստանալու անհրաժեշտության՝ Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջը ծանուցում է հետևյալ հարցերի շուրջ երրորդ անձանց հետ պայմանագրերի կնքման մասին.

10.5.4.1. հաճախորդներին Անձը հաստատող փաստաթղթերի առաքում,

10.5.4.2. Ներդրումային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ աշխատանքների/ծառայությունների կատարում (մասնավորապես՝ Ծրագրի համապատասխան ակտիվների արդիականացում և անշարժ գույքի բարելավման այլ աշխատանքներ, Նոր շարժական գույքի և Նոր ոչ նյութական գույքի տեղադրում):

10.5.5. Մասնավոր գործընկերը զեկուցում է 10.5.2-10.5.4 կետերի համաձայն երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերի մասին՝ 13.3.2 կետին համապատասխան:

Մասնավոր գործընկերը 10.5.2-10.5.4 կետերի համաձայն երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերում ներառում է Միջամտության իրավունքի մասին դրույթներ, ներառյալ՝ դրույթ այդպիսի պայմանագրերով Մասնավոր գործընկերոջ բոլոր իրավունքների և պարտավորությունների ազատ փոխանցման մասին նոր Մասնավոր գործընկերոջը՝ առանց այս պայմանագրերի դադարեցման կամ դրանց պայմանների այլ էական փոփոխության:

10.5.6. Մասնավոր գործընկերը կարող է 10.5.2-10.5.4 կետերում նշված պայմանագրերից բացի այլ պայմանագրերով ներգրավել երրորդ անձանց (**Կապալառուներ**), որ վերջիններս մատուցեն Ծառայություններ, կատարեն աշխատանքներ և իրականացնեն այլ գործողություններ, որոնց մեջ չեն մտնում Ծառայությունների/Գործառնությունների մատուցումը կամ Ներդրումային պարտավորությունների որոշ մասի կատարումը, սակայն որոնք կարող են գործունեության բնականոն ընթացքում պահանջվել Մասնավոր գործընկերոջ՝ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար (օրինակ՝ նյութատեխնիկական ապահովման, մաքրման, ակտիվների ընթացիկ սպասարկման/վերանորոգման աշխատանքներ):

Մասնավոր գործընկերը Կապալառուների հետ պայմանագրերը կնքում է առանց Հանրային գործընկերոջ կողմից տրված նախնական հաստատման: Հանրային գործընկերը կարող է Մասնավոր գործընկերոջից պահանջել Ծրագրի ժամկետի ընթացքում Կապալառուների հետ կնքած պայմանագրերի ցանկը և պայմանագրային պայմանավորվածությունների կարճ նկարագրություն՝ ըստ անհրաժեշտության: Այդպիսի հարցում ներկայացվելու դեպքում Մասնավոր գործընկերն անդրադառնում է դրան ողջամիտ ժամկետում, սակայն որևէ դեպքում ոչ ուշ, քան հարցումն ստանալուց հետո

տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում:

10.6. **Գրանցման կենտրոնների ենթավարձակալությամբ տրամադրումը երրորդ անձանց**

10.6.1. Մասնավոր գործընկերը կարող է Ծրագրի ժամկետի ընթացքում Գրանցման կենտրոնները ենթավարձակալությամբ տրամադրել երրորդ անձանց՝ Պայմանագրի կատարման նպատակով, սույն 10.6 կետի պահանջները կատարելու պայմանով, ներառյալ հետևյալ պայմանները.

10.6.1.1. ենթավարձակալությունը պետք է թույլատրվի և կարգավորվի Վարձակալության մասին պայմանագրերով,

10.6.1.2. Մասնավոր գործընկերը պետք է ենթավարձակալության նախնական համաձայնություն ստանա Գրանցման կենտրոնների սեփականատերերից (վարձատուներից),

10.6.1.3. Մասնավոր գործընկերը պետք է ենթավարձակալության նախնական համաձայնություն ստանա Հանրային գործընկերոջից՝ համաձայն 10.6.2 կետի,

10.6.1.4. ենթավարձակալության առարկան պետք է ծառայի Մասնավոր գործընկերոջ՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման նպատակներին, իսկ ավելի կոնկրետ՝ Ծառայությունների և Գործառնությունների մատուցմանը (օրինակ՝ Գրանցման կենտրոններում հաճախորդներին այնպիսի օժանդակ ծառայության տրամադրում, ինչպիսին է սննդի մատակարարումը/սննդամթերիքին առնչվող ծառայությունները):

10.6.2. Մասնավոր գործընկերը դիմում է Հանրային գործընկերոջը Գրանցման կենտրոնի վերաբերյալ երրորդ անձի հետ ենթավարձակալության պայմանագրի հաստատման համար ներկայացվող հարցմամբ՝ հարցմանը կցելով համապատասխան պայմանագրի նախագիծը և Գրանցման կենտրոնի սեփականատիրոջ (վարձատուի) կողմից ենթավարձակալության համար տրված նախնական հաստատումը:

Հանրային գործընկերը հաստատում է համապատասխան ենթավարձակալության պայմանագրի կնքումը կամ տրամադրում է եզրակացություն այդ հաստատումը ողջամտորեն մերժելու մասին՝ հաստատման համար Մասնավոր գործընկերոջ կողմից ներկայացված հարցումն ստանալու օրվանից տասնհինգ (15) Աշխատանքային օրվա ընթացքում: Եթե Հանրային գործընկերն այս ժամկետում չի պատասխանում, ապա համարվում է, որ Հանրային գործընկերը հաստատել է համապատասխան ենթավարձակալության պայմանագրի կնքումը:

10.6.3. Մասնավոր գործընկերն ապահովում է, որ սույն 10.6 կետով նախատեսված երրորդ անձանց հետ պայմանագրերը կնքվեն պարզած ձեռքի

հեռավորության սկզբունքի համաձայն և չպարունակեն այնպիսի դրույթներ, որոնք կարող են էական բացասական ազդեցություն ունենալ սույն Պայմանագրով սահմանված՝ Կողմերի իրավունքների և պարտականությունների վրա:

Մասնավոր գործընկերը զեկուցում է 10.6 կետերի համաձայն երրորդ անձանց հետ կնքված ենթավարձակալության պայմանագրերի մասին՝ 13.3.2 կետին համապատասխան:

10.6.4. Արգելվում է Գրանցման կայանների վերաբերյալ ենթավարձակալության պայմանագրեր կնքել՝

10.6.4.1. ցանկացած երրորդ անձի հետ, եթե այդպիսի երրորդ անձի կամ նրա Փոխկապակցված անձի վրա տարածվում է ՊՄԳ ընթացակարգի 47-րդ պարբերության 1-ին, 5-րդ, 7-րդ կետերում նշված որևէ սահմանափակում,

10.6.4.2. ցանկացած երրորդ անձի հետ, եթե այդպիսի երրորդ անձը կամ նրա Փոխկապակցված անձը ենթակա են Կիրառելի իրավունքով կամ միջազգային իրավունքով կիրառվող պատժամիջոցների կամ Հայաստանում Կիրառելի իրավունքով ճանաչված միջազգային պատժամիջոցների,

10.6.5. Արգելվում է 10.6 կետում նշված երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերով նախատեսված իրավունքների ցանկացած փոխանցում (զիջում) այդպիսի երրորդ անձանցից որևէ այլ անձանց:

10.6.6. Մասնավոր գործընկերը կարող է իր հաշվին հավաքագրել և սեփականացնել 10.6 կետում նշված ենթավարձակալության պայմանագրերի համաձայն ենթավարձակալներից ստացված վճարումները՝ ենթավարձակալության պայմանագրերի և վարձակալության պայմանագրերի պայմաններին համապատասխան:

10.7. **Թույլտվությունները**

10.7.1. Մասնավոր գործընկերը պարզում, մինչև որևէ գործողություն սկսելը ստանում և ժամանակին թարմացնում (երկարաձգում) է սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ բոլոր Թույլտվությունները, ներառյալ, բայց չսահմանափակելով՝ Ներդրումային պարտավորությունների կատարման (այդ թվում՝ Ծրագրի ակտիվների բոլոր անհրաժեշտ արդիականացումներն ու այլ բարելավումներ), Ծառայությունների և Գործառնությունների կատարման, Ծրագրի ակտիվների շահագործման և սպասարկման համար պահանջվող Թույլտվությունները: Մասնավոր գործընկերը կրում է Կիրառելի իրավունքի համաձայն բոլոր Թույլտվությունների ստացման և երկարաձգման հետ կապված բոլոր ծախսերը:

10.7.2. Հանրային գործընկերն աջակցում է Մասնավոր գործընկերոջը Թույլտվությունների ձեռքբերման հարցում այնքանով, որքանով այն գտնվում է Հանրային գործընկերոջ լիազորությունների շրջանակում և Կիրառելի իրավունքի դրույթներին համապատասխան: Հանրային գործընկերոջից շինարարական իրավունքների փոխանցումը Մասնավոր գործընկերոջը, որը պահանջվում է որպես Ներդրումային պարտավորությունների մաս Փոխանցվող ակտիվների անշարժ գույքի բարելավման աշխատանքներն իրականացնելու համար, համարվում է կատարված՝ սույն Պայմանագրի հիման վրա Կնքման օրվանից:

10.7.3. Մասնավոր գործընկերը կրում է Կիրառելի իրավունքի համաձայն Թույլտվություններն ստանալու և վերագործարկելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների պատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ռիսկերը, այդ թվում՝ Հայաստանի իշխանությունների կողմից համապատասխան Թույլտվությունների տրամադրումը մերժելու ռիսկը: Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող Թույլտվությունները տրամադրելու կամ թարմացնելու (վերագործարկելու) անհիմն մերժումը կարող է հանգեցնել սույն Պայմանագրի «Քաղաքական Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք» դրույթների կիրառմանը, ինչպես նշված է 14-րդ բաժնում:

10.7.4. Սույն Պայմանագրի շրջանակներում Մասնավոր գործընկերոջ կողմից ձեռք բերված բոլոր Թույլտվությունների պատճենները ներկայացվում են Հանրային գործընկերոջը:

10.8. **Անձնակազմը**

10.8.1. Մասնավոր գործընկերն ապահովում է, որ աշխատանքի ընդունվի բավարար, համապատասխան և պատշաճ որակավորում ունեցող և փորձառու անձնակազմ (լինի Մասնավոր գործընկերոջ կողմից, թե երրորդ անձանց կողմից՝ 10.5 կետում նշված պայմանագրերի շրջանակում)՝ Ներդրումային պարտավորությունները կատարելու, Ծառայություններ/Գործառնություններ մատուցելու, Ծրագրի ակտիվները շահագործելու և սպասարկելու համար, ինչպես նաև Ծրագիրը Պայմանագրի և Կիրառելի իրավունքի պահանջներին համապատասխան իրականացնելու համար:

10.8.2. Մասնավոր գործընկերը բավարարում է Տեխնիկական պահանջների կանոնները, որոնք հատկապես կամ էականորեն կիրառվում են Մասնավոր գործընկերոջ անձնակազմի նկատմամբ, ներառյալ, առանց սահմանափակման, գրանցման և անհատականացման Ծառայությունների/Գործառնությունների կատարմանը ներկայացվող պահանջները (համաձայն Տեխնիկական պահանջների 2.6.2 ենթաբաժնի):

Մասնավոր գործընկերը կարող է ինքնուրույն աշխատանքի ընդունել իր անձնակազմին, վերակազմավորել իր ստորաբաժանումները կամ այլ կերպ փոխել իր կազմակերպչական կառուցվածքը՝ Տեխնիկական պահանջների՝ անձնակազմին վերաբերող համապատասխան կանոններին

համապատասխանելու կամ Մասնավոր գործընկերոջ՝ Պայմանագրով նախատեսված այլ պարտավորությունները կատարելու նպատակով: Մասնավոր գործընկերը բավարարում է Կիրառելի իրավունքի համապատասխան պահանջները և կրում է այդ կապակցությամբ բոլոր ծախսերը:

10.8.3. Մասնավոր գործընկերը Գործառնական օրվանից հետո երկու (2) տարվա ընթացքում ավարտում է Տեխնիկական պահանջների բաժիններում/ենթաբաժիններում/կետերում նշված անձնակազմի վերապատրաստման ծրագրերն ու վերապատրաստման հետ կապված աշխատանքները: Մասնավոր գործընկերն այդ աշխատանքների ավարտի մասին զեկուցում է 13.3.2 կետի համաձայն:

10.9. **Փոփոխման պահանջը**

10.9.1. Ցանկացած Կողմ կարող է, չնայած սույն Պայմանագրում ցանկացած հակառակ դրույթի, նախաձեռնի հավելյալ կամ փոփոխված Ծառայությունների և այլ Գործառնությունների մատուցում կապված սույն Պայմանագրի և/կամ առաջարկի գործող՝ Պայմանագրի ներքո Ծառայությունների և գործառնությունների պայմանների փոփոխություն առարկայի հետ (**Փոփոխման պահանջ**):

10.9.2. Փոփոխման պահանջը կարող է իրականացվել համաձայն սույն Պայմանագրի, եթե հետևյալ բոլոր պայմանները բավարարված են.

10.9.2.1. Ծառայությունների և այլ Գործառնությունների փոփոխության կարիքը առաջացել է այնպիսի հանգամանքներից, որոնք բարեխիղճ Հանրային Գործընկեր չէր կարող կանխատեսել,

10.9.2.2. փոփոխությունը չի փոփոխում Պայմանագրի ընդհանուր բնույթը և հաստատված առարկան,

10.9.2.3. մեկ Փոփոխման պահանջի վճարների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Հաղթողի հայտով սահմանված վճարների հիման վրա հաշվարկված պայմանագրի արժեքի 10%-ը: Երբ մի քանի հաջորդական փոփոխման պահանջներ են իրականացվում, այդ սահմանափակումը կիրառվելու է յուրաքանչյուր Փոփոխման պահանջի նկատմամբ:

10.9.3. Եթե Կողմը որոշում է, որ անհրաժեշտ է Փոփոխման պահանջ, ապա մյուս Կողմին գրավոր ծանուցում է ուղարկում նկարագրելով ողջամիտ մանրամասնությամբ Փոփոխման պահանջով առաջարկվող փոփոխությունը և իր ազդեցությունը: Փոփոխման պահանջը ստանալու պահից երկու Կողմերը համաձայնում են արագորեն գնահատել իրագործելիությունը, ազդեցությունը Ծրագրի ժամկետների և բյուջեի վրա, և պոտենցիալ ռիսկերը, որոնք կապված են առաջարկվող փոփոխության հետ քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում:

10.9.4. Եթե փոփոխությունը ենթադրում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ապա Մասնավոր գործընկերը կգնահատի համապատասխան ռեսուրսները, որոնք կպահանջվեն համապատասխան առաջադրանքը իրականացնելու նպատակով, ներառյալ՝ աշխատանքի ծավալի կանխատեսումն և վճարների գնահատումը: Վճարները և աշխատանքների ծավալի կանխատեսումը պետք է համապատասխանեն Հաղթողի հայտին և, որտեղ կիրառելի է, պետք է պատշաճ կերպ հիմնավորվեն: Կողմերը բարեխղճորեն կբանակցեն փոխադարձ ընդունելի պայմաններ փոփոխությունը իրականացնելու համար, ներառյալ հավելյալ Ծառայությունների և Գործառնությունների շրջանակը, գործարկման ժամկետները և դրանց հետ կապված վճարները:

10.9.5. Կողմերը կկնքեն սույն Պայմանագրի լրացուցիչ համաձայնագիր ֆորմալացնելով Փոփոխման պահանջի պայմանները համաձայն Կիրառելի իրավունքի և պայմանով, որ ստանան համապատասխան թույլատվությունները և հաստատումները: Փոփոխման պահանջը կկիրառվի Պայմանագրի համապատասխան լրացուցիչ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

10.9.6. Հանրային գործընկերը կարող է դիմել Մասնավոր գործընկերոջը, սպասարկման ծառայություններ տրամադրելու համար՝ համաձայն Տեխնիկական պահանջների «2.6.3. Հետփոխանցման պահանջներ» բաժնի ու Հաղթողի հայտում նշված գնով՝ հաշվի առնելով գնի փոփոխման 10.3.4-րդ կետում նշված պայմանները: Աջակցման և սպասարկման ծառայությունները կարող են հայցվել տարեկան՝ սկսած հետփոխանցման ժամանակահատվածից առավելագույնը երեք (3) երկարաձգման հնարավորությունով, յուրաքանչյուրը՝ վեց ամսվա ծանուցմամբ:

Հայցումը ստանալու պահից Կողմերը բարեխղճորեն կբանակցեն և կհամաձայնվեն այն սպասարկման ծառայությունների պայմանների շուրջ, որոնք կարգավորված չեն Տեխնիկական պահանջներով համաձայն Կիրառելի իրավունքի և համապատասխան հաստատումները և թույլտվությունները ստանալու պայմանով: Մասնավոր Գործընկերը պետք է տրամադրի սպասարկման ծառայություններ համաձայնեցված պայմանների հիման վրա, Ծրագրի ժամկետրի ավարտից հետո՝ առավելագույնը երեք (3) տարվա ընթացքում:

10.9.7. Կողմերը կկնքեն սույն Պայմանագրի լրացուցիչ համաձայնագիր ֆորմալացնելով սպասարկման ծառայությունների պայմանները, որոնք կարգավորված չեն Տեխնիկական պահանջներով համաձայն Կիրառելի իրավունքի և համապատասխան հաստատումները և թույլտվությունները ստանալու պայմանով: Այս դեպքում Մասնավոր գործընկերը կտրամադրի համապատասխան սպասարկման ծառայությունները Պայմանագրի լրացուցիչ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած, եթե կողմերը այլ բանի շուրջ չհամաձայնվեն:

10.9.6 և 10.9.7 կետերը կշարունակեն գործել Պայմանագրի դադարումից հետո:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

11.1. **Ընդհանուր պարտավորությունները**

11.1.1. Մասնավոր գործընկերը, իր հաշվին և ռիսկն իր վրա վերցնելով, ձեռք է բերում և պահպանում սույն Պայմանագրի պայմանների կատարման համար անհրաժեշտ ապահովագրություն Ծրագրի ողջ ժամկետի ընթացքում կամ այլ համապատասխան ժամանակահատվածում (ըստ դեպքի):

Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջը նշանակում է Պայմանագրի պահանջների բավարարման համար ձևակերպված ապահովագրական փաստաթղթերով որպես ապահովադիր և լրացուցիչ ապահովագրված կողմ (ըստ դեպքի) այն դեպքում, երբ ապահովագրական դեպքը Վաղաժամկետ դադարեցման հիմք է համաձայն 17.2.2-րդ կետի:

11.1.2. Մասնավոր գործընկերն ինքնուրույն ընտրում է ապահովագրողներին՝ սույն Պայմանագրի դրույթների կատարման համար անհրաժեշտ ապահովագրությունը ձեռք բերելու համար՝ 11-րդ բաժնի դրույթներին համապատասխան: Սույն Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ապահովագրության պայմանները որոշում է Մասնավոր գործընկերը՝ ինքնուրույն, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով, Մրցութային փաստաթղթերով, Կիրառելի իրավունքով, կամ եթե Կողմերն այլ բան չեն պայմանավորվել:

11.1.3. Եթե սույն Պայմանագրի կատարման նպատակով Մասնավոր գործընկերոջ կողմից մշակված ապահովագրական քաղաքականությունների պայմանները նախատեսում են չհատուցվող գումարային շեմ, ապա Մասնավոր գործընկերը պատասխանատվություն է կրում այն վնասների համար, որոնք, ըստ այդպիսի ապահովագրական քաղաքականությունների, չեն փոխհատուցվում ապահովագրական ընկերությունների կողմից:

11.1.4. Եթե Մասնավոր գործընկերոջ որոշակի գույք կամ գործունեություն ապահովագրված չէ, ապա Մասնավոր գործընկերը բացառապես պատասխանատվություն է կրում Հանրային մարմինների, Հանրային գործընկերոջ, Վարկատուների և ցանկացած երրորդ անձանց առջև այդպիսի գույքի ոչնչացման, կորստի կամ վնասի հետ կապված կորուստների կամ համապատասխան գործունեության դադարեցման համար, այդպիսի գույքի օգտագործման արդյունքում ցանկացած երրորդ անձի պատճառված վնասի (այսինքն՝ գույքային վնասների, վնասվածքների, առողջությանը պատճառված այլ վնասների կամ մահի) համար կամ այդպիսի գործունեություն իրականացնելու, ինչպես նաև ցանկացած այլ ռիսկի համար:

11.1.5. Եթե Մասնավոր գործընկերը ձեռք չի բերում և (կամ) չի պահպանում սույն Պայմանագրի պայմանները կատարելու համար անհրաժեշտ ապահովագրությունը՝ բացառությամբ 11.2 կետով պահանջվող ապահովագրության, ապա Հանրային գործընկերն իրավունք ունի ձեռք բերելու և (կամ) պահպանելու համապատասխան ապահովագրությունը, եթե

այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով: Այս դեպքում Մասնավոր գործընկերը փոխհատուցում է տրամադրում Հանրային գործընկերոջը համապատասխան ապահովագրության կատարման, գնման և (կամ) պահպանման հետ կապված բոլոր ծախսերի համար հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան երեսուն (30) օրվա ընթացքում:

11.2. **Գործառնական ապահովագրությունը**

11.2.1. Մասնավոր գործընկերն իր վրա է վերցնում Ծրագրի ակտիվների պատահական կորստի կամ վնասման ռիսկը, ինչպես նաև Ծրագրի ժամկետի ընթացքում գործունեության բնականոն ընթացքում Ծրագրի ակտիվների շահագործման և սպասարկման հետ կապված ռիսկերը (այդ թվում՝ Ծրագրի ակտիվների տվյալների պաշտպանության խախտումների ռիսկերը): Ծրագրի ակտիվներն ապահովագրվում են Մասնավոր գործընկերոջ կողմից՝ իր օգտին:

11.2.2. Մասնավոր գործընկերը գնում է ապահովագրություն առնվազն 11.2կետով նախատեսված հետևյալ ապահովագրական ռիսկերից.

11.2.2.1. բնական աղետներ (այդ թվում՝ առանց սահմանափակման, երկրաշարժեր, ջրհեղեղներ, փոթորիկներ), դժբախտ պատահարներ, աղետներ և այլ վտանգավոր իրադարձություններ,

11.2.2.2. երրորդ անձանց կողմից կատարվող անօրինական գործողություններ (այդ թվում՝ գողություններ),

11.2.2.3. ամբողջ գույքին հասցված պատահական վնաս, այդ թվում՝ վնաս, որը ծածկում է որպես Ծրագրի ակտիվների մաս հանդիսացող այդպիսի գույքի անսարքությունների կամ կորստի, վնասի կամ ոչնչացման հետևանքով բաց թողնված օգուտը՝ այդ գույքի փոխարինման արժեքով, և բաց թողնված օգուտի ապահովագրությունը՝ ոչ պակաս, քան պարտքային պարտավորությունների գնահատված գումարը (այդ թվում՝ տոկոսը և մայր գումարը) և ֆիքսված ծախսերը՝ վնասված գույքի փոխարինման ժամանակահատվածում,

11.2.2.4. գործունեության ընթացքում հասցված վնաս (այդ թվում, բայց չսահմանափակելով՝ սարքավորումների խափանումներ), ներառյալ՝ Մասնավոր գործընկերոջ աշխատակիցների, անվտանգության ծառայությունների/ընկերությունների, ինչպես նաև ցանկացած այլ երրորդ անձանց գործողություններով կամ անգործությամբ պայմանավորված վնասը,

11.2.2.5. պատահարներ, որոնք հանգեցրել են գույքի ոչնչացման կամ վնասման:

11.2.3. Մասնավոր գործընկերը, 11.2 կետի պայմաններին համապատասխան, ապահովագրում է Ծրագրի ակտիվները Հայաստանում պատշաճ կերպով ստեղծված և գրանցված (մեկ կամ մի քանի) ռեզիդենտ և/կամ ոչ ռեզիդենտ ապահովագրողների մոտ Ռեզիդենտ ապահովագրողների կողմից

ապահովագրված Ծրագրի ակտիվների ապահովագրական ռիսկերի առնվազն իննսունհինգ (95) տոկոսը պետք է վերաապահովագրվի (մեկ կամ ավելի) ոչ ռեզիդենտ ապահովագրողների մոտ, որոնք ունեն «S&P», «Moody's», «A. M. Best» կամ «Fitch» վարկանիշային կազմակերպությունների կողմից տրված առնվազն A- վարկանիշ՝ Հանրային գործընկերոջ նախնական գրավոր համաձայնության հիման վրա:

11.2.4. Այն դեպքում, երբ 11.2 կետով նախատեսված ապահովագրության պայմանագրի կնքումից հետո ցանկացած պահի 11.2.3 կետով սահմանված պահանջներն այլևս չեն բավարարվում, ապա Մասնավոր գործընկերը պետք է հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ մի դեպքում ոչ ուշ, քան քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում կնքի համապատասխան ապահովագրական պայմանագիր (պայմանագրեր), որը բավարարում է (որոնք բավարարում են) 11.2.3 կետի պահանջները: Այդպիսի դեպքում՝ մինչև նոր ապահովագրական պայմանագիր (պայմանագրեր) կնքելը, ուժի մեջ է (են) մնում նախկինում կնքված ապահովագրական պայմանագիրը (պայմանագրերը):

11.2.5. Մասնավոր գործընկերը կնքում է 11.2 կետի պայմանները բավարարելու համար անհրաժեշտ ապահովագրական բոլոր պայմանագրերը և ապահովագրական այլ համապատասխան փաստաթղթեր Գործառնական օրվանից ոչ ուշ, քան տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում, և պահպանում է այդպիսի բոլոր ապահովագրությունների վավերականությունը Ծրագրի ժամկետի ամբողջ ժամանակահատվածի համար:

11.3. **Ապահովագրության այլ տեսակներ**

11.3.1. Ծրագրի ժամկետի ընթացքում կամ մեկ այլ համապատասխան ժամանակահատվածում (ըստ դեպքի) Մասնավոր գործընկերը, իր հաշվին և ռիսկն իր վրա վերցնելով, ձեռք է բերում և պահպանում ապահովագրության այլ տեսակներ, որոնք անհրաժեշտ են Ծրագրի իրականացման և սույն Պայմանագրի, Մրցութային փաստաթղթերի, Կիրառելի իրավունքի պայմանները կատարելու համար, կամ այն պայմանները կատարելու համար, որոնք ցանկալի կամ ողջամիտ են Մասնավոր գործընկերոջ համար:

11.3.2. Եթե Մեկնարկի օրվա կամ մեկ այլ օրվա դրությամբ, երբ Մասնավոր գործընկերը ստանում է որոշակի գույք և (կամ) սկսում է որոշակի գործունեություն՝

11.3.2.1. ապահովագրության համապատասխան տեսակներն արդեն թողարկվել են, ապա Մասնավոր գործընկերը պահպանում է ապահովագրության այդպիսի տեսակները համապատասխան ապահովագրական պայմանագրերի վաղեմության ժամկետի ընթացքում, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո երկարաձգում է այդպիսի պայմանագրերը կամ կնքում նոր ապահովագրական պայմանագրեր, եթե ապահովագրության համապատասխան տեսակը պարտադիր է Կիրառելի իրավունքին համապատասխան կամ

անհրաժեշտ է Ծրագրի իրականացման և սույն Պայմանագրի կամ Մրցութային փաստաթղթերի պայմանների կատարման համար կամ ցանկալի է կամ ողջամիտ Մասնավոր գործընկերոջ համար (ըստ դեպքի): Այդ դեպքում Մասնավոր գործընկերն ինքն է ընտրում ապահովագրողներին և որոշում ապահովագրության պայմանները,

11.3.2.2. ապահովագրության այն տեսակները, որոնք պարտադիր են Կիրառելի իրավունքին համապատասխան կամ անհրաժեշտ են Ծրագրի իրականացման և սույն Պայմանագրի պայմանների կատարման համար կամ ցանկալի են Մասնավոր գործընկերոջ համար (ըստ դեպքի), բացակայում են, ապա Մասնավոր գործընկերը, իր հաշվին և ռիսկն իր վրա վերցնելով, ձեռք է բերում և պահպանում համապատասխան ապահովագրությունը:

11.3.3. Ապահովագրության տեսակները, որոնք կարող են պարտադիր լինել Կիրառելի իրավունքին համապատասխան կամ անհրաժեշտ լինել Ծրագրի իրականացման և սույն Պայմանագրի պայմանների կատարման համար, ներառում են բայց չեն սահմանափակում.

11.3.3.1. Ներդրումային պարտավորությունների կատարման ժամկետի ընթացքում Ծրագրի ակտիվների արդիականացման, վերանորոգման և այլ բարելավումների հետ կապված ինժեներական և նախագծային ռիսկերի ապահովագրություն,

11.3.3.2. տրանսպորտային պատահարից անձնական ապահովագրություն,

11.3.3.3. երրորդ անձանց նկատմամբ պատասծանատվության ապահովագրություն, ներառյալ՝ երրորդ անձանց կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասի համար պատասխանատվությունը:

11.4. **Ապահովագրության վերաբերյալ ապացույցը**

11.4.1. Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջը տրամադրում է 11.2 կետով պահանջվող ապահովագրության պայմանագրերի և ապահովագրության վերաբերյալ այլ համապատասխան փաստաթղթերի պատճենները ոչ ուշ, քան այդպիսի փաստաթղթերի կնքումից հետո հինգ (5) Աշխատանքային օրվա ընթացքում: Հանրային գործընկերը կարող է Մասնավոր գործընկերոջից պահանջել տրամադրել ապահովագրության պայմանագրերի և 11.3 կետում ձևակերպված ապահովագրության վերաբերյալ այլ համապատասխան փաստաթղթերի պատճենները, որի դեպքում այդպիսի փաստաթղթերը տրամադրվում են Հանրային գործընկերոջ կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան հինգ (5) Աշխատանքային օրվա ընթացքում:

11.4.2. Մասնավոր գործընկերը վճարում է սույն Պայմանագրի պահանջները բավարարելու համար ձևակերպված ցանկացած ապահովագրության

ապահովագրավճար, որպեսզի այն մնա ուժի մեջ և վավերական լինի Ծրագրի ժամկետի ընթացքում կամ որևէ այլ համապատասխան ժամանակահատվածում (ըստ դեպքի), և Հանրային գործընկերոջը տրամադրում է վճարման փաստաթղթերի պատճենները՝ համապատասխան վճարումը կատարելու օրվանից հինգ (5) Աշխատանքային օրվա ընթացքում: Եթե Մասնավոր գործընկերոջ կողմից ապահովագրավճար չկատարելը հանգեցրել է որևէ ապահովագրական պայմանագրի անվավերության (ուժը կորցնելուն), ապա Մասնավոր գործընկերը բացառապես պատասխանատվություն է կրում 11.1.4 կետում նշված ցանկացած կորստի և ռիսկի համար:

11.4.3. Հանրային գործընկերը կարող է Մասնավոր գործընկերոջից ցանկացած պահի գրավոր ձևով պահանջել տրամադրել փաստաթղթեր և տեղեկություններ ցանկացած ապահովագրության վերաբերյալ, որը Մասնավոր գործընկերը պետք է ձեռք բերի կամ պահպանի սույն Պայմանագրի պայմանները կատարելու համար, ներառյալ՝ վճարումների վերաբերյալ համապատասխան ապահովագրական ընկերությունների կողմից տրված ապացույցներն ու կտրոնները: Մասնավոր գործընկերն այդպիսի ապացույցները տրամադրում է Հանրային գործընկերոջը՝ Հանրային գործընկերոջ կողմից այդպիսի պահանջն ստանալուց հետո տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում:

11.5. **Ապահովագրական հասույթի օգտագործումը**

11.5.1. Կիրառելի իրավունքի, սույն Պայմանագրի և Ֆինանսավորման փաստաթղթերի դրույթների համաձայն՝ սույն Պայմանագրի պայմանները կատարելու համար կնքված (լինեն դրանք կնքված ուղղակիորեն կամ Հանրային գործընկերոջ միջոցով) ապահովագրական պայմանագրերով Մասնավոր գործընկերոջ կողմից ստացված ամբողջ հասույթը Մասնավոր գործընկերոջ կողմից անհապաղ ուղղվում է համապատասխան այն գույքի և (կամ) ընթացիկ գործունեության կամ դրա որևէ մասի վերանորոգմանը, վերականգնմանը, թարմացմանը կամ փոխարինմանը, որոնք հնարավոր է վնասված կամ ոչնչացված են: Մասնավոր գործընկերն իրականացնում է շտկման այդպիսի գործողություններ՝ ապահովելու համար, որ վնասված կամ ոչնչացված գույքը և (կամ) ընթացիկ գործունեությունը հնարավորինս վերադարձվեն այն նույն վիճակին, ինչպիսին եղել են մինչև այդպիսի վնասը կամ ոչնչացումը՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

11.5.2. Երրորդ անձանց (ներառյալ՝ Մասնավոր գործընկերոջ աշխատակիցները) պատասխանատվության ապահովագրության մասով ապահովագրական հասույթ (ապահովագրական հատուցում) վճարվելու դեպքում այդպիսի հասույթը (հատուցումը) կարող է ուղղակիորեն վճարվել այդ երրորդ անձանց:

11.5.3. Եթե որևէ ապահովագրական հասույթ (ապահովագրական հատուցում), որը Մասնավոր գործընկերը կարող է ստանալ սույն Պայմանագրի համաձայն կնքված ապահովագրական պայմանագրերի համաձայն, չի օգտագործվում 11.5 կետի համաձայն, ապա այդպիսի հասույթը ենթակա է վճարման

Մասնավոր գործընկերոջ կողմից Հանրային գործընկերոջը և վճարվում է Դադարեցումից հետո:

11.5.4. Եթե Ծրագրի բոլոր կամ գրեթե բոլոր ակտիվները ոչնչացվում կամ մեծամասամբ ոչնչացվում են մեկ դեպքով, որն այլ կերպ չի հանգեցնում սույն Պայմանագրի դադարեցման, ապա Հանրային գործընկերը կարող է իր հայեցողությամբ Մասնավոր գործընկերոջից պահանջել ապահովագրական ամբողջ հասույթը (հատուցումները) օգտագործել Հանրային գործընկերոջ համար՝ 11-րդ բաժնի համաձայն Մասնավոր գործընկերոջ կողմից կնքված ապահովագրական պայմանագրերից ցանկացածի համաձայն, կամ նախաձեռնել Դադարեցումը սույն Պայմանագրով սահմանված կարգով:

12. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

12.1. **Մասնավոր գործընկերոջ ֆինասավորումը**

12.1.1. Մասնավոր գործընկերը պատասխանատվություն է կրում Ծրագրի ժամկետի ընթացքում Պայմանագրով նախատեսված Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ շահագործման և կապիտալ ծախսերի ամբողջական ֆինանսավորման համար՝ իր հաշվին և ռիսկերն իր վրա վերցնելով: Այս նպատակով Մասնավոր գործընկերը կարող է ներգրավել իր սեփական միջոցները, Վարկեր, ինչպես նաև Կիրառելի իրավունքով չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցներ:

12.1.2. Մասնավոր գործընկերոջ կողմից ներգրավված ֆինանսավորման ընդհանուր գումարը պետք է բավարար լինի Մասնավոր գործընկերոջ՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունների, այդ թվում՝ Ներդրումային պարտավորությունների կատարման համար:

12.1.3. Ներդրումային պարտավորությունների կատարումը և Մասնավոր գործընկերոջ՝ Ծրագրով սահմանված ֆինանսավորման պարտավորությունների կատարումը (այդ թվում՝ շահագործման և կապիտալ ծախսերի ֆինանսավորումը) երաշխավորվում են Գործառնությունների ապահովման միջոցով՝ 9.2 կետի պայմաններին համապատասխան:

12.2. **Ծավալի վճարումները**

12.2.1. Յուրաքանչյուր Գործառնական տարում Հանրային գործընկերը վճարումներ է կատարում Մասնավոր գործընկերոջը՝ Գործառնական տարվա յուրաքանչյուր ամսվա ընթացքում ավարտված Ծառայությունների և Գործառույթների համար (**Ծավալի վճարումները**): Ծավալի վճարումները որոշվում են հետևյալ կերպ.

$$\sum VP_q = ID_q \times P_{ID},$$

որտեղ՝

ID_q-ն՝ Գործառնական տարվա մեկ ամսվա ընթացքում Մասնավոր գործընկերոջ կողմից արտադրված Անձը հաստատող փաստաթղթի

համապատասխան տեսակի համարն է (ըստ Տեխնիկական պահանջների 3-րդ հավելվածի),

P_{ID}-ն՝ Գործառնական տարվա ամսվա ընթացքում Մասնավոր գործընկերոջ կողմից արտադրված Անձը հաստատող փաստաթղթի համապատասխան տեսակի գինն է (ՀՀ դրամով) (ըստ Հաղթողի Հայտի և Պայմանագրի Հավելված 2-ի (*Անձը հաստատող փաստաթղթերի գները*)):

12.2.2. Ծավալի վճարումները հավաքագրելու համար Մասնավոր գործընկերը պետք է Հանրային գործընկերոջը տրամադրի մինչև այն փաստացի ամսվա հինգերորդ (5-րդ) օրը, երբ մատուցվում են Ծառայությունները և Գործառնությունները.

12.2.2.1. տրված Անձը հաստատող փաստաթղթերի գումարը բաժանված ըստ փաստաթղթի տեսակների և նախորդ ամսվա համար կիրառված՝ սույն Պայմանագրով սահմանված գների.

12.2.2.2. նախորդ ամսվա համար պահանջվող Ծավալի վճարումների գումարը.

12.2.2.3. Էսքրոու հաշվից և ուղղակիորեն Հանրային Գործընկերից հատկացումների չափը՝ հաշվի առնելով Էսքրոու հաշվում առկա դրամական միջոցները և Հանրային գործընկերոջ արդի չմարված պարտքը:

Հանրային գործընկերը մինչև հաջորդ ամսվա տասնհինգերորդ (15-րդ) օրը պետք է հաստատի Ծավալի վճարումները կամ հիմնավոր առարկություններ ներկայացնի վերը նշված 12.2.2 կետում նշված հաշվարկի վերաբերյալ:

12.2.3. Հանրային գործընկերն ապահովում է ՀՀ դրամով Ծավալի վճարումների համապատասխան գումարի փոխանցումը Մասնավոր գործընկերոջ բանկային հաշվին՝ հետևյալ ձևով.

12.2.3.1. Էսքրոու հաշվին կուտակված հասանելի գումարների սահմաններում Էսքրոու հաշվից Ծավալի վճարումների համապատասխան գումարի հատկացումը հաստատելու միջոցով, և

12.2.3.2. Ծավալի վճարումների մասով չմարված պարտքն անմիջապես Հայաստանի պետական բյուջեից հատկացնելու միջոցով, եթե 12.2.3.1 կետի համաձայն՝ Էսքրոու հաշվից հատկացված Ծավալի վճարումների գումարը բավարար չէ Ծավալի վճարումների մասով պարտավորություններն ամբողջությամբ կատարելու համար:

12.2.4. Հանրային գործընկերն Ծավալի վճարումների համապատասխան գումարը փոխանցում է Մասնավոր գործընկերոջ բանկային հաշվին ոչ ուշ, քան այն ամսվան հաջորդող ամսվա քսաներորդ (20-րդ), որի համար կատարվել են Ծավալի վճարումները (**Ծավալի վճարումների օր**): Մասնավոր գործընկերոջ՝ Ծավալի վճարումների համար նախատեսված հաշվեհամարի տվյալների փոփոխության դեպքում Մասնավոր գործընկերն այդպիսի

փոփոխությունների մասին ծանուցում է Հանրային գործընկերոջը ոչ ուշ, քան Ծավալի վճարումների օրվանից տասը (10) Աշխատանքային օր առաջ:

12.2.5. Եթե Ծառայություններն ու Գործառնությունները մատուցվել են Գործառնական տարվա ոչ լիարժեք ամսվա համար, ապա Հանրային գործընկերն Ծավալի վճարումների՝ 12.2.1 կետի համաձայն հաշվարկված համապատասխան գումարը վճարում է այն օրերի փաստացի քանակի համար, որոնց ընթացքում Ծառայությունների և Գործառնությունների մատուցումն ավարտին է հասցվել, և ոչ ուշ, քան մինչև Ծավալի վճարումների օրը:

12.2.6. Հանրային գործընկերն Ծավալի վճարումների կատարումը հաստատող փաստաթղթերը տրամադրում է Մասնավոր գործընկերոջը վճարման օրը կամ ոչ ուշ, քան Ծավալի վճարումները կատարելուց երկու (2) Աշխատանքային օր հետո:

12.2.7. Ծավալի վճարումները կարող են հաշվանցվել Մասնավոր գործընկերոջ կողմից Պայմանագրի խախտումների համար նշանակված տույժերի գումարներից կամ ցանկացած այլ վճարումներից, որոնք Մասնավոր գործընկերը վճարում է Հանրային գործընկերոջը՝ Պայմանագրի համաձայն: Այդ դեպքում Ըստ ծավալի վճարումների օրը կարող է երկարաձգվել այնպիսի ժամկետով, որն անհրաժեշտ է, որ Կողմերը համաձայնության գան հաշվանցվող այդպիսի գումարների շուրջ, բայց ոչ ավելի երկար, քան տասը (10) Աշխատանքային օրով:

12.3. **Պահանջարկի երաշխիքը**

12.3.1. Հանրային գործընկերը երաշխավորում է Ծրագրի ժամկետի ընթացքում գումարների հատկացումն այն չափով, որը Մասնավոր գործընկերոջը թույլ կտա յուրաքանչյուր Գործառնական տարվա վերջում Ծառայությունների և Գործառնությունների ավարտի մասով հասնել արտադրության ծավալի կրիտիկական կետի (**Պահանջարկի երաշխիք**):

12.3.2. Արտադրության ծավալի կրիտիկական կետը որոշվում է Անձը հաստատող փաստաթղթերի յուրաքանչյուր տեսակի համար որպես 80%՝ համապատասխան Գործառնական տարվա համար Տեխնիկական պահանջների 3-րդ հավելվածում (**Թիրախային ծավալներ**) սահմանված համապատասխան Անձը հաստատող փաստաթղթի հաշվարկված ծավալների համեմատ:

12.3.3. Եթե Մասնավոր գործընկերն Անձը հաստատող փաստաթղթերի բոլոր կամ որոշ տեսակների համար Գործառնական տարվա վերջում չի հասնում արտադրության ծավալի կրիտիկական կետին, ապա Հանրային գործընկերը վճարումներ է կատարում Մասնավոր գործընկերոջը՝ արտադրության ծավալի կրիտիկական կետի հասնելու համար (**Պահանջարկի երաշխիքի հետ կապված վճարումներ**), որը որոշվում է հետևյալ կերպ.

$$\sum DGP_n = ((TV_n \times 0{,}8) - V_{n,}) \times P_{ID}$$

որտեղ՝

DGP_n -ն Պահանջարկի երաշխիքի հետ կապված վճարումներն են՝ Անձը հաստատող փաստաթղթերի համապատասխան տեսակի համար,

TV_n -ն Անձը հաստատող փաստաթղթերի համապատասխան տեսակի Թիրախային ծավալն է (ըստ Տեխնիկական պահանջների 3-րդ հավելվածի)՝ համապատասխան Գործառնական տարվա համար,

V_n -ն Մասնավոր գործընկերոջ կողմից Գործառնական տարվա ընթացքում արտադրված Անձը հաստատող փաստաթղթերի համապատասխան տեսակի թիվն է:

P_{ID}-ն համապատասխան Անձը հաստատող փաստաթղթի տեսակի գինը (ՀՀ դրամով) (համաձայն Հաթողի հայտի և Պայմանագրի Հավելված 2-ի (Անձը հաստատող փաստաթղթերի գները)), որոնք թողարկվել են Մասնավոր գործընկերոջ կողմից Գործառնական տարվա ամսում:

12.3.4. Ծրագրի ժամկետի ընթացքում Պահանջարկի երաշխիքի հետ կապված վճարումների ընդհանուր գումարը կազմում է պետք է ավելացվի ֆիքսված գումար: Այդ ընդհանուր գումարը ենթակա չէ բարձրացման:

12.3.5. Յուրաքանչյուր դեպքում, երբ Պահանջարկի երաշխիքի հետ կապված վճարումները պետք է կատարվեն, Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջը տրամադրում է հետևյալը.

12.3.5.1. Անձը հաստատող փաստաթղթերի յուրաքանչյուր տեսակի համար Պահանջարկի երաշխիքի հետ կապված վճարումների գրավոր հաշվարկը և 12.3.3 կետի համաձայն Պահանջարկի երաշխիքի բոլոր վճարումների ընդհանուր գումարը,

12.3.5.2. համապատասխան Գործառնական տարվա համար պահանջվող փոխհատուցումը:

12.3.6. Հանրային գործընկերն ապահովում է ՀՀ դրամով Պահանջարկի երաշխիքի հետ կապված վճարումների համապատասխան գումարի փոխանցումը Մասնավոր գործընկերոջ բանկային հաշվին՝ հետևյալ ձևով.

12.3.6.1. Էսքրոու հաշվին կուտակված հասանելի գումարների սահմաններում Էսքրոու հաշվից Պահանջարկի երաշխիքի հետ կապված վճարումների համապատասխան գումարի հատկացումը հաստատելու միջոցով, և

12.3.6.2. Պահանջարկի երաշխիքի հետ կապված վճարումների մասով չմարված պարտքն անմիջապես Հայաստանի պետական բյուջեից հատկացնելու միջոցով, եթե 12.3.5.1 կետի համաձայն Էսքրոու հաշվից հատկացված Պահանջարկի երաշխիքի հետ կապված վճարումների գումարը բավարար չէ Պահանջարկի երաշխիքի հետ կապված վճարումների մասով պարտավորություններն ամբողջությամբ կատարելու համար:

12.3.7. Հանրային գործընկերը Պահանջարկի երաշխիքի վճարումների համապատասխան գումարը փոխանցում է Մասնավոր գործընկերոջ բանկային հաշվին ոչ ուշ, քան այն Գործառնական տարվան հաջորդող Գործառնական տարվա առաջին ամսվա երեսուներորդ (30-րդ) օրը, որի համար կատարվում են Պահանջարկի երաշխիքի վճարումները (**Պահանջարկի երաշխիքի վճարումների օր**): Մասնավոր գործընկերոջ՝ Պահանջարկի երաշխիքի վճարումների համար նախատեսված հաշվեհամարի տվյալների փոփոխության դեպքում Մասնավոր գործընկերն այդպիսի փոփոխությունների մասին ծանուցում է Հանրային գործընկերոջը ոչ ուշ, քան Պահանջարկի երաշխիքի վճարումների օրվանից տասը (10) Աշխատանքային օր առաջ:

12.3.8. Հանրային գործընկերը Պահանջարկի երաշխիքի վճարումների կատարումը հաստատող փաստաթղթերը տրամադրում է Մասնավոր գործընկերոջը վճարման օրը կամ ոչ ուշ, քան Պահանջարկի երաշխիքի վճարումները կատարելուց երկու (2) Աշխատանքային օր հետո:

12.3.9. Եթե Մասնավոր գործընկերը գերազանցել է համապատասխան Գործառնական տարում Անձը հաստատող փաստաթղթերի համապատասխան տեսակի Թիրախային ծավալները, ապա Հանրային գործընկերն իրավունք ունի Մասնավոր գործընկերոջը կատարվող ցանկացած վճարում հաշվանցելու Անձը հաստատող փաստաթղթերի այդպիսի տեսակի համար նախապես հատկացված՝ Պահանջարկի երաշխիքի վճարումներից՝ համաձայն 12.4 կետի:

12.4. **Տարեկան ճշգրտումների հետ կապված վճարումները**

12.4.1. Յուրաքանչյուր Գործառնական տարվա վերջում Կողմերը պետք է վերանայեն այդ Գործառնական տարվա ընթացքում կատարված բոլոր հաշվարկներն ու վճարումները և համաձայնեցնեն ճշգրտման վճարումների կատարման անհրաժեշտությունը («**Տարեկան ճշգրտման վճարումներ**»):

12.4.2. Տարեկան ճշգրտման վճարների հաշվարկման և բաշխման նպատակով Մասնավոր գործընկերը մինչև ընթացիկ Գործառնական տարվա վերջին ամսվա տասնհինգերորդ (15-րդ) օրը հանրային գործընկերոջը տրամադրում է.

12.4.2.1. Գործառնական տարվա ընթացքում պահանջված և փաստացի կատարված Ծավալի Վճարումների ամփոփագիր՝ Հանրային գործընկերոջից մինչև ճշգրտումները չմարված պարտքով.

12.4.2.2. Անձը հաստատող փաստաթղթի յուրաքանչյուր տեսակի Պահանջարկի երաշխիքային վճարումների ճշգրտումների հաշվարկով ամփոփագիրը (դրական, եթե պահանջվում է փոխհատուցում, կամ բացասական, եթե Մասնավոր գործընկերը պետք է վերադարձնի նախկինում ստացված փոխհատուցումը Պահանջարկի երաշխիքի համաձայն և փաստացի կուտակված ծավալները գերազանցել են կուտակված երաշխավորված

ծավալները՝ համապատասխան ճշգրտմամբ՝ հաշվի առնելով փաստացի հավաքագրված հասույթը (առավելագույն/զեղչված գներ).

12.4.2.3. Կողմերի միջև չմարված վճարումների ամփոփագիրը՝ հիմնված (i) Հանրային գործընկերոջ չմարված պարտքի վրա՝ նախքան ճշգրտումները, (ii) Պահանջարկի երաշխիքային վճարումների ճշգրտումները, (iii) այլ ճշգրտումները (օրինակ՝ Պայմանագրով նախատեսված տույժերը):

Մինչև այն Գործառնական տարվան հաջորդող Գործառնական տարվա առաջին ամսվա հինգերորդ (5-րդ) օրը, որի համար կատարվել են Տարեկան ճշգրտման վճարումները, Հանրային գործընկերը պետք է հաստատի Տարեկան ճշգրտման վճարները կամ ներկայացնի հիմնավոր առարկություններ սույն 12.4.2-րդ կետում նշված հաշվարկների վերաբերյալ:

12.4.3. Հաստատված տարեկան ճշգրտման վճարումները պետք է կատարվեն համապատասխան Կողմին Էսքրոու հաշվից մինչև այն Գործառնական տարվան հաջորդող Գործառնական տարվա առաջին ամսվա քսաներորդ 20-րդ օրը, որի համար կատարվել են տարեկան ճշգրտման վճարումները:

Տարեկան ճշգրտման վճարումների հետ կապված բոլոր ճշգրտումներից հետո նախորդ Գործառնական տարվա վերջում առկա Էսքրոու հաշվում առկա դրամական միջոցների մնացած մնացորդը պետք է հատկացվի Հանրային գործընկերոջը:

12.4.4. Էսքրոու հաշվից կամ Հանրային գործընկերոջից Մասնավոր գործընկերոջը և/կամ Մասնավոր գործընկերոջ հաշվից կամ Էսքրոու հաշվից Հանրային գործընկերոջը անհրաժեշտ վճարումները պետք է կատարվեն մինչև այն Գործառնական տարվան հաջորդող Գործառնական տարվա երկրորդ (2-րդ) ամսվա վերջ , որի համար կատարվել են Տարեկան ճշգրտման վճարումները, բացառությամբ այն դեպքերի, երբ Կողմերը ունեն հիմնավոր առարկություններ վերը նշված 12.4.2 կետում նշված Տարեկան ճշգրտման վճարների հաշվարկների վերաբերյալ:

13. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

13.1. **Հաշվետվություններ ներկայացնելու պարտավորությունները**

13.1.1. Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջը ներկայացնում է հաշվետվական փաստաթղթեր հետևյալ հարցերի վերաբերյալ.

13.1.1.1. հաշվետվական փաստաթղթեր ֆինանսական հարցերի վերաբերյալ՝ համաձայն սույն Պայմանագրի 13.2 կետի,

13.1.1.2. հաշվետվական փաստաթղթեր ներդրումային և ընթացիկ գործունեության հետ կապված հարցերի վերաբերյալ՝ համաձայն սույն Պայմանագրի 13.3 կետի,

13.1.1.3. հաշվետվական փաստաթղթեր գույքային հարցերի վերաբերյալ՝ համաձայն սույն Պայմանագրի 13.4 կետի:

13.1.2. Եթե 13.2-13.4 կետերով պահանջվող հաշվետվությունների համար Կիրառելի իրավունքով պարտադիր ձև սահմանված չէ, ապա Կողմերը գրավոր համաձայնում են հաշվետվական յուրաքանչյուր փաստաթղթի համապատասխան ձևի վերաբերյալ՝ նախքան Փակման ժամանակահատվածի մեկնարկը: Եթե ձևը չի համաձայնեցվում, ապա Կողմերը դիմում են Անկախ փորձագետին, որ վերջինս պատշաճ ձև սահմանի հաշվետվության համար:

13.1.3. Հանրային գործընկերը կարող է ինքնուրույն վերանայել Պայմանագրի համաձայն Մասնավոր գործընկերոջ կողմից ներկայացված հաշվետվությունները կամ այդ նպատակների համար ներգրավել իրավասու երրորդ անձանց:

13.2. **Ֆինանսական հաշվետվական փաստաթղթերը**

13.2.1. Առաջին Գործառնական տարվանից սկսած՝ Մասնավոր գործընկերը պատրաստում և տարեկան կտրվածքով և ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա ավարտից հարյուր քսան (120) օր հետո Հանրային գործընկերոջն է ներկայացնում ֆինանսական հարցերի վերաբերյալ հետևյալ հաշվետվական փաստաթղթերը.

13.2.1.1. Մասնավոր գործընկերոջ՝ վերջին ֆինանսական տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների պատճեններ, որոնք տրվել են հաշվապահական հաշվառման ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան (այդ թվում՝ ՖՀՄՍ, ՄՀԾ կամ ԱՄՆ ՀՀՀԸՍ),

13.2.1.2. Մասնավոր գործընկերոջ սեփական կապիտալի մասին հաշվետվություն՝ հաշվի առնելով տույժերը (այդ թվում՝ պատմականորեն հաշվեգրված գումարները),

13.2.1.3. ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ հաշվետվություն, որում նշված է i) տույժերի (տուգանքների, տոկոսային տույժերի, փոխհատուցումների), վնասների և դրամական ցանկացած այլ պարտավորության չափը, որոնք Մասնավոր գործընկերոջ կողմից վճարվել են, ենթակա են վճարման կամ գանձվել են (թե՛ բողոքարկված, թե՛ հաստատված) հօգուտ Հանրային գործընկերոջ՝ համաձայն սույն Պայմանագրի. ii) տույժերի (տուգանքների, տոկոսային տույժերի, փոխհատուցումների), վնասների և դրամական ցանկացած այլ պարտավորության չափը, որոնք Հանրային գործընկերոջ կողմից վճարվել են, ենթակա են վճարման կամ գանձվել են (թե՛ բողոքարկված, թե՛ հաստատված) հօգուտ Մասնավոր գործընկերոջ՝ համաձայն սույն Պայմանագրի,

13.2.1.4. հարկերի, տուրքերի և Կիրառելի իրավունքով սահմանված այլ պարտադիր վճարումների մասով Մասնավոր գործընկերոջ պարտավորությունների կատարման վերաբերյալ հաշվետվություն, այդ թվում՝ Մասնավոր գործընկերոջ կողմից դեռևս չկատարված պարտադիր վճարումները:

13.3. **Ներդրումային և գործառնական հաշվետվական փաստաթղթերը**

13.3.1. Մեկնարկի օրվանից սկսած մինչև Ներդրումային պարտավորությունների կատարումը Մասնավոր գործընկերը պատրաստում և Հանրային գործընկերոջն է ներկայացնում Ներդրումային պարտավորությունների կատարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ, որոնք նվազագույնը պարունակում են հետևյալ տեղեկությունները.

13.3.1.1. Գրանցման կենտրոններում հաշվետու ժամանակաշրջանում կատարված ներդրումների տեսակների վերաբերյալ նկարագրություն (ինչպես օրինակ՝ արդիականացման, վերանորոգման աշխատանքներ և անշարժ գույքի բարելավման այլ աշխատանքներ, Նոր շարժական գույքի գնման և տեղադրման աշխատանքներ, Նոր ոչ նյութական ակտիվների նկատմամբ իրավունքների ձեռքբերում և Նոր ոչ նյութական ակտիվների ձևավորում ներառյալ՝ ՆՏԿՏՀ-ի ստեղծումը),

13.3.1.2. Փոխանցվող ակտիվներում հաշվետու ժամանակաշրջանում կատարված ներդրումների տեսակների վերաբերյալ նկարագրություն (ինչպես օրինակ՝ արդիականացման, վերանորոգման աշխատանքներ և անշարժ գույքի բարելավման այլ աշխատանքներ, Նոր շարժական գույքի գնման և տեղադրման աշխատանքներ, Նոր ոչ նյութական ակտիվների նկատմամբ իրավունքների ձեռքբերում և Նոր ոչ նյութական ակտիվների ձևավորում):

Մասնավոր գործընկերը Ներդրումային պարտավորությունների կատարման վերաբերյալ յուրաքանչյուր համապատասխան հաշվետվություն ներկայացնում է Հանրային գործընկերոջը ոչ ուշ, քան այն եռամսյակին հաջորդող եռամսյակի տասներորդ (10-րդ) Աշխատանքայի օրը, որի համար հաշվետվությունը ներկայացվում է:

13.3.2. Առաջին Գործառնական տարվանից սկսած՝ Մասնավոր գործընկերը պատրաստում և Հանրային գործընկերոջն է ներկայացնում ընթացիկ գործունեության հետ կապված հարցերի վերաբերյալ հաշվետվություն, որը պետք է պարունակի նվազագույնը հետևյալը.

13.3.2.1. հաշվետու ժամանակաշրջանում կատարված Ծառայությունների և Գործառնությունների ծավալի վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ հաճախորդներին տրամադրված Անձը հաստատող փաստաթղթերի թիվը և տեսակները

13.3.2.2. տեղեկություններ՝ թիրախներին հասնելու և Տեխնիկական

պահանջներով սահմանված այլ կանոններ/ցուցիչներ բավարարելու մասին, ինչպես նաև տեղեկություններ՝ Մասնավոր գործընկերոջ ընթացիկ գործունեության մասին, ներառյալ՝ i) ֆիզիկական ենթակառուցվածքների շահագործմանը և սպասարկմանը ներկայացվող պահանջների բավարարումը (ըստ Տեխնիկական պահանջների 2.2 բաժնի), , ii) գրանցման և անհատականացման Ծառայությունների/ Գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջների բավարարումը (ըստ Տեխնիկական պահանջների 2.6.2 ենթաբաժնի)

13.3.2.3. 10.5.2-10.5.4 կետերի համաձայն երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերի մասին տեղեկություններ, ներառյալ՝ այդ պայմանագրերի կողմերը, առարկան և գործողության ժամկետները

13.3.2.4. 10.6 կետի համաձայն երրորդ անձանց հետ կնքված ենթավարձակալության պայմանագրերի մասին տեղեկություններ, ներառյալ՝ այդ պայմանագրերի կողմերը, առարկան և գործողության ժամկետները

13.3.2.5. տեղեկություններ՝ Ծրագրի ակտիվներում տեղի ունեցած պատահարների և արտակարգ իրավիրճակների հետ կապված դեպքերի մասին:

Մասնավոր գործընկերն ընթացիկ գործունեության հետ կապված հարցերի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է Հանրային գործընկերոջը ոչ ուշ, քան այն Գործառնական տարվան հաջորդող Գործառնական տարվա քսաներկուերորդ (22-րդ) Աշխատանքային օրը, որի համար հաշվետվությունը ներկայացվում է:

13.3.3. Առաջին Գործառնական տարվանից սկսած՝ Մասնավոր գործընկերը կպատրաստի և կներկայացնի Հանրային գործընկերոջը Ծառայությունների ՀԿՑ-ների համապատասխանությունը (Տեխնիկական պահանջների 2.5-րդ կետի համապատասխան) եռամսյակային պարբերականությամբ: Հաշվետվությունը պետք է ներկայացվի յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 15 օրվա ընթացքում:

13.4. **Գույքի վերաբերյալ հաշվետվական փաստաթղթերը**

13.4.1. Գործառնական առաջին տարվանից սկսած՝ Մասնավոր գործընկերը պատրաստում և Հանրային գործընկերոջն է ներկայացնում հաշվետվություն այն գույքի մասին, որի հետ կապված՝ կատարվում են համապատասխան այն գործարքները, որոնք ուղղված են Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարմանը: Այդ հաշվետվությունը պետք է պարունակի այդ գույքի (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, չավարտված ներդրումների) ցանկը և նշում հետևյալի մասին՝

13.4.1.1. գույքի հետ կապված այն գործարքի տեսակը, որն ուղղված է Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարանը (օրինակ՝ առքուվաճառք, մատակարարում, աշխատանքներ)

13.4.1.2. համապատասխան գործարքներում ներգրավված Ծրագրի ակտիվների տեսակը (օրինակ՝ Գրանցման կենտրոններ, Փոխանցվող ակտիվներ, անշարժ / շարժական / ոչ նյութական գույք)

13.4.1.3. գույք, որը գրավադրված է կամ այլ կերպ ծանրաբեռնված

13.4.1.4. գույք, որը հանձնվել է վարձակալության կամ այլ կերպ փոխանցվել է երրորդ անձանց օգտագործմանը

13.4.1.5. գույք, որը հանձնված է վարձակալության կամ այլ կերպ փոխանցված է երրորդ անձանց կողմից Մասնավոր գործընկերոջ օգտագործմանը:

Մասնավոր գործընկերը գույքի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է Հանրային գործընկերոջը ոչ ուշ, քան այն Գործառնական տարվան հաջորդող Գործառնական տարվա քսաներկուերորդ (22-րդ) Աշխատանքային օրը, որի համար հաշվետվությունը ներկայացվում է:

13.5. **Հանդիպումները**

13.5.1. Կողմերը սույն Պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունների կատարման հետ կապված կանոնավոր հանդիպումներ են անցկացնում Հանրային գործընկերոջ հասցեում կամ այլ՝ նախապես համաձայնեցված վայրում: Այդ հանդիպումներն անցկացվում են՝

13.5.1.1. եռամսյակային կտրվածքով՝ մինչև Ներդրումային պարտավորությունների կատարման հաստատումը.

13.5.1.2. տարեկան կտրվածքով՝ Ներդրումային պարտավորությունների կատարման հաստատման օրվանից մինչև Ծրագրի ժամկետի լրանալը:

13.5.2. Սույն 13.5 կետում նշված կանոնավոր հանդիպումները կարող են նվիրված լինել (այդ թվում, բայց չսահմանափակելով) այնպիսի հարցերի, ինչպիսիք են Ներդրումային պարտավորությունների կատարումը, Ծառայությունների մատուցումը և Գործառնությունների իրականացումը, Պայմանագրի համաձայն կատարման ենթակա վճարումները, հաշվետվական փաստաթղթերի ներկայացումն ու վերանայումը, Կողմերի՝ Պայմանագրով սահմանված իրավունքների իրացմանը կամ պարտավորությունների կատարմանն առնչվող առաջարկությունները, դիտարկումներն ու առաջարկները: Սույն 13.5 կետի համաձայն՝ կանոնավոր հանդիպումների ժամանակ քննարկված բոլոր հարցերն արտացոլվում են համապատասխան արձանագրություններում, և այդ արձանագրությունների պատճենները յուրաքանչյուր հանդիպումից հետո տրամադրվում են Կողմերի ներկայացուցիչներին:

13.6. **Հաշվապահական հաշվառումը**

13.6.1. Մասնավոր գործընկերն իրականացնում է հաշվապահական հաշվառում և պատրաստում է Ծառայությունների մատուցման/Գործառնությունների իրականացման, Ծրագրի ակտիվների շահագործման և սպասարկման, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված այլ գործառնական և ձեռնարկատիրական գործունեության իրականացման վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններ՝ Կիրառելի իրավունքին համապատասխան:

13.6.2. Ծրագրի ժամկետի ընթացքում (եթե Կողմերը որոշակի փաստաթղթերի կամ տեղեկությունների առնչությամբ այլ ժամկետներ չեն համաձայնեցրել) Մասնավոր գործընկերն իր սեփական հաշվեցում գրավոր և կիրառելիության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով պահում է սույն Պայմանագրի կատարման հետ կապված հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները

13.6.2.1. 13.2-13.4 կետերում նշված հաշվետվական փաստաթղթերի պատճենները,

13.6.2.2. Մասնավոր գործընկերոջ կողմից ձեռք բերված Թույլտվությունների պատճենները,

13.6.2.3. Ներդրումային պարտավորությունների կատարման հետ կապված տեխնիկական փաստաթղթերի պատճենները,

13.6.2.4. 10.5.2-10.5.4 կետերի համաձայն երրորդ անձանց ներգրավվելու վերաբերյալ պայմանագրերի և այլ փաստաթղթերի պատճենները,

13.6.2.5. 10.6 կետի համաձայն երրորդ անձանց հետ ենթավարձակալության պայմանավորվածությունների հետ կապված ենթավարձակալության պայմանագրերի և այլ փաստաթղթերի պատճենները,

13.6.2.6. Մասնավոր գործընկերոջ հիմնադիր փաստաթղթերի (փոփոխություններով) և Մասնավոր գործընկերոջ բաժնեհավաք կապիտալում կատարված փոփոխությունների վերաբերյալ փաստաթղթերի պատճենները,

13.6.2.7. 13.7 կետի համաձայն իրականացված աուդիտների հիման վրա պատրաստված փաստաթղթերի պատճենները,

13.6.2.8. Մասնավոր գործընկերոջ աուդիտների և Կիրառելի իրավունքի համաձայն Հայաստանի իրավասու մարմինների կողմից իրականացված՝ իր գործունեության հիման վրա պատրաստված փաստաթղթերի պատճենները:

13.6.3. Մասնավոր գործընկերը կարող է պահել Պայմանագրի կատարման հետ կապված այլ փաստաթղթեր և տեղեկություններ (իր սեփական հայեցողությամբ կամ Հանրային գործընկերոջ հետ համաձայնությամբ կամ

Հանրային գործընկերոջ պահանջով):

13.7. **Աուդիտները**

13.7.1. Պլանային աուդիտները

13.7.1.1. Գործառնական առաջին տարվանից սկսած՝ Հանրային գործընկերն իրավունք ունի իր հայեցողությամբ և իր հաշվին տարեկան երկու (2) անգամից ոչ ավելի իրականացնելու Մասնավոր գործընկերոջ՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման պլանային աուդիտներ: Պլանային աուդիտները չեն կարող ընդգրկել այն ժամանակահատվածը, որն արդեն իսկ աուդիտի է ենթարկվել, և ընդգրկում են միայն Մասնավոր գործընկերոջ՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման հետ կապված հարցերը:

13.7.1.2. Հանրային գործընկերը հաջորդ Գործառնական տարվա համար պլանային աուդիտների օրերը որոշում է ոչ ուշ, քան ընթացիկ Գործառնական տարվա ավարտից քսաներկու (22) Աշխատանքային օր առաջ և այդ մասին տեղեկացնում է Մասնավոր գործընկերոջը՝ հաջորդ Գործառնական տարվա համար պլանային աուդիտների օրերի վերաբերյալ գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

13.7.1.3. Հանրային գործընկերը կարող է ներգրավել Հանրային մարմինների ներկայացուցիչների, խորհրդականների և այլ երրորդ անձանց (ըստ կոնկրետ դեպքի)՝ Կիրառելի իրավունքի պահանջներին համապատասխան պլանային աուդիտներն անցկացնելու համար:

13.7.1.4. Հանրային գործընկերը ոչ ուշ, քան 13.7.1.2կետի համաձայն որոշված պլանային աուդիտի օրվանից տասը (10) Աշխատանքային օր առաջ Մասնավոր գործընկերոջը տրամադրում է գրավոր ծանուցում՝ պլանային աուդիտ անցկացնելու մասին, որը ներառում է առնվազն պլանային աուդիտի ժամանակահատվածը (որը ոչ մի դեպքում չի կարող լինել ավելի, քան մեկ (1) ամիս), պլանային աուդիտի ընթացում աուդիտի ենթակա հարցերի ցանկը, պլանային աուդիտի համար Մասնավոր գործընկերոջ կողմից տրամադրվելիք փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը և Հանրային գործընկերոջ լիազորված այն անձինք, որոնք իրականացնելու են պլանային աուդիրտը:

13.7.1.5. Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջ լիազորված անձանց համար ապահովում է պատշաճ հասանելիություն 13.7.1.4 կետում նշված պլանային աուդիտի վերաբերյալ ծանուցման մեջ նշված իր փաստաթղթերին և տեղեկություններին այնքանով, որքանով դա անհրաժեշտ է Մասնավոր գործընկերոջ՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման մասով պլանային աուդիտ անցկացնելու համար, ինչպես նաև համապատասխան պլանային աուդիտի ընթացքում Հանրային գործընկերոջ լիազորված անձանց

տրամադրում է անհրաժեշտ աջակցություն:

13.7.2. Ոչ պլանային աուդիտները

13.7.2.1. Հանրային գործընկերն իրավունք ունի անցկացնելու Մասնավոր գործընկերոջ գործունեության ոչ պլանային աուդիտներ միայն այն դեպքում, երբ առկա են Պայմանագրի 13.7.2.2 կետում նշված ոչ պլանային աուդիտ անցկացնելու հիմքեր:

13.7.2.2. Ոչ պլանային աուդիտներ անցկացնելու հիմքերն են՝

13.7.2.2.1. Մասնավոր գործընկերոջ կողմից ոչ պլանային աուդիտ անցկացնելու մասին գրավոր պահանջի ներկայացումը Հանրային գործընկերոջը,

13.7.2.2.2. Պայմանագրի 13.2-13.4 կետերում նշված հաշվետվություններից որևէ մեկում Մասնավոր գործընկերոջ կողմից տրամադրված ոչ ճշգրիտ տվյալների բացահայտումը Հանրային գործընկերոջ կողմից կամ Հանրային գործընկերոջ կողմից Մասնավոր գործընկերոջ՝ Կիրառելի իրավունքի պահանջներին համապատասխան ներկայացված պաշտոնական այլ հաշվետվություններում ոչ ճշգրիտ տվյալների բացահայտման մասին ծանուցման ստացումը Հանրային մարմնից (եթե այդ անճշտությունները վերաբերում են Մասնավոր գործընկերոջ՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարմանը)՝ պայմանով, որ Մասնավոր գործընկերը չի շտկել այդ ոչ ճշգրիտ տվյալները Հանրային գործընկերոջ կամ համապատասխան հաշվետվությունները ստանալու լիազորություն ունեցող Հանրային մարմնի կողմից այդպիսի ոչ ճշգրիտ տվյալներ հայտնաբերվելու վերաբերյալ ծանուցմանը հաջորդող մեկ (1) ամսվա ընթացքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ոչ ճշգրիտ տվյալներն ակնհայտ վրիպակի կամ թվաբանական սխալի արդյունք են, որոնք ներկայացված հաշվետվությունների բովանդակության վրա չեն ազդում,

13.7.2.2.3. Մասնավոր գործընկերոջ կողմից Պայմանագրի 13.2-13.4կետերում նշված հաշվետվությունները հաշվետու ժամանակաշրջանի համար չներկայացնելը,

13.7.2.2.4. Ծրագրի ակտիվներում պատահարի կամ արտակարգ իրավիրճակների հետ կապված դեպք պատահելը,

13.7.2.2.5. Մասնավոր գործընկերոջ կողմից Տեխնիկական պահանջների խախտման հավաստի ապացույցի կամ կասկածի համար ողջամիտ հիմքերի առկայությունը:

13.7.2.3. Ոչ պլանային աուդիտը պետք է նվիրված լինի միայն այն հարցերի ուսումնասիրությանը, որոնք հիմք են ծառայել այդպիսի ոչ պլանային աուդիտ անցկացնելու համար: Մասնավոր գործընկերը ոչ պլանային աուդիտ անցկացնելու վերաբերյալ ծանուցում է ստանում այդ աուդիտի օրվա դրությամբ՝ բացառությամբ 13.7.2.2.1 կետում նշված դեպքի, երբ ոչ պլանային աուդիտի օրը որոշվում է Մասնավոր գործընկերոջ և Հանրային գործընկերոջ փոխադարձ համաձայնությամբ:

13.7.2.4. Ոչ պլանային աուդիտի ժամկետը չի գերազանցում այդ աուդիտի մեկնարկի օրվանից սկսած տասը (10) Աշխատանքային օրը: Այս ժամկետը հետագայում կարող է երկարաձգվել մինչև ևս տասներկու (12) Աշխատանքային օրով՝ Մասնավոր գործընկերոջը Հանրային գործընկերոջ կողմից ներկայացված նախնական գրավոր ծանուցման հիման վրա:

13.7.2.5. Հանրային գործընկերը կարող է ներգրավել Հանրային մարմինների ներկայացուցիչների, խորհրդականների և այլ երրորդ անձանց (ըստ կոնկրետ դեպքի)՝ Կիրառելի իրավունքի պահանջներին համապատասխան ոչ պլանային աուդիտներ անցկացնելու համար:

13.7.2.6. Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջ լիազորված անձանց համար ապահովում է պատշաճ հասանելիություն փաստաթղթերին և տեղեկություններին այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ոչ պլանային աուդիտ անցկացնելու համար, ինչպես նաև համապատասխան ոչ պլանային աուդիտի ընթացքում Հանրային գործընկերոջ լիազորված անձանց տրամադրում է անհրաժեշտ աջակցություն:

13.7.3. Պլանային և ոչ պլանային աուդիտների ընթացքում չի թույլատրվում որևէ կերպ միջամտել և (կամ) խոչընդոտել Մասնավոր գործընկերոջ գործունեությունը կամ ընթացիկ գործունեությունը:

13.7.4. Պլանային և ոչ պլանային բոլոր աուդիտների արդյունքները գրավոր կերպով գրանցվում են համապատասխան ակտում կամ համապատասխան աուդիտի արդյունքների վրա հիմնված այլ փաստաթղթում: Այդ աուդիտների արդյունքների վրա հիմնված փաստաթղթերի պատճենները յուրաքանչյուր աուդիտի ավարտից հետո տրամադրվում են Մասնավոր գործընկերոջ և Հանրային գործընկերոջ ներկայացուցիչներին:

14. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

14.1. «**Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի**» **սահմանումը**

14.1.1. «**Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք**» նշանակում է արտակարգ և անխուսափելի հանգամանքներ, որոնք առաջացել են ոչ տուժող կողմի մեղքով (**Տուժող կողմ**), այլ նրա կամքից անկախ կամ նրա կամքին կամ ցանկությանը

հակառակ, որոնք Տուժող կողմի համար անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարումը, որոնք Տուժող կողմը չի կարողացել կանխել, կարգավորել կամ ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել՝ չնայած դրա համար առավելագույն ողջամիտ ջանքեր գործադրելուն, և որոնք Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք չեն:

14.1.2. Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերը ներառում են հետևյալ հանգամանքները՝ առանց սահմանափակման՝ պայմանով, որ դրանք բավարարում են «Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի» վերոհիշյալ սահմանման մեջ նշված չափորոշիչները

14.1.2.1. ներխուժում, ահաբեկչական գործողություններ, խռովություններ, քաղաքացիական անկարգություններ, պայթյուններ, անհնազանդություններ, քաղաքացիական պատերազմ, շրջափակում, ապստամբություն, դիվերսիա, հեղափոխություն, Կառավարության կողմից սահմանված կարանտին, հասարակական կարգի զանգվածային խախտումներ՝ յուրաքանչյուր դեպքում, երբ դրանք տեղի են ունենում Հայաստանի տարածքում,

14.1.2.2. երկրաշարժ, ցիկլոններ, փոթորիկներ, հրդեհներ, ուժեղ քամիներ, ջրհեղեղներ, այսբերգներ, համաճարակներ, կայծակնային փոթորիկներ կամ այլ ֆիզիկական ինքնաբուխ բնական աղետներ,

14.1.2.3. գործադուլներ, զանգվածային հրաժարականներ կամ արդյունաբերական այլ հակամարտություններ,

14.1.2.4. հրդեհ, պայթյուն, արտակարգ իրավիճակ, որն առաջացել է երրորդ անձանց գործողությունների հետևանքով և ուղղակիորեն կապված չէ Կողմերի՝ սույն Պայմանագրով սահմանված գործունեության հետ, որն էական ֆիզիկական վնաս է պատճառում Ծրագրի ակտիվներին, Մասնավոր գործընկերոջ գույքին, խստորեն արգելափակում է Ծրագրի ակտիվների հասանելիությունը կամ Ծրագրի իրականացումը:

14.1.3. Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերը չեն ներառում այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝

14.1.3.1. այն հանգամանքները, որոնք առաջացել են Կողմի կամ նրա խորհրդականների, ներկայացուցիչների կամ աշխատողների անփութության կամ կանխամտածված գործողության հետևանքով,

14.1.3.2. այն հանգամանքները, որոնք կարող էին ողջամտորեն կանխատեսվել Կողմի կողմից և հաշվի առնվել Պայմանագիրը կնքելիս, ինչպես նաև կարող էին կանխվել կամ հաղթահարվել Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելիս,

14.1.3.3. ֆինանսատնտեսական ճգնաժամեր, շուկայի անկում, արտարժույթի

պաշտոնական և առևտրային փոխարժեքների աճ:

14.2. **Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի հաստատումը և ծանուցումները**

14.2.1. Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք տեղի ունենալուց հետո Տուժող կողմը կարող է Կիրառելի իրավունքով սահմանված կարգով Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատ ներկայացնել դիմում և այլ անհրաժեշտ փաստաթղթեր, որպեսզի ստանա անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքները հաստատող հավաստագիր:

14.2.2. Տուժող կողմն իրավունք ունի վավերացնելու Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի առկայությունն արբիտրաժի միջոցով՝ տրամադրելով Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի կողմից տրամադրված՝ Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի հավաստագրից բացի ցանկացած այլ փաստաթուղթ կամ ապացույց, որը համարժեքորեն հաստատում է Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի փաստը:

14.2.3. Տուժող կողմը ցանկացած դեպքում գրավոր ծանուցում է ներկայացնում մյուս Կողմին՝ Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք տեղի ունենալու մասին (նշելով այն բացասական ազդեցությունը, որն առաջացել է կամ կարող է առաջանալ Անհաղթահարելի ուժի ազդեցության այդ դեպքի պատճառով, ըստ կոնկրետ դեպքի) ոչ ուշ, քան այն պահից հետո տասնհինգ (15) Աշխատանքային օրվա ընթացքում, երբ Տուժող կողմը պարզել է կամ պետք է պարզած լիներ Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի տեղի ունենալը:

14.3. **Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի ազդեցությունը**

14.3.1. Տուժող կողմը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով սահմանված պարտավորություններից որևէ մեկի խախտումների համար, եթե այդ խախտումները եղել են Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի հետևանքով:

14.3.2. Տուժող կողմն ազատվում է իր այն պարտավորությունների կատարումից, որոնց կատարումն անհնար է դարձել Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի հետևանքով, այնքան ժամանակ, մինչև այդ հանգամանքները դադարեն գոյություն ունենալ:

Այնուամենայնիվ, Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքը չի արդարացնում Տուժող կողմի կողմից մյուս Կողմի նկատմամբ վճարման որևէ պարտավորության խախտում, որը ենթակա է եղել վճարման Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքից առաջ, և չի կանխում վճարման պարտավորության խախտման պատճառով պարտազանցման դեպքի առաջացումը, որը կարող է կիրառվել սույն Պայմանագրի համաձայն: Եթե Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքն ազդում է կամ հավանական է, որ կազդի որևէ Կողմի՝ սույն Պայմանագրով սահմանված վճարումներ կատարելու ունակության վրա, ապա այդ Կողմը պետք է ողջամիտ ջանքեր գործադրի վճարումը սովորաբար օգտագործվող միջոցին այլընտրանք հանդիսացող միջոցներով կատարելու

համար՝ Կիրառելի իրավունքի պահանջներին համապատասխան:

14.3.3. Տուժող կողմը գործադրում է անհրաժեշտ բոլոր ջանքերը՝ նվազագույն ձգձգումներով շտկելու համար սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելու անկարողությունը: Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ վերացնելու և (կամ) նվազագույնին հասցնելու համար Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի հետևանքները:

14.3.4. Տուժող կողմն իրավունք ունի ցանկացած պարտավորության կատարման ժամկետ երկարաձգելու այնքան ժամանակով, որը համարժեք է այն ժամկետին, որի ընթացքում այդ Տուժող կողմն Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի հետևանքով չի կարողացել կատարել իր համապատասխան պարտավորությունները՝ բացառությամբ 14.3.2 կետում նշված վճարման պարտավորությունների կատարման դեպքերի: Եթե Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքը տեղի է ունենում Անցումային ժամանակահատվածում, ապա Անցումային ժամանակահատվածը երկարաձգվում է այն օրերի քանակով, որը համապատասխանում է Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի տևողությանը՝ համաձայն Հանրային գործընկերոջ գրավոր համաձայնության, որը չի կարող անհիմն մերժվել:

14.3.5. Եթե Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքը տևում է ավելի, քան 30 (երեսուն) օր, ապա Կողմերը ոչ ուշ, քան այդ երեսնօրյա ժամկետը լրանալուց հետո տասն (10) Աշխատանքային օր հետո սկսում են բանակցություններ և համաձայնեցնում են Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքը հաղթահարելու գործողությունների ծրագիր, այդ թվում՝ Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի բացասական ազդեցությունը նվազեցնելու գործողությունների և Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի առկայության ընթացքում սույն Պայմանագրի իրականացման ընթացակարգը:

14.3.6. Մասնավոր գործընկերը և Հանրային գործընկերն իրավունք ունեն դադարեցնելու սույն Պայմանագիրը՝ Պայմանագրի դադարեցման մասին ծանուցում ուղարկելով մյուս Կողմին, եթե սույն Պայմանագրով Ծրագրի իրականացումն Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի հետևանքով էապես կանխվում, խոչընդոտվում կամ ձգձգվում է ավելի քան հարյուր քսան (120) հաջորդական օրերով:

14.4. **Ծախսերը և պատասխանատվությունը**

14.4.1. Յուրաքանչյուր Կողմ կրում է Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի հետևանքով առաջացած իր համապատասխան ծախսերը, որոնք առաջանում են Ծրագրի ժամկետի ընթացքում, և այդ ծախսերը չեն փոխհատուցվում մյուս Կողմի կողմից:

14.4.2. Բացառությամբ սույն 14-րդ բաժնում նշված դեպքերի՝ Մասնավոր գործընկերը և Հանրային գործընկերը (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված

անձը) որևէ կերպ պատասխանատվություն չեն կրում մյուս Կողմի առաջ Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք պատահելու կամ դրա առկայության հետ կապված կամ դրա պատճառով առաջացող որևէ կորստի, վնասի, ծախսի, հայցի, պահանջի համար կամ Կողմի կողմից 14-րդ բաժնի համաձայն ցանկացած իրավունքից օգտվելու համար:

14.5. **«Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի» սահմանումը**

14.5.1. «**Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք**» նշանակում է այն հանգամանքները, որոնք տեղի են ունենում Կնքման օրվանից հետո և էական անբարենպաստ ազդեցություն ունեն i) Մասնավոր գործընկերոջ՝ Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականություններն իրացնելու և կատարելու կարողության վրա, և (կամ) ii) Ծառայությունների/Գործառնությունների ծախսերի կամ շահույթի վրա, մասնավորապես՝

14.5.1.1. Ծրագրի ակտիվների տարածքում պատերազմական գործողությունները (ինչպես հայտարարված, այնպես էլ չհայտարարված), զինված հակամարտությունը կամ այդպիսի հակամարտության լուրջ վտանգը, որն առաջացել է արտաքին թշնամու կամ պետական մարմինների գործողությունների, պարետային ժամի սահմանման, էմբարգոյի, ներմուծման/արտահանման արգելքի (սահմանափակման) կամ հասարակական կարգի կամ պետական համակարգի դեմ ուղղված ցանկացած այլ անօրինական գործողության հետևանքով,

14.5.1.2. ցանկացած Թույլտվություն տրամադրելու կամ երկարաձգելու անհիմն մերժում հարյուր քսան (120) օրով, ինչպես նաև ցանկացած Թույլտվության անհիմն դադարեցում, կասեցում, չեղարկում կամ ուժը կորցրած ճանաչում, եթե այդ փաստաթղթի բացակայությունն էականորեն անհնարին է դարձնում Մասնավոր գործընկերոջ կողմից Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարումը և իր իրավունքների իրացումը՝ բացառությամբ Մասնավոր գործընկերոջ կողմից Կիրառելի իրավունքի խախտման հետևանքով առաջացած մերժումների,

14.5.1.3. Մասնավոր գործընկերոջ գույքի, Ծրագրի ակտիվների կամ դրանց որևէ մասի օտարում, բռնագրավում, բռնագանձում կամ ազգայնացում, որն էական կարևորություն ունի Ծրագրի իրականացման համար, կամ Հանրային մարմնի կողմից ցանկացած գործողություն կամ անգործություն, որն ուղղակիորեն հանգեցնում է Մասնավոր գործընկերոջ նյութական արժեքների կամ սույն Պայմանագրով սահմանված իրավունքների ուժի կորստի՝ բացառությամբ՝

14.5.1.3.1. Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի ցանկացած հետևանքի,

14.5.1.3.2. ձեռնարկված ցանկացած գործողության, որը համարվում է Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպք,

14.5.1.3.3. Մասնավոր գործընկերոջ կողմից Կիրառելի իրավունքի խախտումների ցանկացած հետևանքի, որը սահմանված է Կիրառելի իրավունքով,

14.5.1.3.4. Հանրային գործընկերոջ կողմից 17.2.2 կետով սույն Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման,

14.5.1.4. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած պահի մեկ (1) տարուց ոչ պակաս ժամկետով Մասնավոր գործընկերոջ կողմից հետևյալ գործողություններից ցանկացածի կատարումը կանխելը, արգելելը կամ սահմանափակելը

14.5.1.4.1. Ազգային արժույթով գումարը դոլարի փոխակերպելը,

14.5.1.4.2. Հայաստանի ցանկացած բանկից Հայաստանից դուրս գտնվող ցանկացած բանկ դոլարով գումար փոխանցելը,

14.5.1.4.3. բաժնետերերին շահաբաժիններ վճարելը կամ Մասնավոր գործընկերոջ շահույթի կամ եկամուտների հայրենադարձման կամ փոխանցման այլ միջոցներ կիրառելը, և (կամ)

14.5.1.5. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած պահի վեց (6) ամսից ոչ պակաս ժամկետով Մասնավոր գործընկերոջ կողմից առաջնահերթ մարման ենթակա պարտքի սպասարկումը կանխելը, արգելելը կամ սահմանափակելը, որն էական բացասական ազդեցություն ունի Մասնավոր գործընկերոջ վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ կանխումը, արգելումը կամ սահմանափակումը համարվում են Մասնավոր գործընկերոջ կողմից Կիրառելի իրավունքի ցանկացած կանոնի կամ Թույլտվությունների որևէ խախտման արդյունքում Հանրային գործընկերոջ կամ ցանկացած համապատասխան Հանրային մարմնի կողմից օրինականորեն կիրառվող պաշտպանության միջոց կամ պատժամիջոց:

14.6. **Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի ազդեցությունը**

14.6.1. Մասնավոր գործընկերն ազատվում է սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորություններից ցանկացածը խախտելու համար նախատեսված պատասխանատվությունից այն դեպքում և այնքանով, որքանով այդպիսի խախտումը տեղի է ունեցել Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի հետևանքով:

14.6.2. Մասնավոր գործընկերը գրավոր ծանուցում է ներկայացնում Հանրային գործընկերոջը՝ Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք տեղի ունենալու մասին (նշելով այն բացասական ազդեցությունը, որն առաջացել է կամ կարող է առաջանալ Քաղաքական անհաղթահարելի ուժի

ազդեցության այդ դեպքի հետևանքով՝ ըստ կոնկերտ դեպքի) ոչ ուշ, քան տասնհինգ (15) Աշխատանքային օրվա ընթացքում այն պահից հետո, երբ Մասնավոր գործընկերը պարզել է կամ պետք է պարզած լիներ Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի տեղի ունենալը (**Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի մասին ծանուցում**):

Կողմերը ոչ ուշ, քան Հանրային գործընկերոջ կողմից Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի մասին ծանուցումն ստանալուց հետո տասն (10) Աշխատանքային օր հետո հանդիպում են՝ քննարկելու համար Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքին առնչվող իրավիճակը, իսկ Հանրային գործընկերը գործադրում է ողջամիտ ջանքեր՝ այդ Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքը շտկելու համար:

14.6.3. Եթե Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք տեղի ունենալուց հետո Հանրային գործընկերոջը չի հաջողվում շտկել այդ Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքը i) Հանրային գործընկերոջ կողմից Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի մասին ծանուցումը ստանալուց հետո հարյուր քսան (120) Աշխատանքային օրվա ընթացքում, եթե Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի պատճառ են հանդիսացել 14.5.1.1 կետում նշված հանգամանքները, կամ ii) Հանրային գործընկերոջ կողմից Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի մասին ծանուցումն ստանալուց հետո երեսուն (30) Աշխատանքային օրվա ընթացքում, եթե Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի պատճառ են հանդիսացել 14.5.1.2-14.5.1.5 կետերում նշված հանգամանքները, ապա Մասնավոր գործընկերն իրավունք ունի Դադարեցնելու սույն Պայմանագիրը:

15. ՊԱՐՏԱԶԱՆՑՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

15.1. **Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքը**

15.1.1. «**Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպք**» նշանակում է հետևյալից ցանկացածը.

15.1.1.1. 16.1.4 կետում նշված ժամկետում Ներդրումային պարտավորությունները չկատարելը,

15.1.1.2. Խումբ 1 Տեխնիկական պահանջների խախտում, որը (i) հաստատվել է Բաժին 13-ով սահմանված մշտադիտարկման, վերահսկման և հաշվետվությունների ընթացակարգերի հիման վրա կամ Անկախ փորձագետի որոշման հիման վրա և (ii) չի շտկվել Մասնավոր գործընկերոջ կողմից 16.3.1.1 կետում սահմանված ժամկետում .

15.1.1.3. 2-րդ խմբի Տեխնիկական պահանջների սիստեմատիկ խախտում, հաստատված և չշտկված 16.3.1.2 կետի համաձայն;

15.1.1.4. մինչև Ծրագրի ժամկետի ավարտը Գործառնությունների ապահովման

ամբողջ գումարն իրագործելը՝ 9.2.11 կետում նշված պայմաններին համապատասխան,

15.1.1.5. 9.2.11 կետում նշված ժամկետի ընթացքում Գործառնությունների ապահովում չտրամադրելը և (կամ) դրա գործողությունը չպահպանելը,

15.1.1.6. 9.3.3 կետում նշված ժամկետում Հետփոխանցման ապահովում չտրամադրելը և (կամ) դրա գործողությունը չպահպանելը,

15.1.1.7. 16.5.2 կետում նշված ժամկետում 11.2 կետով պահանջվող ապահովագրությունը չտրամադրելը և (կամ) դրա գործողությունը չպահպանելը,

15.1.1.8. Ֆինանսավորման փաստաթղթերի ժամկետներն ու պայմանները չկատարելը, որը հանգեցրել է Վարկատուների կողմից Ուղիղ պայմանագրի համաձայն իրենց Միջամտության իրավունքի իրացմանը,

15.1.1.9. Մասնավոր գործընկերոջ առնչությամբ լուծարման գործընթաց սկսելը, դատական սնանկության վարույթ կամ Մասնավոր գործընկերոջ անվճարունակության հետ կապված որևէ այլ վարույթ հարուցվելը,

15.1.1.10. 27.2կետում նշված՝ սեփականության կառուցվածքի փոփոխության հետ կապված որևէ պարտավորություն խախտելը, որը հանգեցրել է Հսկողության փոփոխության,

15.1.1.11. Անկախ փորձագետ նշանակելու կամ 16.4.2կետում նշված ժամկետի ընթացքում Անկախ փորձագետին նախապես վճարելու հետ կապված պարտավորությունները չկատարելը,

15.1.1.12. Մասնավոր գործընկերոջ՝ Պայմանագրի 13-րդ բաժնում նշված հաշվետվությունների ներկայացման պարտավորությունները սիստեմատիկ չկատարելը, ինչպես նաև սույն Պայմանագրի համաձայն Հանրային գործընկերոջը տրամադրվող հաշվետվական փաստաթղթերում սիստեմատիկ գիտակցված սխալ կամ թերի տվյալներ ներկայացնելը,

15.1.1.13. Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով կամ Ֆինանսավորման որևէ փաստաթղթով սահմանված պարտավորությունները, երաշխիքներն ու հավաստիացումները էականորեն խախտելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ խախտումը Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպքի, Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի կամ Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի հետևանք է (ըստ կոնկրետ դեպքի):

15.1.2. 15.1 կետում նշված՝ Մասնավոր գործընկերոջ կողմից պարտազանցման դեպքի առաջացման փաստը և Մասնավոր գործընկերոջ պարտազանցման համապատասխան չկատարման հետ կապված պարտավորությունների

խախտման համար տույժերի չափը (ըստ կիրառելիության) հաստատվում են Մասնավոր գործընկերոջ համաձայնությամբ, կամ եթե այդպիսի համաձայնություն առկա չէ, ապա Անկախ փորձագետի որոշմամբ կամ 26-րդ բաժնով սահմանված արբիտրաժային կարգավորմամբ՝ հետևյալ պայմանների պահպանմամբ.

15.1.2.1. 15.1.1.8, 15.1.1.10, 15.1.1.11, 15.1.1.13 կետերում նշված՝ Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքերի հաստատումը, ինչպես նաև Մասնավոր գործընկերոջ պարտազանցման այդպիսի դեպքերի մասով պարտավորությունները խախտելու համար սույն Պայմանագրով նախատեսված պատժամիջոցների չափի հաստատումը (ըստ կոնկրետ դեպքի) կարող են կատարվել բացառապես արբիտրաժային կարգավորման հիման վրա,

15.1.2.2. 15.1.1.1-15.1.1.7, 15.1.1.12 կետերում նշված՝ Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքերի հաստատումը, ինչպես նաև Մասնավոր գործընկերոջ պարտազանցման այդպիսի դեպքերի մասով պարտավորությունները խախտելու համար սույն Պայմանագրով նախատեսված պատժամիջոցների չափի հաստատումը (ըստ կոնկրետ դեպքի) կարող են կատարվել բացառապես Անկախ փորձագետի որոշման հիման վրա,

15.1.2.3. 15.1.1.9 կետում նախատեսված՝ Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի հաստատումն իրականացվում է Կիրառելի իրավունքում նշված ընթացակարգի համաձայն:

15.1.3. Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքը հիմք չէ տույժեր կիրառելու և սույն Պայմանագրի համաձայն Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման համար, եթե Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքը Հանրային գործընկերոջ ապօրինի գործողությունների, Հանրային գործընկերոջ կողմից սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման կամ Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի կամ Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի հետևանք է:

15.2. **Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպքը**

15.2.1. «**Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպք**» նշանակում է հետևյալներից ցանկացածը.

15.2.1.1. Ծավալի վճարումների՝ 16.2.3 կետում սահմանված ժամկետում չկատարում.

15.2.1.2. Պահանջարկի երաշխիքի վճարումների՝ 16.2.3 կետում սահմանված ժամկետում չկատարում.

15.2.1.3. Հանրային գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված

պարտավորությունների, երաշխիքների և հավաստիացումների էական խախտում՝ բացառությամբ, եթե այդ խախտումները Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի կամ Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք են:

15.2.2. 15.2.1 կետում նշված՝ Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպքի առաջացման փաստը և Հանրային գործընկերոջ պարտազանցման համապատասխան դեպքի հետ կապված պարտավորությունների խախտման համար տույժերի չափը (ըստ կիրառելիության) պետք է հաստատվեն Հանրային գործընկերոջ համաձայնությամբ, կամ եթե այդպիսի համաձայնություն առկա չէ, ապա 26-րդ բաժնով սահմանված արբիտրաժային կարգավորմամբ:

15.2.3. Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպքը հիմք չէ տույժեր կիրառելու և սույն Պայմանագրի համաձայն Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար, եթե Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպքը Մասնավոր գործընկերոջ ապօրինի գործողությունների, Մասնավոր գործընկերոջ կողմից սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման կամ Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք է:

16. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

16.1. **Ներդրումային պարտավորությունների չկատարումը**

16.1.1. Եթե Ներդրումային պարտավորությունների կատարման ժամկետի ավարտից հետո Մասնավոր գործընկերը չի կատարել Ներդրումային պարտավորությունները, ինչը հաստատվել է Անկախ փորձագետի եզրակացությամբ, որը կազմվել է 10.1.4-10.1.5 կետերին համապատասխան, ապա Հանրային գործընկերը կարող է Մասնավոր գործընկերոջ կողմից Ներդրումային պարտավորությունների կատարման ուշացման յուրաքանչյուր օրվա համար Մասնավոր գործընկերոջից գանձել Նախապես գնահատված վնասները:

16.1.2. Նախապես գնահատված վնասները կիրառվում են վեց հարյուր ութ հազար յոթ հարյուր (608 700) ՀՀ դրամ չափով Ներդրումային պարտավորությունների կատարման ուշացման յուրաքանչյուր օրվա համար, ինչպես հաստատվում է Անկախ փորձագետի կողմից՝ սկսած Ներդրումային պարտավորությունների կատարման ժամկետի ավարտից հետո առաջին օրվանից մինչև հետևյալ իրադարձություններից մեկը՝ կախված նրանից, թե որն ավելի վաղ տեղի կունենա. i) Ներդրումային պարտավորությունների կատարման ամսաթիվը, կամ ii) Ներդրումային պարտավորությունների կատարման ժամկետից հետո իննսուներորդ (90-րդ) օրը:

Որևէ տուժանք կամ տույժ չի գանձվում Ներդրումային պարտավորությունների կատարման օրվանից կամ Ներդրումային պարտավորությունների կատարման ժամկետից հետո իննսուներորդ (90-րդ) օրվանից հետո:

16.1.3. Մասնավոր գործընկերը Նախապես գնահատված վնասների համար վճարում է Հանրային գործընկերոջից Նախապես գնահատված վնասների վճարման գրավոր պահանջը ստանալուց հետո տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում:

16.1.4. Մասնավոր գործընկերոջ կողմից Ներդրումային պարտավորությունների կատարման ժամկետի ավարտից հետո Ներդրումային պարտավորությունների իննսուն (90) օրվանից ավելի չկատարումը հիմք է Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի կապակցությամբ Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման համար:

16.2. **Ծավալի վճարումների և/կամ Պահանջարկի երաշխիքի վճարումների չկատարումը**

16.2.1. Եթե Հանրային գործընկերը մինչև համապատասխան օրը Մասնավոր գործընկերոջը չի կատարել Ծավալի վճարումները և/կամ Պահանջարկի երաշխիքի վճարումները, ապա ուշացված վճարումների վրա հաշվարկվելու է 1.5% (մեկ ամբողջ և կես տոկոս) ամսական տոկոս, որը կիրառվելու է Ծավալի վճարման ամսաթվից կամ Պահանջարկի երաշխիքի վճարման ամսաթվից մինչև ամբողջ վճարի ստացումը:

16.2.2. Եթե վճարումն ուշացվում է 3 (երեք) հաջորդական ամիսների ընթացքում, Կողմերը կհանդիպեն քննարկելու և կփորձեն համաձայնեցնել մեղմացնող ծրագիր՝ սահմանելով վճարման ընթացակարգ և տոկոսային վճարին ի լրումն Մասնավոր գործընկերոջը վճարման ենթակա փոխհատուցում:

16.2.3. Եթե Հանրային գործընկերը չի իրականացրել Ծավալային վճարումները և/կամ Պահանջարկի երաշխիքի վճարումները 6-ից (վեցից) ավելի հաջորդական ամիսների ընթացքում, Մասնավոր գործընկերը կարող է համաձայն 17.2.1.1-րդ կետի իր հայեցողությամբ դադարեցնել Պայմանագիրը կապված Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպքի հետ:

16.3. **Տեխնիկական պահանջների խախտումը**

16.3.1. Մասնավոր գործընկերոջ կողմից Տեխնիկական պահանջների խախտումն ունի հետևյալ հետևանքները.

16.3.1.1. 1-ին խմբի Տեխնիկական պահանջների խախտում, որը (i) հաստատվել է բաժին 13-ով սահմանված մշտադիտարկման, վերահսկման և հաշվետվության ընթացակարգերի հիման վրա կամ Անկախ փորձագետի որոշման հիման վրա և (ii) չի շտկվել Մասնավոր գործընկերոջ կողմից նման խախտման համար սույն փաստաթղթով սահմանված շտկման ժամանակահատվածում, հիմք է հանդիսանում Հանրային գործընկերոջ կողմից Գործառնությունների ապահովման գումարի մեկ չորրորդը իրագործելու համար: Եթե նույն 1-ին խմբի Տեխնիկական պահանջների խախտումը տեղի է ունենում երկու հաջորդական հաշվետու ժամանակաշրջանում, Գործառնությունների

ապահովման գումարի մեկ չորրորդը իրագործելուն ի լրումն, Հանրային գործընկերը իրավունք ունի Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի հետ կապված դադարեցնել սույն Պայմանագիրը :

«1-ին խմբի Տեխնիկական պահանջների խախտում» վերաբերում է Տեխնիկական պահանջների էական խախտումներին, որոնք խիստ ազդում են Ծառայությունների/Գործառնությունների մատուցման վրա, և հանգեցնում են Ծառայությունների/Գործառնությունների կատարման ամբողջական կամ գերակշռող կորստի: 1-ին խմբի Տեխնիկական պահանջների խախտումները նկարագրված են Հավելված 3-ում (Տեխնիկական պահանջներ) մանրամասնեցված խախտումների շրջանակում, կետ 2.5 «Ծառայությունների մակարդակի պայմանագիր ՀԿՑներ».

Մասնավոր գործընկերը պետք է բուժի «1-ին խմբի Տեխնիկական պահանջների խախտումը» ոչ ավելի, քան մեկ (1) Աշխատանքային օրում նման խախտումը (կամ նման խախտման ռիսկը) հայտնաբերելուց հետո, եթե կողմերի միջև այլ բան համաձայնեցված չէ:

16.3.1.2. 2-րդ խմբի Տեխնիկական պահանջների խախտման համար, որը (i) հաստատվել է բաժին 13-ով սահմանված մշտադիտարկման, վերահսկման և հաշվետվության ընթացակարգերի հիման վրա կամ Անկախ փորձագետի որոշման հիման վրա, (ii) չի շտկվել Մասնավոր գործընկերոջ կողմից նման խախտման համար սահմանված համապատասխան շտկման ժամկետում և (iii) նույն տեսակի խախտումը կրկնվում է երկու (2) իրար հաջորդող հաշվետու ժամանակաշրջանում, ապա Հանրային գործընկերը կարող է Մասնավոր գործընկերոջից յուրաքանչյուր խախտման համար գանձել տուգանք յուրաքանչյուր խախտման համար չորս միլիոն երեք հարյուր երեք հազար յոթանասուն (4,303,070) ՀՀ դրամի չափով: Եթե նույն 2-րդ խմբի Տեխնիկական պահանջների խախտումը տեղի է ունենում երկու հաջորդական հաշվետու ժամանակաշրջանում և դրանք չեն շտկվում համաձայն սույն 16.3.1.2 կետի, այն կորակվի որպես 1-ին խմբի Տեխնիկական պահանջների խախտում:

«2-րդ խմբի Տեխնիկական պահանջների խախտում» վերաբերում է Տեխնիկական պահանջների այն խախտումներին, որոնք նկատելի ազդեցություն ունեն Ծառայությունների/Գործառնությունների մատուցման վրա, բայց չեն առաջացնում Ծառայությունների/ Գործառնությունների կատարման ամբողջական կամ գերակշռող կորուստ: Տեխնիկական պահանջների խախտումը կորակվի որպես 2-րդ խմբի խախտում, եթե (1) այն ընկնում է Հավելված 3-ում (Տեխնիկական պահանջներ) նկարագրված խախտումների շրջանակում, կետ 2.5 «Ծառայությունների մակարդակի պայմանագիր ՀԿՑներ» կամ (2) և ունի հետևյալ հատկանիշներից առնվազն մեկը (1).

(a) ազդում է Ծառայությունների/Գործառնությունների հասանելիությանը և/կամ կրիտիկական բիզնես գործընթացների վրա,.

(b) զգալի անհարմարություններ է առաջացնում հաճախորդների զգալի քանակի համար Ծառայությունների/Գործառնությունների սովորական օգտագործման ժամանակ.

(c) վտանգ է ներկայացնում 1-ին խմբի Տեխնիկական պահանջների խախտման վերածվելու, եթե չշտկվի սույնով սահմանված շտկման ժամկետում:

Մասնավոր գործընկերը պետք է շտկի «2-րդ խմբի Տեխնիկական պահանջների խախտումը» նման խախտումը (կամ նման խախտման ռիսկը) հայտնաբերելուց հետո ոչ ավելի ուշ, քան երեք (3) Աշխատանքային օրվա ընթացքում, եթե կողմերի միջև այլ բան համաձայնեցված չէ:

16.3.1.3. 3-րդ խմբի Տեխնիկական պահանջների խախտման համար, որը (i) հաստատվել է բաժին 13-ով սահմանված մշտադիտարկման, վերահսկման և հաշվետվությունների ընթացակարգերի հիման վրա կամ Անկախ փորձագետի որոշման հիման վրա, (ii) չի շտկվել Մասնավոր գործընկերոջ կողմից նման խախտման համար սահմանված համապատասխան շտկման ժամկետում և (iii) նույն տեսակի խախտումը կրկնվում է երկու (2) իրար հաջորդող հաշվետու ժամանակաշրջանում, ապա Հանրային գործընկերը կարող է Մասնավոր գործընկերոջից յուրաքանչյուր խախտման համար գանձել տուգանք յուրաքանչյուր խախտման համար չորս հարյուր երեսուն հազար երեք հարյուր յոթ (430,307) դրամի չափով:

«3-րդ խմբի Տեխնիկական պահանջների խախտումը» վերաբերում է Տեխնիկական պահանջների այն խախտումներին, որոնք նվազագույն ազդեցություն են ունենում Ծառայությունների/Գործառնությունների մատուցման վրա՝ թույլ տալով շարունակել Ծառայությունների/Գործառնությունների բնականոն ընթացքը: Տեխնիկական պահանջների խախտումը կորակվի որպես 2-րդ խմբի խախտում, եթե (1) այն ընկնում է Հավելված 3-ում (Տեխնիկական պահանջներ) նկարագրված խախտումների շրջանակում, կետ 2.5 «Ծառայությունների մակարդակի պայմանագիր ՀԿՑներ» կամ (2) և ունեն հետևյալ հատկանիշները..

(a) ազդում է ոչ կրիտիկական բիզնես գործընթացների վրա և/կամ չունի զգալի ազդեցություն Ծառայությունների/Գործառնությունների հասանելիության վրա.

(b) Ծառայությունների/Գործառնությունների սովորական օգտագործման հարցում հաճախորդների համար ոչ

համակարգային աննշան անհարմարություններ է առաջացնում.

(c) չի առաջացնում անմիջական ապահովության, անվտանգության և հեղինակային ռիսկեր Ծառայությունների/գործառնությունների մատուցման ժամանակ:

Մասնավոր գործընկերը պետք է շտկի «3-րդ խմբի Տեխնիկական պահանջների խախտումը» նման խախտումը (կամ նման խախտման ռիսկը) հայտնաբերելուց հետո ոչ ավելի, քան տասը (10) Աշխատանքային օրում, եթե կողմերի միջև այլ բան համաձայնեցված չէ :

16.3.2. Եթե Մասնավոր գործընկերոջ կողմից տրամադրված տեղեկատվությունը պարզվի, որ դիտավորությամբ մանիպուլացված է և/կամ ապակողմնորոշող, կամ Մասնավոր գործընկերը չի տրամադրում սույն Պայմանագրով պահանջվող տեղեկատվությունը, այդպիսի դեպքերը համարվելու են 2-րդ խմբի Տեխնիկական պահանջների խախտում: Եթե նշված խախտումը կրկնվի երեք անգամ Ծրագրի ժամկետի ընթացքում, այն կհամարվի 1-ին խմբի Տեխնիկական պահանջների խախտում:

16.3.3. Մասնավոր գործընկերը պետք է վճարի տուգանքը սույն 16.3 կետով նախատեսված Տեխնիկական պահանջների համապատասխան խախտման համար Հանրային գործընկերոջ տուգանքի վճարման վերաբերյալ գրավոր դիմումը ստանալու օրվանից քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում:

16.3.4. Տեխնիկական պահանջների խախտման համար Մասնավոր գործընկերոջ պատասխանատվությունը սահմանափակված է լինելու Գործառնությունների ապահովման մեկ չորրորդի չափով:

16.3.5. Եթե մեկ դեպք առաջացնում է Տենխիկական պահանջների մի քանի խախտում նույն հաշվետու ժամանակաշրջանում, կիրառվում է միայն 16.3-րդ կետում նշված ամենաբարձր պատասխանատվության միջոցը:

16.3.6. Եթե Տեխնիկական միջոցների խախտման մասին տեղեկացվում է իրական պահին հնարավորինս մոտ, շտկման ժամկետը սկսվում է Հանրային Գործընկերոջ կողմից տեղեկացման օրվանից և ժամից: Եթե խախտումը հայտնաբերվում է ստուգման ժամանակ, շտկման ժամկետը հաշվարկվում է այն օրվանից և ժամից, որից սկսված սահմանազանցվել են համապատասխան խախտումների ցանկում Հավելված 3-ում (Տեխնիկական պահանջներ) մանրամասնեցված ժամկետները:

16.3.7. Մասնավոր գործընկերը կվարի Տեխնիկական պահանջների խախտումների գրանցամատյան:

16.3.8. Եթե Տեխնիկական պահանջների խախտումը առաջանում է որպես Հանրային գործընկերոջ գործողության, անգործության կամ երկարաձգման հետևանք,

այդպիսի խախտումը չի համարվի սույն կետով պատասխանատվության կիրառման հիմք:

16.3.9. Տեխնիկական պահանջների խախտումների համար տուգանքները չեն կիրառվի առաջին Գործառնական տարվա առաջին երկու եռամսյակում:

16.3.10. Կողմերը կարող են վերանայել, տարեկան կտրվածքով, Հավելված 3-ում (Տեխնիկական պահանջներ) կետ 2.5 «Ծառայությունների մակարդակի պայմանագիր ՀԿՑների հաշվարկման մեթոդը և/կամ խախտումների համար տրված համապատասխան ժամանակահատվածները: Եթե Կողմերը համաձայնվում են փոխել ՀԿՑների հաշվարկման մեթոդը և/կամ խախտումների համար տրված համապատասխան ժամանակահատվածները, նրանք կկնքեն սույն Պայմանագրի լրացուցիչ համաձայնագիր ֆորմալիզացնելով համապատասխան փոփոխությունները:

16.4. **Անկախ փորձագետի հետ կապված պարտավորությունների չկատարումը**

16.4.1. Սկսած Մեկնարկի օրվանից, այն դեպքում, երբ՝

16.4.1.1. որևէ Կողմ չի կատարում Անկախ փորձագետ նշանակելու իր պարտավորությունն այն դեպքերում, երբ սույն Պայմանագրով այդ նշանակումը պարտադիր է. կամ

16.4.1.2. որևէ Կողմ անհիմն մերժում է Անկախ փորձագետի հետ պայմանագրի կնքումը. կամ

16.4.1.3. Մասնավոր գործընկերը չի կատարում Անկախ փորձագետի հետ կնքված պայմանագրով սահմանված կանխավճարը կատարելու իր պարտավորությունները,

16.4.1.1-16.4.1.3 կետերում նախատեսված համապատասխան պարտավորությունը խախտող Կողմը մյուս Կողմին վճարում է տույժ այդ պարտավորության կատարման ուշացման յուրաքանչյուր օրվա համար՝ ութ հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր (811 600) ՀՀ դրամ չափով տույժի վճարման համար մյուս Կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից հետո քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում:

16.4.2. Մասնավոր գործընկերոջ կողմից 16.4.1.1, 16.4.1.3 կետերում նախատեսված պարտավորությունների չկատարումն վաթսուն (60) օր ժամկետի ընթացքում այն պահից հետո, երբ Մասնավոր գործընկերը պետք է կատարեր այդ պարտավորությունները, հիմք է Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի կապակցությամբ Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման համար:

16.5. **Ապահովագրական պարտավորությունների չկատարումը**

16.5.1. Եթե մասնավոր գործընկերը 11.2 կետով պահանջվող ապահովագրությունը չի տրամադրում և (կամ) չի պահպանում դրա վավերությունը, Հանրային գործընկերը կարող է Մասնավոր գործընկերոջից չորս հարյուր հինգ հազար

ուր հարյուր (405 800) ՀՀ դրամ չափով տույժ գանձել այդ ապահովագրության տրամադրման և (կամ) վավերության պահպանության ուշացման յուրաքանչյուր օրվա համար:

Մասնավոր գործընկերը տույժը վճարում է Հանրային գործընկերոջից տույժի վճարման գրավոր պահանջը ստանալուց հետո տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում:

16.5.2. Մասնավոր գործընկերոջ կողմից 11.2 կետով պահանջվող՝ ապահովագրության տրամադրման և (կամ) դրա վավերության պահպանության պարտավորությունների չկատարումն այն պահից հետո վաթսուն (60) օր ժամկետի ընթացքում, երբ Մասնավոր գործընկերը պետք է կատարեր այդ պարտավորությունները, հիմք է Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի կապակցությամբ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար:

16.6. **Բաժնեմասնակցության փոփոխության վերաբերյալ պարտավորությունների չկատարումը**

16.6.1. Եթե Մասնավոր գործընկերը խախտում է 27.2 կետով սահմանված՝ բաժնեմասնակցության փոփոխության վերաբերյալ պահանջները, ապա Հանրային գործընկերը կարող է՝

16.6.1.1. Մասնավոր գործընկերոջից քսան միլիոն երկու հարյուր իննսուն հազար (20 290 000) ՀՀ դրամ չափով տուգանք գանձել Հսկողության փոփոխության չհանգեցրած յուրաքանչյուր խախտման համար. կամ

16.6.1.2. Մասնավոր գործընկերոջից վաթսուն միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար (60 870 000) ՀՀ դրամ չափով տուգանք գանձել Հսկողության փոփոխության հանգեցրած յուրաքանչյուր խախտման համար:

16.6.2. Մասնավոր գործընկերը սույն 16.6 կետով սահմանված տուգանքը վճարում է Հանրային գործընկերոջից տուգանքի վճարման գրավոր պահանջը ստանալուց հետո քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում:

16.6.3. Մասնավոր գործընկերոջ կողմից 27.2 կետում սահմանված՝ Հսկողության փոփոխության հանգեցրած փոփոխությունների վերաբերյալ պահանջների խախտումը հիմք է Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի կապակցությամբ Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման համար:

16.7. **Պատասխանատվության սահմանափակումը**

16.7.1. Սույն Պայմանագրի ներքո մեկ Կողմի պատասխանատվությունը մյուս Կողմի հանդեպ (ներառյալ տուգանքները, կորուստները և վնասները) յուրաքանչյուր Գործառնական տարվա համար սահմանափակվելու է Մասնավոր գործընկերոջ կողմից նախորդ Գործառնական տարվա ընթացքում Ծառայությունների և Գործառնությունների իրականացման համար ստացված եկամտի չափով:

Առաջին Գործառնական տարում Պայմանագրի ներքո համապատասխան պատասխանատվությունը սահմանափակվելու է Պահանջարկի երաշխիքի չափով:

Տարընկալումներից խուսափելու նպատակով՝ սույն կետով սահմանված սահմանափակումը չի տարածվում երրորդ անձանց հանդեպ որևէ և ամբողջ պատասխանատվության նկատմամբ:

16.7.2. Կողմերը համաձայնում են, որ Մասնավոր գործընկերոջ պատասխանատվությունը սահմանափակված չի լինելու ցանկացած այն պատասխանատվության համար, որը ծագում է սույն Պայմանագրի իրականացումից կամ կապված է սույն Պայմանագրի իրականացման հետ հետևյալ պատճառներով.

16.7.2.1. դիտավորյալ և վնասակար, կամ խարդախ գործունեություն,

16.7.2.2. կոպիտ անփութություն

16.7.2.3. անձի կյանքին և առողջությանը պատճառված վնաս, կամ

16.7.2.4. 4.6.2-րդ կետում նշված պարտականության խախտման դեպքում:

:

16.7.3. Սույն 16.7-րդ կետի դրույթները կշարունակեն մնալ ուժի մեջ Դադարումից հետո:

16.7.4. Եթե սույն Պայմանագրի ներքո կիրառվող պատասխանատվության միջոցը գերազանցում է Կիրառելի իրավունքով սահմանված առավելագույն թույլատրելի պատասխանատվության միջոցը, ապա պատասխանատվության միջոցը կսահմանափակվի Կիրառելի իրավունքով սահմանված առավելագույն թույլատրելի չափով:

16.8. **Այլ դրույթներ**

16.8.1. Եթե սույն Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Կողմը կարող է մյուս Կողմի կողմից Պայմանագրի խախտման համար կիրառված տույժի գումարը գանձել խախտող Կողմին համապատասխան տույժի գանձման վերաբերյալ ուղարկված գրավոր պահանջի հիման վրա: Եթե այդ պահանջը չի կատարվում, և եթե Պայմանագրով այլ բան նշված չէ, Կողմը կարող է տույժը խախտող Կողմից գանձել՝

16.8.1.1. Պայմանագրով այդ Կողմի կողմից խախտող Կողմին կատարման ենթակա վճարումներից նվազեցնելով տույժի գումարը.

16.8.1.2. պարտավորությունները հաշվանցելով՝ 27.11 կետին համապատասխան.

16.8.1.3. Գործառնությունների ապահովումից գանձելով տույժի գումարը (Մասնավոր գործընկերոջ կողմից խախտումների համար):

16.8.2. Տույժերի վճարումը խախտող Կողմին չի ազատում իր այն պարտավորությունների կատարումից, որոնք խախտվել են: Խախտող Կողմը գործադրում է բոլոր ջանքերն իր այն պարտավորությունների հետագա չկատարումը կանխելու համար, որոնք խախտվել են:

16.8.3. Առանց 16-րդ բաժնում սահմանված դրույթների սահմանափակման՝ սույն Պայմանագրով կարող են սահմանվել Կողմերի կողմից Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման համար այլ/լրացուցիչ հետևանքներ:

17. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

17.1. **Ընդհանուր դրույթներ**

17.1.1. Սույն Պայմանագիրը կարող է դադարել Ծրագրի ժամկետի ավարտի հետևանքով կամ Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման հետևանքով: Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցումը կարող է ներառել՝

17.1.1.1. Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցում Մասնավոր գործընկերոջ կողմից.

17.1.1.2. Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցում Հանրային գործընկերոջ կողմից.

17.1.1.3. Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցում Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնության հիման վրա:

17.1.2. Պայմանագիրը համարվում է Դադարեցված՝

17.1.2.1. 20.5 կետի համաձայն Հետփոխանցման ակտը ստորագրելու օրվանից՝ Ծրագրի ժամկետի ավարտի հետևանքով Պայմանագրի Դադարեցման կամ Կողմերի միջև փոխադարձ գրավոր համաձայնության հիմա վրա Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման կամ Պայմանագրի դադարեցման մասին ծանուցման հիման վրա Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման դեպքում.

17.1.2.2. Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման մասին արբիտրաժային վճռի կայացման օրվանից՝ արբիտրաժային տրիբունալի որոշման հիման վրա Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման դեպքում:

17.1.3. Սույն Պայմանագրի միակողմանի Դադարեցումը չի թույլատրվում՝ բացառությամբ սույն Պայմանագրում հստակ նշված կարգի:

17.2. **Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցումը Կողմերից մեկի կողմից**

17.2.1. Մասնավոր գործընկերն իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը՝ հետևյալ հիմքերով.

17.2.1.1. Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպք.

17.2.1.2. Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք՝ 14.3.6 կետում նշված կարգով.

17.2.1.3. Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք՝ 14.6.3կետում նշված կարգով:

17.2.2. Հանրային գործընկերն իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը՝ հետևյալ հիմքերով.

17.2.2.1. Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպք.

17.2.2.2. Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք՝ 14.3.6 կետում նշված կարգով.

17.2.2.3. հանրային շահի նկատառումներ:

17.2.3. Կախված 17.2.1 և 17.2.2 կետերում սահմանված՝ Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման հիմքերից՝ սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ Դադարեցվել՝ 26.2 կետում նշված ընթացակարգով այն արբիտրաժային տրիբունալին հանձնելով կամ մյուս Կողմին Պայմանագրի դադարեցման մասին ծանուցում ուղարկելով:

17.2.4. Սույն Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է միայն արբիտրաժային տրիբունալում, եթե Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցումն իրականացվում է հետևյալ հիմքերով.

17.2.4.1. Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպք՝ նախատեսված 15.1.1.8, 15.1.1.10, 15.1.1.11, 15.1.1.13 կետերով. կամ

17.2.4.2. Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպք. կամ

17.2.4.3. Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք կամ Քաղաքական անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք՝ 14-րդ բաժնի դրույթներին համապատասխան. կամ

17.2.4.4. հանրային շահի նկատառումներ՝ Կիրառելի իրավունքին համապատասխան. կամ

17.2.4.5. համապատասխան արբիտրաժային տրիբունալի որոշում՝ Պայմանագրի դադարեցման պահանջի արդյունքների վերաբերյալ:

17.2.5. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել՝ 15.1.1.1-15.1.1.7, 15.1.1.9, 15.1.1.12 կետերում սահմանված՝ Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի պարագայում մյուս Կողմին Պայմանագրի դադարեցման մասին

գրավոր ծանուցում ուղարկելով:

17.3. **Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ընթացակարգերը Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպքի պարագայում**

17.3.1. Հանրային գործընկերոջ պարտազանցման պարագայում Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջն ուղարկում է Պարտազանցման ծանուցում՝ Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպքը Պարտազանցման ծանուցումը ստանալու պահից երեսուներեք (33) Աշխատանքային օրվա ընթացքում կամ Կողմերի միջև համաձայնեցված ավելի երկար ժամկետում վերացնելու պահանջով:

17.3.2. 17.3.1 կետում նշված՝ պարտազանցման վերացման ժամկետի ընթացքում Կողմերը պետք է բանակցություններ վարեն ոչ ավելի քան քառասուն (40) օր տևողությամբ, որպեսզի իրականացնեն Հանրային գործընկերոջ կողմից պարտազանցման դեպքի կարգավորմանը/վերացմանն ուղղված միջոցառումներ:

17.3.3. Եթե Պարտազանցման համապատասխան դեպքը չի վերացվում Պարտազանցման ծանուցումն ստանալուց հետո երեսուներեք (33) Աշխատանքային օրվա ընթացքում կամ Կողմերի կողմից համաձայնեցված ավելի երկար ժամկետում, Մասնավոր գործընկերն իրավունք ունի Հանրային գործընկերոջը ներկայացնելու Պայմանագրի դադարեցման մասին ծանուցում կամ հարուցելու Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման արբիտրաժային վարույթ:

17.4. **Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման ընթացակարգերը Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի պարագայում**

17.4.1. Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի պարագայում և հաշվի առնելով Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքը՝ Հանրային գործընկերը կատարում է հետևյալը.

17.4.1.1. Մասնավոր գործընկերոջ պարտազանցման այնպիսի դեպքի պարագայում, որը չի կարող շտկվել, Հանրային գործընկերը պետք է Պայմանագիրը դադարեցնի՝ Մասնավոր գործընկերոջը Պայմանագրի դադարեցման մասին ծանուցում ուղարկելով կամ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հարցով արբիտրաժային տրիբունալ դիմելով. կամ

17.4.1.2. Մասնավոր գործընկերոջ պարտազանցման այնպիսի դեպքի պարագայում, որը կարող է շտկվել, Հանրային գործընկերը Մասնավոր գործընկերոջը պետք է ուղարկի Պարտազանցման ծանուցում՝ Մասնավոր գործընկերոջ կողմից Պարտազանցման ծանուցումն ստանալուց հետո երեսուներեք (33) Աշխատանքային օրվա ընթացքում կամ Հանրային կողմի հետ համաձայնեցված ավելի երկար ժամկետում վերացնելու պահանջով:

17.4.2. 17.4.1.2 կետում նշված՝ պարտավորությունների չկատարման վերացման ժամկետի ընթացքում Կողմերն պետք է բանակցություններ վարեն ոչ ավելի, քան քառասուն (40) օր տևողությամբ, որպեսզի իրականացնեն Մասնավոր գործընկերոջ կողմից պարտազանցման դեպքի կարգավորմանը/վերացմանն ուղղված միջոցառումներ:

17.4.3. Եթե Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջ Պարտազանցման ծանուցումն ստանալուց հետո երեսուներեք (33) Աշխատանքային օրվա ընթացքում կամ ավելի երկար ժամկետում (եթե Հանրային գործընկերոջ կողմից համաձայնեցված է) չի վերացնում Մասնավոր գործընկերոջ կողմից պարտազանցման դեպքը, կամ Մասնավոր գործընկերոջ կողմից պարտավորությունների այնպիսի չկատարման դեպքից անմիջապես հետո, որը չի կարող շտկվել, Հանրային գործընկերը կարող է (Միջամտության իրավունքներին համապատասխան)՝

17.4.3.1. դադարեցնել Պայմանագիրը՝ Մասնավոր գործընկերոջը Պայմանագրի դադարեցման մասին ծանուցում ուղարկելով կամ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հարցով արբիտրաժային տրիբունալ դիմելով. կամ

17.4.3.2. իրացնել Միջամտության իրավունքը և նախաձեռնել Մասնավոր գործընկերոջ փոխարինումը՝ Ուղիղ պայմանագրում սահմանված ընթացակարգին համապատասխան:

18. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

18.1. **Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման հաշվարկը**

18.1.1. Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման դեպքում Հանրային գործընկերը պետք է վճարի Պայմանագրի Դադարեցման դիմաց փոխհատուցում՝ հաշվարկված Պայմանագրի Հավելված 8-ում (*Դադարեցման դիմաց փոխհատուցման հաշվարկման ընթացակարգ*) նշված ընթացակարգին համապատասխան: Կողմերի միջև փոխադարձ գրավոր համաձայնությամբ Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման դեպքում Պայմանագրի Դադարեցման դիմաց փոխհատուցումը հաշվարկվում և վճարվում է սույն՝ 18-րդ, բաժնի պահանջներին համապատասխան, եթե Կողմերի միջև այլ բան համաձայնեցված չէ:

18.1.2. Պայմանագրի Դադարեցման օրվանից հետո քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում Մասնավոր գործընկերը պետք է կազմի Հանրային գործընկերոջ կողմից վճարման ենթակա Պայմանագրի Դադարեցման դիմաց փոխհատուցման հաշվարկ, ապահովի դրա հաստատումն աուդիտորների կողմից և Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման հաշվարկված գումարը ներկայացնի Հանրային գործընկերոջը:

18.1.3. Պայմանագրի Դադարեցման դիմաց փոխհատուցման գումարի մասին Հանրային գործընկերոջ ծանուցումը պետք է ուղեկցվի Մասնավոր

գործընկերոջ կողմից կազմված հաշվարկի ողջամիտ և հասկանալի մանրամասներով, ինչպես նաև հաստատող փաստաթղթերով, որոնք բավարար կլինեն Հանրային գործընկերոջ համար՝ ստուգելու Մասնավոր գործընկերոջ հաշվարկները:

18.2. **Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման հաստատումը**

18.2.1. Եթե Հանրային գործընկերը համաձայնում է Մասնավոր գործընկերոջ ծանուցման մեջ նշված և հաշվարկված Պայմանագրի Դադարեցման դիմաց փոխհատուցմանը, ապա Հանրային գործընկերն այդ ծանուցումն ստանալուց հետո քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում Մասնավոր գործընկերոջը պետք է գրավոր ծանուցի այդ ծանուցման հաստատման մասին:

18.2.2. Եթե Հանրային գործընկերը չի համաձայնում Մասնավոր գործընկերոջ ծանուցման մեջ նշված և հաշվարկված՝ Պայմանագրի Դադարեցման դիմաց փոխհատուցմանը, ապա Հանրային գործընկերն իրավունք ունի այդ ծանուցումն ստանալուց հետո քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում այդ ծանուցումն ուղարկելու Անկախ փորձագետի գնահատմանը:

18.2.3. Եթե Հանրային գործընկերը Մասնավոր գործընկերոջ ծանուցման մեջ նշված և հաշվարկված՝ Պայմանագրի Դադարեցման դիմաց փոխհատուցմանը համաձայնություն կամ անհամաձայնություն չի հայտնում այդ ծանուցումն ստանալուց հետո քսաներկու (22) Աշխատանքային օրվա ընթացքում, ապա ենթադրվում է, որ Հանրային գործընկերը համաձայն չէ Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման հաշվարկին:

18.3. **Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման վճարումը**

18.3.1. Հանրային գործընկերը Մասնավոր գործընկերոջը Պայմանագրի Դադարեցման դիմաց փոխհատուցումը վճարումը պետք է կատարի մեկ կամ մի քանի վճարումներով՝ Հանրային գործընկերոջ հայեցողությամբ: Պայմանագրի 20-րդ բաժնի համաձայն հետփոխանցման պարտավորությունները կատարելուց հետո Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցումը վճարվում է ոչ ուշ, քան «Պայմանագրի դադարեցման դիմաց **փոխհատուցման վճարման օրը»**, որը որոշվում է հետևյալ կերպ.

18.3.1.1. Պայմանագրի 18.2.1 կետում նախատեսված դեպքում՝ կախված, թե հետևյալից որն ավելի վաղ տեղի կունենա. i) Հանրային գործընկերոջ կողմից Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման գումարը հաստատվելու մասին Մասնավոր գործընկերոջը ծանուցում ուղարկվելուց վեց (6) ամիս հետո առաջացող ամսաթիվը, կամ ii) Հանրային գործընկերոջ կողմից Մասնավոր գործընկերոջը Պայմանագրի 18.3.2 կետի համաձայն ուղարկված գրավոր ծանուցման մեջ սահմանված այլ ամսաթիվ.

18.3.1.2. Պայմանագրի 18.2.2 կետում նախատեսված դեպքում՝ կախված, թե

հետևյալից որն ավելի վաղ տեղի կունենա. i) Անկախ փորձագիտական գնահատմամբ կայացված որոշման կայացումից վեց (6) ամիս հետո առաջացող ամսաթիվը, կամ ii) Հանրային գործընկերոջ կողմից Մասնավոր գործընկերոջը Պայմանագրի 18.3.2 կետին համապատասխան ուղարկված գրավոր ծանուցման մեջ սահմանված այլ ամսաթիվ.

18.3.1.3. Պայմանագրի 18.2.3 կետում նախատեսված դեպքում՝ կախված, թե հետևյալից որն ավելի վաղ տեղի կունենա. i) Մասնավոր գործընկերոջ՝ Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման գումարը որոշելու մասին հայցի դեմ արբիտրաժային վարույթի ավարտից հետո վեց (6) ամիսը լրանալուց հետո առաջացող ամսաթիվը, կամ ii) Հանրային գործընկերոջ կողմից Մասնավոր գործընկերոջը Պայմանագրի 18.3.2 կետին համապատասխան ուղարկված գրավոր ծանուցման մեջ սահմանված այլ ամսաթիվ:

18.3.2. Հանրային գործընկերն իրավունք ունի մինչև Պայմանագրի 18.3.1 կետում նշված վեց (6) ամիս ժամկետի ավարտն այդ ժամկետը միակողմանիորեն կրճատելու (Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման ամբողջ գումարի կամ դրա մի մասի համար՝ սեփական հայեցողությամբ) Մասնավոր գործընկերոջն ուղարկված գրավոր ծանուցմամբ:

18.3.3. Եթե Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման վճարման օրը տեղի է ունենում հետևյալ հանգամանքներից որևէ մեկը. i) Հանրային գործընկերոջը Պայմանագրի 20-րդ բաժնին համապատասխան հետփոխանցման պայմանների չկատարում կամ ii) քննության ընթացքում գտնվող արբիտրաժային վարույթի դեպքում, 18.3.1-18.3.3 կետերում սահմանված ժամկետները կասեցվում և վերսկսվում են Հետփոխանցման օրվանից կամ արբիտրաժային վարույթի ավարտից:

18.3.4. Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման վճարումն ուշացնելու դեպքում Հանրային գործընկերը Մասնավոր գործընկերոջն ուշացման ամբողջ ժամանակահատվածի համար պետք է վճարի Հայաստանի կենտրոնական բանկի պաշտոնական տոկոսադրույքին համարժեք տարեկան տոկոս:

18.3.5. Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման գումարը կարող է նվազեցվել Մասնավոր գործընկերոջ կողմից Հանրային գործընկերոջը վճարման ենթակա ցանկացած գումարով՝ համապատասխան պահանջները Կիրառելի իրավունքին համապատասխան հաշվանցելով, որը կատարվում է Հանրային գործընկերոջ կողմից միակողմանիորեն Մասնավոր գործընկերոջն ուղարկված գրավոր դիմումով:

18.3.6. Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցումն այնքանով, որքանով չի գերազանցում Փոխհատուցվող պարտքի գումարը և Հավելված 8-ին (*Դադարեցման դիմաց փոխհատուցման հաշվարկման ընթացակարգ*) համապատասխան հաշվեգրված վաղաժամկետ մարման հետ կապված Ծախսերը, կարող է վճարվել անմիջապես Վարկատուների ընթացիկ

հաշիվներին, եթե Ուղիղ պայմանագրով այդպես է նախատեսված:

19. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

19.1. **Միջամտության պատճառը**

19.1.1. Եթե՝

19.1.1.1. առկա է Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպք, որը i) այնքան էական է, որ կարող է բացասաբար և էականորեն ազդել սույն Պայմանագրին, Կիրառելի իրավունքին կամ լավագույն գործարար գործելակերպերին համապատասխան Ծառայությունների և Գործառնությունների ներկա կամ ապագա իրականացման վրա, և ii) չի վերացվել Հանրային գործընկերոջ կողմից Մասնավոր գործընկերոջ պարտազանցման այդ դեպքի առնչությամբ Պարտազանցման ծանուցում ուղարկվելու օրվանից հետո 30 (երեսուն) Աշխատանքային օրվա ընթացքում, կամ

19.1.1.2. առկա է Անհաղթահարելի ուժի ազդեցության որևէ դեպք, որը i) Հանրային գործընկերոջ ողջամիտ կարծիքով զգալի և անմիջական ռիսկ է ստեղծում առ այն, որ Ծառայությունները և Գործառնություններն անվտանգ և սույն Պայմանագրին, Կիրառելի իրավունքին կամ լավագույն գործարար գործելակերպերին կամ հանրային կարգին համապատասխան չեն իրականացվի, և ii) Հանրային գործընկերն ավելի լավ դիրքում է՝ Անհաղթահարելի ուժի ազդեցության այդ դեպքն ամբողջովին կամ մասնակի կանխելու, նվազագույնի հասցնելու կամ վերացնելու համար, կամ

19.1.1.3. տարածքում հայտարարվել է ռազմական դրություն կամ արտակարգ իրավիճակ, որն ազդեցություն է ունենում Ծրագրի իրականացման վրա,

ապա Հանրային գործընկերն իրավունք ունի (սակայն պարտավոր չէ) Մասնավոր գործընկերոջը 24 (քսանչորս) ժամվա ընթացքում գրավոր ծանուցում ներկայացնելու միջոցով միջամտելու և գործելու 19.2 կետին համապատասխան:

19.1.2. Մասնավոր գործընկերը իրավունք ունի (բայց պարտավոր չէ) Հանրային գործընկերոջը գրավոր ծանուցման միջոցով 24 (քսանչորս) ժամվա ընթացքում Դադարեցնի սույն Պայմանագիրը 19.1.1.2 և 19.1.1.3 կետերով սահմանված դեպքերում: Անկախ սույն 19-րդ բաժնում որևէ այլ բան նշված լինելուց՝ 19.1.1.1-19.1.1.3 կետերում նախատեսված դեպքերի առաջացման դեպքում, այդ թվում՝ որպես Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի իրացմանն այլընտրանք, Հանրային գործընկերն իրավունք ունի Մասնավոր գործընկերոջը տրամադրելու գրավոր ցուցումներ՝ Մասնավոր գործընկերոջ գործողությունների և (կամ) անգործության վերաբերյալ: Հանրային գործընկերոջ համապատասխան պահանջների ժամկետները, պայմանները և

այլ մանրամասներ սահմանվում են այդ գրավոր ցուցումներում:

19.1.3. Եթե Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջ՝ 19.1.2 կետում նշված գրավոր ցուցումների կատարման արդյունքում կորուստներ է կրում, ապա այդ կորուստները Հանրային գործընկերոջ կողմից փոխհատուցվում են միայն, եթե դրանք հաստատվում են համապատասխան փաստաթղթերով:

19.1.4. Մասնավոր գործընկերոջ՝ Հանրային գործընկերոջ գրավոր ցուցումները 19.1.2 կետին համապատասխան կատարելուն համաձայնությունը կամ անհամաձայնությունը չի սահմանափակում Հանրային գործընկերոջ կողմից Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի իրացումը:

19.2. **Միջամտության իրավունքի իրացումը**

19.2.1. **19.1** կետում նշված դեպքում Հանրային գործընկերն իրավունք ունի միջամտելու (**Հանրային գործընկերոջ միջամտության իրավունք**) և Մասնավոր գործընկերոջը գրավոր ծանուցում տրամադրելու, որը պետք է պարունակի՝

19.2.1.1. այն հրատապ շտկիչ միջոցառումների նկարագրությունը, որոնք Հանրային գործընկերը նպատակ ունի ձեռնարկելու, և որոնք կարող են ներառել բոլոր Ծառայությունների և Գործառնությունների կամ դրանց մի մասի նկատմամբ հսկողության ձեռքբերումը, այդ թվում՝ Ծրագրի ակտիվներին Մասնավոր գործընկերոջ հասանելիության սահմանափակումը, Մասնավոր գործընկերոջ փոխարեն Շարժական գույքի շահագործումը և Մասնավոր գործընկերոջ աշխատակիցներին ցուցումների տրամադրումը,

19.2.1.2. Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի իրացման պատճառը,

19.2.1.3. այն ամսաթիվը, որից սկսած՝ Հանրային գործընկերն սկսելու է իրացնել Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքը (որը կարող է համընկնել հենց ծանուցման ամսաթվի հետ),

19.2.1.4. այն ժամկետը, որի ընթացքում, ըստ Հանրային գործընկերոջ, անհրաժեշտ կլինի իրացնել Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքը, որը չի գերազանցի 60 վաթսուն օրը,

19.2.1.5. այնքանով, որքանով գործնականում իրագործելի է, Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի՝ Մասնավոր գործընկերոջ և իր՝ Ծառայություններ և Գործառնություններ իրականացնելու պարտականությունների վրա ազդեցության նկարագրությունը Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի իրացման ժամկետի ընթացքում, որը

19.2.1.6. եթե 19.1.1.2 և 19.1.1.3 կետերով նախատեսված դեպքերը ի հայտ են գալիս, հաստատում, որ Մասնավոր Գործընկերոջ վճարները

Ծառայությունների և Գործառնությունների համար վճարվելու են Միջամտության իրավունքի իրականացման ընթացքում:

19.2.2. Հանրային գործընկերը կարող է իրացնել Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքն ուղղակիորեն կամ այն պատվիրակել իր ընտրությամբ երրորդ անձի՝ Հանրային գործընկերոջ անունից այդ իրավունքն իրացնելու մասով հանդես գալու համար: Ամեն դեպքում Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի իրացման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում Հանրային գործընկերն ինքն է պատշաճ ջանասիրություն և զգուշավորություն ցուցաբերում և ապահովում, որ Հանրային գործընկերոջ անունից հանդես եկող երրորդ անձը պատշաճ ջանասիրություն և զգուշավորություն ցուցաբերի Ծրագրի ակտիվների և Հանրային գործընկերոջը պատկանող գույքի նկատմամբ, ինչպես նաև պահպանի մտավոր սեփականության գաղտնիության և անվտանգության պահանջները: Այնուամենայնիվ, Հանրային գործընկերը պատասխանատու չէ՝

19.2.2.1. Մասնավոր գործընկերոջ կողմից Հանրային գործընկերոջ ձեռք բերված Շարժական գույքին միջամտության իրավունքի իրացման ընթացքում պատճառված վնասի համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը պատճառվել է Հանրային գործընկերոջ կամ Հանրային գործընկերոջ անունից հանդես եկող երրորդ անձի կոպիտ անփութությամբ կամ պարտավորությունների դիտավորյալ չկատարմամբ, կամ

19.2.2.2. ընդհանրապես ցանկացած տեսակի տնտեսական ծախսերի և կորուստների համար, որոնք Մասնավոր գործընկերը կրել է Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի իրացման արդյունքում (բացառությամբ 19.1.1.2 և 19.1.1.3 կետերով նախատեսված դեպքերում Ծառայությունների և Գործառնությունների վճարների):

Մասնավոր գործընկերը կփոխանցի Հանրայի գործընկերոջը (կամ Հանրային գործընկերոջ անունից գործող երրորդ անձին) ոչ-ստանդարտ (չլինցենզավորված) ծրագրավորման ենթական ծրագրային սկզբնական (սորս) կոդերը, ոչ բացառիկ ՆՏԿՏՀ ծրագրի լիցենզիաները՝ սահմանափակված Ծրագրով և ՀՀ տարածքով, ինչպես նաև բոլոր այլ համապատասխան իրավունքները Ոչ նյութական ակտիվների նկատմամբ, որոնք անհրաժեշտ են ակտիվների գործածման և պահպանման և Անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված ծառայությունների և այլ գործառնությունների իրականացման համար:

Հանրային գործընկերը չի պատվիրակի Հանրային գործընկերոջ Միջամտության իրավունքը որևէ երրորդ անձի, որը հանդիսանում է Մասնավոր գործընկերոջ ուղղակի կամ անուղղակի մրցակից:

19.2.3. Հանրային գործընկերը կարող է Մասնավոր գործընկերոջից որպես ապառք գանձել Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի իրացման

կապակցությամբ կրած բոլոր ողջամիտ ծախսերը (անկախ նրանից, թե դրանք կրել է հենց Հանրային գործընկերը, թե երրորդ կողմը), սակայն դրանք սահմանափակվում են բացառապես հետևյալ ծախսերով.

19.2.3.1. որոնք հաստատված են համապատասխան փաստաթղթերով, և

19.2.3.2. որոնք առաջացել են լավագույն գործարար փորձին համապատասխան:

19.2.4. Հանրային գործընկերն իրավունք ունի 9.2-րդ կետին համապատասխան անվերապահորեն բռնագանձելու Գործառնությունների ապահովումը ցանկացած գումարի դիմաց, որը սույն 19.2.4 կետի համաձայն ենթակա է վճարման Մասնավոր գործընկերոջ կողմից, եթե դրանք Մասնավոր գործընկերոջ կողմից չեն վճարվել այն պահից 30 (երեսուն) օր հետո, երբ Մանսավոր գործընկերը ստանում է Հանրային գործընկերոջ ծանուցումը, որով պահանջվում է վճարումը (կասկածից խուսափելու համար Մասնավոր գործընկերն այդ գումարները Հանրային գործընկերոջը վճարում է ուղղակիորեն՝ նրա պահանջով, եթե այդ գումարների չափը գերազանցում է Գործառնությունների ապահովման գումարը (նման դեպք ի հայտ գալու դեպքում)): Մասնավոր գործընկերը պարտավոր է սույն Պայմանագրով նախատեսված կարգով վճարել սույն Պայմանագրի 19.2-րդ բաժնում նշված Գործառնությունների ապահովման համապատասխան գումարը վերականգնելու համար անհրաժեշտ գումարները:

19.3. **Ընթացակարգը և ժամկետը**

19.3.1. Հանրային գործընկերը և Մասնավոր գործընկերը պետք է հանդիպեն անմիջապես Հանրային գործընկերոջ կողմից ծանուցումը տրամադրվելուց հետո, ինչպես նկարագրված է վերևում, որպեսզի համաձայնության հասնեն իրավիճակը շտկելուն ուղղված գործողությունների ծրագրի վերաբերյալ: Եթե i) Հանրային գործընկերը և Մասնավոր գործընկերը, ողջամտորեն գործելով, համաձայնության չեն հասնում, կամ ii) համաձայնություն է ձեռք բերվել, սակայն Մասնավոր գործընկերն այն չի կատարում կամ իրականացնում այն պահից հետո 22 (քսաներկու) Աշխատանքային օրվա ընթացքում, երբ Հանրային գործընկերը սկսել է իրացնել Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքը, ապա Հանրային գործընկերը կարող է սեփական հայեցողությամբ Մասնավոր գործընկերոջը տրամադրել Մասնավոր գործընկերոջ կողմից պարտազանցման դեպքի կապակցությամբ Պայմանագրի դադարեցման մասին ծանուցում, այն պահից հետո 32 (երեսուներկու) Աշխատանքային օրվա ընթացքում, երբ Հանրային գործընկերը սկսել է իրացնել Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքը:

19.3.2. Եթե Հանրային գործընկերը մինչև 19.3.2 կետում նշված 32 (երեսուներկու) Աշխատանքային օրվա ժամկետի ավարտը Պայմանագրի դադարեցման մասին ծանուցում չի տրամադրում, ապա Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքն անմիջապես դադարում է գործել, և Մասնավոր

գործընկերոջ՝ սույն Պայմանագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները պետք է վերականգնվեն:

19.3.3. Հանրային գործընկերն Մասնավոր գործընկերոջը ծանուցում է և դադարեցնում Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի իրացումը Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի պատճառ հանդիսացած իրավիճակի ավարտից կամ շտկումից հետո հնարավորինս սեղմ ժամկետներում: , :

19.4. **Մասնավոր գործընկերոջ իրավունքները և պարտականությունները՝ կապված Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի իրացման հետ**

19.4.1. Մասնավոր գործընկերն ազատվում է Ծառայություններ և Գործառնություններ իրականացնելու իր պարտավորություններից, սակայն միայն այնքանով և այն ժամկետով, որի ընթացքում Հանրային գործընկերը հսկողություն ունի Ծրագրի ակտիվների ՝ Ծառայությունների և Գործառնությունների իրականացման նկատմամբ Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի իրացման ընթացքում :

19.4.2. Մասնավոր գործընկերը, բացի Մասնավոր գործընկերոջ կողմից պարտազանցման այն շտկելի դեպքի վերացման համար անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկելուց, որոնք պատճառ են դարձել Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքի իրացման համար, ամեն ձևով աջակցում է Հանրային գործընկերոջն իր միջամտության իրավունքի իրացման հարցում: Եթե Մասնավոր գործընկերը որևէ ապօրինի խոչընդոտ է ստեղծում Հանրային գործընկերոջ կողմից սույն 19-րդ բաժնում սահմանված իր իրավունքների իրացման համար, ապա Հանրային գործընկերը կարող է Մասնավոր գործընկերոջն անհապաղ տրամադրել Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի կապակցությամբ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին ծանուցում:

19.5. **Վճարումները**

19.5.1. Հանրային գործընկերոջ միջամտության իրավունքն իրացնելիս Հանրային գործընկերն ունի Ծառայությունների և Գործառնությունների համար վճարներ գանձելու բացառիկ իրավունք, այդ թվում՝ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված անձի միջոցով:

20. ՀԵՏՓՈԽԱՆՑՈՒՄԸ

20.1. **Ընդհանուր դրույթներ հետփոխանցման վերաբերյալ**

20.1.1. Պայմանագրի ավարտին Ծրագրի ակտիվները, այդ թվում՝ Փոխանցվող ակտիվները, Գրանցման կենտրոնները և համապատասխան Շարժական գույքը և Ոչ նյութական ակտիվները, որոնք Հետփոխանցման նվազագույն պահանջների կատարման հնարավորություն են տալիս համաձայն Հավելված 3-ի (Տեխնիկական պահանջներ) (**Հետփոխանցման ակտիվներ**), փոխանցվում են Հանրային գործընկերոջը (կամ Հանրային գործընկերոջ

կողմից նշանակված անձանց)՝ սույն Պայմանագրի պահանջներին համապատասխան:

20.1.2. Հետփոխանցման ակտիվների փոխանցումը պետք է փաստաթղթավորվի հանձնման և ընդունման ակտով, որը ստորագրվում է Մասնավոր գործընկերոջ, Հանրային գործընկերոջ (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված անձանց) և Անկախ փորձագետի կողմից՝ 20.5 կետի (**Հետփոխանցման ակտը**) պահանջներին համապատասխան:

20.1.3. Մասնավոր գործընկերը և Հանրային գործընկերը սույն Պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները շարունակում են կատարել մինչև Հետփոխանցման ակտի կնքումը:

20.1.4. Մասնավոր գործընկերը պետք է ապահովի Հետփոխանցման ակտիվների պատշաճ աշխատանքը և սպասարկումը Ծրագրի ամբողջ ժամկետի ընթացքում, որպեսզի Հետփոխանցման ակտի կնքման օրը Հետփոխանցման ակտիվների մաս կազմող գույքը բավարարի Հետփոխանցման նվազագույն պահանջները:

20.1.5. Հետփոխանցման ակտիվների՝ Հանրային գործընկերոջը (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված անձանց) փոխանցելու հետ կապված բոլոր ծախսերը կրում է Մասնավոր գործընկերը՝ սույն Պայմանագրի պահանջներին համապատասխան:

20.1.6. Ծրագրի ժամկետի ավարտի հետևանքով Պայմանագրի դադարման դեպքում Կողմերը հանդիպում են ոչ ուշ, քան Ծրագրի ժամկետի ավարտից տասնութ (18) ամիս առաջ՝ քննարկելու և փորձելու համաձայնեցնել Հանրային գործընկերոջ (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված անձի) կողմից Ծրագրի ակտիվների աշխատանքները և Ծրագրի այլ գործողություններ ստանձնելու գործնական եղանակները որոշող ծրագիր: Կողմերը նպատակ ունեն նույնն իրագործելու Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքերում:

20.1.7. Անկախ սույն Համաձայնագրում հակառակը նախատեսող որևէ դրույթի առկայությունից, ցանկացած Կողմ կարող է նախաձեռնել Մասնավոր Գործընկերոջ բաժնետոմսերի փոխանցումը Հանրային Գործընկերոջը կամ Հանրային Գործընկերոջ կողմից նշանակված երրորդ կողմին: Համապատասխան նախաձեռնությունը պետք է ներկայացվի Ծրագրի ավարտից առնվազն երկու (2) տարի առաջ:

Եթե Կողմերը համաձայնեն բաժնետոմսերի փոխանցմանը, Կողմերը պետք է ստորագրեն Պայմանագրի լրացուցիչ համաձայնագիր՝ ֆորմալիզացնելով հետփոխանցման գործընթացների պայմանների փոփոխությունները:

20.2. **Գույքագրումը և Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրությունը**

20.2.1. Հանրային գործընկերոջը Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցումից բացի

այլ դեպքերում հետ փոխանցելու ենթակա գույքի գույքագրումը և ստուգումն իրականացվում են հետևյալին համապատասխան.

20.2.1.1. Հետփոխանցման ակտիվների գույքագրում և ստուգում իրականացնելու համար Կողմերն ապահովում են Անկախ փորձագետի նշանակումը և նրա հետ պայմանագրի կնքումը ոչ ուշ, քան Ծրագրի ժամկետի ավարտից տասներկու (12) ամիս առաջ:

20.2.1.2. Անկախ փոխձագետը կատարում է գույքագրում և ստուգում է գույքի վիճակը (**Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրություն**)՝ հաշվի առնելով, որ՝

20.2.1.2.1. Հետ փոխանցվող գույքի վիճակի առաջին ուսումնասիրությունը կատարվում է Ծրագրի ժամկետի ավարտից առնվազն վեց (6) ամիս առաջ.

20.2.1.2.2. Հետ փոխանցվող գույքի վիճակի երկրորդ ուսումնասիրությունը կատարվում է Ծրագրի ժամկետի ավարտից առնվազն մեկ (1) ամիս առաջ.

20.2.1.2.3. Հետ փոխանցվող գույքի վիճակի երրորդ ուսումնասիրությունը կատարվում է Հետփոխանցման ակտի ստորագրման օրը կամ դրան ամենամոտ օրը:

20.2.2. 20.2.1.2 կետում նշված՝ Հետ փոխանցվող գույքի վիճակի յուրաքանչյուր ուսումնասիրության ժամանակ Անկախ փորձագետն իրականացնում է գույքագրում և ստուգում է Հետփոխանցման ակտիվների տեխնիկական վիճակը՝ Հետփոխանցման նվազագույն պահանջների և Կողմերի կողմից համաձայնեցված և Անկախ փորձագետ ներգրավելու մասին համաձայնագրում նշված պահանջների մասով:

20.2.3. Եթե Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Հետփոխանցման ակտիվները չեն բավարարում Հետփոխանցման նվազագույն պահանջները և (կամ) Կողմերի կողմից համաձայնեցված և Անկախ փորձագետ ներգրավելու մասին համաձայնագրում նշված պահանջները՝հաշվի առնելով բնականոն մաշվածությունը, ապա Անկախ փորձագետը կազմում է Հետփոխանցման կիրառելի պահանջների հետ Հետփոխանցման ակտիվների անհամապատասխանությունների և այլ շեղումների ցանկ, որոնք Մասնավոր գործընկերը պետք է վերացնի մինչև Հետփոխանցման ակտի ստորագրումը (այդ թվում՝ նշում է Մասնավոր գործընկերոջ կողմից կատարվելիք համապատասխան շտկումների տեսակը, ծավալը և քանակը):

Անկախ փորձագետը Կողմերին կուղարկի 20.2.1.2 կետում նշված՝ Հետ փոխանցվող գույքի վիճակի յուրաքանչյուր ուսումնասիրության հիման վրա կազմված հաշվետվությունները ոչ ուշ, քան յուրաքանչյուր հաշվետվությունն ավարտելուց հետո երկու (2) Աշխատանքային օրվա ընթացքում:

20.2.4. Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման դեպքում Հանրային գործընկերոջը հետ փոխանցելու ենթակա գույքի գույքագրումը և ստուգումն իրականացվում են՝ հաշվի առնելով հետևյալը.

20.2.4.1. Հետփոխանցման ակտիվների գույքագրումը և Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրությունն իրականացնելու համար Կողմերը ապահովում են Անկախ փորձագետի նշանակումը և նրա հետ պայմանագրի կնքումը Հանրային գործընկերոջ կամ Մասնավոր գործընկերոջ կողմից Պայմանագրի Դադարեցման մասին ծանուցումն ստանալուց կամ Կողմերի միջև Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման մասին փոխադարձ համաձայնագրի կնքման օրվանից կամ Պայմանագրի դադարեցման մասին արբիտրաժային վճիռը ուժի մեջ մտնելուց օրվանից հետո տասներկու (12) Աշխատանքային օրվա ընթացքում::

20.2.4.2. Հետփոխանցման ակտիվները փոխանցելու համար Անկախ փորձագետը 20.2.4.1 կետին համապատասխան Անկախ փորձագետի հետ պայմանագրի կնքման օրվանից հետո քառասունչորս (44) Աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է Հետ փոխանցվող գույքի վիճակի մեկ (1) ուսումնասիրություն:

20.2.4.3. Անկախ փորձագետը Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրությունն իրականացնում է հիմնականում 20.2.2-20.2.3 կետերի պահանջներին համապատասխան:

20.2.5. Անկախ փորձագետը Հանրային գործընկերոջը և Մասնավոր գործընկերոջը Հետ փոխանցվող գույքի վիճակի յուրաքանչյուր ուսումնասիրության ժամի և օրվա մասին գրավոր ծանուցում է Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրության համապատասխան օրվանից երեք (3) Աշխատանքային օր առաջ, որպեսզի Մասնավոր գործընկերը և Հանրային գործընկերն ուղարկեն իրենց լիազորված ներկայացուցիչներին՝ Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրության գործընթացը վերահսկելու համար:

20.3. **Մասնավոր գործընկերոջ պարտականությունները մինչև Հետփոխանցման ակտի ստորագրումը**

20.3.1. Մինչև Հետփոխանցման ակտի ստորագրումը Մասնավոր գործընկերը պետք է՝

20.3.1.1. համագործակցի Հանրային գործընկերոջ (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձանց) և Անկախ փորձագետի հետ և Ծրագրի ժամկետի ավարտից վեց (6) ամիս առաջ կամ Պայմանագրի գործողության վաղաժամկետ Դադարեցման դեպքում Պայմանագրի Դադարեցման մասին ծանուցում ներկայացվելուց (կամ Կողմերի միջև Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման մասին փոխադարձ համաձայնագրի կնքման օրվանից կամ Պայմանագրի գործողության Դադարեցման մասին արբիտրաժային վճիռն ուժի մեջ

մտնելու օրվանից) հետո գործնականում հնարավորինս շուտ նրանց տրամադրի բոլոր թույլտվությունները և տեղեկությունները՝ ուսումնասիրություններ և ստուգումներ իրականացնելու համար, որպեսզի նախապատրաստվեն Հետփոխանցման ակտիվների շահագործումը և սպասարկումը ստանձնելուն.

20.3.1.2. պահպանի Հետփոխանցման նվազագույն պահանջները և իրագործի Հետփոխանցման ակտիվներին ներկայացվող և Կողմերի կողմից համաձայնեցված և Անկախ փորձագետ ներգրավելու մասին համաձայնագրում նշված պահանջները.

20.3.1.3. Հանրային գործընկերոջը կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված անձին տրամադրի տեղեկություններ՝ Մասնավոր գործընկերոջ աշխատակիցների աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ, որոնց Հանրային գործընկերը կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված անձը ցանկություն է հայտնել աշխատանքի ընդունել.

20.3.1.4. Հանրային գործընկերոջը Հետփոխանցման օրվանից առաջ երկու (2) ամսվա ընթացքում ծանուցի Հետփոխանցման ակտիվների որևէ ծանրաբեռնվածության բացակայության մասին՝ ուղարկելով համապատասխան թարմ տեղեկություններ համապատասխան պետական ռեգիստրներից՝ Կիրառելի իրավունքին համապատասխան.

20.3.1.5. Հանրային գործընկերոջ հետ միասին ապահովի, որ Հետ փոխանցվող գույքի վիճակի յուրաքանչյուր համապատասխան ուսումնասիրություն իրականացվի 20.2 կետի պահանջներին համապատասխան.

20.3.1.6. Հանրային գործընկերոջը (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձի) հանձնի Հետփոխանցման ակտիվները՝ 20.2 կետի պահանջներին համապատասխան իրականացված Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրության արդյունքներին համապատասխան: Տվյալ դեպքում Հանրային գործընկերոջը Հետփոխանցման ակտի ստորագրման օրը փոխանցվող գույքը չպետք է ծանրաբեռնված լինի որևէ երրորդ կողմի օգտին.

20.3.1.7. պետության սեփականությանը փոխանցի այն Շարժական գույքը, որը Ծրագրի ակտիվների Հետ փոխանցման Նվազագույն պահանջների կատարման հնարավորություն է տալիս.

20.3.1.8. Հանրային գործընկերոջը (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձի) հանձնի ոչ ստանդարտ (ոչ լիցենզավորված) ծրագրավորվող ծրագրաշարի սկզբնական ծածկագրերը, ոչ բացառիկ ՆՏԿՏՀ ծրագրի լիցենզիաները՝ սահմանափակված Ծրագրով և ՀՀ տարածքով, ինչպես նաև Ոչ նյութական ակտիվների նկատմամբ այլ իրավունքներ, որոնք պահանջվում են Հետփոխանցման օրվանից հետո Հետփոխանցվող ակտիվների շահագործման և սպասարկման

և Անձը հաստատող փաստաթղթերի նկատմամբ ծառայությունների և այլ գործառնությունների իրականացման համար, բոլոր դեպքերում՝ Հետփոխանցման նվազագույն պահանջներին համապատասխան.

20.3.1.9. կնքի բոլոր գործարքները և ստորագրի այնպիսի փաստաթղթեր, որոնք կարող են անհրաժեշտ լինել Հետփոխանցման ակտիվների փոխանցման համար, և կատարի պահանջվող բոլոր իրավաբանական և մյուս ձևականությունները.

20.3.1.10. Հանրային գործընկերոջը (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձի) փոխանցի կամ զիջի Վարձակալության պայմանագրերով սահմանված՝ Մասնավոր գործընկերոջ բոլոր իրավունքները, սեփականության իրավունքները և պարտավորությունները, այդ թվում, առանց սահմանափակման, Վարձակալված անշարժ գույքի նկատմամբ Մասնավոր գործընկերոջ օգտագործման իրավունքը և Մասնավոր գործընկերոջ գնման իրավունքները Վարձակալված անշարժ գույքի նկատմամբ.

20.3.1.11. Հանրային գործընկերոջը (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձի) փոխանցի Ծառայությունների և Աշխատանքների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև Հետփոխանցման ակտիվների շահագործման և սպասարկման վերաբերյալ փաստաթղթերը (այդ թվում, բայց չսահամափակելով՝ տեխնիկական անձնագրերը, նախագծային փաստաթղթերը, ներքին ցուցումները, գործառնական և կապիտալ ծախսերի վերաբերյալ փաստաթղթերը).

20.3.1.12. Հանրային գործընկերոջը (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձի) փոխանցի սույն Պայմանագրի համաձայն երրորդ կողմերի ներգրավման յուրաքանչյուր պայմանագիր, որը գործում է Հետփոխանցման ակտը ստորագրելու օրը և (կամ) կարող է փոխանցվել Հանրային գործընկերոջը, և (կամ) որ Հանրային գործընկերը համաձայնել է ընդունել, ինչպես նաև այդ պայմանագրերի հետ կապված յուրաքանչյուր փաստաթուղթ.

20.3.1.13. Հանրային գործընկերոջը (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձի) հնարավորության դեպքում փոխանցի Հետփոխանցման ակտիվները շահագործելու համար անհրաժեշտ Թույլտվությունները՝ Կիրառելի իրավունքին համապատասխան.

20.3.1.14. Հանրային գործընկերոջը զիջի կամ ապահովի, որ զիջվի երրորդ կողմերի հետ պայմանավորվածությունների վերաբերյալ յուրաքանչյուր այլ պայմանագիր և իրավական փաստաթուղթ, որը i) վավեր է և գործում է, և ii) Հանրային գործընկերը որոշել է ստանձնել, և դադարեցնել կամ ապահովել, որ դադարեցվեն այն պայմանագրերը և իրավական փաստաթղթերը, որոնք չեն զիջվել Հանրային գործընկերոջը.

20.3.1.15. Կատարի Հետ փոխանցվող գույքի վիճակի համապատասխան ուսումնասիրությունների եզրակացություններում Անկախ փորձագետի կողմից նշված բոլոր գործողությունները՝ Հետփոխանցման ակտիվները բավարար տեխնիկական վիճակի բերելու և Հետփոխանցման նվազագույն պահանջները կատարելու և Հետփոխանցման ակտիվներին ներկայացվող և Կողմերի կողմից համաձայնեցված և Անկախ փորձագետ ներգրավելու մասին համաձայնագրում նշված պահանջներն իրագործելու համար, և Հանրային գործընկերոջը և Անկախ փորձագետին գրավոր ծանուցել դրա մասին:

20.3.2. Հանրային գործընկերը Ծրագրի ժամկետի ավարտից առաջ երկու (2) տարվա ընթացքում չի կատարում հետևյալ գործողությունները և ապահովում է, որ հետևյալ գործողությունները չկատարվեն.

20.3.2.1. կատարել փոփոխություններ կամ դադարեցնել որևէ պայմանագիր, որի համաձայն՝ իրավունքները և պարտավորությունները կարող են փոխանցվել կամ նախատեսված են Հանրային գործընկերոջը (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված որևէ այլ անձի) փոխանցվելու համար.

20.3.2.2. կատարել որևէ գործողություն կամ անգործություն, որը կարող է Ծառայությունների/Աշխատանքների կատարման, Ծրագրի ակտիվների շահագործման և սպասարկման էական բացասական փոփոխություն առաջացնել կամ հանգեցնել Հետփոխանցման նվազագույն պահանջների չկատարման:

20.4. **Հանրային գործընկերոջ պարտականությունները մինչև Հետփոխանցման ակտի ստորագրումը**

20.4.1. Մինչև Հետփոխանցման ակտի ստորագրումը Հանրային գործընկերը՝

20.4.1.1. նշանակում է Հետփոխանցման ակտիվների հետ փոխանցման հետ կապված գործողություններ կատարելու լիազորություն ունեցող անձանց և Մասնավոր գործընկերոջը գրավոր ծանուցում է այդ անձանց մասին Ծրագրի ժամկետի ավարտից տասներկու (12) ամիս առաջ կամ Պայմանագրի Դադարեցման մասին ծանուցումը հանձնվելու օրվանից (կամ Կողմերի միջև Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման մասին փոխադարձ համաձայնագրի կնքման օրվանից կամ Պայմանագրի Դադարեցման մասին արբիտրաժային վճիռն ուժի մեջ մտնելու օրվանից) հետո տասն (10) Աշխատանքային օրվա ընթացքում:

20.4.1.2. Մասնավոր գործընկերոջ հետ միասին ապահովում է, որ Հետ փոխանցվող գույքի վիճակի յուրաքանչյուր համապատասխան

ուսումնասիրություն իրականացվի 20.2 կետի պահանջներին համապատասխան.

20.4.1.3. որոշում է այն աշխատակիցների ցուցակը, որոնց Հանրային գործընկերը կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձ ցանկություն է հայտնել աշխատանքի ընդունել, ոչ ուշ, քան Հետ փոխանցվող գույքի վիճակի երրորդ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը (Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցումից բացի այլ դեպքերում) կամ Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ստանալու օրվանից (Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման դեպքում) տասը (10) Աշխատանքային օր հետո, ինչպես նախատեսված է 20.2 կետում.

20.4.1.4. որոշում է Հանրային գործընկերոջ կողմից ներգրավված երրորդ կողմերի հետ կնքված պայմանագրերի ցանկը, որոնցով սահմանված իրավունքները Հանրային գործընկերը կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված անձը ցանկություն է հայտնել ընդունել, ոչ ուշ, քան Հետ փոխանցվող գույքի վիճակի երրորդ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը (Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցումից բացի այլ դեպքերում) կամ Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ստանալու օրվանից (Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման դեպքում) տասը (10) Աշխատանքային օր հետո՝ 20.2 կետում նախատեսված կարգով.

20.4.1.5. սահմանում է այն Շարժական գույքի և (կամ) Ոչ նյութական ակտիվների ցանկը, որոնք Հանրային գործընկերը կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված անձը ցանկություն չի հայտնել ընդունել՝ նշելով, որ այդ Շարժական գույքը և (կամ) Ոչ նյութական ակտիվները չեն պահանջվում Հետփոխանցման օրվանից հետո Հետփոխանցման ակտիվների շահագործման և սպասարկման կամ այլ պահանջվող աշխատանքների իրականացման համար, ոչ ուշ, քան Հետ փոխանցվող գույքի վիճակի երրորդ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը (Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցումից բացի այլ դեպքերում) կամ Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ստանալու օրվանից (Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման դեպքում) տասը (10) Աշխատանքային օր հետո, ինչպես նախատեսված է 20.2 կետում.

20.4.1.6. Մասնավոր գործընկերոջից ընդունել Հետփոխանցման ակտիվների փոխանցման և հետ փոխանցման գործընթացների իրականացման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը (կամ ապահովել դրանց ընդունումը մեկ այլ անձի կողմից)՝ սույն Պայմանագրի պահանջներին համապատասխան՝ ստորագրելով այդ փաստաթղթերի հանձնման և ընդունման ակտ.

20.4.1.7. Մասնավոր գործընկերոջից ընդունել Հետփոխանցման ակտիվները (կամ ապահովել մեկ այլ անձի կողմից դրանց ընդունումը)՝ Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության համաձայն, և սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան ստորագրելով Հետփոխանցման ակտը:

20.5. **Հետփոխանցման ակտի ստորագրումը**

20.5.1. Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցումից բացի այլ դեպքերում Հետփոխանցման ակտիվների փոխանցման դեպքում Հետփոխանցման ակտը պետք է Մասնավոր գործընկերոջ և Հանրային գործընկերոջ (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձի) կողմից ստորագրվի ոչ ուշ, քան Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացությունը ստանալու օրվանից երկու (2) ամիս հետո՝ 20.2 կետին համապատասխան:

20.5.2. Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման դեպքում Հետփոխանցման ակտիվների փոխանցման դեպքում Հետփոխանցման ակտը պետք է Մասնավոր գործընկերոջ և Հանրային գործընկերոջ (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձի) կողմից ստորագրվի ոչ ուշ, քան Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում իրականացված՝ Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացությունը ստանալու օրվանից մեկ (1) ամիս հետո՝ 20.2 կետին համապատասխան:

20.5.3. Հետ փոխանցվող գույքի փոխանցումը և Հետփոխանցման ակտի ստորագրումը կատարվում է Մասնավոր գործընկերոջ և Հանրային գործընկերոջ (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձի) միջև գրավոր, համաձայնեցված ժամանակին:

20.5.4. Եթե Կողմերից որևէ մեկն անհիմն մերժում է Հետփոխանցման ակտի ստորագրումը կամ ձգձգում է Հետփոխանցման ակտիվների փոխանցումը, ապա մյուս Կողմը կարող է ստորագրման յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձել 8,116,008 ութ միլիոն հարյուր տասնվեց հազար ՀՀ դրամ չափով տույժ:

Եթե Հանրային գործընկերն անհիմն մերժում է Հետփոխանցման ակտը ստորագրել, ապա Հետփոխանցման ակտիվների պատահական կորստի կամ վնասի ռիսկը փոխանցվում է Հանրային գործընկերոջը:

20.5.5. Մասնավոր գործընկերը ոչ ուշ, քան Հետփոխանցման ակտի ստորագրումից տասը (10) Աշխատանքային օր առաջ հեռացնում է ցանկացած ակտիվ, որը Պայմանագրի դրույթների համաձայն Հանրային գործընկերը չի ստանձնում կամ նրան չի փոխանցվում:

21. ԱՆԿԱԽ ՓՈՐՁԱԳԵՏԸ

21.1. Կողմերը համատեղ և փոխադարձ համաձայնությամբ նշանակում են առևտրային կազմակերպության (կամ առևտրային կազմակերպությունների կոնսորցիում), որը ներգրավված է Պայմանագրով պահանջվող ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման մեջ, որը Կիրառելի իրավունքին համապատասխան ունի այդ գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր որակավորումները, կարող է պատշաճ որակավորված և փորձ ունեցող աշխատակիցներ տրամադրել և ունի առնվազն հինգ (5) տարվա համապատասխան միջազգային փորձ (**Անկախ փորձագետ**):

21.2. Անկախ փորձագետը նշանակվում կամ վերանշանակվում է Մասնավոր գործընկերոջ և Հանրային գործընկերոջ (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված որևէ անձի) կողմից համատեղ, ոչ ուշ, քան սույն Պայմանագրով Անկախ փորձագետ նշանակելու յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար սահմանված ժամկետներում, կամ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ Մասնավոր գործընկերոջ կամ Հանրային գործընկերոջ կողմից Պայմանագրի դադարեցման մասին ծանուցումն ստանալուց տասը (10) Աշխատանքային օր հետո:

21.3. Մասնավոր գործընկերը ոչ ուշ, քան Անցումային ժամանակահատվածը սկսվելուց քսաներկու (22) Աշխատանքային օր հետո Հանրային գործընկերոջն ուղարկում է գրավոր ծանուցում՝ Անցումային ժամանակահատվածի նպատակներով Անկախ փորձագետի ընտրության թեկնածուների ցանկով, որը պետք է պարունակի առնվազն հինգ (5) ընկերություն:

21.4. Հանրային գործընկերը ցանկը ստանալու օրվանից հետո տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է Մասնավոր գործընկերոջից ստացված՝ Անկախ փորձագետի պաշտոնի թեկնածուների թեկնածությունը, և

21.4.1. ընտրում է Անկախ փորձագետի պաշտոնի առնվազն երկու (2) թեկնածու: Այս դեպքում Մասնավոր գործընկերոջ ծանուցման մեջ նշված՝ Անկախ փորձագետի պաշտոնի թեկնածուների ցանկը համարվում է համաձայնեցված, կամ

21.4.2. ընտրում է Անկախ փորձագետի պաշտոնի առնվազն երկու (2) թեկնածու և առաջարկում է լրացուցիչ թեկնածուներ՝ ցանկը լրացնելու համար, կամ

21.4.3. առաջարկում է առնվազն հինգ (5) այլընտրանքային իր թեկնածուներից կազմված սեփական ցանկը, եթե առկա են հիմնավորված առարկություններ՝ առաջարկվող բոլոր թեկնածուների վերաբերյալ կամ բոլոր թեկնածուների վերաբերյալ բացի մեկից,

և Մասնավոր գործընկերոջը ծանուցում է դրա մասին:

21.5. Եթե Հանրային գործընկերն Անկախ փորձագետի պաշտոնի թեկնածուները պարունակող ծանուցումը ստանալու օրվանից հետո տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում 20.4 կետին համապատասխան ծանուցում չի ուղարկում, ապա Մասնավոր գործընկերը կարող է ինքնուրույն ընտրել իր ներկայացրած ցանկից Անկախ փորձագետի պաշտոնի թեկնածու, և այդ թեկնածուն համարվում է

Հանրային գործընկերոջ կողմից հավանության արժանացած:

21.6. Եթե Հանրային գործընկերը 20.4.1.2 կետին համապատասխան ծանուցում է ներկայացրել Մասնավոր գործընկերոջը, ապա Մասնավոր գործընկերը հինգ (5) Աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է իր ստացած՝ Անկախ փորձագետի պաշտոնի լրացուցիչ թեկնածուների թեկնածությունը և Հանրային գործընկերոջը գրավոր ծանուցում է ներկայացնում հետևյալի մասին.

21.6.1. Անկախ փորձագետի պաշտոնի թեկնածուների ցանկի հաստատում, որը ներառում է Մասնավոր գործընկերոջ կողմից առաջադրված բոլոր թեկնածուներին և հաստատված է Հանրային գործընկերոջ կողմից, և Հանրային գործընկերոջ կողմից առաջադրված առնվազն մեկ լրացուցիչ թեկնածու: Այս դեպքում Մասնավոր գործընկերոջ ծանուցման մեջ նշված՝ Անկախ փորձագետի պաշտոնի թեկնածուների ցանկը համարվում է համաձայնեցված, կամ

21.6.2. առաջադրված լրացուցիչ թեկնածուներին հավանություն տալու անկարողություն և 21.9 -րդ կետի կիրառում:

21.7. Եթե Հանրային գործընկերը 21.4.3 կետին համապատասխան Մասնավոր գործընկերոջը ծանուցել է, ապա Մասնավոր գործընկերը հինգ (5) Աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է իր ստացած՝ Անկախ փորձագետի պաշտոնի լրացուցիչ թեկնածուների թեկնածությունը և Հանրային գործընկերոջը գրավոր ծանուցում է հետևյալի մասին.

21.7.1. Անկախ փորձագետի պաշտոնի թեկնածուների ցանկի հաստատում, որը ներառում է Հանրային գործընկերոջ կողմից առաջադրված առնվազն երկու (2) այլընտրանքային թեկնածու: Այս դեպքում Մասնավոր գործընկերոջ ծանուցման մեջ նշված՝ Անկախ փորձագետի պաշտոնի թեկնածուների ցանկը համարվում է համաձայնեցված, կամ

21.7.2. առաջադրված այլընտրանքային թեկնածուներին հավանություն տալու անկարողություն և 21.9-րդ կետի կիրառում:

21.8. Անկախ փորձագետի պաշտոնի թեկնածուների ցանկի հաստատումից հետո ընտրված թեկնածուները Մասնավոր գործընկերոջը և Հանրային գործընկերոջն են ներկայացնում իրենց գնային առաջարկները: Մասնավոր գործընկերոջ կողմից առաջարկների գնահատումից և այդ գնահատման մասին Հանրային գործընկերոջը ծանուցելուց հետո ընտրվում է լավագույն գնային առաջարկը ներկայացրած թեկնածուն:

21.9. Եթե Կողմերը չեն համաձայնում Անկախ փորձագետի ընտրության և նշանակման վերաբերյալ, Մասնավոր գործընկերը կամ Հանրային գործընկերը կարող է այդ համաձայնությանը չհասնելուց հետո անհապաղ այդ հարցը հանձնել արբիտրաժի միջոցով կարգավորման՝ համաձայն 26.2-րդ կետի:

21.10. Անկախ փորձագետի թեկնածուի ընտրությունից հետո Մասնավոր գործընկերը

Հանրային գործընկերոջն ուղարկում է Անկախ փորձագետի հետ պայմանագրի նախագիծ, որը պետք է ներառի Անկախ փորձագետի առանցքային առաջադրանքների և պարտավորությունների շրջանակը, ինչպես նաև ծառայությունների մատուցման գինը, վճարման ժամանակացույցը, Անկախ փորձագետի կողմից իր պարտավորությունների կատարման ընթացքում ստացված կամ կազմված բոլոր փաստաթղթերի և հաշվետվությունների պահպանմանը ներկայացվող պահանջները և այդ պահանջները խախտելու համար պատասխանատվությունը:

21.11. Հանրային գործընկերն Անկախ փորձագետի հետ պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում այն վերանայում է և կարող է ներկայացնել նախագծի վերաբերյալ իր հիմնավորված դիտողությունները՝ Մասնավոր գործընկերոջ կողմից դրանց իրականացման համար:

21.12. Եթե Հանրային գործընկերն Անկախ փորձագետի հետ պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տասը (10) Աշխատանքային օրվա ընթացքում Մասնավոր գործընկերոջն իր հիմնավորված դիտողությունները չի ներկայացնում, ապա Անկախ փորձագետի հետ պայմանագիրը համարվում է Հանրային գործընկերոջ կողմից հաստատված:

21.13. 21.10-21.12 կետերին համապատասխան Անկախ փորձագետի հետ պայմանագրի նախագիծը հաստատվելուց հետո, , Անկախ փորձագետի, Մասնավոր գործընկերոջ և Հանրային գործընկերոջ միջև կնքվում է եռակողմ պայմանագիր: Անկախ փորձագետի օգտին վճարման ենթակա բոլոր ծախսերը, վճարները, գանձումները կատարվում են Մասնավոր գործընկերոջ կողմից՝ կանխավճարային պայմաններով: Անկախ փորձագետի հետ եռակողմ պայմանագիրը կպարունակի գաղտնիության դրույթներ, որոնք կպարտավորեցնեն Անկախ փորձագետին պահպանել իրեն ցանկացած եղանակով բացահայտված ցանկացած տեղեկատվություն իր սույն Պայմանագրից բխող պարտականությունները իրականացնելու ընթացքում և չբացահայտել նշված տեղեկատվությունը երրորդ անձանց եռակողմ պայմանագրի գործողության ընթացքում և դրա գործողության ժամկետից հետո:

21.14. Եթե Մասնավոր գործընկերը խախտում է Անկախ փորձագետի ընտրության և Անկախ փորձագետի աշխատանքների և ծառայությունների դիմաց կանխավճարի տրամադրման հետ կապված իր պարտավորությունները, ապա Հանրային գործընկերն իրավունք ունի ինքնուրույն ընտրելու Անկախ փորձագետին և նրա հետ կնքելու պայմանագիր՝ Կիրառելի իրավունքին համապատասխան:

21.15. Մասնավոր գործընկերը և Հանրային գործընկերն Անկախ փորձագետից պահանջում են իր պարտավորությունները կատարել ինքնուրույն, ողջամիտ եղանակով, արդարացիորեն և այնպես, որ արդյունավետորեն և արագ կերպով նպաստի իր պարտավորությունների կատարմանը:

21.16. Մասնավոր գործընկերոջ կամ Հանրային գործընկերոջ կողմից Անկախ փորձագետին տրամադրված բոլոր բացատրությունները տրամադրվում են մյուս Կողմին: Մասնավոր գործընկերը և Հանրային գործընկերն իրավունք ունեն ներկա գտնվելու Անկախ փորձագետի մասնակցությամբ բոլոր ստուգումներին և հանդիպումներին:

21.17. Մասնավոր գործընկերն Անկախ փորձագետի կողմից իր պարտավորությունների կատարման ընթացքում Անկախ փորձագետին լիազորում է ներկա գտնվելու և ցանկացած պահի նրա համար ապահովում է հասանելիություն Ծրագրի ակտիվներին: Հանրային գործընկերը և Մասնավոր գործընկերը կարող են ուղեկցել Անկախ փորձագետին Ծրագրի ակտիվներ կատարած դրա այցերի ընթացքում:

21.18. Սույն կետում նախատեսված՝ Անկախ փորձագետի ընտրության կարգը կիրառվում է Անկախ փորձագետի վերանշանակման և հատուկ (արտահերթ) հիմունքներով ընտրության բոլոր դեպքերի նկատմամբ, որոնք կարող են պահանջվել Պայմանագրով:

21.19. Անկախ փորձագետի բոլոր գործունեությունը կլինի գաղտնի և ամբողջ տեղեկատվությունը, տվյալները կամ փաստաթղթերը, որոնք տվյալ գործունեության հետևանքով կամ դրա հետ կապված բացահայտվելու կամ փոխանցվելու են Անկախ փորձագետին ցանկացած Կողմի կողմից համարվելու են գաղտնի Կողմերի կողմից երրորդ անձանց հանդեպ:

Կողմերը և Անկախ փորձագետը, բացառությամբ 23-րդ բաժնով թույլատրված դեպքերի, չեն բացահայտի այդ տեղեկատվությունը, տվյալները կամ փաստաթղթերը որևէ երրորդ անձի, եթե Կողմերը գրավոր այլ բան չեն համաձայնում, ամբողջ այդ տեղեկատվությունը, տվյալները և փաստաթղթերը մնում են բացահայտող և փոխանցող Կողմի սեփականությունը և բոլոր կրկնօրինակները վերադարձվելու են տվյալ Կողմից Անկախ փորձագետի կողմից համապատասխան աշխատանքն իրականացնելուց հետո:

21.20. Անկախ փորձագետի եզրակացությունը կամ որոշումը չի սահմանափակում Կողմերի իրավունքները լուծել վեճերը արբիտրաժի միջոցով համաձայն 26.2-րդ կետի:

21.21. Տարընկալումներից խուսափելու համար՝ Անկախ փորձագետի կողմից տրված ցանկացած եզրակացություն, որոշում կամ այլ արդյունք ուժի մեջ է մտնում տրամադրման պահից (կամ եթե այդպիսի արդյունքը բողոքարկվում է՝ կայացված արբիտրաժային վճռի ուժի մեջ մտնելու պահից):

22. ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

22.1. 16.7-րդ կետի դրույթները հաշվի առնելով՝ Մասնավոր գործընկերը Հանրային գործընկերոջը հատուցում է հետևյալից առաջացող ցանկացած պատասխանատվության կամ պահանջի դիմաց.

22.1.1. որևէ անձի մահ կամ անձնական վնասվածք, և (կամ)

22.1.2. գույքի (այդ թվում՝ Հանրային գործընկերոջը պատկանող այն գույքի, որի համար նա պատասխանատու է) կորուստ կամ վնաս:

22.2. Եթե Հանրային գործընկերը որևէ ծանուցում, պահանջ, գրություն կամ որևէ պահանջով այլ փաստաթուղթ է ստանում, որով Հանրային գործընկերոջ համար կարող են առաջանալ Պայմանագրի սույն կետում նշված փոխհատուցման պարտավորություններ, ապա Հանրային գործընկերն անհապաղ գրավոր ծանուցում

է ուղարկում Մասնավոր գործընկերոջը, որը պարունակում է նշում պահանջի էության վերաբերյալ և համապատասխան փաստաթղթերի կրկնօրինակները: Հանրային գործընկերոջ ցանկացած լրացուցիչ պատասխանատվություն, որն առաջանում է Հանրային գործընկերոջ կողմից Մասնավոր գործընկերոջն այդպիսի ծանուցում ուղարկելու որևէ անհիմն ուշացմամբ, սույնով բացառվում է Մասնավոր գործընկերոջ կողմից հօգուտ Հանրային գործընկերոջ հատուցման շրջանակից:

23. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

23.1. Հանրային գործընկերն իրավասու է բացահայտել սույն Պայմանագրի տեքստը՝ այն իր հանրային տիրույթում բացահայտելու (հրապարակելու) միջոցով: Կողմերը, պահպանում են գաղտնիության պահանջները սույն Պայմանագրի համաձայն հաղորդակցման ընթացքում, որը պարունակում է առևտրային, գաղտնի կամ այնպիսի որևէ այլ տեղեկություն, որն արտացոլում է սույն Պայմանագրի վերաբերյալ Կողմերի մտադրությունները, ինչպես նաև սույն Պայմանագրի համաձայն մյուս Կողմին բացահայտված կամ տրամադրված ցանկացած փաստաթուղթ: Այս պարտավորությունը չի կիրառվում այն տեղեկությունների նկատմամբ, որոնք բացահայտվել են՝

23.1.1. մեկ Կողմի կողմից իր ներկայացուցիչներին, խորհրդականներին կամ խորհրդատուներին, և Մասնավոր գործընկերոջ կողմից՝ հնարավոր կամ փաստացի բաժնետերերի, վարկատուների, կապալառուների և ենթակապալառուների հետ իր գործերի ընթացքում, եթե այդպիսի երրորդ անձինք կարիք ունեն իմանալու նշված տեղեկատվությունը սույն Պայմանագրի նպատակներից ելնելով և եթե այդպիսի երրորդ անձինք հավասարապես պարտավոր են գաղտնի պահել այդպիսի տեղեկատվությունը: Բացահայտող Կողմի կողմից ստացող Կողմի ներկայացուցիչներին կամ խորհրդատուներին Գաղտնի տեղեկատվության բացահայտումը համարվելու է ստացող Կողմի կողմից իր ներկայացուցիչներին կամ խորհրդատուներին Գաղտնի տեղեկատվության բացահայտում.

23.1.2. մեկ Կողմի կողմից իր Փոխկապակցված անձանց՝ պայմանով, որ այդ բոլոր Փոխկապակցված անձինք պարտավորված են գաղտնիության համարժեք պարտավորություններով.

23.1.3. այնպիսի անձանց և այնքանով, որքանով անհրաժեշտ է սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելու համար.

23.1.4. որոնք ընդհանրապես հասանելի են հանրությանը, եթե նախնական բացահայտումը չի կատարվել այդ Կողմի կողմից սույն կետի խախտմամբ.

23.1.5. եթե պահանջվում է, և այնքանով, որքանով պահանջվում է տեղեկատվության բացահայտում Կիրառելի իրավունքով.

23.1.6. դատարանի կարգադրությունը կամ լիազորված հանրային մարմնի կարգավորող կարգադրությունը կատարելու համար, և

23.1.7. Մասնավոր գործընկերոջ կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը և ցանկացած այլ պետական մարմնի հաշվետվություն ներկայացնելու իր պարտավորությունների չափով:

Սույն կետը մնում է ուժի մեջ Դադարեցումից հետո:

23.2. Հանրային գործընկերը հանդիսանում է սույն Պայմանագրի ներքո և սույն Պայմանագրի իրականացման ընթացքում փոխանցվող, ստացվող կամ այլ կերպ Մշակվող ամբողջ տեղեկատվության սեփականատերը:

23.3. Հանրային գործընկերոջ պահանջով Կողմերը կբանակցեն և կկնքեն Չհրապարակման մասին պայմանագիր («Չհրապարակման մասին պայմանագիր») եթե դա անհրաժեշտ է Ծրագրի ներքո գաղտնի տեղեկատվության հետ կապված Կողմերի միջև հարաբերությունները կարգավորելու համար: Չհրապարակման մասին պայմանագիրը բանակցվելու և կնքվելու է Հանրային գործընկերոջ պահանջից 22 (քսաներկու) Աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կողմերն ավելի երկար ժամկետ չեն համաձայնեցրել (որը ցանկացած պարագայում չի կարող գերազանցել 66 (վաթսունվեց) Աշխատանքային օրը): Կողմերը կարող են օգտագործել Հավելված 10-ում նախատեսված ձևը՝ Չհրապարակման մասին պայմանագիրը բանակցելու և կնքելու համար, (անհրաժեշտության դեպքում) փոփոխություններ և թարմացումներ նախատեսելով այդ ձևի մեջ:

23.4. Կողմերը կարող են հավաքագրել, օգտագործել, փոխանցել, պահել կամ այլ կերպ մշակել (միասին՝ «Մշակել») տեղեկատվությունը, որը փոխանցվել կամ ստացվել է սույն Պայմանագրի ներքո և սույն Պայմանագրի իրականացման ընթացքում և կարող է կապված լինել որոշակի անձանց հետ (այսուհետ՝ «Անձնական տվյալ»):

23.5. Կողմերը պատասխանատու են Անձնական տվյալների Մշակման համար Կիրառելի իրավունքի՝ տվյալների պաշտպանության պահանջներին համապատասխան (համապատասխան պահանջներ առկա լինելու դեպքում), ներառյալ՝ տրված լիազորությունների և թույլտվությունների հիման վրա: Կողմերը կձեռնարկեն համապատասխան տեխնիկական և գործառնական միջոցներ Անձնական տվյալների պաշտպանության համար:

23.6. Մասնավոր գործընկերը օգտագործելու է Անձնական տվյալները միայն Ծառայությունների և այլ գործառնությունների իրականացման համար՝ սույն Պայմանագրին համաձայն, ինչպես նաև այդ Ծառայությունների մատուցման հետ համահունչ նպատակներով:

23.7. Մասնավոր գործընկերոջ կողմից Ծրագրի հետ կապված տեղեկատվության (այդ թվում, բայց չսահմանափակելով՝ Անձնական տվյալների) պահպանումը, մշակումը և միջսահմանային փոխանցումը երրորդ երկրում կամ երրորդ երկրի կամ միջազգային կազմակերպություններում կամ միջազգային կազմակերպությունների արգելվում է:

23.8. Սույն Բաժին 23-ի ցանկացած խախտման դեպքում խախտող Կողմը պետք է ծանուցի առանց անհարկի ուշացման մյուս Կողմին խախտման մասին:

24. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԸ

24.1. Սույն Պայմանագիրը մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան և կարգավորվում է դրանցով:

25. ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՆ

25.1. Ո՛չ Մասնավոր գործընկերը, ո՛չ դրա որևէ Փոխկապակցված անձ կամ Մասնավոր գործընկերոջ որևէ բաժնետեր կամ նրանց անունից հանդես եկող որևէ անձ, որը ներգրավված է կամ կարող է ներգրավվել Ծրագրին կամ սույն Պայմանագրի իրականացման մասին որևէ պայմանագրի, չի կատարել կամ ներգրավված չէ որևէ Պատժելի գործունեության կատարմանը:

25.2. Մասնավոր գործընկերը և Մասնավոր գործընկերոջ բաժնետերերը չեն ներգրավվում (և որևէ Փոխկապակցված անձի կամ որևէ այլ անձի լիազորություն կամ թույլտվություն չեն տալիս իրենց անունից ներգարվվելու) Ծրագրի առնչությամբ կամ սույն Պայմանագրով ենթադրվող որևէ գործարքի կատարման ընթացքում որևէ Պատժելի գործունեության:

25.3. Սույն կետի նպատակներով նշված հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

«**Պատժելի գործունեություն**» նշանակում է որևէ Կոռուպցիոն գործելակերպ, Խարդախ գործելակերպ, Դավադիր գործելակերպ կամ Հարկադրում այնպես, ինչպես այդ եզրույթները սահմանված են ստորև.

«**Կոռուպցիոն գործելակերպ**», այսինքն՝ անձի կողմից ցանկացած արժեքավոր բան առաջարկելը, տալը, ստանալը կամ շորթելը՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, մեկ այլ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու համար.

«Խարդախ գործելակերպ», այսինքն՝ ցանկացած գործողություն կամ բացթողում, այդ թվում՝ խեղաթյուրելը, որը գիտակցաբար կամ անփութորեն մոլորեցնում կամ փորձում է մոլորեցնել անձին՝ ֆինանսական կամ այլ օգուտ ստանալու կամ պատասխանատվությունից խուսափելու նպատակով:

«Դավադիր գործելակերպ», այսինքն՝ երկու կամ ավել անձանց միջև պայմանավորվածություն, որը նախատեսված է ոչ պատշաճ նպատակին հասնելու, այդ թվում՝ մեկ այլ անձի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու համար. և

«**Հարկադրում**», այսինքն՝ որևէ անձի կամ անձի գույքին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վնաս հասցնելը կամ վնասելը կամ վնաս հասցնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու համար:

26. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

26.1. **Վեճերի բարեկամական կարգավորումը**

26.1.1. Եթե Կողմերի միջև ծագում կամ առաջանում է որևէ տեսակի վեճ,

տարակարծություն, հակասություն կամ պահանջ՝ կապված սույն Պայմանագրի համաձայն կամ դրանից բխող կամ դրա առնչությամբ առաջացող կամ Ծրագրի իրականացման հետ այլ կերպ կապված որևէ բանի կամ հարցի հետ (Վեճ), ապա Կողմերից ցանկացածը մյուս Կողմին գրավոր ծանուցում է այդ Վեճի առկայության մասին:

26.1.2. Կողմերը 26.1.1 կետում նշված ծանուցումն ուղարկվելուց հետո 44 (քառասունչորս) Աշխատանքային օրվա ընթացքում բարեխղճորեն փորձում են համաձայնության հասնել վիճելի հարցի շուրջ՝ այն լուծելու համար: Սույն կետի դրույթներին համապատասխան Վեճը լուծելու փորձ անելիս Կողմերն օգտագործում են ողջամիտ ջանքեր՝ այդ Վեճը բանակցությունների կամ որևէ այլ ոչ պաշտոնական ընթացակարգի միջոցով առանց ձգձգման լուծելու համար: Այդ փորձերն իրականացվում են բարեխղճորեն՝ ջանալով Վեճը լուծել առանց արբիտրաժային վարույթի անհրաժեշտության:

26.1.3. Եթե Կողմերը 26.1.2 կետին համապատասխան միմյանց դիմելուց հետո 44 (քառասունչորս) օրվա ընթացքում Վեճը չեն լուծում, ապա Կողմերից ցանկացածը կարող է Վեճը հանձնել լուծման՝ 26.2 կետին համապատասխան:

26.2. **Արբիտրաժը**

26.2.1. Վեճերը կարող են կարգավորվել 26.2 կետի համաձայն, 26.1 կետի դրույթները հաշվի առնելով: Եթե Վեճը չի կարգավորվում 26.1-րդ կետին համապատասխան, ապա Կողմերից որևէ մեկի՝ այդ Վեճն արբիտրաժ ներկայացնելու ցանկության դեպքում այդ Վեճը պետք է քննվի ստորև նշված կանոնների համաձայն:

26.2.2. Ցանկացած Վեճ, որը սույն Պայմանագրի 26.2.1 կետի համաձայն կարող է ներկայացվել արբիտրաժ, վերջնականապես կարգավորվում է արբիտրաժի միջոցով, Ստոկհոլմի առևտրի պալատի Արբիտրաժային ինստիտուտի արբիտրաժային կանոններին (**Արբիտրաժային կանոններ**) համապատասխան:

26.2.3. Արբիտրաժի վայրն է Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքը:

26.2.4. Արբիտրաժային տրիբունալը կազմված է 3 (երեք) արբիտրից, Հանրային գործընկերը և Մասնավոր գործընկերը յուրաքանչյուրը մեկ արբիտր են նշանակում, իսկ մեկ ընդհանուր արբիտրը, որը պետք է լինի տրիբունալի նախագահը, նշանակվում է Կողմերի միջև համաձայնությամբ: Եթե Հանրային գործընկերոջ և Մասնավոր գործընկերոջ միջև այդպիսի համաձայնություն առկա չէ, երրորդ արբիտրը նշանակվում է Արբիտրաժային կանոններին համապատասխան: Արբիտրներից որևէ մեկը չպետք է լինի որևէ Կողմի պետության քաղաքացի կամ որևէ բաժնետիրոջ կամ բաժնետերերի խմբի պետության քաղաքացի, որին պատկանում է Մասնավոր գործընկերոջ բաժնետիրական կապիտալի 10 (տասը) տոկոսը կամ ավելին, ինչպես նաև արբիտրներից որևէ մեկը չպետք է լինի նշվածներից որևէ մեկի աշխատակից կամ գործակալ կամ նախկին աշխատակից կամ գործակալ:

26.2.5. Եթե Հանրային գործընկերոջ և Մասնավոր գործընկերոջ միջև այլ բան համաձայնեցված չէ, ապա արբիտրաժն իրականացվում է անգլերեն կամ ուղեկցվում է վավերացված անգլերեն թարգմանությամբ:

26.2.6. Սույն Պայմանագիրը և դրանով սահմանված Կողմերի իրավունքները և պարտավորությունները շարունակում են լիակատար ուժի և գործողության մեջ լինել մինչև միջազգային արբիտրաժային վարույթով վճռի կայացումը, և այդ վճռով, ըստ պատշաճության, որոշվում է, թե արդյոք և երբ է Պայմանագրի որևէ վաղաժամկետ դադարեցում ուժի մեջ մտնում: Արբիտրաժի վճիռը վերջնական է և պարտադիր ուժ ունի Կողմերի համար:

26.3. **Կատարումը շարունակվում է**

26.3.1. Սույն 26-րդ բաժնի մասով Վեճի հանձնումը լուծման որևէ գործընթացի չի ազատում Կողմերից որևէ մեկին սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների պատշաճ և ժամանակին կատարումից:

27. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

27.1. **Զիջումները**

27.1.1. **27.2**կետի և Ուղիղ պայմանագրի դրույթների հաշվի առնելով՝ Մասնավոր գործընկերը չի կարող սույն Պայմանագրով կամ դրա համաձայն վաճառել, ծանրաբեռնել, զիջել կամ այլ կերպ փոխանցել իր իրավունքներն ու պարտականությունները՝ առանց Հանրային գործընկերոջ նախնական գրավոր համաձայնության: Մասնավոր գործընկերոջ կողմից սույն Պայմանագրով նախատեսված կամ դրանից բխող իր իրավունքներից կամ պարտականություններից ցանկացածի որևէ փաստացի կամ ենթադրյալ վաճառք, ծանրաբեռնվածություն, զիջում կամ փոխանցման այլ գործողություն, որը չի համապատասխանում սույն 27.1.1 կետին, անվավեր է և համարվում է Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպք:

27.1.2. Հանրային գործընկերն իրավունք ունի սույն Պայմանագրով նախատեսված իր իրավունքներից ու պարտականություններից ցանկացածը փոխանցելու ցանկացած Հանրային մարմնի կամ վերականգնելու ցանկացած Հանրային մարմնի փոխանցված՝ սույն Պայմանագրով նախատեսված իր իրավունքներից ու պարտականություններից ցանկացածը:

27.2. **Բաժնեմասնակցության կառուցվածքի փոփոխությունները**

27.2.1. Մասնավոր գործընկերը սույնով հայտարարում և հաստատում է Հանրային գործընկերոջը, որ Կնքման օրվա դրությամբ Մասնավոր գործընկերոջ կապիտալում բաժնեմասնակցությունը այնպիսին է, ինչպես ներկայացված է Հավելված 7-ում (*Մասնավոր գործընկերոջ բաժնեմասնակցության կառուցվածքը*), և Հաղթողին է պատկանում Մասնավոր գործընկերոջ կապիտալի կառուցվածքում բաժնետոմսերի հարյուր տոկոսը (100%):

27.2.2. Ծրագրի ժամկետում Մասնավոր գործընկերը կարող է իրականացնել

հետևյալը միայն Հանրային գործընկերոջ նախնական գրավոր համաձայնությունը ստանալու դեպքում.

27.2.2.1. Մասնավոր գործընկերոջ նկատմամբ ցանկացած Հսկողության փոփոխություն.

27.2.2.2. Մասնավոր գործընկերոջ Բաժնեմասնակցության ամբողջական կամ մի մասի ցանկացած օտարում, որի արդյունքում Մասնավոր գործընկերոջ՝ Հավելված 7 (*Մասնավոր գործընկերոջ բաժնեմասնակցության կառուցվածքը*) նշված բաժնետիրոջ Բաժնեմասնակցությունը դառնում է 60 (վաթսուն) տոկոսից պակաս, սակայն բոլոր դեպքերում Առաջարկի վերաբերյալ հարցման մեջ Դիմումատուներին ներկայացվող ֆինանսական չափանիշներին Մասնավոր գործընկերոջ բաժնետերերի նոր կազմի համապատասխանությունն ապահովելու պայմանով:

27.2.3. Մասնավոր Գործընկերոջ Բաժնեմասնակցության ցանկացած այլ օտարում կամ փոխանցում որպես ապահովում, բացի 27.2.2.2 կետով նախատեսված դեպքից, Բաժնեմասնակցությունկարող է իրականացվել Հանրային գործընկերոջը նախնական գրավոր ծանուցում ուղարկելու պայմանով, որը պարունակում է 27.2.4 կետով սահմանված տեղեկությունները, սակայն բոլոր դեպքերում Առաջարկի վերաբերյալ հարցման մեջ Դիմումատուներին ներկայացվող ֆինանսական չափանիշներին Մասնավոր գործընկերոջ բաժնետերերի նոր կազմի համապատասխանությունն ապահովելու պայմանով:

27.2.4. 27.2.2կետում նշված գործողությունների վերաբերյալ Հանրային գործընկերոջ հաստատումը ստանալու նպատակով Մասնավոր գործընկերը՝

27.2.4.1. այդ փոխանցումից առնվազն երեք (3) ամիս առաջ գրավոր հայտնում է Հանրային գործընկերոջը՝ (i) Բաժնեմասնակցության օտարման դեպքում՝ ստացողի ճշգրիտ ինքնության և օտարման հիմքերի ու պայմանների մասին, (ii) բաժնետերերի կողմից լրացուցիչ ներդրումների կամ նոր բաժնետիրոջ ներգրավման միջոցով Մասնավոր գործընկերոջ կապիտալի ավելացման դեպքում՝ բաժնետերերի լրացուցիչ ներդրումների չափի և Մասնավոր գործընկերոջ ավելացված կապիտալի չափի կամ նոր բաժնետիրոջ ինքնության, նրա փայի և ավելացված կապիտալի չափի մասին, կամ (iii) Մասնավոր գործընկերոջ կապիտալի այլ փոփոխության դեպքում՝ այլ տեղեկություններ՝ Մասնավոր գործընկերոջ կապիտալի կառուցվածքի փոփոխության կամ Բաժնեմասնակցության փոփոխության գործընթացի վերաբերյալ.

27.2.4.2. եթե օտարման ենթակա Բաժնեմասնակցությունը գրավադրվել է, ապա Հանրային գործընկերոջն այդ փոխանցումից առնվազն մեկ (1) ամիս առաջ տրամադրում է Վարկատուների կողմից պատշաճ կերպով ստորագրված փաստաթուղթ, որով նրանք հայտարարում են, որ որևէ

առարկություն չունեն՝ կապված այդ փոխանցման հետ, և որ այդ փոխանցումը չի հանգեցնի Ֆինանսավորման փաստաթղթերով նախատեսված՝ Մասնավոր գործընկերոջ կողմից պարտազանցման դեպքի, և

27.2.4.3. Մասնավոր գործընկերոջ կապիտալում ունեցած 40 (քառասուն) տոկոսից ոչ պակաս մասնակցության փոխանցման դեպքում Հանրային գործընկերոջն այդ փոխանցումից առնվազն երեք (3) ամիս առաջ տրամադրում է հավանական ստացողի (կամ կիրառելիության դեպքում՝ վերջինիս հետ Փոխկապակցված անձի) ֆինանսական հաշվետվությունները:

27.2.5. Ցանկացած ստացող, որը Մասնավոր գործընկերոջ կապիտալում օրինականորեն ձեռք է բերել 40 (քառասուն) տոկոսից ոչ պակաս Բաժնեմասնակցություն կամ Հսկողություն Մասնավոր գործընկերոջ նկատմամբ՝ 27.2.4կետի համաձայն, ցանկացած ժամանակ, երբ դադարում է համապատասխանել վերոնշյալ պայմաններին, անմիջապես ամբողջությամբ հետ է փոխանցում այդ Բաժնեմասնակցությունը Մասնավոր գործընկերոջ բաժնետիրոջը (բաժնետերերին), որը (որոնք) փոխանցել է (են) այդ Բաժնեմասնակցությունը:

27.2.6. Բաժնետերերը որպես Վարկի ապահովում կարող են գրավադրել իրենց Մասնավոր գործընկերության մեջ Բաժնեմասնակցությունը ՝ հօգուտ Վարկատուների: Այդ դեպքում Բաժնեմասնակցության բռնագանձման ընթացակարգը որոշվում է Վարկատուների հետ կնքված բաժնեմասնակցության գրավադրման համաձայնագրով և Ուղիղ պայմանագրով:

27.2.7. Սույն 27.2 կետով նախատեսված բոլոր սահմանափակումները, որոնք վերաբերում են այնպիսի գործողությունների կատարմանը, ինչպիսիք են օտարումը, փոխանցումը, վաճառքը, գրավադրումը, բաժնետիրական կապիտալի կառուցվածքի փոփոխությունը, Հսկողության փոփոխությունը և Բաժնեմասնակցության ցանկացած այլ օտարում, ներառյալ՝ այն գործողությունները, որոնք ուղղակիորեն նախատեսված չեն սույն Պայմանագրով, կիրառվում են և՛ գործողություններին, որպես այդպիսիք, և՛ այնպիսի գործարքների կնքման նկատմամբ, որոնք կարող են հանգեցնել նման գործողությունների, ներառյալ՝ այն գործողությունները, որոնք հետագայում ենթակա են որոշակի պահանջների և պայմանների կատարմանը:

27.3. **Արժույթի փոփոխությունը**

27.3.1. Արժույթի փոփոխության ազդեցությունը սույն Պայմանագրի վրա

27.3.1.1. Չհակասելով 14-րդ բաժնի դրույթներին, եթե Կիրառելի իրավունքով պահանջվում է հայկական դրամի (**Ազգային արժույթ, AMD**) պարտադիր կիրառություն սույն Պայմանագրի նկատմամբ, ապա

Հանրային գործընկերը որոշում է, որ Ազգային արժույթն այն արժույթն է, որը կիրառելի է սույն Պայմանագրի նկատմամբ, և նման որոշումից հետո՝

27.3.1.1.1. Սույն Պայմանագրում դրամին արված բոլոր հղումները հղումներ են Ազգային արժույթին.

27.3.1.1.2. Սույն Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները փոխարկվում կամ վճարվում են Ազգային արժույթով՝ հաշվի առնելով այն, որ ցանկացած ապահովում, որը սույն Պայմանագրով Մասնավոր գործընկերոջ կողմից տրամադրվում է Հանրային գործընկերոջը և նախկինում տրամադրվել է համապատասխան անձի կողմից Ազգային արժույթի մասով համապատասխան որոշման ամսաթվին, չի ընդգրկվում նման սահմանման մեջ, քանի դեռ սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան այն նորից տրամադրելու անհրաժեշտություն չի առաջացել (այդ դեպքում ապահովումն արտահայտվում է Ազգային արժույթով), ինչպես նաև հաշվի առնելով այն, որ Մասնավոր գործընկերն իրավունք ունի Արժույթի փոփոխությունից հետո ցանկացած ժամանակ վերագրանցելու ցանկացած ապահովում ավելի վաղ, քան նախատեսված է սույն Պայմանագրով (այդ դեպքում ապահովումն արտահայտվում է Ազգային արժույթով), և

27.3.1.1.3. Դրամով արտահայտված գումարների փոխարկումն Ազգային արժույթով գումարների կատարվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակած փոխարժեքով այն օրվա ժամը 12-ի (տասներկու) դրությամբ, երբ Հանրային գործընկերը կայացրել է համապատասխան որոշումն Ազգային արժույթի սահմանման մասին, կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից փոխարժեքի մասին տեղեկության բացակայության դեպքում՝ ցանկացած այլ Հանրային մարմնի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքով, և համապատասխան գումարները Հանրային գործընկերոջ կողմից կլորացվում են ցենտի ամենամոտ միավորով կամ Ազգային արժույթի համարժեք միավորով:

27.4. **Բնօրինակները և լեզուն**

27.4.1. Սույն Պայմանագիրը կատարված է հավասար ուժ ունեցող չորս (4) բնօրինակից, երկուսը (2)՝ հայերեն և երկուսը (2)՝ անգլերեն. մեկ (1) հայերեն և մեկ (1) անգլերեն օրինակ՝ յուրաքանչյուր Կողմի համար:

27.4.2. Պայմանագրի հայերեն և անգլերեն տարբերակների միջև ցանկացած անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

27.5. **Հարկերը և տուրքերը**

27.5.1. Մասնավոր գործընկերը միանձնյա պատասխանատվություն է կրում Ծառայությունների հետ կապված Մասնավոր գործընկերոջ և նրա աշխատակիցների վրա հաշվեգրված բոլոր հարկերի կամ այն հարկերի վճարման համար, որոնք այլ կերպ կարող են հաշվեգրվել Մասնավոր գործընկերոջ կողմից իր պարտականությունները կատարելու հետևանքով, ինչպես նաև պարտավորվում է վճարել դրանք կամ ապահովել դրանց վճարումը:

27.5.2. Հանրային գործընկերը որևէ պարտավորություն չունի Մասնավոր գործընկերոջ հանդեպ, և Մասնավոր գործընկերը որևէ պահանջ չի ներկայացնում Հանրային գործընկերոջը սույն Պայմանագրի համաձայն Հանրային գործընկերոջ կողմից վճարված հարկերի առնչությամբ:

27.5.3. Սույն Պայմանագրի համաձայն մյուս Կողմին վճարում կատարելիս Մասնավոր գործընկերը և Հանրային գործընկերը (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձ) պահում կամ նվազեցնում են ցանկացած հարկ, եթե դա պահանջվում է Կիրառելի իրավունքով: Ցանկացած նման պահում կամ նվազեցում կատարելու անհրաժեշտության դեպքում վճարումը կատարելու համար պատասխանատու Մասնավոր գործընկերը կամ Հանրային գործընկերը (կամ Հանրային գործընկերոջ կողմից նշանակված այլ անձ), կատարելով վճարում, որին պահումը կամ նվազեցումը վերաբերում է, պարտավոր չէ մյուս Կողմին վճարել որևէ լրացուցիչ գումար՝ կապված այդ հարկի հետ (ներառյալ՝ այնպիսի գումար, որով կապահովվի, որ այդ այլ անձը ստանա նույն ընդհանուր գումարը, որը նա կստանար, եթե այդպիսի պահում կամ նվազեցում կատարելու անհրաժեշտություն չլիներ):

27.5.4. Սույն կետի դրույթները շարունակում են ուժի մեջ մնալ նաև Պայմանագրի Դադարեցումից հետո:

27.6. **Ծանուցումները**

27.6.1. Սույն Պայմանագրի համաձայն տրամադրվող ցանկացած ծանուցում, հարցում, հրահանգ կամ այլ հաղորդագրություն կազմվում է գրավոր հայերեն և անգլերեն և առաքվում անձամբ (առձեռն առաքմամբ) կամ ուղարկվում նախապես վճարված փոստային առաքմամբ՝ առաքման հաստատմամբ և ստորև նշված անձի (անձանց) կամ այն այլ անձի (անձանց) «ուշադրությանը» նշմամբ, որ մյուս Կողմը ծանուցմամբ կպահանջի՝ հետևյալ հասցեներով.

Հանրային գործընկերոջը հասցեագրված լինելու դեպքում.

Հասցե՝	*Սեղմեք կամ հպվեք այստեղ՝ տեքստ մուտքագրելու համար:*
Ում՝	*Սեղմեք կամ հպվեք այստեղ՝ տեքստ մուտքագրելու համար:*
Էլ. փոստ՝	*Սեղմեք կամ հպվեք այստեղ՝ տեքստ մուտքագրելու համար:*

Մասնավոր գործընկերոջը հասցեագրված լինելու դեպքում.

Հասցե՝	*Սեղմեք կամ հպվեք այստեղ՝ տեքստ մուտքագրելու համար:*
Ում՝	*Սեղմեք կամ հպվեք այստեղ՝ տեքստ մուտքագրելու համար:*
Էլ. փոստ՝	*Սեղմեք կամ հպվեք այստեղ՝ տեքստ մուտքագրելու համար:*

27.7. **Դրույթների անկախությունը**

27.7.1. Եթե դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից սույն Պայմանագրի որևէ պայման կամ դրույթ ճանաչվում է անվավեր կամ անօրինական կամ կիրառման ոչ ենթակա, ապա դա չի ազդում սույն Պայմանագրի մնացած դրույթների վրա, , և Կողմերը բարեխղճորեն բանակցում են՝ փոփոխելու այդ դրույթն այնպես, որ փոփոխվելուց հետո այն լինի օրինական, վավեր և կիրառելի:

27.8. **Լրացուցիչ երաշխիքները**

27.8.1. Սույն Պայմանագրի ամբողջ ժամանակահատվածում Կողմերը՝

27.8.1.1. կատարում են բոլոր այն հետագա գործողությունները, և

27.8.1.2. կազմում և ուղարկում են բոլոր այն լրացուցիչ ակտերն ու փաստաթղթերը,

որոնք ողջամտորեն հարմար կամ անհրաժեշտ կլինեն սույն Պայմանագրի նպատակներն իրականացնելու, դրանց հասնելու կամ դրանց հետ ողջամտորեն կապված ցանկացած խնդիր դյուրացնելու համար:

27.9. **Ամբողջական պայմանագիրը**

27.9.1. Սույն Պայմանագիրը Կողմերի միջև Ծրագրի առնչությամբ կնքված ամբողջական պայմանագիրն է և գերակայում է Կողմերի միջև Ծրագրի և (կամ) սույն Պայմանագրի բովանդակության առնչությամբ ձեռք բերված, բանավոր կամ գրավոր, ցանկացած կամ բոլոր նախկին պայմանագրերի կամ պայմանավորվածությունների նկատմամբ (ներառյալ՝ Ծրագրի մրցույթի հետ կապված ցանկացած փոխազդեցություններ կամ տեղեկությունների փոխանակում, ինչպես օրինակ՝ հետաքրքրության հայտերի և (կամ) հայտերի վերաբերյալ հարցումը):

27.10. **Իրավունքից հրաժարումը**

27.10.1. Սույն Պայմանագրի ոչ մի դրույթ կամ սույն Պայմանագրով շնորհված որևէ իրավունք չի համարվում Կողմերից որևէ մեկի կողմից հրաժարված՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հրաժարումն ուղղակիորեն տրվում է գրավոր: Ժամանակի առումով ոչ մի զիջում կամ Կողմերից որևէ մեկի կողմից սույն Պայմանագրի դրույթներից որևէ մեկի ճշգրիտ կատարումը չպնդելը կամ

սույն Պայմանագրով նախատեսված իր իրավունքներից որևէ մեկից չօգտվելը չի մեկնաբանվում որպես այդ դրույթներից հրաժարում կամ հետագայում ցանկացած այդպիսի իրավունքներից հրաժարում:

27.11. **Հաշվանցում Հանրային գործընկերոջ կողմից**

27.11.1. Կիրառելի իրավունքի համաձայն՝ Կողմերն իրավունք ունեն հաշվանցելու իրենց կողմից վճարման ենթակա վճարումները կամ սույն Պայմանագրի համաձայն վճարման ենթակա ցանկացած այլ գումար, որը պետք է վճարվի մի Կողմի կողմից՝ հօգուտ մյուս Կողմի, և հակառակը՝ որպես նույն տեսակի հակընդդեմ պահանջների հաշվանցում՝ հիմնվելով ուժի մեջ մտած արբիտրաժային որոշման վրա, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

27.12. **Կորուստները կամ վնասները մեղմացնելու պարտականությունը**

27.12.1. Յուրաքանչյուր Կողմ առևտրային տեսանկյունից ողջամիտ ջանքեր է գործադրում՝ մեղմելու ցանկացած կորուստ կամ վնաս, որի համար նա, սույն Պայմանագրի համաձայն, իրավունք ունի փոխհատուցում ստանալու: Եթե Կողմը չի մեղմացնում փոխհատուցման ենթակա կորուստը կամ վնասը, ապա մյուս Կողմը պատասխանատվություն չի կրում այդ կորստի կամ վնասի որևէ մասի համար, որից հնարավոր կլիներ ողջամտորեն խուսափել, եթե համապատասխան Կողմը նման ջանքեր գործադրեր:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ սույն Պայմանագրի Կողմերն ապահովել են, որ սույն Պայմանագիրը կնքվի իրենց պատշաճ լիազորված ներկայացուցիչների կողմից՝ վերևում առաջին նշված ամսաթվի դրությամբ:

Ստորագրված է [.....] [.....] 20[.....]-ին [.....]-ում, ([.....]) բնօրինակից:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից՝ [Լրիվ անունը] [Պաշտոնը]	

Մասնավոր գործընկերոջ կողմից՝ [Լրիվ անունը] [Պաշտոնը]	

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈԽԱՆՑՎՈՂ ԱԿՏԻՎՆԵՐԸ

1. **Անհատականացման կենտրոնը**

Հասցե՝ ՀՀ, Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, Անաստաս Միկոյան փ. 109/8 (երրորդ մասնաշենք), 0054

Ներկա սեփականատեր՝ պետություն, ներկայացված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից

Պարտադիր բնութագրեր՝ Տեխնիկական պահանջների 2.2.3 բաժնի 9-րդ պահանջի համաձայն.

ա) Բավարար տարածք՝ սարքավորումները տեղադրելու և գործառնություններ կատարելու համար

բ) Էլեկտրահաղորդագծեր - զրահապատ դռներ

գ) Պատուհանների ճաղավանդակներ

դ) Մշտական լուսավորություն

ե) Ազդանշանային համակարգ՝ կապված ոստիկանական ամենամոտ բաժանմունքի հետ

2. **Տվյալների կենտրոն**

Հասցե՝ ՀՀ, Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, Անաստաս Միկոյան փ. 109/8 (երրորդ մասնաշենք), 0054

Ներկա սեփականատեր՝ պետություն, ներկայացված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից

Պարտադիր բնութագրեր՝ Տեխնիկական պահանջների 2.2.4 բաժնի 19-րդ պահանջի համաձայն.

ա) Բավարար տարածք՝ սարքավորումները տեղադրելու և գործառնություններ կատարելու համար

բ) Էլեկտրահաղորդագծեր — զրահապատ դռներ

գ) Պատուհանների ճաղավանդակներ

դ) Մշտական լուսավորություն

ե) Ազդանշանային համակարգ՝ կապված ոստիկանական ամենամոտ բաժանմունքի հետ

3. **Վթարային վերականգնման հանգույց**

Հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջան, Մաքսիմ Գորկի փ. 29/6 շ

Պարտադիր բնութագրեր՝ Տեխնիկական պահանջների 2.2.4 բաժնի 19-րդ պահանջի համաձայն.

ա) Բավարար տարածք՝ սարքավորումները տեղադրելու և գործառնություններ կատարելու համար

բ) Էլեկտրահաղորդագծեր — զրահապատ դռներ

գ) Պատուհանների ճաղավանդակներ

դ) Մշտական լուսավորություն

ե) Ազդանշանային համակարգ՝ կապված ոստիկանական ամենամոտ բաժանմունքի հետ

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՆԵՐԸ

Ենթակա է ավելացման Հաղթողի հայտից

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ներառված է հղումով որպես Տեխնիկական պահանջների վերջնական տարբերակ, որը հասանելի է հետևյալ հասցեով հղումը կավելացվի

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ

Ներառված է հղումով որպես ՊՄԳ Ծրագրի նախագծի XX Հավելված, որը հասանելի է հետևյալ հասցեով. հղումը կավելացվի

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԱՊԱՀՈՎՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ապահովումը անկախ, անվերապահ և անվերադարձ ցպահանջ բանկային երաշխիք է, որը վճարվում է Հանրային գործընկերոջն իր առաջին պահանջով: Ապահովումը տրամադրվում է երաշխավորագրի և Գործառնությունների ապահովման համապատասխան համաձայնագրի և Հետփոխանցման ապահովման համապատասխան համաձայնագրի ձևով: Երաշխիքը պարունակում է՝

1) բանկի լրիվ անվանումը և գրանցման տվյալները.

2) սույն Հավելված 5-ի (*Ապահովումներին ներկայացվող պահանջներ*) համապատասխան մասում սահմանված ապահովման գումարը՝ հաշվի առնելով Պայմանագրի 9-րդ բաժնի պահանջները.

3) Հանրային գործընկերոջ պահանջով և հօգուտ նրա ապահովման գումարը վճարելու բանկի պարտավորությունը.

4) հաստատում բանկից, որ վերջինս Հուսալի բանկ է՝ ըստ Հավելված 6-ի (*Հուսալի բանկերին ներկայացվող պահանջներ*): Որպես այլընտրանք՝ Մասնավոր գործընկերը կարող է տրամադրել այլ փաստաթղթեր, որոնցով հաստատվում է, որ երաշխիք տրամադրող բանկը Հուսալի բանկ է.

5) ապահովման վավերականության ժամկետը՝ համաձայն սույն Պայմանագրի 9-րդ բաժնի.

6) ապահովման տրամադրման ամսաթիվը, բանկի կողմից լիազորված անձի լրիվ անունը և ստորագրությունը:

Բանկային երաշխավորագրերի օրինակելի ձևերը ներկայացված են ստորև: Այս օրինակելի ձևերը պարտադիր չեն և կարող են օգտագործվել որպես ցուցիչային նմուշներ՝ որպես համապատասխան ապահովման մաս բանկային երաշխավորագիր տրամադրելու համար: Գործառնությունների ապահովումը և Հետփոխանցման ապահովումը պետք է ամեն դեպքում համապատասխանեն սույն Հավելված 5-ում (*Ապահովումներին ներկայացվող պահանջները*) սահմանված՝ Երաշխիքների ձևերին ներկայացվող պահանջներին՝ պահպանելով Պայմանագրի 9-րդ բաժնի պահանջները:

ՄԱՍ 1. ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

[ՁԵՎԱՆՄՈՒՇ]

Երաշխավորագիր

Ամսաթիվ _____

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը (**Հանրային գործընկեր**) և [մուտքագրել անունը] (**Մասնավոր գործընկեր**), Հայաստանի Հանրապետությունում Անձը հաստատող փաստաթղթերի թողարկման ու տրամադրման և Անձը հաստատող փաստաթղթեր տրամադրելու համար օգտագործվող միջոցների շահագործման ու սպասարկման վերաբերյալ ՊՄԳ ծրագրի (**Ծրագիր**) իրականացման համար անցկացված ՊՄԳ մրցույթի արդյունքների համաձայն, [մուտքագրել ամսաթիվը]-ին կնքել են ՊՄԳ պայմանագիր (**Պայմանագիր**):

Պայմանագրի 9.2-րդ կետով պահանջվում է, որ Մասնավոր գործընկերը ոչ ուշ, քան ՆՊ-ների կատարման օրը տրամադրի Հուսալի բանկից անվերապահ և անվերադարձ ցպահանջ բանկային երաշխիք [մուտքագրել գումարի չափը] դրամի չափով (**Երաշխավորված գումար**)՝ որպես Ծրագրի իրականացման ժամանակահատվածում իր պարտավորությունների պատշաճ և բարեխիղճ իրականացման ապահովում՝ Պայմանագրին համապատասխան:

Վերոնշյալի կապակցությամբ մենք՝ [Բանկի անունը], հանդիսանալով իրավաբանական անձ՝ [երկրի անվանումը]-ի օրենսդրության համաձայն, գտնվելով [մուտքագրել հասցեն] հասցեում, [անհրաժեշտության դեպքում մուտքագրել գրանցման այլ համապատասխան տվյալներ] (**Բանկ**), սույնով անվերապահորեն և անվերադարձ պարտավորվում ենք Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (**Հանրային գործընկեր**) պահանջով վճարել [մուտքագրել գումարի չափը] դրամի չափով գումար (**Գործառնությունների ապահովում**)՝ հետևյալ պայմաններին համապատասխան.

1) Մենք հաստատում ենք, որ մեր բանկը Հուսալի բանկ է՝ ըստ Պայմանագրի:

2) Պաշտոնական գրավոր պահանջ ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում և անկախ Մասնավոր գործընկերոջ կամ ցանկացած այլ անձի կողմից որևէ առարկությունից՝ մենք Հանրային գործընկերոջը վճարում ենք Գործառնությունների ապահովման (դրա մասի)՝ վերջինիս առնչությամբ վերոնշյալ գումարը չգերազանցող ընդհանուր այնպիսի գումար կամ գումարներ, որ Հանրային գործընկերը կարող է պահանջել՝ փոխանցելով Հանրային գործընկերոջ հետևյալ հաշվին՝ [տվյալներ հաշվի վերաբերյալ]:

3) Հանրային գործընկերոջ պահանջի հիման վրա կատարված բոլոր վճարումներն ամբողջությամբ ազատված են ցանկացած հարկի, տուրքի վճարման համար ցանկացած ընթացիկ կամ հետագա պահումից կամ ցանկացած բնույթի պահումից և առանց դրանց են:

4) Գործառնությունների այս ապահովման մեջ պարունակվող պարտավորությունները Բանկի ուղղակի և հիմնարար պարտականություններն են և անվերապահ ու անվերադարձ են: Մենք չենք ազատվում այս պարտականություններից որևէ մեկից կամ բոլորից՝ որևէ պատճառով կամ պատճառներով, ինչ բնույթի կամ աղբյուրից էլ դրանք լինեն, կամ Հանրային գործընկերոջ կամ երրորդ կողմի կողմից որևէ բացթողման, գործողության կամ

արարքի պատճառով, որը կարող էր ազատել մեզ այս Գործառնությունների ապահովման մեջ նշված պարտականություններից:

5) Գործառնությունների այս ապահովումը շարունակում է ամբողջությամբ մնալ ուժի մեջ՝ սկսած դրա տրամադրման օրվանից մինչև Հետփոխանցման ապահովման տրամադրումը Հանրային գործընկերոջը կամ մինչև որևէ պատճառով Պայմանագրի դադարեցումը՝ բացառությամբ Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպքի առաջացման (**Դադարման ժամկետ**):

6) Գործառնությունների այս ապահովումը կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն, և այս երաշխիքի հետ կապված ցանկացած վեճ քննվում և վերջնականապես լուծվում է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Բանկի երաշխավորագրի (Գործառնությունների ապահովման համաձայնագրի) օրինակը պետք է ավելացնել:

Հարգանքով՝

[ստորագրություն]

[լիազորված անձի անունը, պաշտոնը]

ՄԱՍ 2. ՀԵՏՓՈԽԱՆՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

[ՁԵՎԱՆՄՈՒՇ]

Երաշխավորագիր

Ամսաթիվ _____

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը (**Հանրային գործընկեր**) և [մուտքագրել անունը] (**Մասնավոր գործընկեր**), Հայաստանի Հանրապետությունում Անձը հաստատող փաստաթղթերի թողարկման ու տրամադրման և Անձը հաստատող փաստաթղթեր տրամադրելու համար օգտագործվող միջոցների շահագործման ու սպասարկման վերաբերյալ ՊՄԳ ծրագրի (**Ծրագիր**) իրականացման համար անցկացված ՊՄԳ մրցույթի արդյունքների համաձայն, [մուտքագրել ամսաթիվը]-ին կնքել են ՊՄԳ պայմանագիր (**Պայմանագիր**):

Պայմանագրի 9.3-րդ կետով պահանջվում է, որ Մասնավոր գործընկերը տրամադրի Հուսալի բանկից անվերապահ և անվերադարձ ցպահանջ բանկային երաշխիք Անկախ փորձագետի զեկույցում նշված դրամի չափով (**Երաշխավորված գումար**)՝ որպես հետ փոխանցման իր պարտավորությունների պատշաճ և բարեխիղճ իրականացման ապահովում՝ Պայմանագրին համապատասխան:

Վերոնշյալի կապակցությամբ մենք՝ [Բանկի անունը], հանդիսանալով իրավաբանական անձ՝ [երկրի անվանումը]-ի օրենսդրության համաձայն, գտնվելով [մուտքագրել հասցեն] հասցեում, [անհրաժեշտության դեպքում մուտքագրել գրանցման այլ համապատասխան տվյալներ] (**Բանկ**), սույնով անվերապահորեն և անվերադարձ պարտավորվում ենք Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (**Հանրային գործընկեր**) պահանջով վճարել Անկախ փորձագետի զեկույցում նշված [մուտքագրել գումարի չափը] դրամի չափով գումար (**Հետփոխանցման ապահովում**)՝ հետևյալ պայմաններին համապատասխան.

1. Մենք հաստատում ենք, որ մեր բանկը Հուսալի բանկ է՝ ըստ Պայմանագրի:
2. Պաշտոնական գրավոր պահանջ ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում և անկախ Մասնավոր գործընկերոջ կամ ցանկացած այլ կողմի կողմից որևէ առարկությունից՝ մենք Հանրային գործընկերոջը վճարում ենք Հետփոխանցման ապահովման (դրա մասի)՝ վերջինիս առնչությամբ վերոնշյալ գումարը չգերազանցող ընդհանուր այնպիսի գումար կամ գումարներ, որ Հանրային գործընկերը կարող է պահանջել՝ փոխանցելով Հանրային գործընկերոջ հետևյալ հաշվին՝ [տվյալներ հաշվի վերաբերյալ]:
3. Հանրային գործընկերոջ պահանջի հիման վրա կատարված բոլոր վճարումներն ամբողջությամբ ազատված են ցանկացած հարկի, տուրքի վճարման համար ցանկացած ընթացիկ կամ հետագա պահումից կամ ցանկացած բնույթի պահումից և առանց դրանց են:
4. Հետփոխանցման այս ապահովման մեջ պարունակվող պարտավորությունները Բանկի ուղղակի և հիմնարար պարտականություններն են և անվերապահ ու անվերադարձ են: Մենք չենք ազատվում այս պարտականություններից որևէ մեկից կամ բոլորից՝ որևէ

պատճառով կամ պատճառներով, ինչ բնույթի կամ աղբյուրից էլ դրանք լինեն, կամ Հանրային գործընկերոջ կամ երրորդ կողմի կողմից որևէ բացթողման, գործողության կամ արարքի պատճառով, որը կարող էր ազատել մեզ Հետփոխանցման այս ապահովման մեջ նշված պարտականություններից:

5. Հետփոխանցման այս ապահովումը շարունակում է ամբողջությամբ մնալ ուժի մեջ՝ սկսած դրա տրամադրման օրվանից մինչև Հետփոխանցման ակտի ստորագրման օրվան հաջորդող 30 (երեսուն) օրը լրանալը (**Դադարման ժամկետ**):
6. Հետփոխանցման այս ապահովումը կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն, և այս ապահովման հետ կապված ցանկացած վեճ քննվում և վերջնականապես լուծվում է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Բանկի երաշխավորագրի (Հետփոխանցման ապահովման համաձայնագրի) օրինակը պետք է ավելացնել:

Հարգանքով՝

[ստորագրություն]

[լիազորված անձի անունը, պաշտոնը]

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀՈՒՍԱԼԻ ԲԱՆԿԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Սույն պայմանագրի նպատակներով Հուսալի բանկ է՝

● ցանկացած ռեզիդենտ բանկ, որը համապատասխանում է հետևյալ պայմաններից որևէ մեկին.

i. բանկը օտարերկրյա բանկային խմբի անդամ է, կամ.

ii. բանկը սույն Համաձայնագրի ստորագրման պահին ունի Հայաստանի Հանրապետության սուվերեն (-) վարկանիշից ոչ ցածր վարկանիշ, և

● ցանկացած ոչ ռեզիդենտ բանկ, որն ունի A-(ըստ «Standard» և «Poor» կամ «Fitch» վարկանիշների) կամ A3 (ըստ «Moody»-ի վարկանիշի) վարկանիշից ոչ ցածր վարկանիշ:

Ներքոնշյալներից ոչ մեկը չի որակավորվում որպես Հուսալի բանկ.

ա) ցանկացած բանկ, որը ենթակա է (կամ բանկի նկատմամբ Հսկողություն ունեցող ցանկացած անձ, որը ենթակա է) ՊՄԳ Ընթացակարգի 47-րդ պարբերությամբ նախատեսված սահմանափակումներին.

բ) ցանկացած բանկ, որը ենթակա է (կամ բանկի նկատմամբ Հսկողություն ունեցող ցանկացած անձ, որը ենթակա է) պատժամիջոցների՝ Կիրառելի իրավունքի կամ միջազգային իրավունքի համաձայն.

գ) ցանկացած ռեզիդենտ բանկ, որը նախորդ 12 ամիսների ընթացքում խախտել է Հայաստանի կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջները՝ կապված կապիտալի համարժեքության հարաբերակցության հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ԲԱԺՆԵՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բաժնետիրոջ անունը	Բաժնեմասը կանոնադրական կապիտալում (%-ով/բաժնեմասը հայկական դրամով (միայն Մասնավոր գործընկերոջ համար)	Անձի անունը

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հանրային գործընկերը, սույն Պայմանագրի 18-րդ բաժնին համապատասխան, Պայմանագրի Դադարեցման դիմաց փոխհատուցում է վճարում Մասնավոր գործընկերոջը, որը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Պայմանագրի Դադարեցման դիմաց փոխհատուցման գումար

=

Նախնական արժեք + Լրացուցիչ ծախսեր + Փոխհատուցվող Բաժնեմասնակցություն - Հատուկ նվազեցումներ – Հանրային գործընկերոջ վճարներ,

սակայն ամեն դեպքում 0-ից ոչ պակաս,

որտեղ՝

Նախնական արժեքը, Լրացուցիչ ծախսերը, Փոխհատուցվող Բաժնեմասնակցությունը և **Հատուկ նվազեցումները** հաշվարկվում են՝ ելնելով ստորև ներկայացված աղյուսակում սահմանված Պայմանագրի Դադարեցման հանգամանքներից.

Պայմանագրի Դադարեցման հանգամանքները	Նախնական արժեքը	Լրացուցիչ ծախսերը	Փոխհատուցվող Բաժնեմասնակցությունը	Հատուկ նվազեցումները
Պայմանագրի Դադարեցումը՝ կապված 14.3.6 կետով նախատեսված Անհաղթահարելի ուժի հետ, կամ Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ 18.1.1 կետին համապատասխան	Փոխհատուցվող պարտքը	Վաղաժամկետ մարման հետ կապված Ծախսերը	50% x (Ֆիքսված ճշգրտված զուտ սեփական կապիտալ (կիրառվում է Հայաստանի Հանրապետության կարճաժամկետ գանձապետական արժեթղթերի չափի ճշգրտման գործակից՝ գումարած տարեկան 6%), - Հանրային գործընկերոջ կողմից վաղաժամկետ մարման հետ կապված կորուստներ - Հանրային գործընկերոջ վճարներ), սակայն ամեն դեպքում 0-ից ոչ պակաս	Ապահովագրության գումար + Անհամապատասխան/ ոչ անհրաժեշտ ակտիվների արժեքը
Պայմանագրի Դադարեցումը՝ կապված Մասնավոր գործընկերոջ կողմից պարտազանցման դեպքի հետ՝ համաձայն 15.1 կետի	Փոխհատուցված պարտքը	Վաղաժամկետ մարման հետ կապված Ծախսերը	(Ֆիքսված ճշգրտված զուտ սեփական կապիտալ (կիրառվում է Հայաստանի Հանրապետության կարճաժամկետ գանձապետական արժեթղթերի չափի ճշգրտման գործակից՝ գումարած տարեկան 6%), - Հանրային գործընկերոջ կողմից վաղաժամկետ մարման հետ կապված կորուստներ - Հանրային գործընկերոջ վճարներ), սակայն ամեն դեպքում 0-ից ոչ ավելի	Ապահովագրության գումար + Անհամապատասխան/ ոչ անհրաժեշտ ակտիվների արժեքը
Պայմանագրի Դադարեցումը՝ կապված	Փոխհատուցված	Վաղաժամկետ մարման	(Ֆիքսված ճշգրտված զուտ սեփական կապիտալ (կիրառվում է Հայաստանի Հանրապետության	Ապահովագրության

Պայմանագրի Դադարեցման հանգամանքները	Նախնական արժեքը	Լրացուցիչ ծախսերը	Փոխհատուցվող Բաժնեմասնակցությունը	Հատուկ նվազեցումները
Հանրային գործընկերոջ կողմից պարտազանցման դեպքի հետ՝ համաձայն 15.2 կետի, կամ Հանրային քաղաքականության պատճառներով Պայմանագրի դադարեցում Հանրային գործընկերոջ կողմից՝ համաձայն 17.2.2.3 կետի, կամ Քաղաքական Անհաղթահարելի ուժի ազդեցության Պայմանագրի դադարեցում Մասնավոր գործընկերոջ կողմից՝ համաձայն 14.6 կետի	պարտքը	հետ կապված Ծախսերը	կարճաժամկետ գանձապետական արժեթղթերի չափի ճշգրտման գործակից՝ գումարած տարեկան 6%), - Հանրային գործընկերոջ կողմից վաղաժամկետ մարման հետ կապված կորուստներ), սակայն ամեն դեպքում 0-ից ոչ պակաս	գումար + Անհամապատասխան/ ոչ անհրաժեշտ ակտիվների արժեքը

Վերոնշյալ աղյուսակի նպատակներով՝

«Փոխհատուցվող պարտք» նշանակում է Ֆինանսավորման փաստաթղթերով Մասնավոր գործընկերոջ կողմից Վարկատուներին չվճարված պարտքին հավասար գումար (ներառյալ՝ կուտակված տոկոսը), որից հանվում է հետևյալը.

ա) ցանկացած գումար, որի չափով Պայմանագրի դադարեցման ամսաթվի դրությամբ Մասնավոր գործընկերը գերազանցում է պարտքի հարաբերակցությունը սեփական կապիտալի նկատմամբ (ինչպես սահմանված է Ֆինանսավորման փաստաթղթերում).

բ) Զուտ շրջանառու կապիտալ — ընթացիկ ակտիվների (ներառյալ՝ բաժնետոմսերը, դրամական միջոցները, դրանց համարժեքները և արժեթղթերը, դեբիտորական պարտքերը) և ընթացիկ պարտավորությունների (ներառյալ՝ կրեդիտորական պարտքերը, կարճաժամկետ վարկերը, ընթացիկ երաշխիքները) տարբերություն, սակայն ամեն դեպքում 0-ից ոչ պակաս, և

գ) ցանկացած գումար, որն անխոհեմաբար Մասնավոր գործընկերոջ կողմից փոխանցվել է որևէ երրորդ կողմի, և

դ) վաղաժամկետ մարման հետ կապված ցանկացած Ծախս:

«Վաղաժամկետ մարման հետ կապված Ծախսեր» նշանակում է Ֆինանսական փաստաթղթերի համաձայն Վարկատուների կողմից կատարված ցանկացած ծախս՝ կապված (i) հեջի վաղաժամկետ փակման (բացառությամբ արժույթների հեջավորման) և (ii) սույն Պայմանագրի դադարեցման հետևանքով առաջացած վաղաժամկետ մարման հետ՝ Փոխհատուցվող պարտքի հինգ տոկոսը (5%) չգերազանցող գումարի չափով:

«Հանրային գործընկերոջ վճարներ» նշանակում է վճարման ենթակա ցանկացած գումար (տուգանքներ, տույժեր, փոխհատուցումներ), հատուցում և ցանկացած այլ դրամային պարտավորություն, որը սույն պայմանագրի համաձայն Մասնավոր գործընկերոջ կողմից վճարվում է հօգուտ Հանրային գործընկերոջ:

«Ճշգրտված հաստատուն զուտ սեփական կապիտալը» հաշվարկվում է հետևյալ կերպ.

Ճշգրտված հաստատուն զուտ սեփական կապիտալ =

$$=\sum_{i=1}^{n} \left[Net\ Equity\ Contribution_i\ x\ \prod_{j=i+1}^{n} \left(1+r_j\right)\right],$$

որտեղ՝

i –ը՝ 6 ամսյա ժամանակահատվածի հերթական համարը.

n-ը՝ 6-ամսյա ժամանակաշրջանների քանակը (յուրաքանչյուրը՝ **Ժամանակաշրջան**) Մեկնարկի օրվանից մինչև Պայմանագրի Դադարեցման ամսաթիվը՝ պայմանով, որ վերջին ժամանակաշրջանը կարող է լինել 6 ամսից պակաս.

j-ն՝ 6 ամսյա ժամանակաշրջանի հերթական համարը.

r_j-ը՝ համապատասխան ճշգրտման դրույքը, ինչպես ներկայացված է վերևում նշված աղյուսակում՝ հաշվարկված հետևյալ կերպ (Հայաստանի գանձապետական կարճաժամկետ արժեթղթերի միջին զեղչային տոկոսադրույքը համապատասխան 6 ամսվա ընթացքում + տարեկան 6%) / 2՝ բացառությամբ վերջին n կիսամյակի ճշգրտման գործակցի, որը

հաշվարկվում է հետևյալ կերպ.

r_n = (Հայաստանի կարճաժամկետ գանձապետական արժեթղթերի միջին զեղչման տոկոսադրույքը 6-ամսյա ժամանակահատվածում + տարեկան 6%) x (d/365),

որտեղ d-ն օրերի քանակն է վերջին «j» ժամանակահատվածում:

«Զուտ սեփական կապիտալում կատարվող ներդրումներ$_i$» = Սեփական կապիտալում կատարվող ներդրումներ$_i$ – Սեփական կապիտալի բաշխում$_i$.

«Սեփական կապիտալում կատարվող ներդրումներ$_i$» նշանակում է սեփական կապիտալում կատարվող ցանկացած ներդրում Մասնավոր գործընկերոջ բաժնետիրոջ կողմից կամ ցանկացած ֆինանսական աջակցություն, փոխառություն կամ ներդրում Մասնավոր գործընկերոջ բաժնետիրոջ կողմից պարտքային որևէ գործիքի միջոցով 6-ամսյա ***i*** ժամանակաշրջանում.

«Սեփական կապիտալի բաշխում$_i$» նշանակում է Սեփական կապիտալում ցանկացած ներդրում կամ դրա մի մասը ցանկացած ***i*** ժամանակաշրջանում, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն մարվել կամ վճարվել է Մասնավոր գործընկերոջ բաժնետիրոջը (բաժնետերերին) ցանկացած եղանակով, այդ թվում՝ (i) Մասնավոր գործընկերոջ կողմից իր բաժնետիրոջը (բաժնետերերին) վճարված ցանկացած շահաբաժին կամ այլ վճար Սեփական կապիտալում ցանկացած ներդրման համար, (ii) Մասնավոր գործընկերոջ կողմից Սեփական կապիտալում ցանկացած ներդրման համար բաժնետիրոջը (բաժնետերերին) որպես տոկոս, վարձատրություն կամ բոնուս վճարված ցանկացած գումար, (iii) Մասնավոր գործընկերոջ կողմից իր բաժնետիրոջը (բաժնետերերին) որպես տոկոս, մայր գումար կամ կուտակված եկամուտ վճարված ցանկացած գումար կամ ցանկացած այլ վճարում ֆինանսական օգնության, փոխառության կամ պարտքային այլ գործիքի շրջանակներում :

«Հանրային գործընկերոջ կողմից վաղաժամկետ մարման հետ կապված կորուստներ» նշանակում է սույն Պայմանագրի Դադարեցմամբ պայմանավորված Հանրային գործընկերոջ կողմից կրած կորուստներ կամ տուգանքներ՝ կապված վաղաժամկետ մարման հետ.

«Ապահովագրության գումար» նշանակում է հետևյալի ընդհանուր գումարը.

ա) ապահովագրական ցանկացած հատուցում, որը վճարվել է կամ ենթակա է վճարման՝ կապված Մասնավոր գործընկերոջ կողմից սույն պայմանագրի համաձայն տրամադրված ցանկացած ապահովագրության հետ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համաձայն 11-րդ բաժնի՝ այդ փոխհատուցման գումարը վճարվել է Հանրային գործընկերոջը, սակայն չի փոխանցվել Մասնավոր գործընկերոջը, և

բ) ցանկացած ապահովագրական գումար, որը կվճարվեր Մասնավոր գործընկերոջը, եթե Մասնավոր գործընկերը, 11-րդ բաժնին համապատասխան, ձեռք բերեր կամ պահպաներ համապատասխան ապահովագրությունը, սակայն չի արել դա:

«Անհամապատասխան/ոչ անհրաժեշտ ակտիվների արժեք» նշանակում է հետևյալ դրական արժեքների ընդհանուր գումարը.

ա) Հանրային գործընկերոջ կողմից իր հայեցողությամբ որպես ոչ անհրաժեշտ ճանաչված շարժական ակտիվների համար՝ ըստ 20.4 կետի՝ այդ ակտիվների շուկայական արժեքը, որը որոշվում է անկախ գնահատման ընթացակարգի հիման վրա.

բ) շարժական ակտիվների համար, որոնց առնչությամբ Հանրային գործընկերը 26.2

կետով նախատեսված արբիտրաժի ընթացքում ապացուցել է, որ դրանք կապված չեն Ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունների հետ՝ կապիտալ ծախսեր (ներդրումներ)՝ կապված այդ ակտիվների հետ՝ ճշգրտված համապատասխան ճշգրտման գործակցով, որը որոշվում է Ճշգրտված հաստատուն զուտ կապիտալի համար նախատեսված մեթոդաբանությամբ: Այս դեպքում Հանրային գործընկերը պարտավոր է հիմնավորել և ապացուցել, որ այդ ակտիվները չեն վերաբերում Ծրագրի շրջանակներում իրականացվող գործողություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Սույն Պայմանագրում, եթե համատեքստը այլ բան չի պահանջում, ներքոհիշյալ մեծատառ եզրույթները, արտահայտությունները և հապավումները ունեն հետևյալ նշանակությունը.

Ճշգրտված գներ	նշանակում է ընթացիկ Գործառնական տարվա ընթացքում յուրաքանչյուր Անձը հաստատող փաստաթղթի համար Մասնավոր գործընկերոջը վճարվելիք գներ, որոնք գերազանցում են Տեխնիկական պահանջների Հավելված 3-ում նշված հաշվարկված ծավալները:
Տուժող կողմ՝	ունի 14.1.1կետում տրված իմաստը:
Փոխկապակցված անձ՝	նշանակում է անձ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն, մեկ կամ մի քանի միջնորդների միջոցով գտնվում է մեկ այլ անձի Հսկողության ներքո , իրականացնում է Հսկողություն այդ անձի նկատմամբ կամ գտնվում է այդ անձի հետ ընդհանուր Հսկողության ներքո:
Պայմանագիր՝	նշանակում է Ծրագրի իրականացման համար Կողմերի միջև կնքված սույն պետական-մասնավոր գործընկերության պայմանագիրը, ներառյալ՝ դրա նախաբանը և բոլոր հավելվածները (որոնք կազմում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը):
Հայտարարություն՝	ունի Պայմանագրի 2-րդ էջում տրված իմաստը:
Տարեկան ճշգրտման վճարումներ՝	ունի 12.4.1 կետում տրված իմաստը:
Կիրառելի իրավունք՝	նշանակում է Հայաստանի օրենսդրությունը, այդ թվում՝ Հայաստանի Սահմանադրությունը, օրենքները, հրամանագրերը, որոշումները կամ կանոնակարգերը, ինչպես նաև Հայաստանում գործող այլ ձևի օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը, ներառյալ՝ միջազգային պայմանագրերը:
Դիմումատու՝	ունի Որակավորման հարցմամբ տրված իմաստը:
Արբիտրաժային կանոններ՝	ունի 26.2.2 կետում տրված իմաստը:
Հայաստան՝	նշանակում է Հայաստանի Հանրապետություն:
Բազային գներ	նշանակում է գներ, որոնք պետք է վճարվեն Մասնավոր գործընկերոջը յուրաքանչյուր Անձը հաստատող փաստաթղթի համար ընթացիկ Գործառնական տարվա ընթացքում՝ մինչև

	Տեխնիկական պահանջների Հավելված 3-ում նշված հաշվարկված ծավալների հասնելը:
Հայտ՝	նշանակում է Հաղթողի կողմից ԱՆՀ-ին համապատասխան ներկայացված փաստաթղթերի փաթեթը:
Աշխատանքային օր՝	նշանակում է օր, երբ Հայաստանում բանկերը բաց են գործառնություններ իրականացնելու համար, և որը շաբաթ կամ կիրակի, կամ ըստ Կիրառելի իրավունքի պետական տոն կամ ոչ աշխատանքային օր չէ:
Հսկողության փոփոխություն՝	նշանակում է ցանկացած գործողություն, որը հանգեցնում է մեկ անձի կողմից Հսկողությունը կորցնելուն և (կամ) օտարողի հետ Փոխկապակցված անձ չհանդիսացող մեկ այլ անձի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն Հսկողություն ձեռք բերելուն, ներառյալ՝ այնպիսի գործարքների իրականացմամբ, որոնք կարող են հանգեցնել Հսկողության փոփոխության:
Արժույթի փոփոխություն՝	ունի 27.3 կետում տրված իմաստը:
Փոփոխման պահանջ՝	ունի 10.9.1 կետում տրված իմաստը:
Փակում՝	նշանակում է 7.10.1 կետում նշված գործողությունները, որ Կողմերը պետք է ավարտեն Փակման ժամանակահատվածում:
Փակման օր՝	ունի 7.10.7 կետում տրված իմաստը:
Փակման ժամանակահատված՝	նշանակում է 7.10.2 կետով սահմանված Փակման համար անհրաժեշտ փաթեթի ավարտի ժամկետը:
Մեկնարկի օր՝	նշանակում է Փակման օրվան հաջորդող ամսաթիվը:
Փոխհատուցվող պարտք՝	ունի Հավելված 8-ում (*Դադարեցման դիմաց փոխհատուցումը հաշվարկելու ընթացակարգը*) տրված իմաստը:
Նախապայմաններ (ՆՊ)՝	ունի 7.3.1 կետում տրված իմաստը:
Կապալառու՝	ունի 10.5.6 կետում տրված իմաստը:
Հսկողություն՝	նշանակում է որոշիչ ազդեցություն տնտեսավարող սուբյեկտի կամ նրա մասի ձեռնարկատիրական գործունեության վրա, որն իրականացվում է մեկ կամ մի քանի փոխկապակցված իրավաբանական անձանց և (կամ) անհատների կողմից ուղղակիորեն կամ այլ անձանց միջոցով, մասնավորապես՝

	հետևյալ կերպ. բոլոր ակտիվները կամ դրանց զգալի մասը տիրապետելու կամ օգտագործելու իրավունքով, տնտեսավարող սուբյեկտի կառավարման մարմինների կազմի, քվեարկության արդյունքների և որոշումների վրա վճռական ազդեցություն ապահովող իրավունքով, այնպիսի համաձայնագրերի և պայմանագրերի կատարմամբ, որոնք հնարավորություն են տալիս սահմանել ձեռնարկատիրական գործունեության պայմանները, տալ պարտադիր ցուցումներ կամ կատարել տնտեսավարող սուբյեկտի կառավարման մարմնի գործառույթներ, զբաղեցնելով տնտեսավարող սուբյեկտի դիտորդ խորհրդի, տնօրենների խորհրդի կամ այլ դիտորդ կամ գործադիր մարմնի ղեկավարի կամ ղեկավարի տեղակալի պաշտոնն այն անձի կողմից, որն այլ տնտեսավարող սուբյեկտներում զբաղեցնում է վերոնշյալ պաշտոններից մեկը կամ մի քանիսը, զբաղեցնելով տնտեսավարող սուբյեկտի դիտորդ խորհրդի, տնօրենների խորհրդի, այլ դիտորդ կամ գործադիր մարմինների անդամների պաշտոնների կեսից ավելին այն անձանց կողմից, որոնք մեկ այլ տնտեսավարող սուբյեկտում զբաղեցնում են վերոնշյալ պաշտոններից մեկը կամ մի քանիսը: «Հսկողության» սույն սահմանման նպատակներով փոխկապակցված են համարվում այն իրավաբանական անձինք և (կամ) անհատները, որոնք համատեղ կամ համաձայնեցված կերպով իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն, ներառյալ՝ նրանք, ովքեր համատեղ կամ համաձայնեցված կերպով ազդում են տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեության վրա: Փոխկապակցված անձանց թվում են, ի թիվս այլոց, ամուսինները, ծնողները և երեխաները, եղբայրները և (կամ) քույրերը: «Հսկողություն իրականացնել» եզրույթը մեկնաբանվում է համապատասխան կերպով:
ՆՊ-ների կատարման օր՝	ունի 7.4.6 կետում տրված իմաստը:
Պահանջարկի երաշխիք՝	ունի 12.3.1 կետում տրված իմաստը:
Պահանջարկի երաշխիքի հետ կապված վճարումներ՝	ունի 12.3.3 կետում տրված իմաստը:
Պահանջարկի երաշխիքի վճարումների օր՝	ունի 12.3.7 կետում տրված իմաստը:
Նախագծային փաստաթղթեր՝	ունի 7.8.1 կետում տրված իմաստը:

Ուղիղ պայմանագիր՝	ունի 7.6 կետում տրված իմաստը:
Բացահայտված տեղեկություններ՝	ունի 8.1 կետում տրված իմաստը:
Վեճ՝	ունի 26.1.1 կետում տրված իմաստը:
Բաժնեմասնակցություն՝	նշանակում է կապիտալի մի մասի (ներառյալ՝ բաժնետոմսերը կապիտալում, բաժնեմասերը կոոպերատիվներում և ֆերմերային ձեռնարկություններում, սեփականության բաժնետոմսերը և այլն) և (կամ) մասնակցության իրավունքը բարձրագույն կառավարման մարմնում և (կամ) իրավաբանական անձի լուծարման դեպքում՝ Մասնավոր գործընկերոջ ներդրումների մասով բաժնետիրոջը վերագրվող եկամուտ (շահաբաժիններ) և ակտիվներ ստանալու իրավունքը, ներառյալ՝ բաժնետիրոջ կողմից իրավաբանական անձին տրված ցանկացած փոխառության հետ կապված վճարման ենթակա ցանկացած գումար՝ չներառելով սակայն իրավաբանական անձի կողմից բաժնետիրոջը տրված ցանկացած այլ փոխառության հետ կապված վճարման ենթակա ցանկացած գումար:
Գնահատման հանձնաժողով՝	ունի Պայմանագրի 2-րդ էջում տրված իմաստը:
Կնքման օր՝	նշանակում է սույն Պայմանագրի կատարման և Կողմերի կողմից ստորագրման ամսաթիվը:
Դադարման ժամկետ՝	ունի Հավելված 5-ում (*Ապահովումներին ներկայացվող պահանջները*) տրված իմաստը:
Արագ ծառայություններ՝	նշանակում է ընտրված Ծառայություններ, որոնք կարող են մատուցվել Մասնավոր գործընկերոջ կողմից պարզեցված ձևով (ժամկետների և ծառայության այլ կիրառելի ցուցանիշների առումով), ինչպես սահմանված է Տեխնիկական պահանջներով:
Ֆինանսավորման փակում՝	նշանակում է այն ամսաթիվը, երբ 7.5.1 կետում նշված ցանկացած գործողություն Ներդրումային պարտավորությունների ֆինանսավորման նպատակների համար բավարար չափով ավարտվում է:
Ֆինանսավորման փաստաթղթեր՝	նշանակում է այն բոլոր փաստաթղթերը միասին, որոնք կազմվել են հօգուտ Վարկատուների (որոնք Մասնավոր գործընկերոջ բաժնետերերը կամ նրա հետ Փոխկապակցված անձինք չեն) կամ կնքվել են նրանց հետ Մասնավոր գործընկերոջ կողմից Վարկի (ներառյալ՝ վերաֆինանսավորման) առնչությամբ և ներառում են Վարկի (ներառյալ՝ վերաֆինանսավորման) համար ապահովում տրամադրող ցանկացած փաստաթուղթ:

Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք՝	ունի 14.1 կետում տրված իմաստը:
1-ին խմբի Տեխնիկական պահանջների խախտում՝	ունի 16.3.1.1 կետում տրված իմաստը:
2-րդ խմբի Տեխնիկական պահանջների խախտում՝	ունի 16.3.1.2 կետում տրված իմաստը:
3-րդ խմբի Տեխնիկական պահանջների խախտում՝	ունի 16.3.1.3 կետում տրված իմաստը:
Երաշխավորված գումար՝	ունի Հավելված 5-ում (*Ապահովումներին ներկայացվող պահանջները*) տրված իմաստը:
Հետփոխանցման ակտ՝	ունի 20.1.2 կետում տրված իմաստը:
Հետփոխանցման ակտիվներ՝	ունի 20.1.1 կետում տրված իմաստը:
Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրություն՝	նշանակում է Անկախ փորձագետի կողմից իրականացված Հետփոխանցման ակտիվների հաշվառումը և վիճակի ուսումնասիրությունը՝ Հետփոխանցման ակտիվները Հանրային գործընկերոջը փոխանցելու նպատակով:
Հետփոխանցման օր՝	Նշանակում է հետևյալ օրերից ամենաուշը. (i) այն օրը, որը որոշվել է Դադարեցման ժամանակ առաջին Հետ փոխանցվող գույքի վիճակի ուսումնասիրության մեջ որպես Հետփոխանցման ակտի ստորագրման ծրագրավորված օրվա հաջորդ օրը, կամ (ii) Հետփոխանցման ակտի փաստացի ստորագրման հաջորդ օրը:
Հետփոխանցման ապահովում՝	ունի 9.3 կետում տրված իմաստը:
Անձը հաստատող փաստաթղթեր	նշանակում է անձնագրեր և նույնականացման քարտեր, որոնք նշված են Տեխնիկական պահանջների Հավելված 3-ում, որոնք թողարկվում, տրամադրվում և այլ կերպ սպասարկվում են Մասնավոր գործընկերոջ կողմից Պայմանագրի ներքո:
Անկախ փորձագետ՝	ունի 21.1 կետում տրված իմաստը:
Ոչ նյութական ակտիվներ՝	նույնականացման ենթակա ոչ-դրամական ակտիվ առանց ֆիզիկական սուբստանցիայի, ներառյալ, բայց չսահմանափակելով՝ մտավոր սեփականությունը, արտոնագրերը

	և համակարգչային ծրագրերը
Մտավոր սեփականության իրավունքներ՝	նշանակում է գյուտերի նկատմամբ իրավունքներ, հեղինակային և հարակից իրավունքներ, գուդվիլ և իր տեղը ներկայանալու կամ անբարեխիղճ մրցակցության համար դատական պաշտօանության հայցելու իրավունք, դիզայնի, ծրագրային ապահովման նկատմամբ իրավունքներ, դատաբազայի իրավունքներ, գաղտնի տեղեկատվության (ներառյալ՝ առևտրային գաղտնիք և նոու-հաու) օգտագործման և գաղտնիության պահպանման իրավունքներ, ապրքային նշաններ, ծառայության նշաններ և ֆիրմային անվանումներ և բոլոր այլ մտավոր սեփականության իրավունքները, յուրաքանչյուր դեպքում անկախ դրա՝ գրանցված կամ չգրանցված լինելուց:
Ներդրումային պարտավորություններ՝	ունի 10.1.1 կետում տրված իմաստը:
Ներդրումային պարտավորություններն ավարտելու մասին ակտ՝	ունի 10.1.6 կետում տրված իմաստը:
Ներդրումային պարտավորությունների կատարման ժամկետ՝	ունի 10.1.2 կետում տրված իմաստը:
Վարկատու՝	նշանակում է ցանկացած անձ, որը Ֆինանսավորման փաստաթղթերով տրամադրում է Վարկ, և որը կնքել է Ուղիղ պայմանագիր՝ բացառությամբ Մասնավոր գործընկերոջ բաժնետերերի և նրա հետ Փոխկապակցված անձանց:
Նախապես գնահատված վնասներ՝	նշանակում է սույն պայմանագրով ստանձնած պարտականությունների խախտման դեպքում Մասնավոր գործընկերոջ կողմից Հանրային գործընկերոջը վճարման ենթակա տուգանք:
Վարկ՝	նշանակում է վարկային ֆինանսավորման բոլոր տեսակները, այդ թվում՝ վարկերը, կանխավճարները, Ծրագրի համար անհրաժեշտ վարձակալության հարցում աջակցությունը (լիզինգ) և երաշխիքները (սակայն բացառելով ԲաժնեմասնակցությունԲաժնեմասնակցությունը և ֆինանսական աջակցությունը Մասնավոր գործընկերոջ ցանկացած բաժնետիրոջ կամ Փոխկապակցված անձի կողմից):
Նյութեր՝	ունի 4.5.1-րդ կետում տրված իմաստը:
Ազգային արժույթ՝	նշանակում է հայկական դրամ կամ օրենքով սահմանված

	Հայաստանի Հանրապետության այլ արժույթ:
Չհրապարակման մասին պայմանագիր՝	նշանակում է գաղտնիության և գաղտնի տեղեկատվության չհրապարակման մասին պայմանագիր, որը կարող է կնքվել Կողմերի միջև համաձայն 23.3 կետի:
Պարտազանցման ծանուցում՝	նշանակում է ծանուցում, որը կարող է ուղարկվել Կողմերից որևէ մեկի կողմից սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան՝ մյուս Կողմին ծանուցելով Մասնավոր գործընկերոջ/Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպքի մասին (համապատասխան դեպքում) և նշելով (i) Մասնավոր գործընկերոջ/Հանրային գործընկերոջ պարտազանցման նման դեպքի տվյալները և (ii) այն ժամանակահատվածը, որի ընթացքում Մասնավոր գործընկերոջ/Հանրային գործընկերոջ պարտազանցման նման դեպքը կարող է շտկվել կամ վերացվել:
Գործառնական օր՝	նշանակում է Ներդրումային պարտավորություններն ավարտելու մասին ակտը ստորագրելու ամսաթվին հաջորդող ամսաթիվը:
Գործառնական տարի՝	նշանակում է երեք հարյուր վաթսունհինգ (365) օրվա, կամ նահանջ տարվա դեպքում՝ երեք հարյուր վաթսունվեց (366) օրվա յուրաքանչյուր հաջորդական ժամանակաշրջան. առաջին այդպիսի ժամանակաշրջանը սկսվում է Շահագործման օրվանից:
Գործառնությունների ապահովում՝	ունի 9.2 կետում տրված իմաստը:
Թույլտվություններ՝	նշանակում է թույլտվության հետ կապված բոլոր փաստաթղթերը և լիցենզիաները, թույլտվությունները և հաստատումները, որոնք պետք է ձեռք բերվեն ցանկացած Հանրային մարմնից, որպեսզի Մասնավոր գործընկերը կատարի Ներդրումային պարտավորությունները, իրականացնի Ծառայություններ/Գործառնություններ և այլ կերպ կատարի սույն պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:
Անձնական տվյալ՝	ունի 23.4 կետում տրված իմաստը
Քաղաքական Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպք՝	ունի 14.5 կետում տրված իմաստը:
Քաղաքական Անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքի մասին ծանուցում՝	ունի 14.6.2 կետում տրված իմաստը:
ՊՄԳ ընթացակարգ՝	նշանակում է ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված Պետություն-մասնավոր

	գործընկերության ընթացակարգը (փոփոխություններով):
Մասնավոր գործընկեր՝	ունի սույն պայմանագրի 2-րդ էջում՝ Կողմերի նկարագրության մեջ տրված նշանակությունը:
Մասնավոր գործընկերոջ պարտազանցման դեպք՝	ունի 15.1.1 կետում տրված իմաստը:
Մշակել՝	ունի 23.4 կետում տրված իմաստը:
Ծրագիր՝	նշանակում է Հայաստանում Անձը հաստատող փաստաթղթերի թողարկման ու տրամադրման և Անձը հաստատող փաստաթղթեր տրամադրելու համար օգտագործվող միջոցների շահագործման ու սպասարկման վերաբերյալ պետական-մասնավոր գործունեության ծրագիր:
Ծրագրի ակտիվներ՝	ունի 4.1.1 կետում տրված իմաստը:
Ծրագրի ժամկետ՝	ունի 6.1 կետում տրված իմաստը:
Հանրային մարմին՝	նշանակում է ցանկացած պետական կամ համայնքային մարմին, դատական մարմին կամ որևէ այլ մարմին, որն իրավազորություն ունի Հանրային գործընկերոջ, Մասնավոր գործընկերոջ, Ծրագրի ակտիվների, Ծառայությունների/Գործառնությունների կամ դրանց որևէ մասի նկատմամբ:
Հանրային գործընկեր՝	ունի սույն պայմանագրի 2-րդ էջում՝ Կողմերի նկարագրության մեջ տրված նշանակությունը:
Հանրային գործընկերոջ պարտազանցման դեպք՝	ունի 15.2.1 կետում տրված իմաստը:
Հանրային գործընկերոջ միջամտության իրավունք՝	ունի 19-րդ բաժնում տրված իմաստը:
Հուսալի բանկ՝	նշանակում է Հավելված 6 (Հուսալի բանկերին ներկայացվող պահանջներ) պահանջներին բավարարող բանկ:
Վարձակալության պայմանագրեր՝	նշանակում է պայմանագրեր, որոնք պետք է կնքվեն Մասնավոր գործընկերոջ և երրորդ կողմերի միջև Վարձակալած անշարժ գույքի վերաբերյալ:
Ծառայություններ և Գործառնություններ՝	ունի 10.2-րդ կետում տրված իմաստը:
Միջամտության	նշանակում է Վարկատուների կամ Հանրային Գործընկերոջ իրավունքը՝ ձեռնարկել Ծրագրի հետ կապված շտկման

իրավունք՝	գործողություններ և փոխանցել Մասնավոր գործընկերոջ՝ սույն Պայմանագրով նախատեսված իրավունքները Վարկատուների կամ Հանրային Գործընկերոջ կողմից նշանակված անձին կամ անձանց, այն ծավալով և ընթացակարգով, որոնք սահմանված են Ուղիղ պայմանագրով:
Թիրախային ծավալներ՝	ունի 12.3.2 կետում տրված իմաստը:
Տեխնիկական պահանջներ՝	նշանակում է սույն Պայմանագրին հղմամբ միացված և դրա անբաժանելի մաս կազմող Պայմանագրի Հավելված 3 (Տեխնիկական պահանջներ) փաստաթուղթը:
Մրցութային փաստաթղթեր՝	ունի 2-րդ էջում՝ ներածական դրույթների մեջ տրված իմաստը:
Մրցույթի ապահովում	նշանակում է Հաղթողի կողմից ԱՆՀ-ին համապատասխան Հանրային գործընկերոջը տրամադրված բանկային երաշխիքը:
Դադարեցում՝	նշանակում է սույն պայմանագրի դադարեցում՝ լինի դա Ծրագրի ժամկետի ավարտի, թե վաղաժամկետ դադարեցման դեպքում:
Դադարեցման դիմաց փոխհատուցում՝	նշանակում է Հանրային գործընկերոջ կողմից Մասնավոր գործընկերոջը վճարվող փոխհատուցում՝ սույն պայմանագիրը 18-րդ բաժնին համապատասխան վաղաժամկետ Դադարեցման պատճառով:
Պայմանագրի դադարեցման դիմաց փոխհատուցման վճարման օր՝	ունի 18.3.1 կետում տրված իմաստը:
Պայմանագրի դադարեցման մասին ծանուցում՝	նշանակում է Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման մասին ծանուցում, որը Կողմերը կարող են ուղարկել 17-րդ բաժնի համաձայն:
Փոխանցվող ակտիվներ՝	նշանակում է Հավելված 1-ում (*Փոխանցվող ակտիվներ*) թվարկված ակտիվներ, որոնք պետք է փոխանցվեն Մասնավոր գործընկերոջը Փակման պահին:
Անցումային ժամանակահատված՝	նշանակում է այն ժամանակահատվածը, որն սկսվում է Կնքման օրվան հաջորդող օրվանից և ավարտվում է Փակման օրով, կամ Պայմանագրի վաղաժամկետ Դադարեցման դեպքում՝ Դադարեցման ամսաթվով:
Ծավալի վճարումներ՝	ունի 12.2.1 կետում տրված իմաստը:
Ծավալի վճարումների օր՝	ունի 12.2.4 կետում տրված իմաստը:

Հաղթող՝	ունի սույն Պայմանագրի 3-րդ էջում՝ ներածության մեջ տրված իմաստը:

Բ. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եթե համատեքստն այլ բան չի պահանջում, ապա սույն Պայմանագրում՝

ա) ցանկացած սեռով գրված բառերը ներառում են մյուս բոլոր սեռերը.

բ) Հավելված 9-ի (*Սահմանումները և մեկնաբանությունը*) 1-ին մասում նշված սահմանումները կիրառվում են սահմանված եզրույթների բոլոր, այդ թվում՝ եզակի և հոգնակի թվով դրված ձևերի նկատմամբ.

գ) «սույնի», «սրանում», «սույնով», «սույն» եզրույթները և համանման բառերը վերաբերում են ամբողջ Պայմանագրին, այլ ոչ որևէ կոնկրետ կետի, բաժնի կամ հավելվածի կամ սույն Պայմանագրի ցանկացած այլ ենթաբաժնի.

դ) հղումները «հավելվածներին» հղումներ են սույն Պայմանագրի Հավելվածներին: «Բաժիններին», «Կետերին» և այլ ենթաբաժինների հղումները հղումներ են սույն Պայմանագրի բաժիններին, կետերին և այլ ենթաբաժինների, եթե Կողմերի կողմից այլ բան համաձայնեցված չէ.

ե) հղումները ցանկացած նորմատիվային ակտին ներառում են այդ նորմատիվային ակտի և դրան համապատասխան մշակված ցանկացած կանոնի կամ կանոնակարգի ցանկացած փոփոխություն կամ նոր խմբագրություն, և հղումն օրենքին նշանակում է հղում այն օրենքին, որը կարող է փոփոխվել կամ նոր խմբագրության ենթարկվել.

զ) համարվում է, որ «ներառում է» կամ «ներառյալ» բառերին հաջորդում են «առանց սահմանափակման» կամ «սակայն չսահմանափակվելով» բառերը՝ անկախ նրանից՝ դրանց հաջորդում են նման արտահայտություններ կամ այդ նշանակությամբ բառեր, թե՝ ոչ.

է) հղումները «սույն Պայմանագրին» կամ որևէ այլ պայմանագրի կամ փաստաթղթի մեկնաբանվում են որպես հղում այդ պայմանագրին կամ փաստաթղթին՝ փոփոխություններով, ձևափոխություններով կամ լրացումներով և տվյալ պահին գործող, և ներառում են ցանկացած այնպիսի փաստաթղթին հղում, որը փոփոխում, ձևափոխում կամ լրացնում է այն, կամ կնքվել է, կազմվել է կամ տրվել է դրա հիման վրա կամ դրա պայմանների համաձայն:

ը) երբ սույն պայմանագրում հղում է արվում մի քանի «օրերի», այդ թիվը վերաբերում է օրացուցային օրերին. «ամիս» կամ «տարի» բառերին ցանկացած հղում մեկնաբանվում է որպես հղում օրացուցային ամսվան կամ տարվան, որը հաշվարկվում է ըստ Գրիգորյան օրացույցի.

թ) նյութերին, տեղեկություններին կամ տվյալներին հղումները վերաբերում են ցանկացած ձևով ներկայացված, պահված կամ տրամադրված նյութերին, տեղեկություններին կամ տվյալներին (բանավոր, գրավոր, ֆիզիկական կրիչներով կամ էլեկտրոնային եղանակով).

ժ) մասնավորապես հավելվածներում օգտագործված ցանկացած սահմանում և հապավում ունի համապատասխան հավելվածում դրան տրված նշանակությունը՝ ըստ համապատասխան դեպքի.

ժա) եթե առկա է որևէ անհամապատասխանություն Հավելված 9-ի (*Սահմանումները և մեկնաբանությունը*) նշված սահմանումների և հապավումների և սույն Պայմանագրի որևէ այլ ենթաբաժնում կամ հավելվածում նշված դրույթի, մեծատառ բառերի և արտահայտությունների, սահմանումների ու հապավումների միջև, ապա Հավելված 9-ի

(*Սահմանումները և մեկնաբանությունը*) նշված իմաստը գերակայում է սույն Պայմանագրի ցանկացած այլ ենթաբաժնում կամ հավելվածում նշված իմաստի նկատմամբ, եթե սույն Պայմանագրի համատեքստով այլ բան չի պահանջվում.

ժբ) թվերով և բառերով գրված որևէ արժեքի միջև ցանկացած անհամապատասխանության դեպքում գերակայում է վերջինը, եթե համատեքստում այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ.

ժգ) եթե սույն Պայմանագրի դրույթները հակասում են միմյանց, կամ եթե դրանք հակասում են դրա որևէ հավելվածի, ապա հակասության սահմաններում առավել ուժ ունի և գերակայում է ավելի ծանր պարտավորությունը կամ ամենաբարձր չափանիշը.

ժդ) հղումները Կողմերին ներառում են հղումներ նրանց օրինական իրավահաջորդներին.

ժե) սույն Պայմանագրի բաժինների, կետերի և այլ ենթաբաժինների վերնագրերը, ինչպես նաև 2-րդ էջում առկա բովանդակությունը տրամադրված են միայն հարմարության և հղումների նպատակով և որևէ կերպ չեն ազդում Պայմանագրի մեկնաբանման վրա.

ժզ) ցանկացած հղում հայկական դրամին կամ դրամին հղում է օրենքով սահմանված Հայաստանի Հանրապետության արժույթին: $-ին, ԱՄՆ դոլարին կամ դոլարին հղումները հղումներ են Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական արժույթին.

ժէ) ցանկացած հղում որևէ ժամանակահատվածի, որը սկսվում է որոշակի օրվանից կամ ամսաթվից և տևում է «մինչև» որոշակի օր կամ ամսաթիվ, ներառում է նաև այդ օրերը կամ ամսաթվերը, եթե համապատասխան դրույթում հստակորեն այլ բան նշված չէ.

ժը) սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների ցանկացած խախտում և ցանկացած բացասական ազդեցություն համարվում է «էական», եթե տուժող Կողմը կրել է մեկ միլիոն դոլարին (1,000,000 ԱՄՆ դոլար) համարժեք ՀՀ դրամը գերազանցող չափի վնաս կամ բացասական ազդեցություն՝ համաձայն Հայաստանի կենտրոնական բանկի կողմից նախորդ եռամսյակի վերջին օրվա դրությամբ հրապարակած ՀՀ դրամ - ԱՄՆ դոլարի փոխարժեքի, կամ եթե այդ խախտումն այլ կերպ էական ազդեցություն է ունենում տուժող Կողմի՝ սույն Պայմանագրով և (կամ) Կիրառելի իրավունքով ամրագրված օրինական իրավունքների և շահերի վրա.

ժթ) սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների ցանկացած խախտում համարվում է «համակարգային», եթե այդ խախտումը տեղի է ունենում երկու (2) կամ ավելի անգամ անընդմեջ.

ի) բոլոր չափումները և հաշվարկներն իրականացվում են մետրիկ համակարգով, և հաշվարկներն արվում են մինչև հարյուրերորդական նիշը: Կլորացումը կատարվում է մաթեմատիկական կլորացման կանոնների համաձայն:

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՉՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

տեղեկատվության գաղտնիության և տեղեկատվության չհրապարակման մասին

Երևան 2024

Թիվ

Սույն տեղեկատվության գաղտնիության և տեղեկատվության չհրապարակման մասին պայմանագիրը, իր հավելվածների հետ միասին (այսուհետ՝ Չհրապարակման մասին պայմանագիր) կնքվել է հետևյալ անձանց կողմից և միջև.

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության, ի դեմս լիազոր անձի լրիվ անունը և պաշտոնը, ով գործում է պաշտոնական փաստաթուղթ, ամսաթիվ, համար հիման վրա, (այսուհետ՝ «Հանրային գործընկեր»), և

Մասնավոր գործընկերոջ անվանումը, իրավաբանական անձ, որը գործում է պետության անվանում իրավունքի ներքո, ի դեմս լիազոր անձի լրիվ անունը և պաշտոնը, ով գործում է փաստաթղթի անվանումը օր. կանոնադրություն, լիազորագիր, ամսաթիվը հիման վրա (այսուհետ՝ «Մասնավոր գործընկեր»),

որոնք այսուհետ անվանվում են առանձին որպես «Կողմ» և միասին որպես «Կողմեր»:

Կողմերը կնքել են սույն Չհրապարակման մասին պայմանագիրը համաձայն ——— թ թիվ ——— «Անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և տրամադրման, Անձը հաստատող փաստաթղթեր տրամադրելու համար օգտագործվող միջոցների շահագործման ու սպասարկման վերաբերյալ պայմանագրի» (այսուհետ՝ Պայմանագիր) 23.3 կետի:

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1. Եթե սույն Չհրապարակման մասին պայմանագիրն այլ բան չի նախատեսում, մեծատառով տերմիններն ու արտահայտությունները, որոնք օգտագործվում են սույն սույն Չհրապարակման մասին պայմանագրում և առանձին սահմանված չեն 1.2-րդ կետում կամ դրա այլ կետերում կամ մասերում, ունեն Մրցութային փաստաթղթերով (դրա համապատասխան մասով) տրված նշանակությունը:

1.2. Ի հավելումն 1.1-ին կետում օգտագործվել տերմինների, հետևյալ հասկացությունները նույնպես կկիրառվեն սույն Չհրապարակման մասին պայմանագրի մեջ.

«**Գաղտնի տեղեկատվությունը**» – ցանկացած մասնագիտական, առևտրային կամ այլ բնույթի՝ Ծրագրի հետ կապված տեղեկատվություն, որը ներկայացվում է ցանկացած ձևով (բանավոր, գրավոր, նյութական կրիչի վրա կամ էլեկտրոնային ձևով), որը հանրորեն հասանելի չէ, ներառյալ, բայց չսահմանափակելով՝

- անձնական տվյալները
- Հանրային գործընկերոջ կողմից Մասնավոր գործընկերոջը տրամադրված

տեղեկատվությունը, որը կապված է Մասնավոր գործընկերոջ կողմից Պայմանագրի իրականացման հետ և մատնանշված է որպես Գաղտնի տեղեկատվություն այն տրամադրման ժամանակ:

Գաղտնի տեղեկատվությունը չի ներառում այն տեղեկատվությունը, որը Օգտատիրոջը բացահայտվելու ժամանակ արդեն հանրորեն հասանելի է կամ դառնում է այդպիսին նման բացահայտումից հետո ոչ Օգտատիրոջ մեղքով:

«**Օգտատեր**» - ցանկացած անձ, որը ստացել է հասանելիություն Գաղղտնի տեղեկատվությանը սույն Չհրապարակման մասին պայմանագրի և Մրցութային փաստաթղթերի պայմանների համաձայն:

«**Ապօրինի բացահայտում**» - Գաղտնի տեղեկատվության բացահայտում երրորդ անձի, բացի սույն Պայմանագրով և/կամ Հայաստանի օրենսդրությամբ սահմանված օրինական հիմքերով թույլատրված դեպքերի:

Օգտատիրոջ կողմից Օգտատիրոջ հանդեպ կիրառելի պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում համապատասխան պետության պետական մարմինների կողմից հարցման դեպքում Գաղտնի տեղեկատվության տրամադրումը համաձայն 4-րդ բաժնի չի համարվում Ապօրինի բացահայտում:

«**բացահայտում**» - Գաղտնի տեղեկատվության տրամադրումը երրորդ անձանց կամ դրա՝ վերջիններիս հասանելի դարձնելը ցանկացած տեսքով և ձևով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Չհրապարակման մասին պայմանագրի առարկան Կողմերի կողմից Գաղտնի տեղեկատվության չհրապարակման և հասանելիության ռեժիմի կանոնների և ընթացակարգերի սահմանումն է:

2.2. Գաղտնի տեղեկատվությանը հասանելիություն ստանալու համար Մասնավոր գործընկերը պետք է տրամադրի ամբողջ համապատասխան տեղեկատվությունն իր և Օգտատերերի մասին Հանրային գործընկերոջը:

2.3. Գաղտնի տեղեկատվության հասանելիությունը տրամադրվում է միայն այն Օգտատերերին, որոնք նշված են սույն Չհրապարակման մասին պայմանագրի Հավելված 1-ում (Օգտատերերի ցանկ): Գաղտնի տեղեկատվության հասանելիության հավելյալ տվյալներ կարող են սահմանվել Հանրային գործընկերոջ գրավոր ցուցումներով, որոնք տրամադրվում են Մասնավոր գործընկերոջը սույն Չհրապարակման մասին պայմանագրի ներքո:

Եթե Մասնավոր գործընկերը ցանկանում է իրականացնել փոփոխություններ Օգտատերերի ցանկում Հավելված 1-ում (Օգտատերերի ցանկ), նա պետք է նախաձեռնի Չհրապարակման մասին պայմանագրի փոփոխություններ համապատասխանաբար Հավելված 1-ում (Օգտատերերի ցանկ) մասով:

2.4. Հանրային գործընկերը իրեն իրավունք է վերապահում մերժել կամ չեղարկել Գաղտնի տեղեկատվությանը որոշակի Օգտատերերի հասանելիությունը, ինչպես նաև չհաստատել այն անձանց ցուցակը, որը կազմվել է Մասնավոր գործընկերոջ կողմից որպես Հավելված 1 (Օգտատերերի ցանկ), սույն Չհրապարակման մասին պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում և/կամ ազգային անվտանգության պատճառներով: Հանրային գործընկերը հնարավոր կարճ ժամկետում այդ մասին ծանուցում է Մասնավոր գործընկերոջը:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Հանրային գործընկերը իրավունք ունի.

ա) ստուգել Մասնավոր գործընկերոջ կողմից՝ որպես Հավելված 1 (Օգտատերերի ցանկ) տրամադրված Օգտատերերի ցանկի համապատասխանությունը սույն Չհրապարակման մասին պայմանագրի պահանջներին,

բ) մերժել կամ չեղարկել Գաղտնի տեղեկատվության հասանելիությունը որոշակի Օգտատերերի համար: Հանրային գործընկերը հնարավոր կարճ ժամկետում այդ մասին ծանուցում է Մասնավոր գործընկերոջը:

գ) փոխել Գաղտնի տեղեկատվության հասանելիության տեխնիկական պահանջները, պայմանով, որ նախապես ծանուցելու է Մասնավոր Գործընկերոջը բաժին 6-ով սահմանված կարգով:

դ) դիմել համապատասխան մարմիններին, անձանց և իրավաբանական անձանց, որպեսզի ստուգվի Մասնավոր գործընկերոջ և Օգտատերերի համապատասխանությունը Գաղտնի տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ սույն Չհրապարակման մասին պայմանագրի պահանջներին և Գաղտնի տեղեկատվության հասանելիության տեխնիկական կանոններին,

ե) միակողմանիորեն հրաժարվել սույն Չհրապարակման մասին պայմանագրի կատարումից, նախօրոք այդ մասին ծանուցելով Մասնավոր գործընկերոջը սույն Չհրապարակման մասին պայմանագրի 6-րդ բաժնով սահմանված կարգով:

զ) իրականացնել սույն Չհրապարակման մասին պայմանագրով սահմանված այլ իրավունքներ:

3.2. Հանրային գործընկերը պարտավոր է.

ա) եթե պահանջվում է, ապահովել Գաղտնի տեղեկատվության հասանելիության տեխնիկապես պատշաճ գործելը,

բ) 6-րդ բաժնով սահմանված կարգով ծանուցել Մասնավոր գործընկերոջը Գաղտնի տեղեկատվության հասանելիության, Գաղտնի տեղեկատվության չհրապարակման և գաղտնիության ռեժիմի հետ կապված ցանկացած փոփոխության մասին և կարող է պահանջել իրականացնել փոփոխություններ սույն Չհրապարակման մասին պայմանագրում հնարավորինս կարճ ժամկետում,

գ) իրականացնել սույն Չհրապարակման մասին պայմանագրով սահմանված այլ պարտավորություններ:

3.3. Մասնավոր գործընկերը իրավունք ունի.

ա) ստանալ Գաղտնի տեղեկատվությանը հասանելիություն իր և այլ Օգտատերերի համար և օգտագործել Գաղտնի տեղեկատվությունը համաձայն սույն Չհրապարակման մասին պայմանագրի պայմանների,

բ) եթե անհրաժեշտ է, ստանալ Գաղտնի տեղեկատվությանը հասանելիության հետ կապված տեխնիկական աջակցություն,

գ) փոխել Օգտատերերի ցանկը, որը նշված է Հավելված 1-ում (Օգտատերերի ցանկ) սույն Չհրապարակման մասին պայմանագրի ընթացքում, 2-րդ բաժնով սահմանված հաստատման հիման վրա,

դ) իրականացնել սույն Չհրապարակման մասին պայմանագրով սահմանված այլ իրավունքներ:

3.4. Մասնավոր գործընկերը պարտավոր է (և ապահովելու է համապատասխանությունը սույն պարտավորություններին բոլոր Օգտատերերի կողմից).

ա) Համապատասխանել Գաղտնի տեղեկատվության հասանելիության և օգտագործման՝ սույն Չհրապարակման մասին պայմանագրով սահմանված կանոններին,

բ) Չբացահայտել, բացառությամբ սույն Չհրապարակման մասին պայմանագրում սահմանված դեպքերի, որևէ կերպ Գաղտնի տեղեկատվությունը որևէ այլ անձի կամ իրավաբանական անձի, սույն պայմանագրի դադարումից հետո 5 տարվա ընթացքում,

գ) Սույն Չհրապարակման մասին պայմանագրով սահմանված կարգով կրել պատասխանատվություն ցանկացած Օգտատիրոջ կողմից Գաղտնի տեղեկատվության Ապօրինի բացահայտման համար,

դ) Նախաձեռնել բոլոր համապատասխան միջոցները Գաղտնի տեղեկատվության պաշտպանության համար դրա օգտագործման ընթացքում, չբացահայտել, չհրապարակել և չտարածել Գաղտնի տեղեկատվությունը որևէ կերպ, չփոխանցել Գաղտնի տեղեկատվությունը երրորդ անձանց, բացառությամբ այն դեպքերի, որոնք թույլատրվում են սույն Չհրապարակման մասին պայմանագրով, իսկ երրորդ անձանց կողմից Գաղտնի տեղեկատվության գաղտնիության ռեժիմի խախտման պարագայում անհապաղ տեղեկացնել Հանրային գործընկերոջը նման խախտման մասին,

ե) պահպանել Գաղտնի տեղեկատվությունն այնպես, որ կանխվի երրորդ անձանց հասանելիությունը Գաղտնի տեղեկատվությանը և պաշտպանվի Գաղտնի տեղեկատվությունը Ապօրինի բացահայտումից, չիրականացնել որևէ գործողություն, որը կարող է հանգեցնել ոչ իրավասու հասանելիության Գաղտնի տեղեկատվությանը երրորդ անձանց կողմից կամ Ապօրինի բացահայտմանը,

զ) ոչնչացնել փաստաթղթերի կրկնօրինակները և այլ կրիչները, որոնք պարունակում են Գաղտնի տեղեկատվություն, այդ Գաղտնի տեղեկատվության վերանայումից և վերլուծությունից հետո սույն Չհրապարակման մասին պայմանագրով սահմանված դեպքերում (մասնավորապես՝ Գաղտնի տեղեկատվության հասանելիության տեխնիկական պահանջներում):

է) չփոխանցել սույն Չհրապարակման մասին պայմանագրով իրավունքներն ու պարտականությունները որևէ երրորդ անձի և չպատվիրակել որոշ գործառույթների իրականացումը, որոնք իրականացվում են Գաղտնի տեղեկատվության օգտագործմամն երրորդ անձանց առանց նախապես ստացված Հանրային գործընկերոջ գրավոր համաձայնության,

ը) Իրականացնել սույն Չհրապարակման մասին պայմանագրով սահմանված այլ պարտավորություններ:

3.5. Կողմերը նաև ստանձնում են պարտավորություն չբացահայտել ցանկացած երրորդ անձի ցանկացած տեղեկատվություն, որը ստանցել են սույն Չհրապարակման մասին պայմանագրի կատարման և իրականացման ընթացքում, բացառությամբ երբ նման

տեղեկատվության բացահայտումը անհրաժեշտ է կիրառելի օրենսդրությանը համաձայն համապատասխան հանրային մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից պահանջի հիման վրա:

4. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Եթե երրորդ անձը դիմում է դատարան կամ իրականացնում է այլ իրավական գործողություն Գաղտնի տեղեկատվության բացահայտման վերաբերյալ (ներառյալ այն դեպքերը, երբ Գաղտնի տեղեկատվության բացահայտումը պահանջվում է ցանկացած Օգտատիրոջից), համապատասխան Կողմը տեղեկանալու պահից պետք է անհապաղ գրավոր ծանուցի մյուս Կողմին և տրամադրի մյուս կողմին ողջամիտ աջակցություն, որպեսզի կանխվի Գաղտնի տեղեկատվության բացահայտումը:

4.2. Եթե մի Կողմը տրամադրում է Գաղտնի տեղեկատվություն այն դեպքերում, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային մարմիններին, այդպիսի Կողմը պետք է գրավոր ծանուցի մյուս Կողմին մեկ Աշխատանքային օրվա ընթացքում Գաղտնի տեղեկատվության նշված տրամադրման (փոխանցման, բռնագանձման) մասին հետևյալ տեղեկությամբ.

ա) Գաղտնի տեղեկատվության ստացողի անունը և Գաղտնի տեղեկատվության ամբողջ ցանկը, որը տրամադրվել է,

բ) Գաղտնի տեղեկատվության տրամադրման իրավական պատճառը (ստուգման հաշվետվություն, բռնագանձման արձանագրություն, դատական որոշում և այլն):

4.3. Երբ որևէ Կողմ տրամադրում է Հայաստանի Հանրապետության հանրային մարմիններին Գաղտնի տեղեկատվություն, նա պետք է գրավոր ծանուցի տվյալ մարմիններին այն փաստի մասին, որ այդ տեղեկատվությունը գաղտնի է և չի կարող բացահայտվել երրորդ անձանց:

4.4. Մասնավոր գործընկերը պատասխանատու է 4.1-4.3 կետերին (անհրաժեշտ փոփոխություններով) համապատասխանելու համար բոլոր այն դեպքերում, երբ Գաղտնի տեղեկատվությունը պահանջվում է ցանկացած Օգտատիրոջից, մասնավորապես Օգտատիրոջ հանդեպ կիրառելի պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում համապատասխան պետության պետական մարմինների կողմից հարցման դեպքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն Չհրապարակման մասին պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Չհրապարակման մասին պայմանագրի և դրա նկատմամբ կիրառելի օրենսդրության համաձայն:

5.2. Ցանկացած Օգտատիրոջ կողմից սույն Չհրապարակման մասին պայմանագրով նախատեսված՝ Գաղտնի տեղեկատվության չհրապարակման և գաղտնիության ռեժիմի հետ կապված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Մասնավոր գործընկերը պարտավոր է (համապատասխան դեպքում).

ա) Փոխհատուցել Հանրային գործընկերոջը ամբողջության ուղղակի վնասները, որը

վերջինս կրել է ցանկացած Օգտատիրոջ կողմից Գաղտնի տեղեկատվության Ապօրինի բացահայտման հետևանքով կամ այլ Գաղտնի տեղեկատվության չհրապարակման և գաղտնիության ռեժիմի հետ կապված այլ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

բ) Վճարի տուգանք Հանրային գործընկերոջը ——— ՀՀ դրամի գումարի չափով յուրաքանչյուր Ապօրինի բացահայտման համար:

5.3. Սույն Չհրապարակման մասին պայմանագրի դադարումը չի ազատում Կողմերին սույն Չհրապարակման մասին պայմանագրի ներքո պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատասխանատվությունից:

6. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

6.1. Սույն Չհրապարակման մասին պայմանագրից բխող բոլոր ծանուցումները պետք է իրականացվել գրավոր և համարվելու են պատշաճ կատարված, երբ առաքվելու են առձեռն կամ փոստային կապի միջոցով: Սույն Չհրապարակման մասին պայմանագրից բխող բոլոր ծանուցումները կարող են ուղարկվել նաև էլեկտրոնային փոստի միջոցով, հաշվի առնելով 6.2 կետի կարգավորումները:

Սույն Չհրապարակման մասին պայմանագրից բխող ծանուցումների համար կոնտակտային տվյալները սահմանվում են սույն 6.1 կետով:

Հանրային գործընկերոջն ուղղված

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն

Հասցե՝

Էլեկտրոնային փոստի հասցե՝

Պատճենը՝

Մասնավոր գործընկերոջն ուղղված

անվանում

Ում՝

Հասցե՝

Էլեկտրոնային փոստի հասցե՝

6.2. Եթե սույն Չհրապարակման մասին պայմանագրով այլ բան նախատեսված չէ, իրավական ուժ է տրվում Չհրապարակման մասին պայմանագրի հետ կապված միայն թղթային տեսքով ուղարկված և/կամ ստացված ծանուցումները:

Սույն Չհրապարակման մասին պայմանագրի շրջանակներում Չհրապարակման մասին պայմանագրի հետ կապված որոշակի ծանուցումներ կարող են լրացուցիչ ուղարկվել և/կամ ստացվել էլեկտրոնային փոստի միջոցով: Սույն Չհրապարակման մասին պայմանագրի հետ կապված՝ էլեկտրոնային և թղթային տեսքով ուղարկված և/կամ ստացված ծանուցումների միջև տարընկալումների դեպքում գերակայում է թղթային տարբերակը:

6.3. Չհրապարակման մասին պայմանագրի հետ կապված բոլոր ծանուցումները իրականացվելու են հայերեն և անգլերեն, եթե սույն Չհրապարակման մասին պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

7.1. Սույն Չհրապարակման մասին պայմանագրի և դրանից բխող և դրա հետ կապված ցանկացած այլ հարցի և պարտավորության նկատմամբ կիրառվում է և դրանք մեկնաբանվում են համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

7.2. Ցանկացած վեճ, տարաձայնություն կամ պահանջ, որը բխում է կամ կապված է սույն Չհրապարակման մասին պայմանագրի հետ, ներառյալ, բայց չսահմանափակելով՝ դրա մեկնաբանման, իրականացման, խախտման, լուծման և անվավերության, լուծվելու է ընտրել համապատասխան տարբերակը, մյուսը ջնջել/

Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի կողմից

Ստոկհոլմի Առևտրային Պալատի Արբիտրաժային Ինստիտուտի կանոնների համաձայն: Արբիտրաժի վայր է լինելու Ստոկհոլմ քաղաքը, Շվեդիա: Արբիտրաժի լեզուն լինելու է անգլերենը:

8. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն Չհրապարակման մասին պայմանագիրը համարվում է կնքված այն Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործելու է Պայմանագրի գործողության ամբողջ ժամկետում, եթե սույն Չհրապարակման մասին պայմանագիրը վաղաժամկետ չի դադարեցվում վերջինիս դրույթներին համապատասխան: Սույն Չհրապարակման մասին պայմանագրի դրույթները, որոնք կոչված են շարունակել իրենց իրավաբանական ուժը Չհրապարակման մասին պայմանագրի ավարտի/դադարեցման դեպքում՝ մասնավորապես 3.4-րդ կետի բ) ենթակետը և 5.3 կետը, կիրառվելու են իրենց բովանդակության և Չհրապարակման մասին պայմանագրի առարկայի համաձայն:

8.2. Սույն Չհրապարակման մասին պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև ամբողջ պայմանագիրը այն հարաբերությունների վերաբերյալ, որոնք այն կարգավորում է և փոխարինում բոլոր նախկինում իրականացված համաձայնությունները, գրագրությունը և հավաստիացումները դրա վերաբերյալ, բացառությամբ Պայմանագրի: Բոլոր հավելվածները հանդիսանում են սույն Չհրապարակման մասին պայմանագրի անբաժանելի մաս:

8.3. Սույն Չհրապարակման մասին պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորություններն ու պատասխանատվությունը կմնա ուժի մեջ Կողմերի բոլոր իրավահաջորդների համար, ինչի վերաբերյալ համապատասխան Կողմը պարտավոր է գրավոր ծանուցել մյուս Կողմին:

8.4. Սույն Չհրապարակման մասին պայմանագիրը կազմված է երկու բնօրինակից, յուրաքանչյուր կողմից՝ մեկ բնօրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, հայերեն և անգլերեն: Չհրապարակման մասին պայմանագրի տեքստի հայերեն և անգլերեն տարբերակների միջև հակասության դեպքում անգլերեն տարբերակը գերակայում է:

8.5. Չհրապարակման մասին պայմանագրի բոլոր փոփոխությունները պետք է իրականացվել գրավոր՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

8.6. Սույն Չհրապարակման մասին պայմանագիրը կարող է լուծվել փոխադարձ համաձայնությամբ Կողմերի կողմից՝ լրացուցիչ համաձայնագրի տեսքով:

Հանրային գործընկերը կարող է միակողմանիորեն հրաժարվի Չհրապարակման մասին պայմանագրի իրականացումից՝ սույն Չհրապարակման մասին պայմանագրի 6-րդ բաժնով սահմանված կարգով 3 (երեք) Աշխատանքային օր առաջ այդ մասին ծանուցելով Մասնավոր գործընկերոջը: Այդ պարագայում սույն Չհրապարակման մասին պայմանագիրը համարվելու է լուծված Հանրային գործընկերոջ կողմից միակողմանի լուծման ծանուցումը Մասնավոր գործընկերոջ կողմից ստացման օրվանից:

8.7. Եթե սույն Չհրապարակման մասին պայմանագրի որևէ դրույթ ճանաչվի կամ դառնա անվավեր կամ առոչինչ, սույն Չհրապարակման մասին պայմանագրի մնացած դրույթները կմնան ուժի մեջ և Կողմերը կբանակցեն Չհրապարակման մասին պայմանագրում համապատասխան փոփոխությունները:

8.8. Որևէ Կողմ չի կարող փոխանցել սույն Չհրապարակման մասին պայմանագրի ներքո իր որևէ իրավունք, պարտականություն կամ պահանջ, բացառությամբ իրավահաջորդության դեպքի:

Ստորագրությունների էջ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՑԱՆԿ

Մենք, Մասնավոր գործընկերոջ անվանում, խնդրում ենք տրամադրել հասանելիություն տեղեկատվության գաղտնիության և տեղեկատվության չհրապարակման մասին պայմանագրի (Չհրապարակման մասին պայմանագրի) ներքո Գաղտնի տեղեկատվությանը հետևյալ Օգտատերերի համար.

1) լրիվ անուն

Օգտատիրոջ Անձը հաստատող փաստաթղթերի տվյալներ.

Օգտատիրոջ հասցե.

Օգտատիրոջ հեռախոսահամար.

Օգտատիրոջ էլեկտրոնային փոստի հասցե.

2) շարունակել նույն կերպ՝ ցանկը լրացնելու համար

Մենք ստանձնում ենք պարտականություն համապատասխանել և ապահովելու ենք, որ բոլոր Օգտատերերը սույն Հավելված 1-ում (Օգտատերերի ցանկ) համապատասխանեն Չհրապարակման մասին պայմանագրի պահանջներին, որոնք կապված են Գաղտնի տեղեկատվության չհրապարակման և գաղտնիության հետ: Մենք ընդունում ենք և ստանձնում են բոլոր ռիսկերը, որոնք կապված են սույն Հավելված 1-ում (Օգտատերերի ցանկ) նշված ցանկացած Օգտատիրոջ կողմից Չհրապարակման մասին պայմանագրով նախատեսված՝ Գաղտնի տեղեկատվության գաղտնիության և չհրապարակման պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ, ներառյալ՝ Օգտատիրոջը Գաղտնի տեղեկատվությանը հասանելիության մերժումը կամ չեղարկումը և Չհրապարակման մասին պայմանագրի լուծումը:

Սույն Հավելված 1-ը (Օգտատերերի ցանկ) հանդիսանում է Չհրապարակման մասին պայմանագրի անբաժանելի մասը և ենթակա է Չհրապարակման մասին պայմանագրի դրույթների կարգավորմանը:

Ստորագրության էջ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

08.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ